Վ. Ա. ՊԵՏՈՅԱՆ

# ՍԱՍՈՒՆԻ ԲԱՐԲԱՌԸ

ԵՐԵՎԱՆ

ՀՍՍՀ
ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА

№ 3 ДИАЛЕКТЫ АРМЯНСКОГО ЯЗЫКА № 3

В. А. ПЕТОЯН

# САСУНСКИЙ ДИАЛЕКТ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1954

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

№ 3 ՀԱՅ ԲԱՐԲԱՌՆԵՐ № 3

Վ. Ա. ՊԵՏՈՅԱՆ

# ՍԱՍՈՒՆԻ ԲԱՐԲԱՌԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1954

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Մարքսիստական լեզվաբանության հիմնական խնդիրներից մեկն է տեղական (տերիտորիալ) բարբառների ուսումնասիրությունը: Ամեն մի լեզվի պատմության ուսումնասիրությունը լրիվ և ամբողջական չի կարող լինել առանց նրա բարբառների ուսումնասիրության:

Տեղական բարբառները արմատապես տարբերվում են սոցիալական բարբառներից և ժարգոններից, ունեն լեզվի սպեցիֆիկայի էությունը կազմող քերականական կառուցվածք և բառային հիմնական ֆոնդ: Բարբառները հանդիսանում են հասարակության ընդհանուր, միասնական լեզվի տերիտորիալ ճյուղավորումները: Ազգային ընդհանուր, միասնական լեզվի գոյության պայմաններում նրանք,— ինչպես ցույց է տվել Ի. Վ. Ստալինը «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» աշխատության մեջ,— աստիճանաբար կորցնում են իրենց ինքնությունը, ձուլվում են ազգային լեզվի հետ, անհետանում նրա մեջ:

Պատմական այս նույն բախտին են արժանացել և արժանանում նաև հայ բարբառները, աստիճանաբար կորցնելով իրենց ինքնորինակությունը նրանք ձուլվում և անհետանում են ժամանակակից հայերենի մեջ: Արդեն պատմության գիրկն են անցել հայ շատ բարբառներ, նույն ճանապարհին են բռնել մյուս հայ բարբառները: Այս հանգամանքը ինքնին ցույց է տալիս, որ բարբառների ուսումնասիրությունը հայագիտության հրատապ խնդիրներից մեկն է:

Լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ ընկ. Վ. Ա. Գեւորգյանի «Սասունի բարբառը» աշխատության տպագրումը բխում է այդ խնդրից և գալիս է նպաստելու բարբառներն առանձին-առանձին ուսումնասիրելու միջոցով հայ բարբառների ամբողջական պատմությունը գրելու գործին:

Սասունի բարբառը հայոց լեզվի կարելի է ասել չուսումնասիրված բարբառներից մեկն է: Հայ բարբառագիտության մեջ անցյալում կատարվել է այդ բարբառի մասնակի, ոչ ամբողջական ուսումնասի-

ռումը[1], ընդ որում նկատի առնելով պատմական վարչական բաժանումը, Սասունի և շրջակա գյուղերի խոսվածքները մտցվել են «Մշո բարբառ» տերիտորիալ հասկացության մեջ կամ դիտվել իբրև վերջինիս ենթաբարբառը:

Ընկ. Վ. Ա. Պետոյանը «Սասունի բարբառը» աշխատության մեջ փորձել է տալ այդ բարբառի հնչյունաբանության և ձևաբանության ամբողջական պատկերը: Հեղինակը, լինելով այդ բարբառի ներկայացուցիչը, լավ տիրապետում է նկարագրած բարբառին, թեպետ որոշ դեպքերում կարելի էր ավելին երևան բերել և խորացնել բարբառի իրողությունների բացատրությունը:

Բարբառի փաստական նյութին տեղյակ լինելը հնարավորություն է տվել հեղինակին առաջ քաշել այնպիսի հարց, ինչպիսին է Սասունի և նրա շրջակա գյուղերի խոսվածքը իբրև ինքնուրույն բարբառ դիտելն ու ճանաչելը: Հեղինակի այս թեզը նորություն է հայ բարբառագիտության մեջ: Մայրենի բարբառի փաստական նյութի լավատեղյակությունը, այդ փաստերի բաղդատումը Մշո բարբառի համանման լեզվական իրողությունների հետ, ինչպիսիք են՝ Մշո բարբառի բաղաձայնական քառաստիճան համակարգը, Սասունի բարբառի ձայնեղների խլացմամբ, խուլերի ձայնեղացմամբ և խուլ շնչեղների անփոփոխությամբ բաղաձայնական համակարգի եռաստիճանությունը, երկբարբառների տարբերությունը, Մշո բարբառի ձայնեղ հ-ի բացակայությունը և այլն — այդ բոլորը հեղինակին, պետք է ասել, հնարավորություն է տվել բավական համոզիչ դարձնել իր առաջ քաշած թեզը՝ Սասունի բարբառի ինքնուրույն բարբառ լինելը:

Աշխատության մյուս արժանիքներից են բավական հարուստ բառարանը և տեղանունների ցանկը: Տարիների ընթացքում հեղինակը հավաքել և այբուբենական կարգով է դասավորել բարբառային 4000 բառ, որոնցից շուրջ 500 բառ իրենց ուղղակի և անուղղակի իմաստներով բացակայում են հայոց լեզվի բառարաններում:

Այդ բառերը, ինչպես նաև տեղանունները, հսկայական նյութ են մատուցում հայ ժողովրդի և նրա լեզվի պատմության զանազան հարցերը լուսաբանելու գործում:

ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

[1] Տես Հր. Աճառյան, *Ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների*, *Էմինյան ազգագրական ժողովածու*, հատ. Ը, 1911:

# ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՍԱՍՈՒՆԻ ՄԱՍԻՆ

*Սասունի գավառը իր գյուղերով բաժանված էր Թյուրքիայի՝ Մուշի, Սղերտի և Գենջի վիլայեթների միջև։ Նա տարածվում էր Մուշի հարավում գտնվող Տավրոսյան Սիմ(Կուրտըկ) և Սև լեռներից դեպի հարավ, մինչև Մուֆարկինի (Տիգրանակերտ) մոտի Բաթման Սույի Բաթմանի կամուրջը (Փրա Բաթման)։ Արևելքից՝ Բիթլիսի Սալնաձորից մինչև Գենջ, որը կազմում էր Սասունի արևմտյան սահմանը։ Ուներ 10 շրջաններ՝ 1. Բուն Սասուն, որը բաղկացած էր 16 գյուղից. 2. Շատախ՝ 7 գյուղ. 3. Խութ-Բռնաշեն՝ 42 գյուղ. 4. Փսանք՝ 42 գյուղ. 5. Հազզո-Խարզնոց՝ 108 գյուղ. 6. Մոտկան՝ 61 գյուղ. 7. Խարզան՝ 128 գյուղ. 8. Խիանք՝ 56 գյուղ. 9. Խուլփ՝ 67 գյուղ. 10. Տալվորիկ՝ 12 գյուղ, ընդամենը 539 գյուղ, որոնց բնակիչների մեծ մասը հայեր էին, իսկ փոքր մասը՝ քրդեր։ Մի քանի գյուղերում հայերը և քրդերը միասին էին ապրում։ Սասունի հայ ազգաբնակչությունը մոտ 35 հազար շունչ էր, իսկ քրդերը՝ 15 հազար։*

*Սասունի ազգաբնակչության որոշ մասը 1894, 1904 թվականների ազգային ազատագրական շարժումների ժամանակ սուլթանական Թյուրքիայի կառավարության և քուրդ բեգերի կողմից բնաջնջման ենթարկվեց, իսկ 1915 թվականի սկզբից ամբողջ արևմտահայերը օրենքից դուրս հայտարարվեցին և բնաջնջվեցին, միայն 1916 թվականին ռուսական բանակի Մուշ մտնելու ժամանակ Սասունի անտառներում և քարայրերում, Անդոքում և Գելիեգուզանում ապաստանած մոտ 10 հազար սասունցի հայեր, իմանալով ռուսական բանակի Մուշը գրավելու մասին, 1916 թվականի մարտ ամսին գալիս միանում են ռուսներին, ազատվում, տեղափոխվում Կովկաս և բնակվում Աշտարակի և Թալինի լեռնամասային գյուղերում։*

*Սասուն անունը հայ պատմագրության մեջ առաջին անգամ հիշվում է Մովսես Խորենացուն վերագրվող Անանիա Շի-*

բակացու «Աշխարհացույց»-ի մեջ։ Այդ գրքում հեղինակը թվելով պատմական Հայաստանի տասնհինգ նահանգները և նրանց վարչական բաժանմունքները, Աղձնյաց նահանգի տասը գավառների մեջ նշում է Սասունը, որպես նույն նահանգի տասներորդ գավառը։ Աշխարհացույցի հեղինակը գրում է Աղձնիքի մասին հետևյալը.

«Երրորդ՝ Աղձնիս առ Տիգրիս գետով կայ. եւ գաւառս ունի տասն. զԱրզն, զՆփրկերտ, զՔեղ, զՆեթիկ, զՏատիկ, Սաղու, Վանաց ձոր, զԽերհեթս, զԳզեղ, զՍալնոյ ձոր, զՍանասուն։ Ունի նաւթ եւ զերկաթ, առուել եւ գխթոր եւ հաւ՝ զդեղհուկ»[1]։

Այդ տասը գավառները, որոնցով կազմված էր Աղձնիքը. մինչև 1915 թվականը պահպանում էին Շիրակացու հիշատակած, բայց փոքր ինչ փոփոխության ենթարկված իրենց անունները, որոնցից նշենք մի քանիսը՝ Արզնի, Տատիկի (Սասունի Տատիկն է և ոչ թե Վասպուրականի), Գզեխի, Սալնոձորի և Սասունի անունները։

Սասունի մասին, «Սասու» անվամբ հիշատակություն կա ասուրական թագավոր Տիգլատպիլասար 3-րդի, մեր թվարկությունից 736 տարի առաջ կանգնեցրած հաղթանակի բևեռագիր արձանագրության մեջ։ Ասուրական աշխարհակալ թագավոր Տիգլատպիլասար 3-րդը Ուրարտուի թագավոր Արգիշտիի որդի Սարդուր 2-րդի (755—730 մ. թ. ա.) վրա հարձակվելով տիրում է նրա երկրի մեծ մասին, կանգնեցնում է հաղթանակի մի հուշարձան, ուր նշում է իր գրաված երկրների անունները և նկարագրում իր արշավանքները։

Ակադեմիկոս Գր. Ղափանցյանը իր «Ուրարտուի պատմությունը» թանկարժեք աշխատության մեջ Տիգլատպիլասար 3-րդի կանգնեցրած բևեռագիր հուշարձանից (ըստ Սանդալջյանի թարգմանության) բերում է մի հատված, ուր հիշվում է Սասսու. անունով մի քաղաք։ Այդ հատվածում ասված է.

«Ռաքքի-լուլ կողմնակալության պաշտոնյաներս հոն դրի՝ իբր հոգաբարձու Ուսուրնու, Ուսուրրա, Ինու, Սասսու, Լուք, Լուքի քաղաքաց, մինչև ի լերինս անդր։ Քուտտա, Ուլլրա, Արանա, Տա[րա], Ուպլիա քաղաքներուն (տիրեցի) մինչև ի վեր ցԵփրատ, Կումուխ, Կիլիմիր, Աքքիսա.... Ուրարտու Բերդաքա-

---

[1] Պրոֆ. դ-ր Ա. Աբրահամյան, Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 349։

պաքաց Կ'ալամբա գետոյն... տիրեցի, Ասորեստանի երկրին միացուցի»[1]։

Տիգլատպիլասարի այդ պատմական հուշարձանի մի քանի տեղանունների համեմատությունը Սասունի տեղագրության հետ, մեզ համոզում է, որ մեր թվականությունից 736 տարի առաջ նշված «Սասսու» քաղաքը մեր Սասունն է, այն հսկա բերդը, որ այժմ կոչվում է «Սասունցի Դավթի» կամ «Դավթի» բերդ։

Ահա մի քանի տող և տեղանուններ Տիգլատպիլասարի հուշարձանից.

Տող 28-րդ «...մինչև Սիկկրտա քաղաքն, Ասուրդա քաղաքն Ասորեստանի երկրին միացուցի»...։

Տող 31-րդ «...Ինու, Սասսու, Լուբ, Լուբի քաղաքաց (տիրեցի) մինչև ի լերինս անդր...»։

Տող 32-րդ «...Քուտա, Ուբրա, Արանա, Տա[բա], Ուալլիա քաղաքներուն (տիրեցի) մինչև ի վեր ցեփրատ...».

Տող 33-րդ «...Կումմուխ, Կլիմիր... քաղաքներուն վիճակաց, Ինզի երկրին, Անգանա, Բինզու քաղաքներուն» (տիրեցի)։

Տող 35-րդ «Ուրարտիի բերդաքաղաքաց... տիրեցի, Ասորեստանի երկրին միացուցի»...։

Տող 36-րդ «Տանը վարչութեան վրա Տուրտանը (կարգեցի) և զայն Նա'րի երկրին կցեցի»... և այլն[2]։

Նույն աշխատության էջ 29-ում գրված է.

«Յամին 867 տարին՝ Ասուրնաձիրաբաղ իւր չորրորդ արշաւանքը գործեց Նաիրեայ երկրաց վրա։ Գրեթե բովանդակ Աղձնիք և անոր հիւսիսակողմը Կիրխի երկիրն Ասորեստանեայց իշխանութեան դեմ ապստամբած էին։ Ասուրնաձիրաբաղ՝ նախ Աղձնեաց արեւելակողմն Ասսու վիճակին (Ազնուաց Ձոր), յետոյ Կիրխիայ, Ումալիա և Խիրանու ամուր քաղաքաց տիրեց՝ ոչ առանց սաստիկ ընդդիմադրութիւն կրելու... Ամիդի քաղաքն զարհուրելի տեսարաններու թատրոն եղաւ»։

Նույն աշխատության էջ 52-ում գրված է.

---

1 Պրոֆ. Գր. Ղափանցյան, Ուրարտուի պատմություն, Երևան, 1940, էջ 193։

2 Ասորեստանեայց և պարսիկ սեպագիր արձանագրութիւնք. Թարգմ. Յովսէփ Վ. Սանդալճեան, Վիեննա, 1901, էջ 159—161։

«Թագղաթփաղասար Գ. (Տիգլատպիլասարն է) Ուրարտու մտնելով մինչև Արածանի գրաւեց։ Նիմրուտայ Տախտակին արձանագրության 32-րդ տողին Նարու Բուրատտու բառերն՝ Արածանի կամ արդի Մուրադ-Սու գետը կը նշանակեն»։

Այսքանն էլ բավական է Սասունի և Տարոնի տեղագրությանը ծանոթ մարդուն հաստատ համոզվելու, որ Տիգլատպիլասարի հարավից հաջորդաբար գրված «Սիկիրտա», «Սասու», «Քուտա», «Կլիմիր», «Կիրխի», «Ինզի», «Ասսու» քաղաքները, պատմական Աղձնյաց նահանգի Սասուն գավառի Սիղիրտ կամ Սղերտ, Սասուն, Խութա, Շլիմիր, Կիրխո, Ասսու քաղաքներն են, որոնց հսկա բերդերն ու քաղաքների ավերակները մինչև 1915 թվականը գոյություն ունեին և որոնց ավերակների կողքին նույնանուն հայաբնակ Սղերտ, Սասուն (Բողըկանի Քաղքիկ), Խութա կամ Խութ, Արտխոնք (որին քրդերը Շլիմիր են ասում) Կրխո, Ասսու գյուղերը չեն էին և նվիրական վայրեր էին համարվում, որոնց բնակիչներից այժմ ապրում են Սովետական Հայաստանի Աշտարակի և Թալինի շրջաններում։

«Ալզինի», «Ինզի» երկրները անկասկած Աղձնիքն է, «Ամիդ»-ը՝ անկասկած Դիարբեքիրը, Նփրկերտը՝ Ֆարխին կամ Ֆարկին, կամ Միաֆարղին, իսկ Նարու-Բուրատտու գետը, որ նշում է Տիգլատպիլասարն իր պատմական հուշարձանի՝ «Նեմրուտա տախտակի արձանագրութեան» 32-րդ տողում, Մուրատ-Սու կամ Մուրատ-Ջայն է, Արածանին կամ Արևելյան Եփրատը, որ Տիգլատպիլասարը տեսնում է Սասուս բերդաքաղաքը գրավելուց հետո «մինչև ի վեր ցԵփրատ» բարձրանալիս։ Իրոք այժմյան Սասուն բերդից 10—15 կմ. հեռավորության վրա, դեպի հյուսիս, «մինչև ի լերինս անդր» երևում է Արածանին՝ Նարու-Բուրատտուն, Մուրադ-Ջայը՝ արևելյան Եփրատը։

Այսպիսով Տիգլատպիլասարի այդ հուշարձանի քաղաքների, լեռների և գետերի անունները, որոնք բառացի և ըստ նրա մարշրուտի համընկնում են Աղձնիքի կամ Սասունի քաղաքներին, լեռներին և գետերին, ոչ մի կասկած չեն թողնում, որ Սասունը, որպես բերդաքաղաք, իր Սղերտ, Խութ, Շլիմիր, Կրխո, Ասսու շրջաններով գոյություն է ունեցել Ուրարտական իշխանության ժամանակաշրջանից, նրա բնակիչները եղել են բնիկներ, անդրենածիններ։

Այս տեսակետից Սասունի բարբառի ուսումնասիրությունը մեր կարծիքով ունի ոչ միայն բարբառագիտական նշա-

նակություն, այլև բազմաքանակ հետաքրքիր նյութեր կարող է տալ մեր ժողովրդի պատմության, նրա էթնիկական կազմության վերաբերյալ։

Աշխատության մեջ տալիս ենք նաև Սասունի տեղագրական անունները, որոնք կարող են իբրև փաստական նյութ ծառայել հետագա ուսումնասիրողների համար։

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՍՈՒՆԻ ԲԱՐԲԱՌԻ ՄԱՍԻՆ

*Սասունի բարբառը պատկանում է հայ բարբառների «կը» ճյուղին։ Բայերի սահմանական եղանակի ներկա ժամանակը կազմում է «գը» մասնիկով։*

*Բարբառի բաղաձայնական համակարգում գրաբարի համեմատ տեղի են ունեցել հետևյալ փոփոխությունները. ձայնեղների խլացում՝ բ-ն դարձել է պ, գ>կ, դ>տ, ձ>ծ, ջ>ճ, ինչպես՝ բերան>պերան, գինի>կինի, դուռն>տուռ, ձու>ծու, ջուր>ճուր, գագաթ>կակաթ և ընդհակառակը՝ խուլերի ձայնեղացում, ըստ որում բառի միջի բոլոր խուլ պայթականներն էլ ձայնեղացման են ենթարկվել. ինչպես՝ պապ>բաբ, կակաչ>գագաչ, տատ>դադ, ծուխ>ձուխ, ճակատ>ջագադ, պատ>բադ, կանաչ>գանաչ. խուլ շնչեղները բոլոր դեպքերում մնացել են անփոփոխ։*

*Այլ բարբառների մեջ եղած* ճ՛*(ձայնեղ* ճ*) հնչյունը չունի,* ֆ *հնչյունի փոխարեն* փ *երբեք չի գործածվում, ինչպես և* ճ *հնչյունի փոխարեն* խ *երբեք չի գործածվում։* Կ *հնչյունով վերջացող բառի հաջորդ բառը բաղաձայն լինելիս* կ*-ն* յ*-ի չի վերածվում (դախտակ կա և ոչ թե տախտայ կա)։* Ր, ղ *բաղաձայններից հետո պարզ պայթականը արտասանվում է ոչ թե խուլ շնչեղ, ինչպես մի շարք բարբառներում, այլ պարզ խուլ. ինչպես՝ բուրդ>պուրտ, վարդ>վարտ, մարդ>մարտ, գայլխեղդ>կէլխիղտ, քուրդ>քուրտ։*

*Բարբառում քմային կամ փափուկ բաղաձայն հնչյուններ՝ գ$^j$, կ$^j$, ք$^j$, հ$^j$ չկան։*

*Բարբառումս բացառական հոլովը կազմվում է «ինտ» մասնիկով. Այսպես օրինակ՝ ըմինտ (ինձնից), քուինտ (քեզանից), տանինտ (տնից), քարուինտ (քարից) և այլն։ Որոշյալ առումով գործածվելիս գոյականները հայցական հոլովում պահպանում են* զ *նախդիրը։ Անորոշ դերբայում բայերն ունենում են* իլ, ալ

վերջավորությունները։ Սասունի բարբառով խոսում էին Սասունի բոլոր շրջանների (Խիանի, Խուլբի, Շատախի, Խութի, Հազզոյի, Մոտկանի, Փսանքի, Խարզանի) բնակիչները՝ խոսվածքային որոշ տարբերություններով։ Սույն ուսումնասիրության համար հիմք է ծառայել բուն Սասունի (Գելիեգուզան, Շենիկ, Սեմալ) և Տալվորիկի բնակիչների խոսվածքները։

Սովետական Հայաստանում Սասունի բարբառով խոսել են և այժմ էլ որոշ զգալի փոփոխություններով խոսում են Թալինի և Աշտարակի սասունցիաբնակ գյուղերի բնակիչները։

Թալինի շրջանում այդ գյուղերն են՝ Աշնակ, Այնալու, Միհրիբան, Իրինդ, Շղարշիկ, Վերին և Ներքին Սասունաշեններ, Վերին և Ներքին Բազմաբերդ, Ագարակ, Գարտիզակ, Կաքավաձոր, Դիան, Ոսկեթաս և Ահագչի, իսկ Աշտարակի շրջանում՝ Ուջան, Սասունիկ, Ավան և Լեռնարոտ։

# Ա. ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

*Բացի հայոց գրական լեզվի երեսունութ հնչյուններից, Սասունի բարբառում կան նաև հետևյալ հնչյունները.*

*1. Ա̈[1]—որպես փափուկ ա, որ ա-ի և ը-ի մի միջնաձայնն է կազմում։ Օրինակ՝ ա̈զա̈դութին—ազատություն, վա̈րժա̈րիդ—վարժապետ, գա̈րդա̈ցուղ մա̈րդ—կարդացող մարդ և այլն։*

*Այս փափուկ ա̈-ն գործ է ածվում գրեթե նույնքան, որքան սովորական ա-ն։*

*2. Ö—հնչյունը, օ-ի մի երանգն է տալիս, հնչվելու ժամանակ շրթունքներն իրար չեն հպվում, ոչ «որի», ոչ «օրի» ձևով, այլ öրի կամ öրի—wəri—գըլլու և ա̈-ի մի միացում է դա՝ մեջն ունենալով օ հնչյունը։ Օրինակ՝ Öրի չէգար—wəri չէգար—ինչու չեկար։ Դու զöր գհարցուս, դու զwər կհարցուս—դու ինչ ես հարցնում։ Սա ավելի շատ հատուկ է Տալվորիկի խոսվածքին, թուն Սասունի (Գելիեգուզանի) բարբառում այդ ö- վերին բարձրության կամ փափուկ «օ»-ն «վ» շրթնային ձևով է արտահայտվում. ինչպես օրինակ՝ «öրի չէգար»-ը արտահայտվում է «վըրը չէգար» (ինչու չեկար)։*

*3. «Öւէ» երկհնչյունը իբրև «ու» և «է» հնչյունների միացություն. ինչպես օրինակ՝ «Սասունը öւէրան եղավ»—Սասունը ավերակ դարձավ։ «Öւէյ գիդի աշխարհ»— հեյ գիդի աշխարհ։*

*Քիչ չափով իբրև ձայնարկություն են օգտագործվում ա̈ու, öւէ, öւա, öու երկհնչյունները։*

*4. Այսպիսով Սասունի բարբառի մեջ գոյություն ունի 39 հնչյուն, որոնցից ձայնավորներն են՝ ա, ա̈, ու, է, ը, ի, ö, օ, öւէ, ընդամենը ինը հնչյուն։*

*Բաղաձայններն են՝ բ, գ, դ, զ, թ, ժ, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, փ, ք, ֆ, ընդամենը երեսուն։*

*5. Բազմավանկ բառերի մեջ ա ձայնավորը երբեմն ընկնում*

---

[1] *Ա̈-ն որպես փափուկ ա աշխատության մեջ միշտ գրվելու է շըրջված՝ ա̈։*

է, երբեմն փոխվում ը-ի։ Այսպես օրինակ՝ աշակերտ>աշկիրդ, ագանիլ>հակնիլ, ամաչկոտ>ամըչկուդ, անալի>ալնի, անկանիլ>ընգնալ, արտասուք>արդսունք, բանալի>պալի, թառամիլ>թօռմիլ, թօթափել>թօթվիլ, ժամակոչ>ժամգուչ, ժանգառոտ>ժանգռուդ, խարակել>խարգէլ, կարդացւոր>գորդոտցվուր, հարսանիք>հարսնիք, հաւանիլ>հաֆնիլ, հաւատալ>ավդընալ, հիւանդանալ>հիվընդնալ, մեղադրել>մեղտըրիլ, պակասութիւն>բագսութին, քառասուն>քառսուն և այլն։

6. Անալ վերջավորությամբ բայերի մեջ որոշ բացառություններով (հեռանալ>հեռոնոլ) ա-ն ընկնում է կամ հնչյունափոխվում ը-ի։ Այսպես օրինակ՝ իմանալ>իմնալ, թուլանալ>թուլնալ, լայնանալ>լէննալ, նորանալ>նօրնալ, շատանալ>շադնալ, տաքանալ>դաքնալ, փայտանալ>փէդնալ, քչանալ>քիչնալ, կանաչանալ>գանչընալ, հաստանալ>հաստընալ, ուրախանալ>ուրխընալ։

7. Կրկնում ունեցող և մի շարք բառերում ա ձայնավորը ընկնում է կամ ը-ի փոխվում։ Օր՝. չարչարել>չարչըրիլ, կապկապել>գաբգըբիլ, կարկառել>գարգըռիլ, շալակել>շըլգիլ, երկաթե>էրգըթէ, հարիսա>հըրիսա, արտասունք>արդըսունք։

8. Անոց մասնիկով վերջացող բառերը կորցնում են ա ձայնավորը ստանում ու՝ ո-ի փոխարեն. օր՝. հաւանոց>հաֆնուց, հնգանոց>հնգնուց, հիւանդանոց>հիվընդնուց, մեկանոց>մէգնուց, հազարանոց>հոզարնուց։

9. Ա>ո փոփոխությունը շատ ընդհանրացած է այդ>ոդ, այգաեզ>ոդդիզ, մարդահոտ>մորոտհուդ,

Ա>օ, ա>ու փոփոխությունը հազվադեպ է, օր՝. թառամել>թօռմիլ, հեռանալ>հէռունալ (նաև հեռոնալ)։

## ա) ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

### Ա.

10. Սասունի բարբառում բազմավանկ բառերում շեշտը սովորաբար դրվում է բառի նախավերջին վանկի ձայնավորի վրա, իսկ միավանկ բառերում՝ ձայնավորի վրա։

Օրինակ՝ մը́րգիթ—մրկիթ (վայրի ծիթառու մի պտուղ), գո́վըկ—ձագար, գը́ոզիկ (վայրի արմատապտուղ, բանջար), խաբը́րձիլ—խավարծիլ, դոնդո՛լոզ—թեթևսոլիկ, դարդա́րա (անճոռնի կերպով մեծ), մադա́շիդ—ուշ գարնանը ծնված ուլ։

Միավանկ բառերի մեջ ձայնավոր ա-ի անկում կամ սղում տեղի չի ունենում. օրինակ՝ աչք-աչք, անկ-անգ (հաշմանդամ), խաղ-խաղ, Թանկ-Թանգ, բարձր-պարծր և այլն։

11. Երկու հաջորդական ե ունեցող երկվանկ բառերի առաջին, երբեմն նաև երկրորդ ե-ն փոխվում է ի-ի։

Օրինակ՝ երեք-իրիք, չերեփ-չէրիփ, Թեթև-Թիթըվ, դեղել-տէղիլ, դեղնել-տէղնիլ։

Ինչպես ասել ենք անորոշ դերբայում բայերն ունեն իլ, ալ վերջավորություններ. արդի հայերենի ել լծորդության բայերն Սասունի բարբառում հանդես են գալիս իլ ձևով. ինչպես օրինակ՝ փչել-փչիլ, Թոչել-Թոնիլ, փախչել-փախնիլ, կորչել-գորնիլ, գզել-կզիլ, խուզել-խուզիլ, լիզել-լիզիլ, ուզել-ուզիլ, քամել-քամիլ, տաշել-դաշիլ, մաշել-մաշիլ, քաշել-քաշիլ, խաշել-խաշիլ, այրել-էրիլ, քերել-քէրիլ, բերել-պէրիլ, սիրել-սիրիլ, սրբել-սրպիլ, լափել-լափիլ, եփել-էփիլ, կալսել-գալսիլ, քսել-քսիլ, կամնել-գամնիլ, դնել-տնիլ, շինել-շինիլ, խանձել-խանձիլ, անիծել-անըձիլ, օծել-օձիլ, պաշտել-բաշտիլ, քամել-քամիլ, խմել-խմիլ, խլել-խլիլ, ծալել-ձալիլ, քաղել-քաղիլ, Թաղել-Թաղիլ, Թողել-Թողիլ, ծախել-ձախիլ, կախել-գախիլ, Թակել-Թագիլ, ծակել-ձագիլ, փակել-փագիլ, պահել-բըհիլ, բահել-պոհիլ։

Բառասկզբում ե-ի դիմաց ունենք է՝ երկինք>էրգինք, երկիր>էրգիր, երես>էրիս, եփել>էփիլ բառերում, ե-ի դիմաց ի հետևյալ բառերում՝ եզ>իզ, ել>իլ, երեկոյ>իրիգուն։

Բառերի շեշտված կամ անշեշտ ե-ն Մուշի բարբառում ընդունել է երկբարբառային իէ ձևը, մինչդեռ Սասունի բարբառում այդ երևույթը ընդհանրապես տեղի չի ունեցել։

12. Դերանունների, ինչպես նաև օժանդակ բայի ներկա ժամանակի ե հնչյունը բառի սկզբում և միջում փոխվում է ը-ի. օր.՝ ես>ըս, մենք>մընք, մեր>մըր, ձեր>ծըր, մեզ>մըզը, ձեզ>ծըզը, չեմ>չըմ դու ես>տու ըս։

13. ե հնչյունը բառամիջում դառնում է ի. օր.՝ երես>էրիս, բերել>պէրիլ, ասեղ>ասիղ, երեկոյ>իրիգուն կամ իրգուն, մենակ>մինագ, խեղճ>խիղջ, դեղ>տիղ, մեղր>միղր, մեղք>միխք, ճեղք>ջիխք, մեծ>միձ, ծեծ>ձիձ, բեր>պիր, հետ>հիդ։

14. է, ը ձայնավորները ընդհանրապես փոփոխության չեն ենթարկվում։

15. Ի ձայնավորը բառի սկզբում և բառամիջում շեշտի տակ միշտ մնում է անփոփոխ. իմանալ>իմնալ, իջանել>իճնալ, շապիկ>շաբիգ, վարտիք>վարդիք։

16. Բազմավանկ բառերում ի-ն փոխվում է ը-ի. օր.՝ անիծել>անըձիլ, հանդիպել>հանդըբիլ, մխիթարանք>մըխըթըրանք, տանտիկին>դանդըգին։

## Ո

17. Ո հնչյունը բառասկզբում արտասանվում է օ. օր.՝ ոսկի>օսկի, ողբ>օխպ, ոսպ>օսպ կամ ուսպ, ոլորել>օլըրիլ, ողջույն>օղճում, ոսկոր>օսկուր, որոտ>օրուդ։

18. Ո ձայնավորը բառամիջում դառնում է ու:

Օր.՝ հող>հուղ, բողկ>պուղգ, խոտ>խուդ, գործ>կուրձ, փորձ>փուրծ, մոմ>մում, գոմ>կում, լոմ>լում, ձոր>ծուր, բոլոր>պոլուր, ալոճ>ալուջ, լոր>լուր (թռչունը), բոր>պուր, խոր>խուր (խորունկ), փոր>փուր, չոր>չուր, հոր>հուր, սալոր>սալուր, շլոր>շլուր, ալևոր>հալվուր, բերուոր>բերվուր (կթող կին), թագաւոր>թըկըվուր, ձիաւոր>ծիըվուր, խասւոր>խասվուր, շնորհաւոր>շնուրհըվուր կամ շնաֆուր, գոլ>կուլ (տաք), շոգ>շուկ։

## ՈՒ

19. Բառերի սկզբում ու-ն մնում է անփոփոխ.

Օր.՝ Ուրախ>ուրախ, ուզել>ուզիլ, ութ>ութ։

«Ո՞ւր» բառի սկզբում ավելանում է հ-շնչեղը և արտասանվում հո՞ւր. որը գուցե առաջացել է գրաբարյան «յուր» ձևից։

20. Խ և ղ բաղաձայններից առաջ ու-ն փոխվում է ը-ի, օ-ի և ո-ի օր.՝ ուղարկել>օղորգիլ, ուղեղ>ողօղ, ուխտավոր>ըխտըվուր։

21. Ու-ն բառամիջում շեշտի տակ մնում է անփոփոխ.

օր.՝ շուն>շուն, տուն>դուն, ձուկն>ծուգ, քուրդ>քուրտ, քուն>քուն, հուն>հուն։

22. Բազմավանկ բառերի մեջ իբրև շաղկապ հանդես եկող ու ձայնավորը սղվում է կամ փոխվում է ը-ի. օր.՝ տասնումեկ>դասնըմեգ, տասնուչորս>դասնչուրս, տասնուհինգ>դասնըհինգ։

23. -Ություն մասնիկով վերջացող բառերի ու-ն պահպանվում է. ինչպես՝ քաջություն>քաճություն, մեծություն>մեծություն,

արքայություն>որքոյություն, լայնություն>լէնություն, նեղու-թյուն>նեղություն։

24. Բառերի վերջում ու-ն մնում է ու. օր.՝ հերու>հէրու, թթու>թթու, հեռու>հեռու և այլն։

## բ) ԵՐԿԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

### ԱՅ

25. Այ երկբարբառը միավանկ բառերի մեջ, բառասկզբում դառնում է ո. օր.՝ այդ>ոդ, այն>ոն, այս>ոս (կա նաև ոդիգ, ոնիկ, ոսիկ ձևերը), այլ>ոլ, այսօր>ոսօր։

26. Բառերի մեջ գտնվող այ երկբարբառը դառնում է է. օր.՝ եղբայր>աղպէր, երկայն>էրգէն, լայն>լէն, ծայր>ծէր, ձայն>ծէն, փայտ>փէդ, տայգր>դէկր։

27. Այ երկբարբառին երբ հաջորդում է ձայնավոր, ինքը մնում է անփոփոխ, իսկ ավելացող ձայնավորը կարող է ընկնել, ինչպես և պահպանվել. օր.՝ հայություն>հոյություն, արքայություն>որքոյություն, հայելի>հոյլի, վայելել>վոյլիլ։

28. Աւ երկբարբառը բազմավանկ բառերում կորցնում է ւ-ն. օրինակ՝ ծառաւել>ծառվիլ, պառաւել>բառվիլ կամ բառվընալ։

29. Աւ երկբարբառին հետևյալ բառերում համապատասխանում է -է- ձայնավորը՝ աւելացնել>էվէլցընիլ, աւել-պակաս>էվիլ-բագաս։

### ԵԱ

30. Այս երկբարբառին բառերի միջում և վերջում համապատասխանում է ի ձայնավորը.

Օր.՝ դայեակ>տայիգ, առաջնեակ>էռաճնիգ. էռճնիգ, երանեակ>էանիգ (երանի), լեառն>լիռ, ցորեան>ցորին։

31. Անցյալ դերբայի մեջ եա-ն ևս համապատասխանում է-ի:

Օր.՝ կերեալ եմ>գէրիր ըմ (Տավուշում), գէրիլ ըմ (Գետիկավանում). կերեալ ես>գէրիր ըս, գէրիլ ըս, կերեալ է>գէ-րիր ա, նաև գէրիլ ա։

### ԻԱ, ԻԱՅ

32. Իա, իայ երկբարբառի մի օրինակ ունենք, որը և այդ երկբարբառի դիմաց հանդիպում ենք ի՝ միայնակ>մինագ։

ԻՒ

33. Իւ երկբարբառի դիմաց բարբառս ունի ի և ը. օր.՝ իւր>իր, ըր, իւրեան>իրին, իւրեանք>իրինք, իւրեանց>իրանց։

34. Բառամիջում իւ դիմաց՝ ու. օր.՝ աղբիւր>աղպուր, ալիւր> ալուր, հարիւր>հարուր (նաև հարիր) ձիւթ>ծութ։

—Ություն ածանցի իւ-ի դիմաց բարբառս ունի դարձյալ ի. օր.՝ հայութիւն>հայութին, մեծութիւն>մեձութին, լայնութիւն>լէնութին։

35. Իւ>ի է դառնում ղ ձայնից առաջ գիւղ>կիղ, իւղ>իղ, իւղաներկ>իղնիրգ բառերում։

ՈՅ

36. Ոյ երկբարբառի դիմաց բառի թե սկզբում, թե միջում և թե վերջում ունենք ու. օր.՝ ոյժ>ուժ, անոյշ>անուշ, գոյն>կուն, լոյս>լուս, քոյր>քուր, թոյլ>թուլ, երեկոյ>իրգուն, իրընգուն։

ՈՒԱ

37. Ուա երկբարբառն ընդհանրապես դառնում է վա. օր.՝ լեզուանի>լէզվոնի, աստուած>ասված, աստված, լուալ>լվալ, վլալ, չուան>չվան։

## գ) ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Բ

38. Ձայնեղ բ-ն դարձել է խուլ պ:

Օրինակ՝ բաժին>պաժին, բարակ>պարագ, բարև>պարև։

39. Բ հնչյունի շնչեղ խլացում՝ բ>փ, Սասունի բարբառում տեղի չի ունեցել։

40. Բ ձայնեղ հնչյունը բառամիջում նույնպես խլացման է ենթարկվում. ինչպես՝ աղբիւր>աղպուր, եղբայր>աղպեր, դարբին>տարպին։

41. Բ-ն անփոփոխ է մնում, խլացման չի ենթարկվում, երբ մ ձայնորդին է հաջորդում. ինչպես՝ բամբակ>պամբագ, բամբասանք>պամբասանք, ամբար>ամբար և այլն։

42. Երբ մ-ին հաջորդում է ր ձայնորդը երկուսի մեջտեղը բ թարմատարն է ավելանում. ինչպես՝ համրել>համբրիլ, թըմրել>թմբրիլ և այլն։

Թամբք բառի մեջ բ-ի անկում է լինում և բառը դառնում է թամք, որից թամքել, ոչ թե թամբել։

Բ>պ խլացումը Սասունի բարբառում և՛ բառի սկզբում, և՛ բառամիջում համահավասար կատարվում է։

### Գ

43. Գ բաղաձայնը բառերի սկզբում ձայնեղների խլացման կանոնի համաձայն դառնում է կ. ինչպես օրինակ՝ գուլպա>կուլբա, գիրկ>կիրգ, գիշեր>կիշէր, գդալ>կտալ և այլն։

44. Նույն երևույթը տեղի է ունենում նաև բառամիջում. օրինակ՝ հոգի>հօկի, օգուտ>օկուդ, թագավոր>թօկվուր (Նորափեսա) և այլն։

45. Նույնը պահպանվում է բառավերջում. օրինակ՝ գորգ>կօրկ, ազգ>ազկ, եղունգ>խունկ (ե-ի անկումով) և այլն։

46. Քմային կամ փափուկ գ՛ Սասունի բարբառում չկա։

### Դ

47. Դ բաղաձայնի դիմաց բարբառս բառասկզբում, բառամիջում և վերջում ունի տ. ինչպես՝ դատարկ>տարդագ, դուռն>տուռ, դեզ>տիզը, դեպի>տաբ, դև>տիվ, տև, դաստաստան>տոդոստան։

48. Բառամիջում՝ արդար>արտար, բրդել>պրտիլ, երդիք>էրտիք, երդում>էրտում, կարդալ>գարտալ։

49. Բառավերջում՝ ավելորդ>էվլուրտ, բուրդ>պուրտ, մարդ>մարտ, վարդ>վարտ և այլն.

50. Ն ռնգայնից հետո ևս դ-ի դիմաց ունենք տ. օրինակ՝ քանդել>քանտիլ, բարիկենդան>պորգոնտան։

51. Մեկ և կես վանկանի բառերի ն և ր բաղաձայնների միջև ավելանում է դ, որը և պահպանվում է բառաբարդման ժամանակ. օր.՝ ծանր>ձանդր, ծանրանալ>ձանդրանալ։

### Թ

52. Թ բաղաձայնը և՛ բառասկզբում, և՛ բառամիջում, և՛ բառավերջում մնում է անփոփոխ. օր.՝ փաթաթել>փաթթիլ, թուղթ>թուղթ, թաթնոց>թաթնուց, թութ>թութ, ութ>ութ, վաթսուն>վաթսուն, ութսուն>ութոնսաուն։

## Ժ

53. Ժ բաղաձայնը բառի ամեն մի մասում անփոփոխ է մնում. օրինակ՝ ժամ>ժամ, կուժ>գուժ, ժանգ>ժանգ, արժան>էժան, խեժ>խիժ, ճիժ>ջիժ (երեխա)։

54. Տ-ին հաջորդող Ժ-ն դառնում է Ճ. պատիժ>բադիճ-պատժել>բադճիլ բառաձևերում։

## Լ

55. Լ բաղաձայնը ամենուրեք մնում է անփոփոխ. օրինակ՝ լույս>լուս, լող (էտոց)>լուղ. թույլ>թուլ, ուտել>ուդիլ, ուլունք>հլունք, սալոր>սալուր, հայելի>հայլի, փայլուկ>փէլագ և այլն։

## Խ

56. Բաղաձայնը բառի ամեն մի մասում անփոփոխ է մնում։ Խոզ>խուզ, խմոր>խմուր, խոտ>խուդ, երեխա>էրախա, ուրախ>ուրախ, թուխմանուկ>թուխմանուգ, ախոռ>ախուռ, նախիր>նախիր, ծուխ>ձուխ։

57. Սասունի բարբառում Խ բաղաձայնը ոչ մի դեպքում Հ-ի չի վերածվում. օրինակ՝ խեղդել>խեղտիլ (հեղտիլ երբեք չի ասվում), խաղող>խաուղ կամ խաուխ, խաղ>խաղ, բայց երբեք հաղող, հաղ ձևով չեն գործածվում։

## Ծ

58. Ծ-ի դիմաց Սասունի բարբառը ունի ձ։ Այսպես օրինակ՝ ծիծ>ձիձ, ծիծաղել>ձիձղալ, ծուծ>ձուձ, փայծաղ>փաձիխ, մեծ>միձ, ծածկել>ձաձգիլ, կայծ>գէձ, կայծակ>գէձագ, ծախել>ձախիլ, ծոց>ձուց։

59. Ծ>զ հնչյունափոխություն Սասունի բարբառում հանդիպում ենք միայն զիզռնիկ (ծիծեռնիկ) բառաձևում, բայց կա նաև «ձիձեռնիկ» ձևը։

## Կ

60. Կ բաղաձայնը բոլոր դեպքերում հանդես է գալիս որպես ձայնեղ գ. օրինակ՝ կանաչ>գանաչ, կարմիր>գարմիր, կալ>գալ, կաթ>գաթ, կուժ>գուժ։

61. Բառամիջում՝ երկանք>էրգանք, ընկեր>հնգիր, աշակերտ>աշգիրդ, բառավերջում նույնպես՝ կորեկ>գորիգ, թի-

Քեռնիկ>Թիթռնիգ, տիկ>դիգ, կռունկ>գռունգ, սունկ>սունգ պարկ>բարգ, դմակ>տմագ, բակ>պագ և այլն։

62. Կ բաղաձայնը Սասունի բարբառում քմային կʼ ձևով հանդես չի գալիս։

## Հ

63. Հ բաղաձայնը բոլոր դեպքերում հանդես է գալիս որպես հ, ոչ մի դեպքում խ-ի չի փոխարկվում։

Օրինակ՝ բառասկզբում՝ հարիւր>հորիր, հաց>հաց։ Բառամիջում՝ քաղհան>քաղհան, քախան, պահել> բըհիլ։

Բառավերջում՝ շահ>շոհ, ահ>ոհ, մահ>մոհ։

64. Ր-ին հաջորդող հ-ն ընկնում է. օրինակ՝ աշխարհք> աշխար կամ աշխարք, շնորհք>շնուրք, պահք>բաք կամ բաս, շնորհավոր>շնավուր, շնաֆուր։

65. Բառավերջում ր-ին հաջորդող հ-ի անկում է տեղի ունենում նաև ճանապարհ>ջամրտ բառաձևում, ուր ընկել է նաև ր-ն։

66. Հ բաղաձայնի հավելում է տեղի ունեցել. ալևոր>հալվուր, ալևորել>հալվորիլ, ընկեր>հնգիր բառերում։

## Ձ

67. Ձ-ձայների դիմաց բարբառն ունի խուլ ծ. օրինակ՝ ձոր> ծուր, Թանձր>Թանծր, մաղձ>մաղծ, ձայն>ծէն, ձի>ծի, ձուկն> ծուգ, բարձ>պարծ, որձ>ուրծ, օձ>օծ, փորձանք>փօրծանք, վարձք>վարծք, ձմերուկ>ծմերուգ։

68. Ինչպես երևում է այս օրինակներից Սասունի բարբառում ձ-ի դիմաց ծ-ենք հանդիպում նաև այն դեպքերում, երբ նրան նախորդում են ն, ր, ղ բաղաձայնները։

## Ղ

69. Ղ-ն բոլոր դեպքերում մնում է նույնը։

Այսպես օրինակ՝ խեղճ>խիղջ, աղջիկ>աղճիգ, մաղձ> մաղծ, Թուղթ>Թուղթ, խեղդել>խեղտիլ, մեղք>միղք, բողկ> պուղգ, շաղգամ>շաղկամ. տղա>դղա, փայծաղ>փածիղ։

70. Խաղող բառի մեջ բառամիջի ղ-ն ընկնում է և հնչվում խաղող>խոռուղ կամ խաւող (Տալվորիկում)։ Բառի մեջ երբ երկու ղ է լինում մեկը սովորաբար ընկնում է։ Օրինակ՝ շաղաղել >շաղիլ, ողողել>օղվիլ։

Ուղեղ բառը դառնում է տղօղ։

71. Ղ>խ, ղ>հ հնչյունափոխում Սասունի բարբառում գոյություն չունի։

### Ճ

72. Ճ-ի դիմաց բառի թե սկզբում, թե միջում և թե վերջում Սասունի բարբառը ունի ջ: Բառասկզբում՝ ճար>ջար, ճաշ>ջաշ, ճակատ>ջագադ։

Բառամիջում՝ կոճակ>գոջագ, կճղակ>գջիղ, նաև քջիղ, ճնճուղ>ջինջուղ։

Բառավերջում՝ մաճ>մաջ, եղիճ>էղիջ, ճանճ>ջանջ, որոճ>օրուջ, որոճալ>օրջալ, կիճ>գիջ (խայթոց)։

### Մ

73. Մ-ն անփոփոխ է մնում բոլոր դեպքերում։

Օրինակ՝ մատ>մադ, մորուք>մուրուք, գոմ>կօմ, գոմէշ>կօմէշ, գերեզման>կէրէզման։

### Յ

74. Յ-ն բառասկզբում ընկնում է. օրինակ՝ յոնք>ունք, յղի>տղի, յառաջ>առաջ, յաղթել>տղթիլ, յստակ>ստակ կամ լիստակ, յորանջել>օրանճիլ, օրընճգդալ, յիշատակ>իշտտակ, յաջողում>աջօղում, յիշել>իշիլ (հոյնալ, մէզալ)։

### Ն

75. Ն հնչյունը բոլոր դեպքերում մնում է անփոփոխ։

Նոր>նուր, ներկ>նիրգ։ Նայել-ի փոխարեն գործածվում է հայել (գրաբար), հոյնալ, աշիլ (բուն Սասունում՝ Գելիեգուզանում), մէզալ (փսանաց գավառում), իշկել (խութ-Բռնաշենում)։

76. Բառամիջում՝ մենակ>մինագ, մեռնել>մէռնիլ։

Բառավերջում՝ շուն>շուն, տուն>դուն, դնել>տրիլ (տնիլ)։ Ն>լ փոփոխություն՝ նապաստակ>լաբստրագ, այդ մի օրինակն ունենք։

### Շ

77. Շ-ն բոլոր դեպքերում անփոփոխ է մնում։

### Ձ

78. Ձ-ն բոլոր դեպքերում անփոփոխ է մնում։

## Պ

79. Խուլ պ-ի դիմաց բոլոր դեպքերում բարբառս ունի ձայնեղ բ:

Այսպես օրինակ՝ պանիր>բանիր, պետք>բէդք, պահապան>բոհոբան, պաշտպան>բաշդբան, պսակ>բսագ, վարդապետ>վորտոբիդ, եպիսկոպոս>էբիսգաբուս, դեպի>տոբ (տաբ ըս—դեպի ինձ), վիշապ>հուշաբ։

## Ջ

80. Ջ-ի դիմաց բոլոր դեպքերում հանդիպում ենք խուլ ճ։ Այսպես օրինակ՝ ջուր>ճուր, ջորի>ճորի, ջրաղաց>ճաղաց, առաջին>էռճին, ոջիլ>օճիլ, հաջել>հոճալ, արջ>առճ, մրջյուն>մրճիմ, մունիջ, երինջ>էրինճ, փունջ>փունճ, Նարինջ>Նարինճ, ականջ>անգաճ։

## Ռ

81. Ռ-ն մնում է անփոփոխ։

## Ս

82. Ս-ն մնում է անփոփոխ։

## Վ

83. Վ-ն մնում է անփոփոխ, միայն վիշապ բառի մեջ վ-ն դառնում է հ—հուշաբ։

## Տ

84. Խուլ տ-ի դիմաց բոլոր դեպքերում հանդիպում ենք ձայնեղ դ։ Այսպես օրինակ՝ տերև>դէրիվ, տեր>դէր, դատ>տադ, դատաստան>տոդոստան։

85. Ստան վերջածանցով բարդված բառերի տ-ն մնում է անփոփոխ։ Օրինակ՝ Հայաստան>Հոյոստան, Վրաստան>Վրոստան և այլն։

## Ր

86. Ր-ն անփոփոխ է մնում բոլոր դեպքերում։ Ր-ի անկման դեպքերն են՝ շարժ>ժաժ, արժան>էժան, երբ>հիպ, հորեղբայր>հողպէր։ Ր-ի տեղափոխություն է տեղի ունենում հետևյալ բառերում՝ դատարկ>տարդագ, կապերտ>գարբիդ, կամուրջ>գարմունջ։

**Փ**

87. Փ-ն մնում է անփոփոխ բոլոր դեպքերում։

**Ք**

88. Ք-ն մնում է անփոփոխ բոլոր դեպքերում։

## դ) ԱՆԿՈՒՄ

89. Սասունի բարբառում հնչյունների անկման դեպքերը հետևյալներն են.

Ր-ի անկում է տեղի ունենում ժ, շ բաղաձայններից առաջ. Օրինակ՝ արժան>էժան, արժել>աժիլ, խարշել>խաշիլ, քարշել>քաշիլ։

90. Ջրաղաց բառում ր-ի անկումով ստացվել է ճաղաց ձևը.

91. Ր-ի անկում է տեղի ունենում նաև հ-ից առաջ, օրինակ՝ շնորհաւոր>շնավուր կամ շնաֆուր (նկատելի է, որ հ-ն էլ հետը ընկել է), բառավերջում՝ ճանապարհ>ճամբոհ> ճամբո։

92. Ր-ն ընկնում է բ բաղաձայնից առաջ։ Օրինակ՝ երբ>եպ, հիպ, երբոր>եպօր, հիպօր կամ հիպըր։

93. Տ-ն ընկնում է վ բաղաձայնից առաջ։

Օրինակ՝ աստված>ասվաձ.

94. Ղ-ն ընկնում է ճ-ին նախորդելու դեպքում.

Օրինակ՝ խղճմտանք>խըջմդանք>խժմդանք։

95. Ն-ն ընկնում է, երբ բառամիջին նախորդում է ք խուլ շնչեղին։

Օրինակ՝ մենք>մէք, մըք, վարենք>վարէք, վարըք։ Այս երևույթը ընդհանուր է բայերի խոնարհման ժամանակ՝ հոգնակի առաջի դեմքի ն-ն ընկնում է։

Օրինակ՝ մենք գրում ենք>մըք գկըրըք, մենք ուտում ենք>մըք գուդըք, վազենք>վազըք, կերանք>գերաք, թռանք >թռաք (մենք)։ Նկատելի է, որ Սասունի բարբառում հոգնակի առաջին և երկրորդ դեմքերը ունեն միևնույն վերջավորությունը և նախադասության բովանդակությունից է դեմքը գիտակցվում, կամ անձնական դերանունի գործածությունը ըստ դեմքերի պարզում է, թե ո՞ր դեմքով է գրված տվյալ ստորոգյալը։

Օրինակ՝ կերանք>գերաք=մըք գերաք առաջին դեմք, դուք գերաք երկրորդ դեմք։

Մանրամասնությունը կտեսնենք բայերի խոնարհման ժամանակ։

## ե) ՀԱՎԵԼՈՒՄ

96. Ն հնչյունն ավելանում է չ շչականից առաջ։

Օր.՝ ամաչել>ամնչել, որից ամչընալ, կանաչել>գանանչիլ, որից գանչընալ, ճանաչել>ջանանչիլ, որից ջանչընալ։

97. Ք բաղաձայնից առաջ, որոշ բառերում նույնպես Ն հնչյունն ավելանում է։ Օր.՝ արտասուք>արդասունք, առիք>առինք, փարսուք>փարսունք (անասունի կողեր)։

98. Բառամիջում Ն-ն ավելանում է հետևյալ բառերում՝ ավելորդ>էվելնօրտ կամ էվոլնուրտ, նաև էվոլուրտ, գլխաբաց>կլխնբաց։

99. Գ-ն ավելանում է Ն-ից հետո հետևյալ բառերում. մանր>մանգր, մանրել>մանգրիլ, ծանր>ձանգր, ծանրանալ>ձանգրնալ, մանր-մանր>մանգր-մունգր, ծունր>ձունգր։

100. Բ-ն ավելանում է Մ-ից հետո։ Օրինակ՝ համրել>համբրիլ, Թմրիլ>Թմբրիլ։

101. Հ-ի հավելում ունենք հետևյալ բառերում. ալևոր>հալվուր, արբիլ>հարպիլ, ընկեր>հընգիր, երբ>հիպ։

## զ) ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ

102. Սասունի բարբառում հնչյունների կրկնությունը սակավադեպ է, նկատվում է հակառակ երևույթը՝ կրկնակ բաղաձայններից մեկի անկում, սակայն կրկնության դեպքեր առանձին բառերում նկատվում է օրինակ՝ ամեն>ըմմեն, հայցական հոլովը զըմմէն։

103. Դրափոխություն կատարվում է հետևյալ բառերում. փետուր>Թեբուր, կապերտ>գարբիդ, կամուրջ>գարմունջ, սխտոր>խստոր, խստուր։

## է) ՄՈՒՇԻ ԵՎ ՍԱՍՈՒՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ

104. Ինչպես հայտնի է Մուշի բարբառի բաղաձայնական համակարգը քառաստիճան է և չի ենթարկվել ձայնեղների խլացման, մինչդեռ Սասունի բարբառի բաղաձայնական համակարգը եռաստիճան է՝ ձայնեղների խլացմամբ, խուլերի ձայնեղացմամբ և խուլ շնչեղների անփոփոխ մնալով։

Այսպիսով պարզ է դառնում, որ թեև Մուշի և Սասունի բարբառները պատկանում են հայ բարբառների «կը» ճյուղին, բայց ունեն հնչյունական խոշոր տարբերություններ։

105. Պրոֆ. Հր. Աճառյանն իր «Հայերեն գավառական բա-

ռարան»-ի առաջաբանում (Էմինյան ազգագրական ժողովածու, հատ. Թ, էջ 29) Սասունի բարբառը նույնացնում է Մշո բարբառին։ Այդ երկու բարբառների նույնացումը հարգելի պրոֆ. Հ. Աճառյանի կողմից, մեր կարծիքով, առաջացել է Սասունի բարբառին լավ ծանոթ չլինելուց, կամ այդ բարբառի մասին բանավոր ստացված տվյալների ոչ բավարար ստուգված լինելուց, վերջապես Սասունի և Մուշի տերիտորիալ մոտիկությունը պատճառ է դարձել շատերին ենթադրելու, թե նրանց բարբառները նույնն են։

«Կը» ճյուղին պատկանող բարբառների զգալի մասը չի ուսումնասիրված և դրանցից մեկն է Սասունի բարբառը, որի առանձին ուսումնասիրման համար անցյալում չի կատարվել ոչ մի փորձ։

Լավ տիրապետելով Սասունի բարբառին, որպես մայրենի բարբառի և Մուշի բարբառին, որպես աշակերտական-ուսանողական շրջանի բարբառի՝ համեմատելով այդ երկու բարբառների լեզվական իրողությունները միմյանց հետ, գալիս ենք այն համոզման, որ Սասունի բարբառը Մուշի բարբառը չէ, ոչ էլ նրա մի ճյուղը, այլ նրանից անջատ և ինքնուրույն բարբառ է, թե իր բաղաձայնական սիստեմով և թե ձևաբանական առանձնահատկություններով։

Պրոֆ. Հ. Աճառյանն իր վերոհիշյալ աշխատության մեջ («Էմինյան ազգագրական ժողովածու, հատոր Թ, էջ 29) Մուշի բարբառի մասին ասում է՝

1. «Ձայնաւորներու կողմէ հարուստ չէ, տ, իւ, էօ ձայները կը պակսին»։

2. «Ընդհակառակն շատ հարուստ է բաղաձայնը, որ հոս ունի չորս աստիճան.

բ՛ բ պ փ<br>գ՛ գ կ ք<br>դ՛ դ տ թ<br>ձ՛ ձ ծ ց<br>ջ՛ ջ ճ չ»

3. «Կայ և նոր տեսակ մը թրթռուն հ, որ կնշանակենք ‡, ասիկա կը համապատասխանէ գրաբարի յ-ին և կը գրուի միայն բառին սկիզբը».

4. «Խոնարհման ժամանակ բային ե և է ածանցատառերը կըլլան ի... «յէս կուզինք, «մընք կուզինք» և այլն։

Վերոհիշյալ չորս կետերում նշված մեջբերումները ճիշտ են և բնորոշ Մուշի բարբառին, որից կարելի է եզրակացնել, որ պրոֆ. Հ. Աճառյանը ուսումնասիրել է Մուշի բարբառը, սակայն նրա եզրակացությունը, թե Սասունի բարբառը նույն Մուշի բարբառն է, կամ նրա մեջ է մտնում, մեր կարծիքով, առաջացել է Սասունի բարբառին ոչ լրիվ ծանոթ լինելուց, այդ բարբառի մասին ճշտված գրավոր կամ բանավոր տվյալներ չունենալուց, կամ ձեռքի տակ եղած տվյալների Սասունի բարբառին հարազատ չլինելուց։

Ի տարբերություն Մուշի բարբառի Սասունի բարբառը՝

1) Ձայնավորների կողմից հարուստ է, և եթե Մուշի բարբառում ա̈, իւ, էօ հնչյունները չկան, ապա Սասունի բարբառում ա̈ հնչյունը ոչ միայն կա, այլ իր գործածությամբ գրեթե համասարվում է ա-ին, իւ և էօ հնչյուններն էլ կան, բացի այդ երեքից կան նաև ո̈, ո̈է, հնչյունները։ Ձայնավորները և բաղաձայնները որպես բարբառների դասակարգման հիմքերից մեկը, ինչպես տեսնում ենք, տարբերվում են այդ երկու բարբառներում և իրավունք են տալիս հանգելու այն եզրակացության, թե այդ երկու բարբառները նույնը չեն, այլ «կը» ճյուղի իրարից տարբեր բարբառներ։

2) Սասունի բարբառն ի տարբերություն Մուշի բարբառի չունի բաղաձայնական քառաստիճան համակարգ, ըստ որում բ՛, գ՛, դ՛, ձ՛, ջ՛ հնչյունները, որոնք շատ բնորոշ են և հատուկ են Մուշի բարբառին, գոյություն չունեն, չեն գիտակցվում, Սասունի բարբառում, մի հանգամանքը, որ նույնպես հաստատում է այդ երկու բարբառների իրարից տարբեր լինելը։

3) Սասունի բարբառում ձայնեղ ճ՛, այսինքն գրաբարի բառասկզբի յ-ին համապատասխանող ձայնը գոյություն չունի, այնինչ այդ ձայնեղ ճ-ն շատ բնորոշ է Մուշի բարբառին և շատ գործածական այդ նույն բարբառում։

4) Մուշի բարբառում բայերի խոնարհման ժամանակ ե և է հիմքի ձայնավորները դառնում են ի. օրինակ՝ «յէս կուզինք», «մընք կուզինք», իսկ Սասունի բարբառում ներկայի հիմքի ե-ն դառնում է ը, իսկ անցյալ անկատարի է-ն մնում է անփոփոխ, հոգնակի թվի առաջին դեմքում կորցնելով իրեն հաջորդող ն ռնգայինը։ Օր.՝ «ըս գուզըմ», «մըք գուզէք»։

5) Մուշի բարբառի բաղաձայնական սիստեմում ձայնեղի խլացում, բ>պ բերան>պերան և այլն, և խուլերի ձայնեղա-

ցում, պ>բ, պանիր>բանիր, պապ>բաբ, տեղի չի ունենում, մինչդեռ Սասունի բարբառում դրանք տեղի են ունեցել և այն էլ շեշտված ձևով։

6) Սասունի բարբառում ո̈ (w) շատ գործածական հնչյուն գոյություն ունի՝ ո̈լո (ւո̈լա) wolə (երգում՝ «աստված»), ո̈ր (ուոր) wor («որ»), մինչդեռ Մուշի բարբառում ո̈(w) հնչյուն գոյություն չունի և այդ հնչյունը վ-ով է արտաբերվում՝ վալա (նույն երգումը)։

7) Հ>խ (հաց>խաց) հնչյունափոխության երևույթը Սասունի բարբառում չկա։

Այս ամենից կարելի է գալ այն եզրակացության, որ Սասունի բարբառը «կը» ճյուղի առանձին մի բարբառ է և չի նույնանում Մուշի բարբառին։ Մուշի բարբառին է պատկանում Սասունի տասը շրջաններից միայն Խութ-Բռնաշենի խոսվածքը և դա հասկանալի է, որովհետև ինչպես նշված է «Աշխարհացույց»-ում Խութ-Բռնաշենի շրջանը մտնում էր պատմական Հայաստանի Տարոն-Տուրուբերանի մեջ և ոչ թե Աղձնիքի կամ Սասունի մեջ։

Խութ-Բռնաշենի խոսվածքի բաղաձայնական սիստեմը էլ, հնչյունափոխությունն էլ նման են Մուշի բարբառին, իսկ Սասունի մնացած գավառների խոսվածքները՝ բուն Սասունը, Սասունի Շատախը, Տալվորիկը, Փսանքը, Հազոն, Խուլբը, Խիանքը, Խարզանքը և Մոտկանը իրենց բաղաձայնական համակարգով և հնչյունափոխությամբ տարբեր են Մուշի բարբառից։

Ելնելով վերոհիշյալներից կարծում ենք Սասունի բարբառը «կը» ճյուղին պատկանող Մուշի բարբառը չէ, այլ առանձին մի բարբառ և իբրև այդպիսին էլ պետք է դիտվի այսուհետև։

# ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

## ա) ՀՈԳՆԱԿԻԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

*106. Հոգնակիի կազմությունը Սասունի բարբառում կատարվում է եզակիի վրա ավելացնելով հետևյալ մասնիկները.*

անք, ք, իր, նին, դիք. վնի, ստան, դանք, դօնք, վրդանք, անք. *ըստ որում* իր-ը եր-ն է՝ *միավանկ բառերի հոգնակիի մասնիկը,* նին, ներ-ն է՝ *բազմավանկ բառերի հոգնակիի մասնիկը, իսկ* անք. ք, իք, դիք *հոգնակիի մասնիկները գրաբարաձև հոլովված բառերում են գործածվում։*

*107. Ք-ով հոգնակի են կազմում ձայնավորով վերջացող բառերը։ Օր.՝ ածելի>աձլիք, այգի>էկիք, հոգի>հօկիք, կորի>գօրիք (արտերի մեջ քաշված առուներ), ջորի>ճօրէք (ի-ն փոխվել է է-ի), սատանայ>սոդոնէք, չուխայ>չուխէք, փեսայ>փեսէք, գուլպայ>կուլբէք կուրբէք, վկայ>վկէք. երեխայ>էրոխէք (այ-երը փոխվել են է-ի)։*

*108. Ք—մասնիկով հոգնակի են կազմում նաև հավաքականություն ցույց տվող* ցի, ացի *վերջամասնիկով բառերը, օրինակ՝ գիւղացի>գէղոցի>գէղոցիք, չինացի>չինոցիք։*

*109.* Իր *մասնիկով հոգնակի են լինում միավանկ բառերը։*

*Օրինակ՝ տուն>դնիր, շուն>շնիր, փայտ>փէդիր, քար>քարիր, ուս>ուսիր, գործ>կորձիր, գետ>կէդիր, դեղ>տէղիր լոյս>լուսիր, քոյր>քուրիր, ձագ>ծակիր, ծակ>ձագիր, արջ>արճիր և այլն։*

*Երբ միավանկ բառը բարբառում եզակիում հնչյունափոխվել է, հոգնակի դառնալու ժամանակ նախ ընդունում է նախնական ձևը, ապա նոր ստանում հոգնակի մասնիկ. ինչպես՝ դեղ>տիղ>տէղիր, գեղ>կիղ>կէղիր, ցեխ>ցիխ>ցէխիր, կեռ>գիռ>գէռիր, բեռ>պիռ>պէռիր կամ պէռնիր (ն-ն գրաբարյան վերջահանգ ն-ն է)։*

*110. Բազմավանկ բառերը հոգնակի դառնալիս ստանում են*

ԵԻՆ *(նէր) մասնիկը. օր.՝ աղաչնի>էղվընիգ, էղվընգնին, փե-թակ>փէթկնին, շապիկ>շապգընին, մեզար>մէզըրնին, կա-րաս>գարսընին, խոտնոց>խոդնուց>խոդնոցնին, կռունկ>գռունգ>գըռընգնին, կանկար>գանգար>գանգըրնին, կոզիկ>գոզիգ>գըռզըգնին և այլն։ Վնի-ով հոգնակի են կազմում մարմ-նի զույգ անդամները արտահայտող բառերը. օրինակ՝ աչ(ք)—աչ-վընի, ոտ—օդվնի, ունք—ընքվնի։*

*111։* Դիք *մասնիկով հոգնակի են կազմում ազգակցություն, բարեկամություն ցույց տվող բառերը,* դիք *մասնիկին* դանք *մասնիկն էլ է փոխարինում։*

*Օր.՝ կին>գնիգ>գնգդիք, պապ>բաբ>բաբդիք, հորեղ-բայր>հողպեր>հողպրդիք, հորքուր>հորքրդիք, աղբեր>աղ-պըրդիք, քույր>քուր, քուրվըրդիք (քուրիր), քեռի>քէռվըդիք (քեռիք)։ Աղպըրդանք, հողպրտանք էլ է գործածվում։*

*112. Այն բառերը, որոնք գրաբարյան հոգնակի ձևեր են, բայց բարբառում եզակի իմաստ ունեն ստանում են նոր հոգ-նակի մասնիկներ. օր.՝ խոսք>խոսքիր, ոտք>ուդք>օդքիր (օդըվ-նին), միտք>մտքիր, տուրք>դրքիր և այլն։*

*113. Ներքոհիշյալ բառերը զանազան ձևերով են հոգնակի դառնում։ Պառավ>բառավ>բառվըդիք, ոսկոր>օսկուր>օսկըր-դիք, կամուրջ>գարմունջ>գարմընջնին, պսակ>բսագ>բսագ-նին, ջրաղաց>ճաղաց>ճաղցընին, սերմ>սիրմ>սերմիր, տայ-գըր>դէկր>դէկորդիք։*

*114. Ակ-ով վերջացող մի քանի բառերի հոգնակիները.*

*առակ>առագ>առոգնին,*
*գդակ>կդակ>կդակնին,*
*զավակ>զավագ>զավգընին,*
*կոճակ>գօջագ, գոջգընին,*
*շալակ>շալագ, շալգընին,*
*վիճակ>վիջագ, վիջգընին,*
*փեթակ>փէթագ, փէթգընին,*
*քսակ>քիսըք, քիսըքնին,*
*բարակ>պարագ>պարգընին,*
*դանակ>տանագ>տանգընին,*
*կայծակ>գէձագ, գէձգընին,*
*մոծակ>մժիղ, մժղընին,*
*որձակ>օրծուգ, օրծգնին,*
*տախտակ>դախտագ, դախտըգ-նին*
*քուռակ>քուռագ, քուռգընին և այլն։*

*115. Ու վերջավորությունն ունեցող բառերում հոգնակի թվում* ու-ն *դառնում է* վ.

*Օր.՝ լու>լու, լվիր, կատու>գադու, գադվընին, հերու> հերու, հերվընին։*

116. Ձի բառը հոգնակի է լինում ան (անք) մասնիկով։ Օր. ձի>ծի, ծիան կամ ծիանք։

117. Անք մասնիկով հոգնակի են լինում հետևյալ բառերը։ Օր. գյուղ>կիղ, կէղրանք, դեղ>տիղ, տէղրանք, փշուր>փշրանք, տեղ>դիխ, դէղվանք, ամոթ>ամօթանք։

118. Նին հոգնակին հատուկ է բուն Սասունի (Գելիեգուզան, Շենըք, Սեմալ) խոսվածքին, տալվորիկցիները նին հոգնակի մասնիկի հետ միաժամանակ գործածում են նիր հոգնակին։

Ստան մասնիկով հոգնակի են լինում քեռիներ>քեռոստան, ջորիներ>ճօրէք, ճօրստան, արջեր>արջստան նաև արջիր։

Դանք, դօնք, վրդանք մասնիկներով հոգնակի են լինում՝ գոմեշներ>կօմշըդանք, մյուսներ>մոդոլդօնք, ընկերներ>ընգերդանք կամ հընգերդանք, քույրեր>քուրվըդանք (քուրվըդիք)։

Անք մասնիկով հոգնակի են լինում գյուղ, տեղ բառերը>կեղրանք, տեղրանք, որոնք հավանաբար առաջացել են կէղիր, տէղիր հոգնակի ձևերից, բայց իր մասնիկի հոգնակիության մթագնման հետևանքով ի-ի անկումով ավելացել է անք հոգնակի մասնիկը։

Վէք մասնիկով՝ տիրացուներ>դիրոցվէք։

## ը) ՀՈԼՈՎՆԵՐ ԵՎ ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐ

119. Սասունի բարբառը «կը» ճյուղի մյուս բարբառների նման ունի վեց հոլով՝ ուղղական, սեռական, տրական, հայցական բացառական և գործիական։ Ներգոյական հոլով չունի, հայցական հոլովը կատարում է նաև ներգոյական հոլովի պաշտոն։

Այսպես, օրինակ՝ «Սասուն գազըր գիջնո» (Սասունում մանանա է իջնում)։ «Էղդոցին մարդ չկո» (եկեղեցում մարդ չկա) և այլն։

### Հոլովումներ

120. Սասունի բարբառն ունի ութը հոլովիչ՝ ը (ի-ի փոխարեն), ու, ան, ի (յան-ի փոխարեն), վո, ուն (ոչ-ի փոխարեն) օր և ց, որը քիչ է գործածական։

### Առաջին՝ ը—(ի) հոլովում

121. Այս հոլովման եզակի թվի հոլովական վերջավորու-

*Թյուններն են՝ սեռական՝ ը, տրական՝ ի. բացառականը՝* էն, ից, *առանձին դեպքերում՝* ուց, *գործիական՝* ով *կամ* ինով:

*Հայցականը նման է ուղղականին, որոշյալ առման դեպքում ստանում է* զ *նախդիրը:*

| | Եզակի | Հոգնակի |
|---|---|---|
| Ուղղ. | տշտգիրդ | տշտգիրդնին |
| Սեռ. | տշտգիրդը | տշտգիրդնիրու |
| Տր. | տշտգէրդի(ն) | տշտգիրդնիրու(ն) |
| Հայց. | զտշտգիրդ | զտշտգիրդնին |
| Բաց. | տշտգէրդը ինտ, տշտգէրդէն | տշտգիրդնիրու ինտ, էն, |
| Գործ. | տշտգիրդով | տշտգիրդնիրով: |

| | Եզակի | Հոգնակի |
|---|---|---|
| Ուղղ. | բադ (պատ) | բադիր (պատեր) |
| Սեռ. | բադը | բադտրու |
| Տր. | բադի(ն) | բադտրու |
| Հայց. | զբադ | զբադիր |
| Բաց. | բադը ինտ(էն) | բադտրու ինտ (էն, ուց) |
| Գործ. | բադով | բադտրով: |

## Երկրորդ հոլովում

**122.** *Երկրորդ հոլովման հոլովիչն է* ու: *Օր՝. ծի (ձի):*

| | Եզակի | Հոգնակի |
|---|---|---|
| Ուղղ. | ծի | ծիանք, ծիանին, |
| Սեռ. | ծիյու | ծիանու |
| Տր. | ծիյուն | ծիանուն |
| Հայց. | զծին | զծիանք, զծիանին |
| Բաց. | ծիու ինտ (ծիէն) | ծիանու ինտ, ծիանէն |
| Գործ. | ծիով | ծիանով: |

| | Եզակի | Հոգնակի |
|---|---|---|
| Ուղղ. | մարտ (մարդ) | մտրտիր |
| Սեռ. | մտրտու | մտրտտրու |
| Տր. | մտրտուն | մտրտտրուն |
| Հայց. | զմարտ | զմտրտիր |

Բաց. մորտուց, մարտու ինտ, մորտտրուց, մարդկանց ինտ, մորտէն
Գործ. մորտով մորտտրով։

### Երրորդ՝ ան հոլովում

| | | Եզակի | Հոգնակի |
|---|---|---|---|
| 123. | Ուղղ. | թուռ (թոռ) | թոռնիր |
| | Սեռ. | թոռան | թոռնտրու |
| | Տր. | թոռան | թոռնտրուն |
| | Հայց. | զթուռ | զթոռնիր |
| | Բաց. | թոռան ինտ, էն | թոռնտրու ինտ, էն, ուց |
| | Գործ. | թոռով | թոռնտրով։ |

Այս հոլովման մեջ եզակի ուղղական և հայցական հոլովներում «թոռ» բառը Սասունի բարբառում թուռ ձևով է հանդես գալիս, մնացած բոլոր հոլովներում, եզակի, թե հոգնակի պահպանում է իր գրական ձևերը։

### Չորրորդ՝ ի հոլովում

| | | Եզակի | Հոգնակի |
|---|---|---|---|
| 124. | Ուղղ. | քաճութին (քաջություն) | քաճութիննին (քաճութինին) |
| | Սեռ. | քաճութնի | քաճութիննու |
| | Տր. | քաճութնին | քաճութիննուն |
| | Հայց. | զքաճութին | զքաճութիննին |
| | Բաց. | քաճութնից (ինտ) | քաճութիննուց (ինտ) |
| | Գործ. | քաճութնով | քաճութիննով։ |

### Հինգերորդ՝ վտ հոլովում

| | | Եզակի | Հոգնակի |
|---|---|---|---|
| 125. | Ուղղ. | օր | օրիր |
| | Սեռ. | օրվտ | օրտրու |
| | Տր. | օրվտ | օրտրուն |
| | Հայց. | զօր | զօրիր |
| | Բաց. | օրվընտ, էն | օրվընու ինտ, օրվընուց (օրտրուց) |
| | Գործ. | օրով | օրտրով։ |

*Այս հոլովման մեջ հոգնակի սեռական, տրական և գործիական հոլովները օրերու, օրերու և օրերով-ի փոխարեն օրտրու, օրտրու և օրտրով ձևերն են ստացել, այսինքն «եր»-երը փոխվել են «տր»-ի։*

### Վեցերորդ՝ ուճ հոլովում

| | | Եզակի | Հոգնակի |
|---|---|---|---|
| 126. | Ուղղ. | քուր (քույր) | քուրիր |
| | Սեռ. | քուրուճ | քուրտրու |
| | Տր. | քուրուճ | քուրտրու |
| | Հայց. | զքուր | զքուրիր |
| | Բաց. | քուրուճ ինտ, մէն | քուրտրուց (ինտ), քուրտրու ինտ |
| | Գործ. | քուրով | քուրտրով։ |

*Նույն հոլովման մեջ հոգնակի սեռական, տրական, բացառական և գործիական հոլովների քուրտրու, քուրտրու, քուրտրուց և քուրտրով ձևերում տեղի է ունեցել ե>տ հնչյունափոխությունը։*

### Յոթերորդ՝ օր հոլովում

| | | Եզակի | Հոգնակի |
|---|---|---|---|
| 127. | Ուղղ. | աղպէր (եղբայր) | աղպրդիք, աղպրդանք |
| | Սեռ. | աղպօր | աղպրդուց, աղպրդանց |
| | Տր. | աղպօր | աղպրդուց, աղպրդանց |
| | Հայց. | զաղպէր | զաղպրդիք, զաղպրդանք |
| | Բաց. | աղպօրմէն, աղպօրինտ | աղպրդուց ինտ, աղպրդանց ինտ |
| | Գործ. | աղպօրով, աղպրով | աղպրդօցով, աղպրդանցով։ |

### Ութերորդ՝ ց հոլովում

| | | Եզակի | Հոգնակի |
|---|---|---|---|
| 128. | Ուղղ. | չունի | Սադօյէնք |
| | Սեռ. | — » | Սադօյէնց |
| | Տր. | — » | Սադօյէնց |
| | Հայց. | — » | զՍադօյէնք |
| | Բաց. | — » | Սադօյէնց ինտ, մէն |
| | Գործ. | — » | Սադօյէնցով, ինով։ |

Հոլովման այս ձևը քիչ գործածական է Սասունի բարբառում, բացի մի քանի բառերից։ Ընդհանրապես Սադօյէնք ասելու փոխարեն ասում են Սադօյի տներ, պապոնք ասելու փոխարեն՝ բաբոյի տներ և այլն։

## Գրաբարաձև հոլովումներ

129. Սասունի բարբառում, բավական ուժեղ պահպանված է հոգնակի սեռական, տրական հոլովներում գրաբարյան աց, ուց հոլովական վերջավորությունները, այսպես օրինակ՝ եղբայր>աղպէր, հոգնակի աղպրդիք, աղպրդանք, սեռական՝ աղպրդուց կամ աղպրդանց, տրական աղպրդունց, աղպրդանց։

Ոսկր>օսկուր, հոգնակի ուղղական օսկրդիք կամ օսկըրդանք, սեռական և տրական օսկրդունց կամ օսկրդանց։

Կին>գնիգ, հոգնակի գնգդիք, սեռական և տրական գնգըդուց կամ կնգդանց (գր. կանանց)։ Ձի հոգ. ձիանք (ձիանին), սեռական և տրական ձիանու (նաև ձիանց)։

Գյուղացի>կըղոցի, հոգնակի կէղոցիք, սեռական և տրական կէղոցուց (գյուղացիների)։

Սասունցի, հոգնակի՝ սասունցիք, սեռական և տրական սասունցուց (սասունցիների)։

Վանեցի, հոգնակի՝ վանեցիք, սեռական և տրական վանեցուց (վանեցիների)։

Գյուղ>կիղ, հոգնակի կէղիր կամ կէղրանք, սեռական տրական կէղրանց (գյուղերի)։ «Ձմըր կէղրանց անուն ինչո՞ւ ասըմ» (մեր գյուղերի անուններն ինչո՞ւ ասեմ)։

130. Պետք է նշել, որ Սասունի բարբառը ունի տարբեր խոսվածքներ։ Զգալի տարբերություններ կան բուն Սասունի և Տալվորիկի խոսվածքների միջև մի կողմից, Խութ-Բռնաշենի, Փսանքի, Հազզոյի, Մոտկանի, Խիանի, Խուլբի, Սասունի, Շատախի խոսվածքների միջև մյուս կողմից։ Մեր ուսումնասիրության համար հիմք ենք ծառայել բուն Սասունի կենտրոն Գելիեգուզան գյուղի և Տալվորիկի խոսվածքները, որոնք իրենց մեջ պարունակում են Սասունի բարբառի ամենաբնորոշ լեզվական առանձնահատկությունները։

## գ) Հ Ո Դ

131. Որոշիչ հոդերն են ը և ն, ը-ն բաղաձայնով վերջավորվող, իսկ ն-ն ձայնավորով վերջավորվող բառերի համար։

Գատուն կուզ է (կատուն գող է), իզը փախավ (եզը փախավ)։

Անորոշ հոդը «ըմ»-ն է. ինչպես՝ քուվիմ՝ տեսա «մի քուվի (վայրի այծ) տեսա։ Այստեղ «քուվի» բառը ունենալով ձայնավոր վերջավորություն ըմ անորոշ հոդի ը-ն կրճատվել է և միայն մ՝ հնչյունն է անորոշ հոդի դերը կատարում։

«Մարդըմ էգավ մըր դուն», (մի մարդ եկավ մեր տունը)։ «Խնձուրըմ գէրտ, մեկ լէ դըվոցը քըզը», (մի խնձոր կերա, մին էլ տվի քեզ)։

## դ. ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

132. Համեմատական աստիճան կազմելու համար գործածվում է «կըց» և «էլ» բառերը. ինչպես՝ «ըմ յար կըց քում էլ խօրօդիկ», (իմ յարը քոնից ավելի գեղեցիկ է)։

133. Ածականների համեմատության աստիճանների համար գործածվում է նաև տան մասնիկը. ինչպես՝ կարմըրտան—ավելի կարմիր, զընգըլտան—ավելի հնչեղ։

134. Գերադրական աստիճան կազմելու համար գործածում են թովըընու, ըմընու բառերը. թովըընու միծը—ամենամեծը, թովըընու խելօքը—ամենախելոքը, ըմընու անխելք—ամենաանխելքը, ըմընու խիղճը—ամենախեղճը և այլն։

Թովըընու, ըմընու բառերը ածականներին միացված չեն գրվում, այլ առանձին։

## ե. ՔԱՆԱԿԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ

135. Քանակական թվականներն են. մէգ, էրգուք, իրիք, չուրս, հինգ, վից, յօթ, ութ, ին, դաս, քսան, էռսուն, քառսուն, իթսուն, վաթսուն, յօթոնսուն, ութոնսուն, ինսուն, հորիր, հողար, միլուն։

Տասից քանի սահմանում կազմված թվերը կրում են ա>ո փափոխություն։ Այսպես օրինակ՝

Դոսնումեգ, դոսնէրգուք, դոսնիրիք, դոսնուչուրս, դոսնուհինգ, դոսնուվից, դոսնույօթ, դոսնուութ, դոսնուինը, քսան։

Հարյուր և հազար քանակական թվականները իրենց հաջորդող թվականներին միանում են առանց հոդակապի։ Այսպես օրինակ՝ հորիր մէգ, հողար էրգու հորիր դոսնու մէգ և այլն

136. Դասական թվականներ կազմելու համար քանակականների վրա ավելացվում է ընչի մասնիկը։ Այսպես՝ էրգուք-ընջի, իրիք-ընջի, չուրս-ընջի, հինգ-ընջի վեց-ընջի, յոթ-ընջի, ութ-ընջի, ին-ընջի, տաս-ընջի և այլն, բացի առաջին-էռջին-ից։

137. Բաշխական թվականները կազմելու համար քանակական թվականները կրկնվում են։ Այսպես օրինակ՝ մէգ-մէգ, էրգուք-էրգուք, ութ-ութ, ին-ին, դաս-դաս և այլն։ Ական մասնիկը երբեք չի գործածվում։

138. Զափական թվականները կազմելու համար դրվում է –տնուց կամ –նուց մասնիկը։ Այսպես օրինակ՝ մէգ-տնուց, էրգուք-տնուց, իրիք-տնուց, չուրս-տնուց, հինգ-տնուց, վից-տնուց, յօթ-տնուց, ութ-տնուց, ին-տնուց, դաս-նուց, քասն-նուց, էռսն-նուց, քառսն-նուց, հորըր-նուց, հոզար-նուց և այլն։

139. Քանակական թվականները հոլովվում են առաջին՝ ը հոլովման նման, ուրեմն սեռական հոլովում կլինեն՝ մէգը, էրգուքը, իրիքը, չուրսը, հընգը, վեցը, յօթը, ութը, ինը, դասը և այլն։

140. Թվականները գոյականների հետ գործածվելիս չեն հոլովվում. օրինակ՝

| | Եզակի | Եզակի |
|---|---|---|
| Ուղղ. | իրիք մարդ | հինգ-ընջի մարդ |
| Սեռ. | իրիք մորդու | հինգ-ընջի մորդու |
| Տր. | իրիք մորդու(ն) | հինգ-ընջի մորդու(ն) |
| Հայց. | զիրիք մարդ | զհինգ-ընջի մարդ |
| Բաց. | իրիք մորդու ինտ, ուց | հինգ-ընջի մորդու ինտ, ուց |
| Գործ. | իրիք մորդով | հինգ-ընջի մորդով, |

141. Ինչպես երևում է ուղղական և հայցական հոլովներում մարդ բառը մնում է նույնությամբ, իսկ մյուս հոլովներում մարդ բառի ա հնչյունը վերածվում է ո-ի։

142. Առանձին՝ գոյականաբար գործածվելիս թվականները հոլովվում են ը հոլովմամբ։

| | Եզակի | Եզակի |
|---|---|---|
| Ուղղ. | քսան | քսան-ընջի |
| Սեռ. | քսանը | քսան-ընջըյը |
| Տր. | քսանին | քսան-ընջըյին |
| Հայց. | զքսան | զքսան-ընջի |
| Բաց. | քսանը ինտ, էն | քսան-ընջու ինտ, էն |
| Գործ. | քսանով | քսան-ընջիով։ |

143. *Երկու (էրգուք) թվականը հոլովվում է հետևյալ կերպ՝*

*Եզակի*

| | |
|---|---|
| *Ուղղ.* | *էրգուք* |
| *Սեռ.* | *էրգուքը* |
| *Տր.* | *էրգուքին* |
| *Հայց.* | *զէրգուս* |
| *Բաց.* | *էրգուքը ինտ, էն* |
| *Գործ.* | *էրգուքով։* |

144. *Հայցական հոլովում էրգուք բառի հոգնակի ք հըն-չյունի ս-ի փոխվելը բարբառիս մեջ գրաբար ձևի պահպանման ապացույցն է։*

## *գ. ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ*

145. *Անձնական՝ ըս, տու, օնը։ Տալվորիկում ես, եսի, տու, օնը։*

146. *Ցուցական՝ սա—հօյդօ, դա—հօյնօ, նա—օնը, մյուս—մօգէլ, այսպես—հօյմօլ, այդպես—օդմօլ, այնպես—օմօլ, այսպիսի—հօյդօմօլ, այսքան—օսխօդօր, այդքան—օդխօդօր, այնքան—օնխօդօր, այստեղ—հօյդադիխ, այնտեղ—հօյնօդիխ, նույնտեղ-օնդիխ։*

147. *Փոխադարձ՝ միմյանց—իրար, իրար—զիրար, մեկմեկու—մէգզմէգու։*

148. *Հարցական՝ ո՞վ—ո՞ւվ, ի՞նչ—ի՞նչ (հայց. զի՞նչ), ո՞ր—ո՞ւօրմէգ, քանի՞—քօնի՞, որքա՞ն—ինչխօդօր, որպե՞ս—ի՞մօլ, քանի՞երորդ—քօնի՞-ընջի, ո՞րտեղ—հո՞ւր։*

149. *Որոշյալ՝ ամեն—ըմեն, ամենը—զըմեն (հայց.) բոլոր—պօլուր, յուրաքանչյուր—հօրմեգ։*

### Անձնական դերանունների հոլովումը

*Եզակի*

| | | | |
|---|---|---|---|
| 150. *Ուղղ.* | *ըս (ես)* | *տու* | *օնը* |
| *Սեռ.* | *ըմ* | *քու* | *օնուր* |
| *Տր.* | *ընձը* | *քըզը* | *օնուր* |
| *Հայց.* | *զընձը* | *զքըզը* | *զօնը* |

| | | | |
|---|---|---|---|
| Բաց. | ըմինտ, խնէ | քուինտ | տնուրինտ |
| Գործ. | ըմինով | քուինով | տնուրինով: |

Հոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ուղղ. | մըք (մենք) | տուք (դուք) | տնունք (նրանք) |
| Սեռ. | մըր, միր | ծիր | տնունց |
| Տր. | մըզը | ծըզը | տնունց |
| Հայց. | զմըզը | զծըզը | զտնունք |
| Բաց. | մըրինտ | ծըրինտ | տնունցինտ |
| Գործ. | մըրինով | ծըրինով | տնունցինով: |

## Ցուցական դերանունների հոլովումը

| | | | |
|---|---|---|---|
| Ուղղ. | սա—հոյդը | դա—հոյնը | նա—տնը |
| Սեռ. | սրա—հոյդուր | դրա—հոյնուր | նրա—տնուր |
| Տր. | սրան—հոյդուր | դրան—հայնուր | նրան—տնուր |
| Հայց. | սրան—զհոյդը զոյդը, | դրան—զհոյնը, զոյնը | նրան—զտնը |
| Բաց. | սրանից—հայ-դուրինտ | դրանից—հոյ-նուրինտ | նրանից—տնու-րինտ |
| Գործ. | սրանով—հոյ-դուրինով | դրանով—հոյ-նուրինով | նրանով—տնու-րինով: |

Հոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ուղղ. | սրանք—հոյդունք | դրանք—հոյնունք | նրանք—տնունք |
| Սեռ. | սրանց—հոյդունց | դրանց—հոյնունց | նրանց—տնունց |
| Տր. | սրանց—հոյդունց | դրանց—հոյնունց | նրանց—տնունց |
| Հայց. | սրանց—զհոյդունք | դրանց—զհոյնունք | նրանց—զտնունց |
| Բաց. | սրանցից—հոյ-դունցինտ | դրանցից—հոյ-նունցինտ | նրանցից—անունցինտ |
| Գործ. | սրանցով—հոյ-դունցինով | դրանցով—հայ-նունցինով | նրանցով—անունցինով: |

151. Այս, այդ, այն ցուցական դերանունները հոլովվում են սա, դա, նա դերանունների նման:

Անհրաժեշտ ենք համարում այստեղ համեմատության կարգով դնել Սասունի և Ագուլիսի բարբառների ցուցական դերանունների հոլովումները, որոնք բավական նման են իրար.

152. Պրոֆ. Հ. Աճառյանի «Քննություն Ագուլիսի բարբառի» գրքի էջ 236, պարագրաֆ 300-ում գրված է «Սօ, դօ, նօ դերանունները հոլովվում են նաև հետևյալ ձևով», (այդ սօ, դօ, նօ-ն ցուցական սա, դա, նա դերանուններն են, որոնք Սասունի բարբառում հտյդտ, հտյնտ, տնը դերանուններն են), ստորև տալիս ենք դրանց համատեղ հոլովումը)։

Եզակի

| Գրական լեզվով | | Ագուլիսի բարբառով | Սասունի բարբ. |
|---|---|---|---|
| Ուղղ. | սա | սօ | հտյդտ |
| Սեռ. | սրա | հտտիւր | հտյդուր |
| Տր. | սրան | հտտիւր | հտյդուր |
| Հայց. | սրան | — | զհայդտ, զտյդտ |
| Բաց. | սրանից | հտտիւրից, հտտիւրտնից, հտտիւրհտնից | հտյդուրինտ |
| Գործ. | սրանով | հտտիւրավ, հտտիւրտնով | հտյդուրինով (չունի) կամ |
| Ներգ. | սրանում | հտտիւրամ, հտտիւրտնում | հտյդուր մեջ։ |

Հոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ուղղ. | սրանք | հտտիւք | հտյդուք |
| Սեռ. | սրանց | հտտիւց | հտյդուց |
| Տր. | սրանց | հտտիւց | հտյդուց |
| Հայց. | սրանց | (ուղ. ձևը) | զհտյդուք, զտյդուք |
| Բաց. | սրանցից | հտտիւցտնից | հտյդուցինտ |
| Գործ. | սրանցով | հտտիւցտնով | հտյդուցինով |
| Ներգ. | սրանցում | հտտիւցտնում | հտյդուց մեջ[1]։ |

153. Պրոֆ. Հ. Աճառյանը նույն գրքի նույն էջում գրում է. «Այս հոլովումը ցույց է տալիս, որ իրոք հօկ «այս» բառը ծագած է սա>սօ բառից՝ ս>հ հնչյունափոխությամբ, ինչպես ունենք. սանլ>անհիլ»։ Ս>հ-ի հնչյունափոխության ուժեղ ապացույցը սա, սօ, հօ-ի Սասունի «հտյդտ» ձևն է, որ Ագուլիսի սօ բառի հոլովման երկրորդ ձևի մեջ ի հայտ է գալիս նույնպես։

154. Ստացական դերանունների նմանությունը դարձյալ մեծ է այդ երկու բարբառներում։ Այսպես օրինակ՝

[1] Թե՛ շնչավորի և թե՛ անշունչի դեպքում ներգոյականը մեջ բառի գործածությամբ է լինում։

| Գրական լեզու | Ագուլիսի բարբառ | Սասունի բարբառ |
|---|---|---|
| իմ | ըմ | ըմ |
| մեր | միր | միր |
| ձեր | ձիր | ծիր |
| և այլն | և այլն | և այլն։ |

## Է. ԲԱՅ

155. Սասունի բարբառը հին հայերենի չորս լծորդություններից (ել, ել(իմ), ալ, ուլ) ունի միայն երկուսը իլ և ալ:

Իլ լծորդությունը փոխարինում է և՛ ել և՛ ել(իմ) լծորդություններին։ Այսպես. կրիլ՝ գրել, պերիլ՝ բերել, դանիլ՝ տանել (իմ), նստիլ՝ նստել (իմ) և այլն, որով փաստորեն ել և իլ երկու լծորդություններ արտահայտվում են մի՝ -իլ լծորդությամբ։

Ալ լծորդությունը փոխարինում է ալ և ուլ լծորդություններին։ Այսպես՝ ըլալ՝ լնուլ, թողալ՝ թողուլ։

### ա) Դերբայներ կամ բայի դերբայական ձևեր

156. Դերբայներից գործածվում են վեցը՝

Անորոշ դերբայ—կրիլ—գրել, գարտալ—կարդալ
Ենթակայական դերբայ—կրուղ—գրող, գարտցող—կարդացող
Վաղակատար դերբայ—կրիյ (Տալվորիկում կրիր)—գրել, գարտացիյ—կարդացել
Հարակատար դերբայ—կրուգ—գրած, գարտացուգ—կարդացած
Ապառնի դերբայ—կրոլու—գրելու, գարտոլու—կարդալու
Ժխտական կամ ըղձական—(չըմ) կըրը, (չեմ գրի), (չըմ) գարդա (չեմ կարդա)։

157. Անկատար դերբայը այս բարբառում գոյություն չունի, այն, ինչպես հայտնի է, հատուկ է «ում» ճյուղին պատկանող բարբառներին, հարակատարը «ուգ» վերջավորությամբ հազվադեպ է մասնակցում սահմանական եղանակի ժամանակներ կազմելու գործին։

158. Անորոշ դերբայը գոյականաբար գործածվելիս հոլովվում է, ենթարկվելով ու հոլովման. ինչպես օրինակ՝

Ուղղ. գարտալ
Սեռ. գարտալու
Տր. գարտալու
Հայց. զգարտալ
Բաց. գորտալուց, գարտալու ինտ, գարտալէն
Գործ. գարտալով։

159. Ապառնի դերբայն ունի ալու (ալու) վերջավորությունը, որով նմանվում է անորոշ դերբայի սեռական հոլովին. ինչպես՝ ուղղ. կրիլ «գրել», սեռ. գրելու «կրտլու»։

Ուղղ. գարտալ, սեռ. գարտալու։

160. Հարակատար դերբայի վերջավորությունը «ած»-ի փոխարեն «ուգ» (ուկ) է, գրած—կրուգ, կարդացած—գարտացուգ և այլն։ Ենթակայական դերբայի վերջավորությունը «ող»-ի փոխարեն «ուղ» է. կրուղ—գրող, գարտոցուղ—կարդացող, դէսնուղ—տեսնող, խոսուղ—խոսող և այլն։

## բ) Բայի դիմավոր ձևերը

161. Դիմավոր ձևերը երեքն են՝ սահմանական, հրամայական, ըղձական։ Պայմանական և հարկադրական եղանակներն բարբառումս մտնում են սահմանական եղանակի մեջ, պայմանականը, որպես սահմանական եղանակի ներկա. ինչպես՝ գկրըմ, գկրըս, գկրէ, իսկ հարկադրական եղանակը, որպես սահմանական եղանակի ապառնին. ինչպես՝ դը կըրմ (պիտի գրեմ), դը կըրս (պիտի գրես) և դը կրէ (պիտի գրե)։ Բայերն ունեն դրական և ժխտական խոնարհումներ։

Կրիլ—գրել և գարտալ—կարդալ բայերի դրական խոնարհումները.

## ա) Դրական խոնարհում

### 1. Սահմանական եղանակ

#### Ներկա

Եզակի

| | |
|---|---|
| ըս գկրըմ (գրում եմ) | ըս գգարտամ (կարդում եմ) |
| տու գկրըս | տու գգարտաս |
| տնը գկրէ | տնը գգարտա |

### Հոգնակի

| | |
|---|---|
| մըք գկրըք | մըք գգարտաք |
| տուք գկրէք | տուք գգարտաք |
| տնունք գկրըն | տնունք գգարտան |

## Անցյալ անկատար

### Եզակի

| | |
|---|---|
| ըս գկրէք (գրում էի) | ըս գգարտէք (կարդում էի) |
| տու գկրէր | տու գգարտէր |
| տնը գկրէր | տնը գգարտէր |

### Հոգնակի

| | |
|---|---|
| մըք գկրէք | մըք գգարտէք |
| տուք գկրէք | տուք գգարտէք |
| տնունք գկրէն | տնունք գգարտէն |

## Ապառնի

### Եզակի

| | |
|---|---|
| ըս դկրըմ (գրելու եմ) | ըս դգարտամ (կարդալու եմ) |
| տու դկրըս | տու դգարտաս |
| տնը դկրէ | տնը դգարտա |

### Հոգնակի

| | |
|---|---|
| մըք դկրըք | մըք դգարտաք |
| տուք դկրէք | տուք դգարտաք |
| տնունք դկրըն | տնունք դգարտան |

## Անցյալ ապառնի

### Եզակի

| | |
|---|---|
| ըս դկրէք (գրելու էի) | ըս դգարտէք (կարդալու էի) |
| տու դկրէր | տու դգարտէր |
| տնը դգկրէր | տնը դգարտէր |

### Հոգնակի

| | |
|---|---|
| մըք դկրէք | մըք դգարտէք |
| տուք դկրէք | տուք դգարտէք |
| տնունք դկրէն | տնունք դգարտէն |

### Վաղակատար (Ներկա)

#### Եզակի

| | |
|---|---|
| ըս կրիյ ըմ[1] (գրել եմ) | ըս գարտացիյ ըմ (կարդացել եմ) |
| տու կրիյ ըս | տու գարտոցիյ ըս |
| տնը կրիյ տ | անը գարտոցիյ տ |

#### Հոգնակի

| | |
|---|---|
| մըք կրիյ ըք | մըք գարտոցիյ ըք |
| տուք կրիյ էք | տուք գարտոցիյ էք |
| տնունք կրիյ ըն | տնունք գարտոցիյ ըն |

### Անցյալ վաղակատար

#### Եզակի

| | |
|---|---|
| ըս կրիյ էք (գրել էի) | ըս գարտոցիյ էք (կարդացել եմ) |
| տու կրիյ էր | տու գարտոցիյ էր |
| տնը կրիյ էր | տնը գարտոցիյ էր |

#### Հոգնակի

| | |
|---|---|
| մըք կրիյ էք | մըք գարտոցիյ էք |
| տուք կրիյ էք | տուք գարտոցիյ էք |
| տնունք կրիյ էն | տնունք գարտոցիյ էն |

### Անցյալ կատարյալ

#### Եզակի

| | |
|---|---|
| ըս կրտցր (գրեցի) | ըս գարտոցը (կարդացի) |
| տու կրտցըր | տու գարտոցըր |
| տնը կրըց | տնը գարտաց |

#### Հոգնակի

| | |
|---|---|
| մըք կրտցըք | մըք գարտոցըք |
| տու ք կրտցըք | տուք գարտոցըք |
| տնունք կրտցըն | անունք գարտոցըն |

[1] Տայվորիկում և Փանքում վաղակատարի «կրիյ ըմ»-ի փոխարեն լինում է կրիր ըմ, կրիր ըս, կրիր տ, կրիր ըք, կրիր էք, կրիր ըն, իսկ անցյալ վաղակատարը՝ կրիր էք, կրիր էր, կրիր էր, կրիր էք, կրիր էք, կրիր էն։

### 2. Հրամայական եղանակ

Եզակի

տու կրէ՛ (գրի՛ր)    տու գարտա (կարդա՛)

Հոգնակի

տուք կրեցէք    դուք գարտացէք

### 3. Ըղձական եղանակ

Ապառնի

Եզակի

| | |
|---|---|
| ըս կրըմ (գրեմ) | ըս գարտամ (կարդամ) |
| տու կրըս | տու գարտաս |
| տնը կրէ | տնը գարտա |

Հոգնակի

| | |
|---|---|
| մըք կրըք | մըք գարտաք |
| տուք կրէք | տուք գարտաք |
| տնունք կրըն | տնունք գարտան |

Անցյալ ապառնի

Եզակի

| | |
|---|---|
| ըս կրէք (գրեի) | ըս գարտէք (կարդայի) |
| տու կրէր | տու գարտէր |
| տնը կրէր | տնը գարտէր |

Հոգնակի

| | |
|---|---|
| մըք կրէք | մըք գարտէք |
| տուք կրեք | տուք գարտէք |
| տնունք կրէն | տնունք գարտէն |

## բ. Ժխտական խոնարհում

### 1. Սահմանական եղանակ

Ներկա

Եզակի

| | |
|---|---|
| չըմ կրը (չեմ գրում) | չըմ գարտա (չեմ կարդում) |
| չըս կրը | չըս գարտա |
| չը կրը | չը գարտա |

Հոգնակի

| | |
|---|---|
| չըք կրը | չըք գարտտ |
| չըք կրը | չըք գարտտ |
| չըն կրը | չըն գարտտ |

Անցյալ անկատար

Եզակի

| | |
|---|---|
| չըք կրը (չէի գրում) | չըք գարտտ (չէի կարդում) |
| չըր կրը | չըր գարտտ |
| չըր կրը | չըր գարտտ |

Հոգնակի

| | |
|---|---|
| (մըք) չըք կրը | (մըք) չըք գարտտ |
| (տուք) չըք կրը | (տուք) չըք գարտտ |
| (տնունք) չըն կրը | (տնունք) չըն գարտտ |

Ապառնի

Եզակի

| | |
|---|---|
| բըդ չկրըմ (չեմ գրելու) | բըդ չգարտամ (չեմ կարդալու) |
| բըդ չկրըս | բըդ չգարտաս |
| բըդ չկրէ | բըդ չգարտտ |

Հոգնակի

| | |
|---|---|
| բըդ չկրըք | բըդ չգարտաք |
| բըդ չկրէք | բըդ չգարտաք |
| բըդ չկրըն | բըդ չգարտան |

Անցյալ ապառնի

Եզակի

| | |
|---|---|
| բըդ չկրէք (չէի գրելու) | բըդ չգարտէք (չէի կարդալու) |
| բըդ չկրէր | բըդ չգարտէր |
| բըդ չկրէր | բըդ չգարտէր |

Հոգնակի

| | |
|---|---|
| բըդ չկրէք (մըք) | բըդ չգարտէք |
| բըդ չկրէք (տուք) | բըդ չգարտէք |
| բըդ չկրէն | բըդ չգարտէն |

## Վաղակատար (ներկա)

### Եզակի

| | |
|---|---|
| չըմ կրը (չեմ գրել) | չըմ գարտոցը (չեմ կարդացել) |
| չըս կրը | չըս գարտոցը |
| չը կրը | չը գարտոցը |

### Հոգնակի

| | |
|---|---|
| չըք կրը (մըք)[1] | չըք գարտոցը |
| չըք կրը (տուք) | չըք գարտոցը |
| չըն կրը | չըն գարտոցը |

## Անցյալ վաղակատար

### Եզակի

| | |
|---|---|
| (ըս) չըք կրը (չէի գրել) | չըք գարտոցը (չէի կարդացել) |
| (տու) չըր կրը | չըր գարտոցը |
| (անը) չըր կրը | չըր գարտոցը |

### Հոգնակի

| | |
|---|---|
| (մըք) չըք կրը | չըք գարտոցը |
| (տուք) չըք կրը | չըք գարտոցը |
| (տնունք) չըն կրը | չըն գարտոցը |

## Անցյալ կատարյալ

### Եզակի

| | |
|---|---|
| չկրոցը (չգրեցի) | չգարտոցը (չկարդացի) |
| չկրոցըր | չգարտոցըր |
| չկրըց | չգարտոց |

### Հոգնակի

| | |
|---|---|
| չկրոցըք | չգարտոցըք |
| չկրոցըք | չգարտոցըք |
| չկրոցըն | չգարտոցըն |

[1] Տավրիզի և Փանքի խոսվածքում անձնական «ըս» և «մըք» դերանունները արտահայտվում են ես կամ եսի և մընք կամ մըքի ձևով՝ մընք չընք կրը և այլն, եսի չըմ կրը, տունի չըս կրը և այլն։

2) Հ ր ա մ ա յ ա կ ա ն  ե ղ ա ն ա կ

Եզակի

մը՛ կրէ (մի՛ գրիր)  մը՛ գարտա (մի՛ կարդա)

Հոգնակի

մը՛ կրէք (մի՛ գրեք)  մը՛ գարտէք (մի՛ կարդաք)

3. Ը ղ ձ ա կ ա ն  ե ղ ա ն ա կ

Ապառնի

Եզակի

| | |
|---|---|
| չկրըմ (չգրեմ) | չգարտամ (չկարդամ) |
| չկրըս | չգարտաս |
| չկրէ | չգարտա |

Հոգնակի

| | |
|---|---|
| չկրըք | չգարտաք |
| չկրէք | չգարտաք |
| չկրըն | չգարտան |

Անցյալ ապառնի

Եզակի

| | |
|---|---|
| ըս չկրէք (չգրեի) | ըս չգարտէք (չկարդայի) |
| տու չկրէր | տու չգարտէր |
| տնը չկրէր | տնը չգարտէր |

Հոգնակի

| | |
|---|---|
| մըք չկրէք | մըք չգարտէք |
| դուք չկրէք | տուք չգարտէք |
| տնունք չկրէն | տնունք չգարտէն։ |

162. Ինչպես երևում է խոնարհման տախտակից սահմ. եղանակի անցյալ անկատարի հոգնակի թվում գրաբարի Ե, Ի լծորդության բայերի առաջին դեմքի «էաք» վերջավորությունը Սասունի բարբառում վեր է ածվում էք-ի՝ ա-ի անկումով, իսկ 2-րդ և 3-րդ դեմքերում տեղի է ունեցել ի-ի անկում։

| Գրաբար | Սասունի բարբառում | |
|---|---|---|
| — էաք | — էք | մըք կրէք |
| — էիք | — էք | տուք կրէք |
| — էին | — էն | տնունք կրէն։ |

**163.** Գրաբարում ալ վերջավորություն ունեցող բայերի անցյալ անկատարի այ-ի, այ-իր, այ-ր (եզակի) և այ-աք, այ-իք, այ-ին (հոգ.) վերջավորությունների դիմաց բարբառս ունի՝ էք, էր, էր (եզակի) էք, էք, էն (հոգնակի)։

| Գրաբար | Սասունի բարբառով |
|---|---|
| կարդ-այ-ի | գարտ-էք (ըս) |
| կարդ-այ-իր | գարտ-էր (տու) |
| կարդ-այ-ր | գարտ-էր (տնը) |
| կարդ-այ-աք | գարտ-էք (մըք) |
| կարդ-այ-իք | գարտ-էք (տուք) |
| կարդ-այ-ին | գարտ-էն (տնունք)։ |

**164.** Սասունի բարբառում եզակի առաջին դեմքերը սահմանական եղանակի անցյալ անկատար, անցյալ ապառնի, վաղակատար անցյալ և ըղձական եղանակի անցյալ ապառնի ժամանակներում հոգնակի են գործածվում, եզակի ձև չունեն։ Այս ժամանակներում առաջին դեմքերի եզակի և հոգնակի ձևերն իրար հետ չշփոթելու համար համապատասխան անձնական դերանունները, բայի խոնարհման ժամանակ, գրում ենք՝ ըս (ես) եզակի առաջին դեմքի և մըք հոգնակի առաջին դեմքի համար։

Այսպես օրինակ՝ ըս դկրէք (գրում էի), մըք դկրէք (գրում էինք), ըս դկրէք (գրելու էի), մըք դկրէք (գրելու էինք), ըս կրիյ էք (գրել էի), մըք կրիյ էք (գրել էինք), ըս կրէք (գրեի), մըք կրէք (գրեինք)։

**165.** Ել, իլ վերջավորություն ունեցող բայերի հիմքի ե, ի ձայնավորները սահմ. եղանակի ներկա, ապառնի և ըղձական եղանակի ապառնի ժամանակներում փոխվում են ը-ի։ Օրինակ՝ սիրել և մեռանիլ (մեռնել) բայերը խոնարհվում են այսպես՝

Եզակի

| | |
|---|---|
| սիր-ըմ (սիրեմ) | մէռն-ըմ |
| սիր-ըս | մէռն-ըս |
| սիր-է | մէռն-է |

Հոգնակի

| | |
|---|---|
| սիր-ըք | մեռն-ըք |
| սիր-էք | մեռն-էք |
| սիր-ըն | մեռն-ըն |

## Բայերի սեռերը

166. Սասունի բարբառում ներգործական սեռի բայերը թելադրում են զո՞ւվ, զի՞նչ հարցերը, առաջինը առարկայի (շնչավորների), իսկ երկրորդը իրերի (անշունչների) համար (հայցական հոլով)։

Օրինակ՝
դէսնիլ (զո՞ւվ, զի՞նչ) զԳևորգ, զսեղան։
սիրիլ (զո՞ւվ, զի՞նչ) զվորժորիգ, զկիրք։
բռնիլ (զո՞ւվ, զի՞նչ) զԲեդիգ, զծուգ (կանեփի ցողուն)։

167. Ներգործական սեռի բայերի ուղիղ խնդիրը որոշյալ առումով գործածվելիս ստանում է զ նախդրով հայցական հոլով, իսկ անորոշ առումով գործածության դեպքում առանց զ նախդիրի հայցական հոլով։ Այսպես օրինակ՝ դէսա զմարտ, (մարդը տեսա). մարտ դէսա «մարդ տեսա» կամ ձեր ասած մարդը տեսա (զծըր ասաձ մարտը տեսա)։ Այստեղ հետաքրքրականն այն է, որ մարդ բառի հայցական հոլովի զ նախդիրը դրվել է երկու բառից առաջ «ծըր» դերանվան վրա։

168. Չեզոք սեռի բայերը թելադրում են վո՞ւր, ինչո՞ւ, վո՞ւրինտ, ինչո՞ւինտ, վո՞ւրինով, ինչո՞վ հարցերը, այսինքն տրական, բացառական և գործիական հոլովների հարցերը։ Այս հարցերին համապատասխանաբար գոյականներն էլ դրվում են տրական, բացառական, գործիական հոլովներով։

169. Կրավորական սեռի բայերը կազմվում են նույն ձևով, ինչ որ գրական լեզվինը. օրինակ՝

գրվել-կրվիլ, սիրվել-սիրվիլ, չափվել-չափվիլ և այլն։

170. Ածանցավոր բայերի խոնարհումը.— ենալ, անալ վերջավորությունը ունեցող բայերը բարբառում ստանում են անալ վերջավորությունը և խոնարհվում են հետևյալ կերպ.

## Դիմավոր ձևեր

### 1. Սահմանական եղանակ

#### Ներկա

*Եզակի*

*գմոդտնամ (մոտենում եմ)* — *գհեռտնամ (հեռանում եմ)*
*գմոդտնաս* — *գհեռտնաս*
*գմոդտնտ* — *գհեռտնտ*

*Հոգնակի*

*գմոդտնաք* — *գհեռտնաք*
*գմոդտնաք* — *գհեռտնաք*
*գմոդտնան* — *գհեռտնան*

#### *Անցյալ անկատար*

*Եզակի*

*գմոդտնէք (մոտենում էի)* — *գհեռտնէք (հեռանում էի)*
*գմոդտնէր* — *գհեռտնէր*
*գմոդտնէր* — *գհեռտնէր*

*Հոգնակի*

*գմոդտնէք* — *գհեռտնէք*
*գմոդտնէք* — *գհեռտնէք*
*գմոդանէն* — *գհեռտնէն*

#### *Ապառնի*

*Եզակի*

*դմոդտնամ (մոտենալու եմ)* — *դհեռտնամ (հեռանալու եմ)*
*դմոդտնաս* — *դհեռտնաս*
*դմոդտնտ* — *դհեռտնտ*

*Հոգնակի*

*դմոդտնաք* — *դհեռտնաք*
*դմոդտնաք* — *դհեռտնաք*
*դմոդտնան* — *դհեռտնան*

### Անցյալ ապառնի

#### Եզակի

դմոդտնէք (մոտենալու էի)   դհեռտնէք (հեռանալու էի)
դմոդտնէր   դհեռտնէր
դմոդտնէր   դհեռանէր

#### Հոգնակի

դմոդտնէք   դհեռտնէք
դմոդտնէք   դհեռտնէք
դմոդտնէն   դհեռտնէն

### Վաղակատար (ներկա)

#### Եզակի

մոդտցիյ ըմ[1] (մոտեցել եմ)   հեռտցիյ ըմ (հեռացել եմ)
մոդտցիյ ըս   հեռտցիյ ըս
մոդտցիյ տ   հեռացիյ տ

#### Հոգնակի

մոդտցիյ ըք   հեռտցիյ ըք (մըք)
մոդտցիյ էք   հեռտցիյ էք (տուք)
մոդտցիյ ըն   հեռտցիյ ըն (անունք)

### Անցյալ վաղակատար

#### Եզակի

մոդտցիյ էք (մոտեցել էի)   հեռտցիյ էք (հեռացել էի)
մոդտցիյ էր   հեռտցիյ էր
մոդտցիյ էր   հեռտցիյ էր

#### Հոգնակի

մոդտցիյ էք   հեռտցիյ էք
մոդտցիյ էք   հեռտցիյ էք
մոդտցիյ էն   հեռտցիյ էն

---

[1] Տալվորիկում և Փանքում ասվում է մոդտցիր ըմ, մոդտցիր ըս և այլն, հեռտցիր ըմ, հեռտցիր ըս, հեռացիր տ և այլն։

### Անցյալ կատարյալ

Եզակի

| | |
|---|---|
| մոգտցտ (մոռեցա) | հեռտցտ (հեռացա) |
| մոգտցար | հեռտցար |
| մոգտցավ | հեռտցավ |

Հոգնակի

| | |
|---|---|
| մոգտցաք | հեռտցաք |
| մոգտցաք | հեռտցաք |
| մոգտցան | հեռտցան |

## 2. Հրամայական եղանակ

Եզակի

մոգտ՛ցը (մոռեցի՛ր) հեռտ՛ցը (հեռացի՛ր)

Հոգնակի

մոգտցե՛ք հեռտցե՛ք

## 3. Ըղձական եղանակ

### Ապառնի

Եզակի

| | |
|---|---|
| մոգտնամ (մոռենամ) | հեռտնամ (հեռանամ) |
| մոգտնաս | հեռտնաս |
| մոգտնտ | հեռտնտ |

Հոգնակի

| | |
|---|---|
| մոգտնաք | հեռտնաք |
| մոգտնաք | հեռտնաք |
| մոգտնան | հեռտնան |

### Անցյալի ապառնի

Եզակի

| | |
|---|---|
| մոգտնէք (մոռենայի) | հեռտնէք (հեռանայի) |
| մոգտնէր | հեռտնէր |
| մոգտնէր | հեռտնէր |

Հոգնակի

| | |
|---|---|
| մոդանէք | հեռանէք |
| մոդանէք | հեռանէք |
| մոդանէն | հեռանէն |

171. Ն, չ, և նչ. ածանց ունեցող բայերը խոնարհվում են հետևյալ կերպ.

| | | |
|---|---|---|
| Անորոշ դերբայ | մտնել—մդնիլ | թռչել—թռնիլ |
| Ենթակայական դերբայ | մտնող—մդնուղ | թռչող—թռնուղ |
| Հարակատար դերբայ | մտած—մդուգ | թռած—թռուգ |
| Ապառնի դերբայ | մտնելու—մդնալու | թռչելու—թռնալու |
| Վաղակատար դերբայ | մտնել—մդիյ | թռչել—թռիյ |

## Դիմավոր ձևեր

### 1. Սահմանական եղանակ

**Ներկա** — Եզակի

| | |
|---|---|
| գմդնամ (մտնում եմ) | գթռնըմ (թռչում եմ) |
| գմդնաս | գթռնըս |
| գմդնա | գթռնէ |

Հոգնակի

| | |
|---|---|
| գմդնաք | գթռնըք |
| գմդնաք | գթռնէք |
| գմդնան | գթռնըն |

**Անցյալ անկատար** — Եզակի

| | |
|---|---|
| գմդնէք | գթռնէք |
| գմդնէր | գթռնէր |
| գմդնէր | գթռնէր |

Հոգնակի

| | |
|---|---|
| գմդնէք | գթռնէք |
| գմդնէք | գթռնէք |
| գմդնէն | գթռնէն |

**Ապառնի** — Եզակի

| | |
|---|---|
| ըս դմդնամ | ըս դթռնըմ |
| տու դմդնաս | տու դթռնըս |
| անը դմդնա | անը դթռնէ |

Հոգնակի

| | |
|---|---|
| մըք դմդնաք | մըք դթռնըք |
| տուք դմդնաք | տուք դթռնէք |
| անունք դմդնան | անունք դթռնըն |

**Անցյալ ապառնի** — Եզակի

| | |
|---|---|
| ըս դմտնէք | ըս դթռնէք |
| տու դմդնէր | տու դթռնէր |
| անը դմդնէր | անը դթռնէր |

Հոգնակի

| | |
|---|---|
| մըք դմդնէք | մըք դթռնէք |
| տուք դմդնէք | տուք դթռնէք |
| անունք դմդնէն | անունք դթռնէն |

Վաղակատար | Անցյալ վաղակատար

Եզակի | Եզակի

ըս մդիյ ըմ[1]   ըս թռիյ ըմ   ըս մդիյ էք   ըս թռիյ էք
տու մդիյ ըս   տու թռիյ ըս   տու մդիյ էր   տու թռիյ էր
տնը մդիյ տ   տնը թռիյ տ   տնը մդիյ էր   տնը թռիյ էր

Հոգնակի | Հոգնակի

մըք մդիյ ըք   մըք թռիյ ըք   մըք մդիյ էք   մըք թռիյ էք
տուք մդիյ էք   տուք թռիյ էք   տուք մդիյ էք   տուք թռիյ էք
տնունք մդիյ ըն, անունք թռիյ ըն, տնունք մդիյ էն, տնունք թռիյ էն

Անցյալ կատարյալ

Եզակի

ըս մդտ (ես մտա)   ըս թռտ (ես թռա)
տու մդար   տու թռար
տնը մդավ   տնը թռավ

Հոգնակի

մըք մդաք   մըք թռաք
տուք մդաք   տուք թռաք
տնունք մդան   տնունք թռան

2. Հրամայական եղանակ

Եզակի

մդը՛ (մտի՛ր)   թռը՛ (թռի՛ր)

Հոգնակի

մդէ՛ք   թռէ՛ք

3. Ըղձական եղանակ

Ապառնի

Եզակի

ըս մդնամ (մտնեմ)   ըս թռնըմ (թռչեմ)
տու մդնաս   տու թռնըս
տնը մդնտ (կամ մ̈նտ)   տնը թռնէ

---
[1] Տալվորիկում և Փսանքում ըս մդիր ըմ, տու մդիր ըս և այլն։

Հոգնակի

| | |
|---|---|
| մըք մդնաք | մըք թոնըք |
| տուք մդնաք | տուք թոնէք |
| տնունք մդնան | տնունք թոնըն |

Անցյալ ապառնի

Եզակի

| | |
|---|---|
| ըս մդնէք (մտնեի) | ըս թոնէք (թոչեի) |
| տու մդնէր | տու թոնէր |
| տնը մդնէր | տնը թոնէր |

Հոգնակի

| | |
|---|---|
| մըք մդնէք | մըք թոնէք |
| տուք մդնէք | տուք թոնէք |
| տնունք մդնէն | տնունք թոնէն |

*172.* Պատճառական *բայերը* եցն—ըցն, ացն—ոցն, ՛ցն *ածանցներն են ընդունում։*

*Օր.՝ նստեցնել-նստըցնիլ, խմեցնել-խմցնիլ, հագացնել-հագոցնիլ և այլն։*

*173.* Բազմապատկական *բայերը ատ—դ, կոտ—գըրդ, ոտ—ըրդ ածանցներն են ընդունում։*

*Օր.՝ կոտրատել-կոտրդիլ, սատկոտել-սադգըրդիլ, մորթոտել-մորթըրդիլ և այլն։*

## Անկանոն բայեր

*174. Մի քանի անկանոն բայերի խոնարհումը.*

*Միավանկ բայերի վրա ավելանում է* ի *օրինակ՝ 1. տալ-իդալ։*

*Դերբայներ. անորոշ՝ իդալ, ենթակայական՝ դվող, հարակատար՝ դվուգ, ապառնի՝ իդոլու, վաղակատար՝ դվիյ։*

*Սահմ. ներկա՝ գիդամ, գիդաս, գիդա, գիդաք, գիդաք, գիդան։*

*Սահման. անցյալ անկատար՝ գիդէք, գիդէր, գիդէր, գիդէք գիդէք, գիդէն։*

*Սահմ. վաղակատար՝ դվիյ ըմ, դվիյ ըս, դվիյ ա, դվիյ ըք, դվիյ էք, դվիյ ըն։*

Սահմ. անցյալ վաղակատար՝ դվիյ էք, դվիյ էր, դվիյ էր,
դվիյ էք, դվիյ էք, դվիյ էն։

Սահմանական անցյալ կատարյալ՝ դվոցը, դվոցըր, դվըց,
դվոցըք, դվոցըք, դվոցըն։

Հրամայական եղանակ՝ դու՛ր, դվէ՛ք (դվոցէք)։

Արգելական հրամայական՝ մի՛ դո, մի՛ դէք։

175. 2. Գալ—իկալ.

Դերբայներ. անորոշ՝ իկալ, ենթակայական՝ էգուղ, հարակատար՝ էգուգ, ապառնի՝ իկոլու, վաղակատար՝ էգիյ։

Սահմանական ներկա՝ գիկամ, գիկաս, գիկո,
գիկաք, գիկաք, գիկան։

Սահմանական անցյալ անկատար՝ գիկէք, գիկէր, գիկէր
գիկէք, գիկէք, գիկէն։

Սահմ. վաղակատար՝ էգիյ ըմ, էգիյ ըս, էգիյ ո,
էգիյ ըք, էգիյ էք, էգիյ ըն։

Սահմանական անցյալ վաղակատար՝ էգիյ էք, էգիյ էր, էգիյ էր, էգիյ էք, էգիյ էք, էգիյ էն։

Սահմ. անցյալ կատարյալ՝ էգո, էգար, էգավ,
էգաք, էգաք, էգան։

Հրամայական՝ էգո՛ (նաև արը՛) էգէ՛ք,

Արգել. հրամայական՝ մի՛ կա, մի՛ կէք։

176. 3. Լալ—իլալ։

Դերբայներ. անորոշ՝ իլալ, ենթակայական՝ լացուղ, հարակատար՝ լացուգ, ապառնի՝ իլոլու, վաղակատար՝ լացիյ։

Սահմանական ներկա՝ գիլամ, գիլաս, գիլո,
գիլաք, գիլաք, գիլան։

Սահման. անցյալ անկատար՝ գիլէք, գիլէր, գիլէր,
գիլէք, գիլէք, գիլէն։

Սահմանական վաղակատար՝ լացիյ ըմ, լացիյ ըս, լացիյ ո,
լացիյ ըք, լացիյ էք, լացիյ ըն։

Սահմ. անցյալ վաղակատար՝ լացիյ էք, լացիյ էր, լացիյ էր,
լացիյ էք, լացիյ էք, լացիյ էն։

Սահմ. անցյալ կատարյալ՝ լացը, լացըր, լաց,
լացըք, լացըք, լացըն։

Հրամայական եղանակ՝ լա՛ց, լա՛ցէք,
մի՛ լո, մի՛ լէք։

177. 4. Լինել—էղնիլ (եղանել գրաբար ձևից)։

Դերբայներ. անորոշ՝ էղնիլ, ենթակայական՝ Ըղուղ, վա-

ղակատար՝ եղիյ, հարակատար՝ եղուգ, ապառնի՝ եղնոլու։

| | |
|---|---|
| Սահմանական ներկա | գէղնըմ, գէղնըս, գէղնէ, գէղնըք, գէղնէք, գէղնըն։ |
| Սահմ. անցյալի անկատար՝ | գէղնէք, գէղնէր, գէղնէր, գէղնէք, գէղնէք, գէղնէն։ |
| Սահմ. վաղակատար՝ | եղիյ ըմ, եղիյ ըս, եղիյ ա, եղիյ ըք, եղիյ էք, եղիյ ըն։ |
| Սահմ. անցյալի վաղակատար՝ | եղիյ էք, եղիյ էր, եղիյ էր, եղիյ էք, եղիյ էք, եղիյ էն։ |
| Սահմ. անցյալ կատարյալ՝ | էղա, էղար, էղավ, էղաք, էղաք, էղան։ |
| Հրամայական՝ | է՛ղը, էղէ՛ք, մէ՛ղնը, մէ՛ղնէք։ |
| Ըղձական ապառնի՝ | էղնըմ, էղնըս, էղնէ, էղնըք, էղնէք, էղնըն։ |
| Անցյալ ապառնի՝ | էղնէք, էղնէր, էղնէր, էղնէք, էղնէք, էղնէն։ |

178. Ուտել—ուդիլ։

Դերբայներ. անորոշ՝ ուդիլ, ենթակայական՝ ուդուղ, հարակատար՝ ուդուգ, ապառնի՝ ուդոլու, վաղակատար՝ գէրիյ։

| | |
|---|---|
| Սահմանական ներկա՝ | գուդըմ, գուդըս, գուդէ, գուդըք, գուդէք, գուդըն։ |
| Անցյալ անկատար՝ | գուդէք, գուդէր, գուդէր, գուդէք, գուդէք, գուդէն։ |
| Սահմանական վաղակատար՝ | գէրիյ ըմ, գէրիյ ըս, գէրիյ ա, գէրիյ ըք, գէրիյ էք, գէրիյ ըն։ |
| Սահմ. անցյալի վաղակատար՝ | գէրիյ էք, գէրիյ էր, գէրիյ էր, գէրիյ էք, գէ՛րիյ էք, գէրիյ էն։ |
| Սահմ. անցյալի կատարյալ՝ | գէրա, գէրար, գէրավ, գէրաք, գէրաք, գէրան։ |
| Հրամայական՝ | գէ՛ր, գէ՛րէք։ |
| Արգելական հրամայական՝ | մո՛ւդէ, մո՛ւդէք։ |

179. 6. Անել—անիլ։

Դերբայներ. անորոշ՝ անիլ, ենթակայական՝ անուղ, վաղա-տար՝ արըյ, հարակատար՝ արուգ, ապառնի՝ անոլու։

| | |
|---|---|
| Սահմանական ներկա՝ | գանըմ, գանըս, գանէ, գանըք, գանէք, գանըն։ |

Սահմ. անցյալ անկատար՝ գանէք, գանէր, գանէր,
գանէք, գանէք, գանէն։

Սահմ. փաղակատար՝ արըյ ըմ, արըյ ըս, արըյ ա,
արըյ ըք, արըյ էք, արըյ ըն։

Սահմ. անցյալ փաղակատար՝ արըյ էք, արըյ էր, արըյ էր,
արըյ էք, արըյ էք, արըյ էն։

Սահմ. անցյալ կատարյալ՝ արտցը, արտցըր, արըց,
արտցըք, արտցըք, արտցըն։

Հրամայական՝ արէ՛, արտցէ՛ք։

Արգելական հրամայական՝ մա՛նէ(մի անիր), մա՛նէք(մի անեք)։

180. 7. Դնել—տրիլ։

Դերբայներ. անորոշ՝ տրիլ, ենթակայական՝ տրուղ, հարակ-տրուգ, ապառնի՝ տրտլու, փաղակատար՝ տրիյ։

Սահմ. ներկա՝ գտրըմ, գտրըս, գտրէ,
գտրըք, գտրէք, գտրըն։

Սահմ. անցյալ անկատար՝ գտրէք, գտրէր, գտրէր,
գտրէք, գտրէք, գտրէն։

Սահմ. փաղակատար՝ տրիյ ըմ, տրիյ ըս, տրիյ ա,
տրիյ ըք, տրիյ էք, տրիյ ըն։

Սահմ. անցյալ փաղակատար՝ տրիյ էք, տրիյ էր, տրիյ էր,
տրիյ էք, տրիյ էք, տրիյ էն։

Սահմ. անցյալ կատարյալ՝ տրտցր, տրտցըր, տրըց,
տրտցըք, տրտցըք, տրտցըն։

Հրամայական՝ տի՛ր, տրտ՛ցէք,
մը՛ տրէ, մը՛ տրէք։

181. 8. Տանել—դանիլ։

Դերբայներ. անորոշ՝ դանիլ, ենթակայական՝ դանուղ, փա-ղակատար. դարիյ, հարակատար՝ դարուգ, ապառնի՝ դանտլու։

Սահմ. ներկա՝ գդանըմ, գդանըս, գդանէ,
գդանըք, գդանէք, գդանըն։

Անցյալ անկատար՝ գդանէք, գդանէր, գդանէր,
գդանէք, գդանէք, գդանէն։

Սահմանական փաղակատար՝ դարիյ ըմ, դարիյ ըս, դարիյ ա,
դարիյ ըք, դարիյ էք, դարիյ ըն։

Սահմ. անցյալ փաղակատար՝ դարիյ էք, դարիյ էր, դարիյէր,
դարիյ էք, դարիյ էք, դարիյ էն։

| | |
|---|---|
| Սահմ. անցյալ կատարյալ՝ | դարո, դարար, դարավ, դարաք, դարաք, դարան։ |
| Հրամայական՝ | դա՛ր, դա՛րէք, մը՛ դանէ, մը՛ դանէք։ |

182. 9. Երթալ—էրթալ։

Դերբայներ. անորոշ՝ էրթալ, ենթակայական՝ կացուղ, վաղակատար՝ կացըյ, հարակատար՝ կացուգ, ապառնի՝ էրթոլու։

| | |
|---|---|
| Սահմանական ներկա՝ | գէրթամ, գէրթաս, գէրթո, գէրթաք, գէրթաք, գէրթան։ |
| Սահմ. անցյալ անկատար՝ | գէրթէք, գէրթէր, գէրթէր, գէրթէք, գէրթէք, գէրթէն։ |
| Սահմանական վաղակատար՝ | կացըյ ըմ, կացըյ ըս, կացըյ ո, կացըյ ըք, կացըյ էք, կացըյ ըն։ |
| Սահմ. անցյալ վաղակատար՝ | կացըյ էք, կացըյ էր, կացըյ էր, կացըյ էք, կացըյ էք, կացըյ էն։ |
| Սահմ. անցյալ կատարյալ՝ | կացը, կացըր, կնաց, կացըք, կացըք, կացըն։ |
| Հրամայական՝ | կնո՛, կա՛ցէք։ |
| Արգելական հրամայական՝ | մը՛ կնո, մէ՛րթէք։ |

## ՊԱԿԱՍԱՎՈՐ ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

183. 1. Գիտենալ—կըննալ (շեշտված ն-ով)։

Դերբայներ. անորոշ՝ կըննալ, ենթակայական՝ կըննուղ, կիցուղ, հարակատար՝ կիցուգ, ապառնի՝ կըննալու։

| | |
|---|---|
| Սահմանական ներկա՝ | գկըննամ, գկըննաս, գկըննո, գկըննաք, գկըննաք, գկըննան։ |
| Սահմ. անցյալ անկատար՝ | գկըննէք, գկըննէր, գկըննէր, գկըննէք, գկըննէք, գկըննեն։ |
| Հրամայական եղանակ՝ | կը՛ցը, կը՛ցէք։ մը՛ կըննո, մը՛ կըննէք։ |

184. 2. Եմ—ըմ

Ներկա՝ ըմ, ըս, ո, ըք, էք, ըն։

Անկատար՝ էք, էր, էր, էք, էք, էն։

185. 3. Կամ—գամ

Ներկա՝ իգամ, իգաս, իգո, իգաք, իգաք, իգան։

Անկատար՝ իգէք, իգէր, իգէր, իգէք, իգէք, իգէն։

Տալվորիկի բարբառում և՛ ներկայի, և՛ անկատարի վրա ավելանում է տ, օր.՝ տգամ, տգաս, տգա և այլն։

186. 4. Ունիմ—ունըմ։

Ներկա՝ ունըմ, ունըս, ունը, ունըք, ունէք ունըն։

Անկատար՝ ունէք, ունէր, ունէր, ունէք, ունէք, ունէն։

## ը. Նախդիրներ

187. Նախդիրներից շատ գործածական են զ և ի: Բոլոր որոշյալ հայցական հոլովներում զ նախդիրը պահպանվում է ինչպես գրաբարում։ Ի նախդիրը փոխվել է ը-ի։ Սարնըվիր-սարն ի վեր, ձառնըվիր-ծառն ի վեր, կիղնըվիր-գյուղնիվեր, փալնըվիր-դարն ի վեր, քարնըվիր քարն ի վեր։

Հազզոյի Մոտկանի շրջաններում գրաբարի ներգոյականի ի նախդիրը նույնությամբ պահպանվում է։ Այսպես օրինակ՝ կնաց ի տուն, ի տուն նստած է (տանը նստած է) և այլն։

## թ. ՄԱԿԲԱՅՆԵՐ

188. Տեղ ցույց տվող.

Ըսդիխ, ըդդիխ, ընդիխ, ըստին, ըդտին, ընտին, ըլ (այլևս), հուդտ (այստեղ), հունտ (այնտեղ) կամ հոյդոդիխ, հոյնադիխ, հոդ, հոն (այդտեղ, այնտեղ), էռաջ, էդիվ, վեր (վերև)։

189. Ժամանակ ցույց տվող.

Ըսօր, ըդօր, ընօր, էռաջ էդիվ (ժամանակի իմաստով), հոմտ նուր (քիչ առաջ), հոյդկուց հիդ (սրանից հետո), մըդտ (հիմա), դարվոդարը (տարեցտարի), օրավուր (օրեցօր), հաղհաղ (ժամանակ առ ժամանակ), տոռ դեռ), հուսկուհիդ (այսուհետև), շդու (շուտունց), հոբտ (հետո), հի՞պ (ե՞րբ)։

190. Քանակ ցույց տվող.

Քոնը հաղ (քանիցս), շադհաղ (շատ անգամ), քիչ-քիչ, շադ-շադ (շատ-շատ), ըդխոդոր (այդքան), ընխոդոր (այնքան), հոյդոխոդոր (այսքան)։

191. Ձև ցույց տվող.

Ուժու (ուժգին), հոմդով (կամովին), կլխտ-կլուխ (գլխովին) էվլո (դարձյալ), մէջ-մէջ (մեջընդմեջ), հաղ-հաղ (միրթ ընդմերթ), փուխ-փուխ (փոխնիփոխ), ողուրտ (իրոք), տասայի (անպատճառ), հոլբոթ (հարկավ), գոլո (արդյոք) և այլն։

192. Այլ լեզուներից փոխ առնված մակբայներ.

Անջախ (հազիվ), ոջէք (արդյոք), բիլո (մինչև անգամ), գոյո (իբր թե), էպոյի (բավական), իլլոհի (անպատճառ), խէլըմ (բավական), հոլբոթ (իհարկե), հէչ (բնավ), խոդոր (չափ), հոտո (մինչև), սոդո (միայն), դորով (կարգով)։

193. Մակբայակերտ ածանցներով կազմված մակբայներ. Հընգիրճագ (ընկերաբար), մորտովարը (մարդավարի), մորտոճագ (մարդավարի), շնոճագ (շան պես, շան նման)։

194. Մակբայներ՝ հորադիր ածականներից և գոյականներից.

Շուդ-շուդ, դորոնդ-դորոնդ, տեմ ու տեմ (դեմ առ դեմ), էրիս-բը-էրիս (երես առ երես), ու̈տխո-ու̈տխո (ժամանակ առ ժամանակ)։

## Ժ. ԿԱՊ

195. Կապերի տեսակները.—Նախադրություններ են՝ առանց, խեր—բացի, (խեր զիս=բացի ինձանից), տոր—դեպի (տորտըրուց կնաց), հոտո—մինչև, գոյոթո—իբրև։

Ետադրություններ են՝ հընդավ (մասին, տեղը), հոմար էռաճ, պոլուր (շուրջը), սոյու (շնորհիվ), խոյիլ (համաձայն), ճուգ (զատ), աշոլով (համեմատ)։

Անիսկական կապերն են՝ հիդ (հետ), բես (պես), մուդ (մոտ), վիր (վեր), դագ (տակ), վըրո (վրա), տեմ (դեմ), մոդիգ (մոտիկ), դիխ (տեղ)։

## Ժա. ՇԱՂԿԱՊ

196. Համադասական շաղկապներ. ու, ոլ, լա (այլ), ոբո, հաղ (անգամ), թո (թե), հոմո (բայց), յա։

197. Ստորադասական շաղկապներ. վըր (որ), թո (եթե), կըց (քան), հոտո (մինչև)։

198. Բաղադրյալ ստորադասական շաղկապներ. հոմո վըր (հենց որ), ումալվըր (այնպես որ), իլոհի վըր (մանավանդ որ), թո վըր (թե որ)։

## Ժբ. ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

199. Ա՜խ, հե՛յ, հոզար ափսուս, էռնիգ (երանի), հայլո՜ (է՜հ), վայըմըն (վայ ինձ), հոյո̈ւի (ավաղ). թոհու-թոհու (երգողին ձայնակցելու մի ձայնարկություն), հայլո հոո̈ւար է (օգնության կանչել), հահե՛-հահե՛ (հեյ), դո-դո (բարկությամբ էհ), օ՜ (զարմանք մեկը տեսնելիս), օխ՜ (հաճույքի), ո՜ւֆ (ցավի իմաստով), հայդի (օն առաջ), բոլքո (երանի թե)։

# ՆՄՈՒՇՆԵՐ ՍԱՍՈՒՆԻ ԲԱՐԲԱՌԻՑ

## ՊԱՐԵՐԳԵՐ

### Գ Օ Ր Ա Ն Ի

*Ջար լօլօ, լօ լօ լօ, լօ լօ լօ լօ լօ,*
*Ջար լէ լէ, լէ լէ լէ, լէ լէ լէ լէ լէ (ամեն տնից հետո*
*կրկնվում է)։*

*Ցորինըմ ցանը լօ էդիվ ող սարուն,*
*Աստված է սպանը լօ զոստորվի կարուն,*
*Մէգ շամամ չէղավ լօ ջամպէք ըմ յարուն։*

*Սորոթան պոլուր հող պարի լուսուն,*
*Բզդիգն էր նստը վըր օսկի քուրսուն,*
*Զգոջգընին համբրոցըք հինգ հարիր իթսուն,*
*Զքի խուլամ գանըմ ըր բաժի գիսուն։*

*Ցորին ըմ ցանը էլի յո բոոգը,*
*Բզդիգըմ սիրը չըմ գոռնո թարգը,*
*Շնութին գանէ չըմ խիմշը զորգը։*

### Զ Ա Մ Թ Ի Լ

*(հարց—պատասխան)*

*—Զամէրուս ձանդրութէնէն*
*ձամթիլս գդրավ ձօվը բադավ։*

*—Լոզվորնուց մէգ լէ ես ըմ,*
*խաս լէ ես ըմ, բաշ լէ ես ըմ։*

*—Զըմ կլխու կակաթ գիդամ,*
*զըմ ձամթիլն լէ հան ի ձօվէն։*

*—Ի՞նչ գէնիմ զկլխու կակաթ,*
*չըմ հանը զձամթիլն ի ձօվէն։*

—Զըմ մեյդան ջաղաղ գիդամ,
գըմ ճամթիլն լէ հան ի ծօվէն։

—Ի՞նչ գէնըմ զմէյդան ջաղաղ,
չըմ հանը զճամթիլն ի ծօվէն։

—Զըմ թուխ-թուխ աչքիր գիդամ,
գըմ ճամթիլն լէ հան ի ծօվէն։

—Ի՞նչ գէնըմ զթուխ-թուխ աչքիր,
չըմ հանը զճամթիլն ի ծօվէն։

—Զըմ վզը վզնուց գիդամ,
գըմ ճամթիլն լէ հան ի ծօվէն։

—Ի՞նչ գէնըմ զվզը վզնուց,
չըմ հանը զճամթիլն ի ծօվէն։

—Զըմ չամամ ծօցիր գիդամ,
գըմ ճամթիլն լէ հան ի ծօվէն։

—Ի՞նչ գէնըմ զչամամ ծօցիր,
չըմ հանը զճամթիլն ի ծօվէն։

—Զըմ մէճքը քոմոր գիդամ,
գըմ ճամթիլն լէ հան ի ծօվէն։

—Ի՞նչ գէնըմ զմէճքի քամար,
չըմ հանը զճամթիլն ի ծօվէն։

—Զըմ օդաց խլխալ գիդամ,
գըմ ճամթիլն լէ հան ի ծօվէն։

—Ի՞նչ գէնըմ զօդաց խլխալ,
չըմ հանը զճամթիլն ի ծօվէն։

—Զըմ անուշ բակիգ գիդամ,
գըմ ճամթիլ լէ հանի ի ծօվէն։

—Ի՞նչ գէնըմ զանուշ բակիգ,
չըմ հանը զճամթիլն ի ծօվէն։

—Զըմ սըրդի միճուն գիդամ
գըմ ճամթիլ լէ հան ի ծօվէն։

—Քու սըրդնի միճուն հոմար,
գը հանըմ զճամթիլն ի ծօվէն։

## ԵՐՈՒՍԱՂԻՄ ՈՒԽՏ ԸՄ ԱՐԸ

Երուսաղիմ ուխտ ըմ արը,
Ջամբէն էր Ա̈րտբատան,

Բազըրգան պարծր գէրկէր,
Շադ լավ է մար ու մորջան։

Ջքու աչքիր, վըր ըս գոսէք,
Բշէրգու շուշան նման,

Ջքու պէրան, վըր ըս գոսէք,
Ժամդվան խորան նման։

Ջքու քթիգ վըր ըս գոսէք,
Սուլթանի սիսէռ նման։

Ջքու ագռեք, վըր ըս գոսէք,
Սոդոֆի կարբան նման։

Ջքու ձամիր, վըր ըս գոսէք
Տամբուրի թէլի նման։

Ջքու մէճկունք, վըր ըս գոսէք,
Խարծի խամիշի նման։

Ջքու թէվիր, վըր ըս գոսէք,
Պամբագի օլուր նման,

Ջքու մադնիր, վըր ըս գոսէք
Կառտոլի մոմի նման։

Ջքու ձձնիր, վըր ըս գոսէք,
Հօդօվ շոմամի նման։

## Ն Ո Ւ Բ Ա Ր

Հայ Նուբար, Նուբար, Նուբար,
Ջան Նուբար, Նուբար, Նուբար,
Ջնջղգնիր շադ պզդըգնին,
Վարսադնին պաց աչվընին։

Էղվընգնին էրգէն բոչիր,
Կիլանին սուր ագռնին,
Լագլգնին էրգէն վզիր,
Գոնգնին պարագ բօչիր։

Կացը կացը հեռացո,
Պարծր սարուն մոտոցո,
Բզդիգ յարուն գարօղցո,
Հայ Նուբար, Նուբար, Նուբար։

Էլավ հարավու քամին,
Վըր ձօվուն պանէր գոմին,
Կլօրավ գօդրավ սագրադին
Ջան Նուբար, Նուբար, Նուբար։

Համպարծման էրգուշապթին,
Գովան էրգու դէքորդին,
Գովան վըր բուդգը քէրքին,
Վէրցըն զփուցխն ու կէրընդին։

Էլան վըր կէդը ափին,
Ծօրեցըն, ծօրթփէցըն,
Մանրիգ, մանրիգ, խօրմէցըն.
Գէմիգ չէղավ գաբէցըն։

Ջձամիր գէմիգ շինէցըն,
Յարուձ խօդիգ գաբէցըն,
Սէլիգ չէղավ գրէցըն,
Սրդիգ սէլիդ շինէցըն,
Յարուձ խօդիգ գրէցըն,
Գրէցըն Թոմամէցըն։

Կացըք ոդ Մշու տիման
Դեսանք զառնիր գխոպաց,
Մդանք գառնէնք թոժո հաց,
Անդեր բօջին գիս էխաձ,
Ընձը ինչ խաձնիլ բիդէր,
Ընձը կրգանուց բիդէր։

Կացը վըր Հոլբո սարուն,
Բլբուլ նստէր վըր քարուն,
Գիլէր զաշուն ու զկարուն,
Ջան Նուբար, Նուբար, Նուբար։

Խանջար քաշօղ գոլէցիք,
Խշտիգ քօլօս հէթոնցիք,

Կղտուր ձախօղ աղպէյիք,
Գօրիգ ուտօղ սեմալցիք,
Թութուն ձախօղ շենըկցիք,
Իշու քշօղ հլօղընցիք,
Սիսեռ ուդօղ իշխնձօրցիք։

## ԼՈՒՍՆԱԳՆ ՕԴ ՊԱԳՆ ԻՃԷՐ ԷՐ

Լուսնագն ոդ պագն իճէր էր,
Պագն արևօվ լցվէր էր,
—Լուսնագ, խուրբան, ուր գէրթաս։
—Գէրթամ վըր Հոլբո սարուն։
—Շադ պարիվ դար ըմ յարուն։

Հոշի լախիգ մրճըմօվ,
Ազար գդէն փոչըմօվ,
Սիրըք զիրար հավտսօվ։

Տօ, դղա, լաօ մշեցը,
Շուն շանօրդը բադէշցը,
Մախաթ ջանըտ շշէցը.
Հոտտ Բադէշ քշէցը.

Դարին դոսնէրգու ամիս,
Խնձուրն էր թառմը կօդիս,
Հար հի՞պ բահէք քըղը դիս.

Դարին դոսնէրգու համար,
Խնձուրն էր թառմը քամար.
Հար հի՞պ բահէք քի համար։

Կացը, կացը, հէռոցտ,
Պարծր սարուն մօդոցտ,
Քաղցր յարուս գարօդցտ։

Զօլէցը չօլթփէցը,
Ցոլտ էդիվս իշէցը,
Թուխ-թուխ աչքիր լացըցը,
Դոստմալ կօդուց քաշէցը,
Զուլալ արդսունք սրպէցը։

## ԴԷՐԿՕ ՆԻՆԱ[1]

*Դէրկօ նինա, նինա, նինա,*
*Դէրկօ նինա, դէրկօ ջան (կրկնվում է)։*

*Ծըր դան էդիվ առուն հանած,*
*Պօլրէ-պօլուր ռըհան ցանած,*
*Էրթէք, ուզէք նուր նշանած,*
*Տոռ չըք ուզը մէղօք հանած,*
*Տոռ չըք պէրը բուխթան գարած։*

*Մըր դան էդիվ հադըմ տառում,*
*Ծըր դան էդիվ հադըմ տառում,*
*Քու բաք մէռավ չէգաք խթում,*
*Դէրկօ նինա, դէրկօ ջան։*

*Մըր դուն ոգէր քառսուն գարաս,*
*Ծըր դուն ոգէր քառսուն գարաս,*
*Օսկի զըմզըմք արձըթէ թաս,*
*Քառսուն գարսը կինին էր հաս։*

*Ըմեն գարսը գըթխէմ իդաս,*
*Հոըմըն գըդխու բակըմ իդաս,*
*Թո տու չիդաս, տու կօտէնաս,*
*Դէրկօ նինա, նինա, նինա,*
*Դէրկօ նինա, դէրկօ ջան։*

*Մըր դուն ծըր դուն մէյմէգ կերան,*
*Քամին ելավ էրան, էրան,*
*Պօլուր էրիս բըդդիգ պէրան,*
*Քու դանողի դունն էր վէրան։*

*Մըր դոն էդիվ պուլմ'էր թղի,*
*Ծըր դան էդիվ պուլմ'էր թղի,*
*Էրգու գաքավ մէծ խլըղը,*
*Մարիգն ընձը կոունէրը քըղը։*

---

[1] «Գօքանինս», «Ջամթիլը», «Երուսաղիմ ուխտ ըմ արըս», «Նուբարըը», «Լուսնագն ոգ պագն իճէր էր» և «Դերկօ նինան» ասել է Սասունի Գելիեգուզան գյուղացի Հակոբ Պողոսյանը, 80 տարեկան, անգրագետ, այժմ ապրում է Թալինի շրջանի Ահագչի գյուղում։ Այս, ինչպես և այն նմուշները, որոնց գրառման հեղինակը չի նշված, գրի են առնվել իմ կողմից։

Մըր դան էդիվ արդ կարընցան,
Ծըր դան էդիվ արդ կարընցան,
Բօլուք-բօլուք էգան անցան,
Ձուլօն մեճվին չջանչցան։

Մըր դուն ու ծիր մօդիգ-մօդիգ,
Իճնէք բաղչէն քաղէք խօդիգ,
Պէրէք, տրէք մսրա մօդիգ.
Դէսնէք վո՞ր յարն էր խօրօդիգ,
Ըմ յար կըց քումմ էլ խօրօդիգ։

Մըր դան էդիվ ձառմ'էր դանձը,
Ձաղճիգ գուզէք չիդէր ընձը,
Մըր դան էդիվ ձառ սալօրը,
Ծըր դան էդիվ ձառ սալօրը,
Հադիգ-հադիգ գը կլօրը,
Ուվըր վէրցէր չըր հալվօրը։

Մըր դան էդիվ պուլմ' էր պնդուգ,
Ծըր դա՛ն էդիվ պուլմ' էր պնդուգ,
Ձուլօն գլխմուր Թողըց կընդուգ
Առանք գիրար մդանք սնդուգ։

## ՄԸ ԳԻՆԱ՜, ՀԱ՛Յ ՄԸ ԳԻՆԱ՜

Մը գինտ հայ մը գինտ,
Սրդիգ մոլուլ մը գինտ,
Աշխար մորտու չգինտ։

Դարին դտսնէրգու ամիս,
Սրդիգ մոլուլ մը գինտ,
Խնձուրն էր Թառմը կօդիս,
Աշխար մորտու չգինտ։

Մէգիգ չեղավ սիրէր գիս,
Սրդիգ մոլուլ մը գինտ,
Մը գինտ հայ մը գինտ,
Աշխարհ մորտու չգինտ։

Խնձորը դէս խաձուգ էր,
Խաձուգ էր խաձմձուգ էր,
Ձորս գօշեն արձըթուգ էր,
Յարուճ կօդին խրուգ էր։

Կացը, կացը հեռոցո,
Կացը վըր Հոլրո սարուն,
Գաքավ նստը վըր քարուն
Գիլէր զաշուն ու զկարուն,
Ծէն գիդէր վըր սարէրուն։

Դարին դոսնէրգու համար,
Խնձուրն էր թառմը քամար,
Բոհիր էք յարուճ հոմար։

Դծրին պօլուր մէգ կարուն,
Ախ գէնէք գիկեր արուն,
Կիշէր չիկեր ընձը քուն։

Խամ-խամ քուռագըմ հէձը,
Արազու ճուրն ըմ անցը,
Սրդից մոլուլ մը գինո,
Դունյեն մորտու չըգինո։

Արազ, ընձը ջամպո դուր,
Ջըմ յարն ըմ շադ գարօդը,
Ցարս գայնէր վըր ժէռին,
Բլբուլ նստիր վըր ձառին։

## Հ Ա Բ Ը Լ Բ Ա Ն

Հաբլբան է էրթոլու,
Քէրէգան է գարտոլու,
Ըս ի՞նչ գանըմ զքէրէգան,
Ըմ յարն է դաս դարեգան։

Կուրավու պարծր կիղ է,
Ուր ճուրն հիվընդի տիղ է,
Ադ ի՞նչ անօրո կիղ է։

Տօ դղա, դղա, ալ գաբօվ
Ջուրի ե՞պ ընցնըս մըր պագօվ,
Մըր խօրօդից հարսն աբօվ։

Գէրթամ գտսըմ մէձտրուն
Զարգըն քը խանչար խօրուն,
Էլնը քու գարմիր արուն,
Թափը վըր քու թէվէրուն,
Գօլը մէջ քու սօլէրուն։

Տօ դղա, դղա, շան դղա,
Զուր եպ ընցնըս մըր գոնօվ,
Խանչար գաբիյ ըս քու ջոնօվ․
Գէրթամ գտսըմ մէծէրուն
Զարգըն քը խանչար խօրուն։

Այ դղա, դղա, շան դղա,
Կնա վէրին թաղն արը,
Սիրէ գխօրօղն ու արը։

Տօ դղա, դղա, լանգարի,
Շլվար, շաբիգ ժանգոտի,
Կնա ցածը թաղն արը,
Սիրէ գխօրողիգն արը․

## Ա Ղ Ճ Ի Գ Ը

Աղճիգ դու գայնէյ ըս դարգտոնը տուն,
Քու մեճկունք մոներ խանչարը պուտ,
Էղավ իրիք դարը էղըյ ըմ սավդալը ձուտ։

Տու գայնէյ ըս տէմ ամրոցին,
Լուսնագ զարգեց քու շամամ ձոցին,
Շամամըմ դուր ըմ դարդ ու խոցին։

Աղճը դնավեր, դորէ մոլէ ճավ լը տո բու,
Պըշտա կոնէ ճավ լը տո բու,
Խօմսիկա խալկի թէլի դոլոլ ժը գունդէ բու,
Էմըն ու էտո ժը մալէ բու[1]։

---

1 Քրդերեն է, նշանակում է.
Քո աչքը տան դռան վրա է,
Քո աչքը վրանի ետևի վրա է,
Գեղեցիկ Թէլոյին բամբասողները գյուղից են,
Իմ ու քոնը՝ տնից են։

Աղճը դնավէր թը տո տըվէ բըմըն նավէ,
Քաղըզէ մըն ու տո հովրտ քոթըյտ ավէ[1],
Աղճը́ դնավէր, տու գայնիր էր վըր տը բադին,
Քու աչք մանցիյտ մըր գալը հադին,
Ըս ի՞նչ անըմ տը քու դարդին։

Էրգինքն ամբիր է, կէդին լէ թացվը,
Մարոն էր բառգը, վըրին էր պացվը․

## Մ Ա Ր Օ Ն

Գանչէ Մարօ, գանչէ ջանօ, քանի կարուն է,
Ղարիբներու սրտին կունդ-կունդ արուն է.
Ախ ըս ի՛նչ անըմ մրինտ հեռուն է։

Ասօր շապաթ էր վաղ լէ գիրոգի,
Մարօն էլէր գէրթէր տոպ կից գրադը,
Հակիյ տ զգարմիր խուտնին, թողիյ տ փոտնգի։

Սալլանա-սալլանա մոչտ լը բոր ավէ,
Սինգե զոր ու սոր-սպի մոդտ լը բոր տավէ,
Ցար մը դը շտուտինի, յար մը դը շտուտինի[2]։

Էրգինք ամբ էր կէդին շաղէրով,
Մարօն էյավ գիկէր վէրը թաղիրով,
Օսկի բլոզուգնիր ձեռք՝ ալմաստ ազէրով,
Գաժեր զՄարօն ու զԳումրին
Ցաղզվանի սալմը բաղիրով։

Մարօն էլեր գէրթէր էկին,
Մոշ գմտնէր սև թուխ մաքին,
զՄարօ դեսնօղ գմօլըէր հօկին։

Պէրան դվիթ էր, քու լէզուն խոլոմ,
Սըդիս պոլուր բաղչտ, շոմամ ձձիրն էր քալամ.
Մարօն սարէն գիկէր շալագը պուրտ էր,
Իրանց կէղը չուրս գուղմ զօրտվուր սուրպ էր։

---

1 Քոնը կլինի իմը չի լինի
Իմ և քո թուղթը ջուրն է ընկել միասին։

2 Օրորալով-շորորալով մի գնա ջրի ափը,
Քո սպիտակ կուրծքը արևին դեմ մի տա,
Ցար դու ինձ այրում ես, յար դու ինձ այրում ես։

## ԸՄԱՆ, ԸՄԱՆ, ԸՍՄԸՐ ՅԸՄԱՆ

*Ախ յար ըման, ըսմըր յըման,*
*Ըսմըր էգավ էրգու մաղին,*
*Ազապ աղճիկ հասավ ըր մուրազին։*

*Մըր դուն ու ծիր մօդիգ, մօդիգ․*
*Էրթանք բաղչին քաղըք խօդիգ,*
*Պէրըք տըրըք մըրտ մօդիգ,*
*Ըմ յար կըց քում էլ խօրօդիգ։*

*Ուստէն գիկէր, ուստէն գիկէր,*
*Ուստէն գիկէր, տու Խոլաթո,*
*Գարմիր էրիս խօրսօվ կաթո։*

*Դանէն էլո դանքօվ կացը,*
*Խանջար քաշը գէրտիք պացը,*
*Սալվար դուն չէր նստո լացը,*
*Սալվար տըրիյո պադն ի լվացք․*
*Սպիդագ ձօցիր փրփուր լվաց,*
*Դղեն դեսավ խէլաց կնաց։*

*Էլէք էրթանք Գոնգո սար,*
*Շինըք պիրտըմ մդնըք հօսար,*
*Իկան վըր մը շահ ու խօնդքար,*
*Ուզե հօրիր, գիդաք հօզար․*

*Մըր դուն ու ծիր մէգ դօռօբօվ․*
*Էլէք դանէք գանաչ գաբօվ,*
*Սիրենք գիրար ասդված աբօվ։*

## ՀՕՎՆ ԱՆՈՒՇ

*Հօվը սարիր հօվն անուշ,*
*Յար խօրօդիգ բակն անուշ,*
*Հոշի ձառիգ մրճըմօվ,*
*Հօվը սարիր հօվն անուշ,*
*Ազապ դղէն փըռչըմօվ,*
*Յար խօրօդիգ բակն անուշ․*

Բակն արևու էրգու շուղ,
Գոնէ, բակէ, էվլէ թուղ։
Դղան գանը գարմընջին,
Տուռ գանէր էր զոքանջին։

Քրգու աղպեր մէգ գդրիջ,
Մեգ քար գցրէր, մեգ քարպիջ,
Յար խօրօդիգ բագն անուշ։

Գանձր Մորոթքու սարիր
Աշխար ալամ գաղոչէր,
Խսմաթ էնէր սև աչէր.
Գանձր Մորոթքու խաչիր,
Յար խօրօդիգ բակն անուշ։

Ձյա հեռուն մէզացը
Սասուն գէլնէր պարագ ձուխ,
Կացը գուզէք թաժա հաց,
Շնիր գանեն խաձոխաձ[1].

## ՍԱՍՈՒՆՑՈՑ ԳԱՐԵՐԳԵՐ

Խօրօդիգ օսկէ կնդիգ,
Տու զաղձիգ իդաս ընձիգ։
Գարծր Մորոթկու սարիր
Ամուր գիլէն ուր քարիր,
Խըսմեթ էնէր ուր յարիր։

Հընչի եմ տըք զոդ բան,
Իճնըք բաղչեն ու ատյրան,
Քաղըք զոդ մանրիգ ռեհան,
Դարանք տըրք խօրըստան,
Էղավ սիվ օձու նըման,
Խապըց զԱտամ ու զԵվան
Հանըց դրախտէն աննըման։

---

[1] «Մը գինտ, հա՛յ մը գինտ», «Հաբլըան», «Աղճիգը», «Մարօն», «Ամման, ամման, ամոր յաման» և «Հօվն անուշ» Սասունի ժողովրդական պարերգերը ասել է Սասունի Գելիեգուզան գյուղացի Գրիգոր Մարգարյանը, որն այժմ 85 տարեկան է և ապրում է Թալինի շրջանի Ահագչի գյուղում։

Ելավ ուրը Հոլբու սարուն,
Գիլեր գաշուն ու զգարուն։
Պարծր Մորոթկու խաչիր,
Շուրճ ու պօլուր կանաչ էր,
Աշխարք էրգիր կաղոչէր,
Խըսմեթ էնէր սև աչեր։

    Շուն շանորտի քօլօզով,
    Քու պաննն ինչ էր մըր տռնով,
    Գելամ ըսըմ մեծորուց
    Իճնըն զարգըն խանջարով,
    Զորգըն խորունգ ու զորգըն
    Սորըց էլավ սիվ արուն։

Յարն էր կնաց ճուր մէրուն,
Լցըց մեջ ըր գժերուն,
Թալըց վըր ուր փօթերուն,
Լցվավ մեջ ուր սօլերուն,
Շարի շոմամ ձձէրուն։

Իրցու աղճիգ մըր տրգից,
Պուռ ըմ չամիչ գրգըմըց,
Բակ ըմ խափըց չդվըց։

    Ես կացը Մշու տիմաց,
    Դեստ զոռնիր գխտպաց,
    Մդռ գառնէք թաժա հաց,
    Անդեր շունը զիս էխած։
    Ընձը լ՞նչ խաձնիլ բիդէր,
    Ընձը կըգանուց բիդէր։

Դիման Մշու կացիր ըմ,
Լուզ փէդ Մշէն պէրիր ըմ,
Յարուճ տռնէն անցիր ըմ,
Փէշդմալ կօտէն փրցիր ըմ,
Սիվ աչվընիր սրպիր ըմ։

    Օսկէ սնդրեգ սընդըրդիգ,
    Թռավ զարիբ ջընջըրդիգ,
    Թռավ ու սարիր ընգավ,

Զորզուց անծրիվ ու հեղիղ,
Վերուց սորըց Մեղրտկիդ։

Ասխս ու Մասխս,
Կօհար կրգըց գլխս,
Էդիվ Սև սարուն,
Տիման ջրակնուն,
Առճիվ աստղերուն,
Ըմ օրն էր քումուն։

Իճնենք Ստումբօլ,
Կնենք ջուխտակ սօլ,
Հակնէնք դօրըըդօր,
Ընգնենք չօլ ըը չօլ։

Զօգիդ վըր իշուն,
Շաբիկ նշխըրդուն,
Իճնէնք մըջ էկին,
Գթէնք գթուխ մաքին,
Դանենք սիրուղին։

Էրթանք մօլի կիղ,
Կնընք նուգիմ իղ,
Շինընք ձվաձիղ,
Դանընք հովըվին,

Հավիվն էր հիվանդ,
Օչխար մոլուլավ,
Բերվոր շիվարավ[1]։

## ՓԵՍԱՅԻ ԹՐԱՇԻ ԺԱՄԱՆԱԿ ԵՐԳՈՒՄ ԵՆ

Էրթանք չօլը, գորգըք դադրակ,
Պէրըք տըրըք վըր սեղանին,
Խէրն ու պարին մըր թակվօրին։

1 Հավաքել է Մ. Մուրադյանը։ Տես «Բիւրակն», № 7, ԺԲ տարի, Պոլիս, 1900, էջ 121։

Էրթանք չօլը, պէրըք գռունգ,
Պէրըք տըրըք վըր սէղանին,
Խէրն ու պարին մըր թակվօրին։

Էրթանք չօլը, զարգըք գաքավ,
Պէրըք տըրըք վըր սեղանին,
Խէրն ու պարին մըր թակվօրին։

## ՊԱՐԵՐԳ

Յար Նուբար, Նուբար, Նուբար,
Յար Նուբար, զալըմ Նուբար,
Սասնա սարիր քարուբար,
Արը էղնընք դոստ ու յար,
Առնըք գիրար էլնըք սար,
Քեզ գօլօրդըմ մէգ-մէգ քար,
Սիրեք գիրար հավասար։

Յար Նուբար, զալըմ Նուբար,
Սասնու գէլէր պարագ ձուխ,
Աղճիգ թողեր ջուխտակ բուխ,
Խոտիր գէնէն ախ ու վուխ։

## ՊԱՐԵՐԳ

Դօնիգ, Դօնիգ, Դօնիգ յարէ,
Մըր դուն ու ծիր մօդիգ-մօդիգ,
Իճնէք բաղչէն քաղէք խօդիգ,
Դանըք տըրըք մարը մօդիգ,
Դէսնէք վուր յարն է խօրօդիգ,
Ըմ յար քըց քում էլ խօրօդիգ։

Դօնիգ, Դօնիգ, Դօնիգ յարէ,
Մըր դան էգիվ արտ կարընցան,
Ծըր դան էգիվ արտ կարընցան,
Բօլուկ-բօլուկ էգան ընցան,
Ջուլոն մեջն էր չջանչըցան։

Դօնիգ, Դօնիգ, Դօնիգ յարէ,
Մըր դան էդիվ առու հանած,
Ծըր դան էդիվ առու հանած,
Շուրջն ու պօլուր ռեհան ցանած,
Էրթանք ուզենք նուր նշանած.
Տոռ չըք ուզը մեզօք հանած,
Տոռ չըք պէրը մուխթան գաբած։

Դօնիգ, Դօնիգ, Դօնիգ յարէ,
Մըր դան էդիվ պուլըմ պնդուգ,
Ծըր դան էդիվ պուլըմ պնդուգ,
Ջուլօն էգավ մուրուք գընդուգ,
Հարսնիր թօղին գլխմուր կնդուգ,
Առան գիրար մդան սնդուգ.

Դօնիգ, Դօնիգ, Դօնիգ յարէ,
Մըր դան էդիվ ձառ սալօրը,
Ծըր դան էդիվ ձառ սալօրը,
Հադիգ, հադիգ գկըլօրը,
Ուվ վըր ուդէր չըր հալվօրը։

Դօնիգ, Դօնիգ, Դօնիգ յարէ,
Մըր դանը գար քառսուն գարաս,
Ծըր դանը գար քառսուն գարաս,
Օսկէ գըմգըմ, արծթէ թաս,
Քառսուն գարսը կինին էր հաս,
Ամէն գարսին գդխէմ իդաս,
Թո տու չիդաս տու կօտենաս։

Դօնիգ, Դօնիգ, Դօնիգ յարէ,
Մըր դան էդիվ մէգ-մէգ կէրան,
Ծըր դան էդիվ մէգ-մէգ կէրան,
Պօլուր էրիս բզդիգ պէրան,
Քու դանողի դունն էր ռէրան[1]։

[1] «Փեսայի թրաշերգը», «Ցար Նուբարը», «Դօնիգ, Դօնիգ, Դօնիգ յարէն» ասել է Սասունի Գելիեգուզան գյուղացի Տիգրան Տոնեի Սահակյանը, ծնված 1896 թ.։ Այժմ բնակվում է Աշտարակի շրջանի Մաղդա գյուղում։

# ԿԻՔՈՐԸ[1]

## (Սասունի բարբառով)

*Կեղացը Հոմբոյը դունը գոիվ էր ընգը։*

*Հոմբոն գուզեր զըր դոսներգու դարոգան Կիքորը դաներ քաղաք, կորձիմ իդեր, վըր մարդ տառնո, աշխադանք անե։ Գնիգը չըր համոծոնվը։*

*—Զըմ ուզը, զըմ մադղաշ էրոխեն ոն զուլում աշխար մը մանե, չըմ ուզը.—գիլեր գնիգը։*

*Լո Հոմպոն չլըսըց։*

*Հանդարդ հոլուսու մ'էր, մոլուլ հալուսում'։ Դընվուրնին ու որգցնին էգան հոր կեղը ձերը։ Կիքորը Թշիրը բակոցըն ու ջամբո որոցըն։*

*Քուրը՝ Զանին գիլեր, բզդիգ Կալոն լոըր մամու կրգըինո ծեն գիդեր. «Կիքո՛լ, ոդ հուլ գելթաս, հէ՜ Կիքոլ»։*

*Կիքորը շուդ-շուդ իդ գոաներ ու գաշեր։ Գդեսներ՝ ոտա կեղը ձերը գանուգ ըն ոնունք ու մամը կոկնոցով զաչվին գսրպե։ Հիղըմլո բարու գուղքով գվազեր յո էռաճ գընգներ։ Մեգ լո իդ հոյցավ (աշըց) կիղն օղըմբդիյ ըր գաժու էգիվ.*

*Ա̈նուրէդիվ Կիքորը իդ գընգներ։*

*—Էգո՛ հա՛ Կիքոր ջան, էգո հա՛, հասանք հա՛,—զդղեն կանչոլով Հոմբոն գերթեր, շալգին խուրջիմ', քանիմ' հաց մեճը, բանիր ու էրգու գաք թութուն։*

*Իրընգվան ժում, վըր գանցնեն զսարիր, հաղըմ լո կիղն էրովաց մըժը մեճ։*

*—Բաբո՛, ա՛յ բաբո, մըր դուն հանո հա՛,—ցուցուց Կիքորը, զմադ էրգնցնելով ոոբ կիղը, Փորոզ դուն ըսկը չըր էրովո, ու ընցան։*

### 2

*Էռճը իրգուն մեվան էղան կեղիմ մեճ։ Դանդերը Հոմբոյը հին ձանութն էր.*

*Տեղին սոմ.ովորը գթշթշեր դախոը ձէրը։ Զոհիլ ադճիգմ' զպաժգնին չխչխկացնոլով գլվեր ու չայ գշիներ։ Ա̈նը գարմիր սիրուն շուր մ'էր հակը։ Կիքորն ոնդիխ ըր միդք ոըըց, վըր հիպըր քաղաքը մէճ փարո աշխոդը, Զանիգը հոմար ոմալ շուրըմ օղորգե։*

---

1 *Բարբառային տառադարձութլան է ենթարկվել իմ կողմից։*

Մոտել օր քաղաք մդան, խճան բազար։

—Խալօ, զոդ էրտխուն ըշկծուրը գիդաս,—խանութը մի-ճուն հարցուց Թուջարըմ։

—Հրամանք ըս,—տսըց Հոմբոն ու զԿիքոր հըրց տն կուղմ։

—Պէր դուր ընձը, ըս գվարծըմ,—տսըց Թուջարը։

Ա̈նուր գոսեն բոզազ Արդիմ։

—Հինգ դարը տոռ փարտ չըմ իդտ,—տսըց բոզազը բայ-ման գարտլու ադին։—Թո գդըուստ գուզըս, տոռ տու բեդք է փարտ իդաս, վըր քու դղեն պան դը սովըը։ Ախըր ըսկը պան չկունտ (չըկինտ)...

—Հուստը կինտ մալխո ջան,—բոդտոխանըց Հոմբոն,— վըր կիներ տլ հուր գպերեք։ Ըս լտ պերըյ ըմ, վըր պան սո-վորը։

—Գսովըը, ըմեն պան գսովըը։

—Ըմ դորդլտ էն է, աղա ջան, վըր մարտ տառնտ, լեզու սովըը, մարտ ջանչնտ, վըր աշխարքում ընձը բիս խիղջ ու զուրգ չինտ...

Բոզազը Հոմբոյին համոզըց ու տուրս կնաց պարծր ծե-նով հրաման դվըց. «Զայ պերտցեք, հաց պերտցեք հոյդունց համար...»

3

Բաք ու տղա նստիյ ըն բոզազ Արդեմը մուդբախը մեջ։

—Դո, մըգա տու կընաս, Կիքոր ջան, դեսնամ իմոլ դղտ տուրս գիկաս։ Ամոլ գանըս, վըր... ըս ինչ կունամ... ժոմոնագ ու բեժոմոնագ հուդտ-հունտ չընգնաս, քու ծեռք ընգած փարեն բոռոդտ չանըս, հազար ու մեգ բազսութին գա մըզը։ Զքըզը լտ աղեգ ըըհե, կիշիրնին պաց չեղնըս, չմրսըս... Հացը գդորնին ու քարթուն գիդան, գերագլը մանցուգ գիդան, շադ հաղ լտ իրանք գուդըն, քըզը չըն իդտ, պան չկա, խոյդեն տգ է... Օրիր ըն գհնեձըն, գանցնըն, գերթան...

Բաըը զըր խըադ տոռ գոսեր, լտ Կիքորը բաբուն օղմգուգ քնիյ ըր։

Ա̈ն էրգու օր տնը տնխոդտր պան էր դեսը, հոյդտ ու հոյնտ գուղմ հոյցը (աշը), վըր մեգհաղ Թաշկըյ ըր։

Ֆեկիով ըլը խանութնին, տիզտրու խոյդտ տիզուգ, ռոնգ-ռոնգ չթիըը, ջուռտ-ջուռտ խաղալիքնին, տըրուց կացող գամ

*փդ էգող էրոխեսնու խմպիրը, իրար էդիվ վազուղ գառքիրը, չոմոնիրու (ուղդորու) ռեզիրը, գանոչի պարծաճ ովոնագնին, Թարոխիգնին վըր կլխնուն կինդոնիրը... Ըդ ըՖնու կոռուցն ու ղընգուցը, ծենն ու խալմոխալը իրար խառնուգ, գխըժխըժեր ոնուր կլխու մեճ։ Ընը Թաշկիյ ըր ու բարու ուսին փել ովուգ քնուգ էր։*

**4**

*ԽանուԹը մեճ Կիքորին աըրանք գիդեն մուշԹորընիրու հիդ դանելու, չիԹ բըդ ձալեր, զխանուԹ սըպեր, բարաբ ժոմոնագ լո մուշԹորը գանչեր։*

*Կիքորը հաց գդաներ խանուԹը։ Գերոգուլը ամանը մըճ ծեռքին, մաշուգ ու բեռոնգ, միձ-միձ օդնոմանին քաշոլով, դարՖիջով գանցներ, ներքիվ հոյցավ (աշըց)։*

*Քարվանսարոնիրու պարծր բագորուն զորգելով Քուռը ձառս գեղներ, գոլըվեր, գզվռդեր ու գխեղոըլգվեր, գարմընջը դագ գԹշԹշեր ու գանցներ։*

*Ափը մուդիգ գանաչ գոմիմ գօլըդեր։ Էրգու հոկը գեր (ոգեր) անուր մեճ մեգ զԹուռն գմաներ (գսորեր), մոգել լո զգոմին գպանցներ։*

*«Ա՜յ հոմըգտ գհանե»,—ասըց Կիքորն ու գանուգ գհոյներ (գաշեր) ծկնորսնուն, Թուռը տարդագ տուրս էգավ։*

*Հոյդտ մէգն ըմ բախտը ինտ,—ասըց Կիքորը զԹուռ սո-րելու (մանելու) ժոմոնագ։*

*Կիքորը պախտը տարդագ դուրս էգավ։*
*—Հոյդտ մեգ լո մըր Ջանիու բոխտին։*
*Հոյդտ լո տարդագ տուրս էգավ։*
*—Հոյդտ մէգ լո Կալոյ բոխտին։*
*Կալոն լո անբախտ էր։*
*—Հոյդտ մեգ լո...*

*Ըդ ժոմոնագ մոդիգ քարվանսարոյի տռան էռաճ խալմո-խալ պարծըցավ։ Մեգ բարսիգ գաբիգ գխաղցըցեր խաղ տսելով։*

*Ժողովուրտ հավաքվեր վըր կլխուն ու չուրս Թիուց գվազեն։ Կիքոր լո վազըց։ Աշխոդավ վըր գանուգ ժողովրտը մեճ մդնը, էռաջ ընցնը, չգոռցավ։*

*Ջլիգն էրգնցուց, գըընգու վրա գանավ, ու ջոհդ գեներ իլոհը գեսներ, Թո ինչ գգադոըվեր հոն։*

—Ինչո՞ւ նիրս գխցկվըս, տո անամութ, կնտ քու պանին, տըց մեգ կինտո ու զորգըց վըր Կիքորը կլխուն։
Կիքորը նըչկոլտ հոշարցավ ու վազըց տոր խանութ։

5

Իրգուն Կիքորը տուտըզխյ ըր կուլնը մեծ։ Տոռ արդսուք չըր ցամքը տնուր էրսը վրո, տոռ գէրովեր դիրուծ շոխլամը դեխիրը, տոռ նուր էր հոշ արը աղճիգ բարոնը ծեն, փիկալով նիրս էգավ Վասոն, բոզազը աշկիրդը։ ԶԿիքոր դեսնոլով տնը տլըըհոլ գանավ ու մոսխորա էրսին տղուրտ գիսք իդոլով հերսուդ հարցուց։

—Կլուըը մե՛ծ դորտնգցար, տա՛ արջը քոթութ, թո դուբեռնատը (վալու) մուդ տջոլտ կուրծ գեր քըզը…

Կիքորը գկլուխ չըր պարծրցու։

—Ասէ դեսնամ հե, տա՛…

Կիքորը հոշ էր։

—Զըս կընա՞, տա՛ հուր էր է՞ վըր տսօր զընձը անոթը սպանոցըր։ Թո վըր մեռնեք, ի՞դքը…

Հայմալ խոսոլով ուշիգ-ուշիգ մոդոցավ, քիչըմ գանավ ու տլըըհալ զորգըց վըր Կիքորը կլխուն։

Կիքորը երգու ծեռքով գկլուխ բըհըց ու շլխավ բադին։ Վասոն գբադրոսովեր մեգ ուրիշ ջուռտ դորը էլ զորգեր, լոտըսու թուն դիրուծ ծենն էգավ։ Գիկեր։

—Հոքտ դիս, մըգտ քըզը ինչ գանե,—հերսոդավ Վասոն։

«Մըգտ զընձը գսպանըն»—ընցավ Կիքորը մդքով ու ոտքտնը հոկին գձգվավ։

Բոզազ Արդեմը զԿիքոր խանութը մեծ էպտհը ձեձիր ըր, մըգտ լե հրաման դվըց հաց չիդան, վըր իմոնտ, թո ինչ պան է անոթութինը։

Կիքորը քիչըմ ոռհոթցավ, լե գլսեր զաղճիգ բարոնը ծենը, վըր գխժեր. «Ախր ինչո՞ւ գըտհըս, տուրս արե, թըխ գորնը, տուրս արե, թըխ գորնը…»

Կիքորը կունգզավ ընգողնը մեծ, գկլուխ գոխըց դագը, բոլովդավ։

Վասոն հաց գուդեր։ Կիքորը ընգողնու դգեն հաղ-հաղ հոշար, կողդուգ գհոյներ (գաշեր) տնուր, էմլո զաչվընին գձաձ-

դեր։ Ա̈նը տդ օրը հաց չըր տըրը պերան, ձեձվըյ ըր ու լացը, մըգտ լե անոթը բառգըց ու քունը չըր իկտ։

—Հը, իմա̂լ է, անոթը քունտ չդանե, հա́, հոմալ հա,— գոտհըց չար Վասոն ու գդուրըմ հաց ու բանիր դվըց Կիքորին,— Դտ, առ ընգողնը դագ կողդուգ գիր, վըր չիմոնան։

Կիքորը թոցուց գնաց ու զբանիր, զկլուխը գախըց ընգողնու դագ, կողդուգ գուդեր ու գմդաձեր։ Գմդաձեր վըր իրանց դան, տն օրտրու վրա, հիպոր ազատ գխաղեր հանդտրու մեծ ու ուրախ սրդով հաց գուդեր, գմդաձեր տն իրնգունիրու վըր, հիպոր ըր բաբն ու մամը գգովեն զընք քաղաք պերտլու համար...

Մամը գիլեր չըր ուզը...

—Ա՛խ դայո ջան, ինչ աղեգ էր քու սիրդ իմացը,—գհառչեր Կիքորը ընգո̂ղնը դակ ու գնացն ու զբանիր գուդեր, անգաջը սրուգ, թա գոլո մարտ չիկտ։

Հոլուսուն լո գանուգ էր խանութը տռան առճիվ։

6

Ծմիռն էգավ։

Պարագ բլուզըմ հակուգ, խանութը տռան առճիվ գանուգ, ծեն գիդեր Կիքորը.

—Հուդտ էգիք, հուդտ համտցեք...

Ցուրդը զորգըց անցավ մըճ օսկրնուն։ Կիքորը տողաց։ Ընգողին ընգավ։

Բողազ Արդեմը Կիքորին դարավ քաղքը հիվընդնուց։ Բաբը վըր շատ դորտնդ էր իմացը զդղու հիվանդութինը, էգիյ էր քաղաք և մըգա լե հիվընդը ընգողնը մուդ էր։

—Կիքոր ջան, էգըյ ըմ, է՛, Կիքոր ջան... Ես քու բաբոն ըմ է՛...

Հիվանտը ըսկը պան չհոսկոցավ։ Ա̈նը գտելկեր, ու տելկտլու հիդ գգանչեր. «Միգի̋չ, Ջանի̋, բաբո̋, դայո̋...»

—Հուդտ ըմ, Կիքոր ջան, նանը (դայոն) օղորգըյ տ, վըր գքզը դանըմ մըր դուն... Չըս իկա̂...Միգիչն ու Ջանին հանաըն էրտիք գանուգ, զքու ջամբեն գըտհըն։ Ի՞նչ, դասըս։ Դա խոստ է, Կիքոր ջան...

—Հուդտ էգեք, հուդտ համտցեք,—պարծը տսըց հիվանտը, քանիմ անգաբ գդըտգոդուր խոսքիր տսըց ու գձիձղեր դաքութնը մեծ։

7

Մեգ երգու օր իդք Հոմպոն գերթեր իրանց կիղը։

Անը զՆիքորը թաղըյ ըր ու գերթեր։ Թիվդգին գդաներ զշորիրը. վըր մաֆ իլեր վրեն։ Շորտրու ջերտրու մեծ պուտըմ փելուն գոջգնիր, նխշուն թըլթիր, չթը գդորդանք, ու քանիմ՛ քորուց կդան։ Էն լո գերևո, վըր քուրուն՝ Զանիի հոմար էր ժողվը ու բըհը...

Հոմբոն գերթեր ու գմդաձեր։ Շադ ժամանագ չըր անցը, վըր ոդ ջամբով քաղաք էգավ ըր Նիքորը հիդ։ Հանը, հոյդո դիխն էր վըր տնը տըըց։

—Բաբո՛, օդվիս գցավան...

Հանը տն ձառը, վըր դագը նստան ոռհոտոցան...

Հանը տնդիխն էր, վըր տըըց.

—Բաբո, ձաբավ ըմ...

Հանը տն աղպուրը, վըր ճուր խմոցըն...

Թոմամը, թամոմը գան, մինագ տնը չկո...

Մոգել օրը, Հոմպոն վըր գանցներ զաբրիր, հեռավանց էրևաց իրանց կիղը։

Կեղից տուրս գանուգ գապասեն Դայոն (Նանը), Զանին, Միգիչը, Մոսին, լո բզդից Կալոն ըր մամու կրգեն գզանչեր

«Ալի՜, ալի՜ հե՜ Նիքոլ»...

## ԳՕՐԳԱ ԲԱ̈ԼԱ̈ԿԻ ՊԱՏՄՈՒԹԻՆԸ

Գորգա Բոլոկ Արզըրումու Կանտ կէղն է էղը, յոթը աղպէր մէգ քուր ըն էղը։ Արզըրումո պէգ տըըյ ո վըր զաղճից օղորգէք ըմ քօվ. յոթը աղպրդիք խառնըվիյ ըն իրար, զմէգուջար քուրն Քմալ իդան պէգին։ Փօքր աղպէր գոսէ. «Ըսկը մխառնվէք իրար, տդը ըմ կուրծն է, էլէք զմալիր էդընցքը նալոյէք, ըս ըմ քուրուջ դիխ հարս գէրթամ պէգին»։ Փօքր աղպէր գվէրու խանջարըմ գզաբէ շօրէրու դակ, հարսնշօրիր գհակնը, գդանըն պէգը դուն հարս։ Պէգ գուրխնտ. ըր խուլամնուն գոսէ վըր զընք մինագ թօղըն, խուլաֆին գէրթան, պէգ զտուռ նէրսը թուն (կողմից) գփագէ։ Պէկ զծէռք գթալէ ոդ աղճկան։ Աղճից գոսէ. «Ի՞նչ զծէռքդ գթալըս ջոնովորը խոյդո, ըս էգըյ ըմ քըզը կնից, քուֆ ըմ, հանէ զքու շօրիր քընըք»։ Պէգ գհանէ զշօրիր գբառզը, դղեն գքաշէ զխանջար, գհասնը պէկը վրէն, գսպանէ, զտուռ պաց գանէ, տըսը թուն գփագէ ու գէրթա դուն, հասնը

*ադպըրդուց, զքուր գոզոդէ։ Գօրգա Բոլոկ զքօճն ու մալիր գվէրու, զփախնը գիկո Սասուն, Անդօքո քով, կոպր (հյուղակ) գշինէ, անուն լը զՄնա Կոպըրնին, մըտ լը Կոպընին Անդօքո քօՄն է, մըր կիղն էր։*

*Գօրգա Բոլոկ զՄնո Կոպընին, դղէք գգարկըվըն, դուն զմեծնո, մասըմ գիկան Գէլիէգուղան, մասըմ գէրթան Հավգունք (մի գյուղ է Փսանքում), մասըմ գէրթան Խէյըըյան (Մշո դաշտում մի գյուղ է), մասըմ Խզլաղաջ. Քարծուր (Մշո դաշտ), մասըմ լը գէրթան Շենըկ, Սէմալ, մըք լը զՄնաք Կոպըրնին։*

*Խուլըո աղէն զխուլամդիք գօղորգե վըր զըէշ (տուրք) առնըն, Գօրգա Բոլոկ գոսե. «Բէշն ի՞նչ ոորը (բան) է, խուլամ գանէ հոդո չհոսկոնո, գոաոնո երթո ըր աղուն (աղային) գոսէ, ոդունք ջոնովարըն, զըէշ չընկինա ի՞նչ է։ Աղէն գոսէ. «Կնո գանչը թըխ իկան հուդո, ըմ քով»։*

*Գօրգա Բոլոկ ըր դղէսնուց քոնիմ հօկը գվէրու, գէրթո աղու դուն գոսէ. «Աղո, զմըզը ի՞նչու ըս գանչը»։ Աղէն գոսէ. «Լաօ, գանչիմո զըէշն իդէք»։*

*Ա̈դունք գոսըն. «Աղա՛, բէշն ի՞նչ ոորը (բան) է»։ Աղէն գաշէ (կնայի) թո չը չէղնը, գոսէ զոդունք բըդ ջըըըմ (փորձեմ)։ Գէլո էփիլ գիդո մէգ աման փլավ, մէգ աման լը չամիչ պէրիլ գիդո, մեգ աման լը բօլօջ (թըքը բզեզ), գդանէ ոըե սեղոնը վրէն, ոդունց էռաջ, վըր ուդըն, ընք ու խուլաՄին գըոլովդըն (կթաքնվին), դէսնան ոդունք ի՞նչ գանըն (ի՞նչ պիտի անեն)։*

*Գօրգա Բոլոկ գոսէ. «Դղէք զօդօքը գերեք (ոտնավորնե-րին կերեք), անուդքը միրն է (անոտը մերն է, չեն փախչում)։*

*Ջըօլօջնին թոմամ գուդըն, նուր գոոռնան վըր բըինձ-փոլավին ու չամչին։ Աղէն ու խուլաՄին գդեսնան, վըր ոդունք էռաճ զըօլօջնին թոմամ գէրան։*

*Աղէն էգավ Գօրգա Բոլոկին ոսըց. «Ծըր բէշ հորամ է» (Ձեր տուրքը հարամ է), զըէշ չառան ու ոլ բեշ չուզոցըն։ Ա̈ն ժամանկուց Գօրգա Բոլոկի ջընս (սերունդը) սասնցիք բէշ չըն իդա։*

*Պատմեց Սասունի Կապըրնին գյուղացի* Պողոս Ղազարի Պողոսյանը, *ծնված 1874 թվականին, Սասունի Գալիեմսուրի Կապըրնին գյուղում, այժմ բնակվում է Թալինի շրջանի Ահագչի գյուղում։*

## ՀՈՒՇՓԸ ՋԱՄԲԷՆ

(Վիշապի ճանապարհը)

Սասնու Գէլիէգուզան կէղը՝ Հորմօյ Կումու տիման (դի-մաց) գը շարան ջօջքարիր (սպիտակ քարեր), Խիբլգա ազրըը գուշտ, տըը «Հուշփը ջամբէն է»: Հուշափը գէրթը տոդը գոշ-կը սարով գգործը (բարձրանում սարը և իջնում մյուսի կողմը) Գնգոհօղտ գոլին (ձորը). հօնը տը հուշափ գսադգը: Հուշփը ջամբու տը ջօջքարիր գսպիդգը՝ հուշփը փուրը վըր ուրանց քսվելու աբով:

Էղգորդ բըդիգ կիղ մ՚է (Տավորիկունն է), քանիմ՚ դուն է: Ա̈դ Էղգորդու մարտըմ մեղու շադ գըըհէ, օըըմ լը գաշէ, վըր մէղվը ջանջիր թոմամ փէթկնուն էլան, կացըն, գօրան: Գէլը գօլըրդը ղըր ջանջիր, գէրթը Գնգոհօղտ գոլին, գաշէ, վըր ջան-ջիր թոմամ թափըյ ըն, վըր տը հուշփը լաշին (սատկած մարմ-նին): Քոնիմ օր գանցնը ջանջիր գդանան գիկան մըճ փէթ-կընուն. տը դարին միղր շատ գէղնը: Մէղվոցը դէր ղմիղր գքաշէ, չըն իշխընը ուդը, գոսէ ժահր է, ղմիղր գպառնը ու գդանէ էրթը Հոլբ, էնդիխ գծախէ, ըր հազրուն գոսէ տեղվո-լուգ է (թունոտ է), ուվր ուդե ղմէռնը, տդուր հոմար է դարը օտար էրգիր ծախը, վըր ղընք չջանչնան, ընք լա շուտ-շուտ գծախէ ու գդառնը իկը Էղգորդ:

Հոլբու աշխարհ ղոդ միղր ուվր գուդէ գսախնը, քօռը գուդէ, աչվին գպացվը, քոչոլը գուդէ, վըր կլխուն մազ գիկը, հիլուդը (հիվանդ) գուդէ գսախնը: Ջէն գըլը (կլցվի) ղՀոլբը քաղաք վըր ումալ միղր էր էգը ու ծախվը: Գէլան ղադ մարը գօլըրդըն (կփնտրեն), վըր ղմիղր ծախիյ տ:

Հարց ու փուրց գանըն, գօլըրդըն, գիկան ղոդ մարը գկնան (կգտնեն), գհարցուն թը միղր ունը՞ս ծախու. տը մարը գվը-խոնը, թա մարը է մեռը ղըր միղր ուդոլուց, ինքար գիկը (կուրանա), թը ի՞նչ միղր, ի՞նչ բան, ըս միղր չունըմ:

Հոլբու մարդիր գոսըն. «Ադ միղր տիղ էր, ուվըր գէրավ սաղցավ, քոռ աչօքցավ, հիլուդ սախցավ»:

Էղգորդցը միղր ծախուղ գհոսկոնը ղըր մէղըը հունար, գփօշոնվը, վըր էժան ծախըյ տ, իրանց հիվընդնուն լը չդըվը: Ծէռվուն փըըցըյ էր կացը, ալ ի՞նչ անէր:

Ա̈ն ժոմոնգուց հիդ տն ծուր, վըր հուշափ սադգըյ էր, գոսըն Գնգոհօղտ (ընգա հադա, ընկա այստեղ) գոլին, տը

*Ջօջքարիր, վըր հուշափ անցըյ էր, զփուր քըը վըր քարերուն, զքարիր սպիտգցը, գոսըն «Հուշփը ջամբո» (վիշապի ճանապարհ)։*

*Պատմեց Թալինի շրջանի Անակչի գյուղի բնակիչ՝*
Գրիգոր Մարգարյանը։

## ԶՈՎՃՍԱՐԸ ՀՈՎՎԸ ՊԻՐԸ

*(Ծովասարի հովվի ձեռնափայտը)*

*Զովտսար Սասնու մեծ սարն է, Սասնու Դավթը պիրտ (բերդ) հանտո անուր դակ (ստորոտին)։ Վըր Զովսարը կլխուն գոլ (լիճ) գո։ Ամառ տը դիխ զօղան (ամառանոց) գէլան հոյիր, քրտիր, տը սար մալիր՝ օչխար, դավար գլցվըն։*

*Հովիվըմ գէրթո վըր Զովտսրու գօլուն, զպիր գորէ ըր գուշտ վըր լվացվը, գիկա էձըմ (մի այծ) գլիզէ զպիր, պիրը գսըլո (կսահի) գընգնը գօլը մէջ, գսըգը (խորասուզվում է) ու գգօրնը։*

*Ադ հովիվ Բաթմանցը գէղնը էգըյ էր Զօվտսար զօզան։ Աշուն վըր գտառնտ գտէսնտ զըր պիր, իրանց կէզը ջրվօրիմ ձեռք։ Պիր կացըյ էր Բաթմոնտ ճուր, տուրս էլը։ Ջհովվի պիր գիդան իրին։*

*Զօվտսրու հոր (մինչև) Բաթմոնտ ճուր գէղնի մըր կէղէն հոր Էրովան (շուրջ 80 կմ)։*

*Պատմեց՝ Թալինի շրջանի Անակչի գյուղի բնակիչ*
Գր. Մարգարյանը։

## ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԹԻ ՄԱՍԻՆ

*Տավթը մամ Քաղքիկը Սահադ իշխանը աղջիգն էր. գուս է էղը, քառսուն դոըը գուս է մանցը, քամոդիր ո ու չըր գոռնո գանը (կանգնել)։ Անցիր ո քոնի դարը, մարո չկինո, զադ աղջիգ գողարգըն Մորոթքու սուրպ Աստվածածին։ Գդանըն զաղջիգ գորըն տնդիխ։ Մայիս ամսու խլիս աղջգդիք գէրթան ձաղիգ քաղըն ուրանց, ինք լո նստուգ է քարում՛ վրո, վըր դոշկին։ Աղջիգ գդէսնո, վըր ուր դագ թոռավ. չուրս թին տարծավ, դէսավ վըր ձաղգնին խառնվան իրար, ուր նստաձ քար էղավ բրքե (ավազան) ըլը ճուր, ինք լո մէջին նստուգ։ Աղջիգ վլայց զըր ջան, ջրը մէջ տնրէս տուր էգավ իրան, վըր զուր ծէռք էրգնցուց բրքէն տուրս ձաղիգըմ փըցուց, գէրավ,*

Էլավ գանավ, վըչ քամի է մնացը ուր ջան, վըչ մէգ պան, սըփ ու սախ է։ Աղջիգը ծէռքով էրըց աղջըգդո՞ւց տըըց. հոյդո ի՞նչ ձաղիգ է, գժողվէք, էգէք ձաղիգը հոյդո դիխն է։ Էգան աղջըգդիք, հարցըցըն թէ ո՞ւր դիխն է։ Ասըց հանոտ։ Աղջգնին չըն դէսնը, վըր ոմալ տստըըն, ընք լէ ոլ չդէսավ, ձաղիգը հոմպործավ, գորավ։ Աղջիգն էլավ ուր հօր մօդ մարտ օղարգըց, թէ ըս սախցիյ ըմ, բարխոնան ջամբցու իկամ դունս։ Բաք ջամբըց զբարխոնուն էգան դուն։ Ժոմոնագ անցավ, աղջիգ ըմէն օր գիկիր ըր բաբու մօդ։ Օրըմ լէ չէգավ բաբու մօդ, էրգու օր անցավ չէգավ, ամիսըմ՛ անցավ չէգավ։ Սահագ իշխան գանչըց զըր գնիգ, զաղջգա մամ, տըըց՝ աղջիգ ի՞նչ էլավ, չէգավ մօդս։ Ինչ տըըմ, տըըց գնիգ, աղջիգը փօրօվ է։ Իշխան էլավ գանավ, զօդու տուռ պացըց, կնաց աղջգա քօվ տըըց. «Աղջը, նա տու էղնըս, նա քու անուն, նա քու գուսութին, վըր տունատր։ Ըմ սպիդագ մուրուք իմոլ թաթխըմ մըջ արնին, զքըզը սպանըմ»։ Աղջիգ տըըց. «Բաք էրգու խօսք ըս լո տըըմ։ Մայր Աստվոծաձին, վըր տու զընձը օղորգոցըր զօղան ըմ սախնալուն հոմար, ըմ հընգէրդունք՝ աղջգդիք զընձը տըրոցըն քարում վըէն, ոդ քար տարծավ էղավ բըքէ (ավազան), ըս լո մէջ գորո, վլացվո ոդ ջըէն, ձաղիգ բաղ ու բաղջա էղավ ըմ պօլուր, ըս միծ էք, տարցմ դոսնուչուըս դարէգան, մէգ ձաղիգ փըցըցը գէրո, վըր ըս դէսո, սախցո։ Գանչիյ ըմ զըմ հնգէրդանք, տըը՝ ի՞նչ ձաղիգ է գհովոքէք, ձաղիգն տըդիխ է։ Աղջգդիք էգան, տստըըն,—ո՞ւր դիխնէ ձաղիգը—իրանք չըն դէսնո, տըըցի՝ հանտո, վըր ըս զոդը տստըը ծաղիգը հոմպործավ, ոլ չդէսո։ Ան փօրծանք, վըր ըմ կլխուն էգիյ ո ոն ձաղգը ինո է, յո ջըի ինո։ Հովոդարիմ բահուգ մարտ օրոշե թըլխ ըմ վըո բըհէ, թէ վըր ըմ էրոխէն գնգդուց էրոխեսնու բէս էղնը, զընձը սպանէ, թէ վըր ուրիշ դէսագ էղնը ոլ տու կինաս, բաբօ»։

Ժոմոնագն էգավ, բահոգնին ոմէն օր գըհէն աղջգո վըէն։ Սահագ իշխանը գնիգ տըըց, թէ ոդ բահոգնին ըմէն օր զմըր, հացն ըն գէրը, զմըր ջուրն ըն խմը, խաթըր գըըհըն, ոդոնց վըա զթորուս աղպէր տիր, վըր աղէգ հսկըն։ Ամալ լո արոցըն։ Ժոմոնաք էգավ, ոնթոդգու գագով էրոխան էղավ։ Սահագ իշխան կնաց դէսավ, զանուն տըըց Մհեր։ Մհէր էլավ, միձցավ, կնաց էրոխոսնու քով խաղոլու. ինչ էրոխու ծեռք դվըց՝ ընգավ. զթիվ պռնըց՝ թիվն ընգավ, զուգք պռնըց, ուգքն ընգավ։ Էրոխեսնու

մամիր, բաբիր կացըն Սահագ իշխանին կանչադ տստցըն-
«Մհեր քաղքը մէջ էրտխտ չթողըց, զըմեն սըխըտըց»։

Մհէր մեծցավ, էղավ զաս դարտգան։ Օրըմ լտ գնդդիք գտսըն- «Տու պիջ ըս»։ Մհէր գիկտ բաբոյ, գտսէ. «Բաբո, ընձը գասըն տու պիջ ըս, ինչու գտսըն»։ Սահագ իշխան գտսէ. «Լաօ, տու ըմ դղէն ըս»։ Մհէր գէրթտ մամու քով գտսէ. «Մամօ, ըմ բաբ ո՞ւվ է». Մամ գտսէ. «Քու հէր էն է» (ու Սահագ իշխանին, իր հորը ցույց կտա)։ Մհէր զծէոք գստրա մամուն, գվերու վիր գտսէ. «Մամօ, շիդագն տսէ, ըմ բաբ ո՞ւվ է, թտ չէ քու էդը օրն է»։ Մամ գտսէ. «Լաօ, զընձը տիր կէդին զըմ փարսըվէք (կողքըր) գոգըրտցըր, ջըխջտցըր տիր կէդին խօսամ»։ Մհէր զմամ գիջու կէդնը վրտ, մամ չգտանտ խօստ, անջախ գտսէ. «Գանչէ զմայր, Աստվածածին ու զտրգ զքու ծէոք վըր ըմ գողտրուն»։ Մհէր գանչըց զմայր Աստվածածին, զծէոք զտրգըց մամու գողտրուն, մամ սախցավ։ Մամն տսըց Մհերին. «Գէրթաս մայր Աստվածածին սար, թտ արժանը էղնըս գդէսնաս ան աղպուր, ան ճաղիգ, տու ան ջրը, տն ծողգը զավագն ըս, քու հէրն էն է»։

Մհեր գտսէ. «Զդիխ ըս ինչ կինամ»։ Մամ գտսէ. «Քու բաբուն՝ Սահագին հարցու, տնը քըզը զդիխ գտսէ, հիդտ մարտ գօղտրգէ, վըր կացըր հասար Մտրտթքու սարը վրէն զքու հնգէրնին քու ինտ գհետացուս, գանչըս զմայր Աստվածածին, վըր արժանը էղնըս, գդէսնաս»։ Մհէր զհնգէրնին գհետացու ըր ինտ, գգանչէ զմայր Աստվածածին, գդէսնտ, վըր մարմար քարու միջուն ջուր սորըց։ Մհէր հովտդաց, գանչըց զըր մարաիր էգան, տսըց. «Տուք պան գդէսնէ՞ք հոյդտ դիխ»։ Ա՜նունք տստցըն. «Զըք դէսնտ»։ Մհեր ցուցուց զովտզան, զճաղգդիք, տնունք չդէսան, տստցըն՝ չըք դէսնտ։ Մհէր, վըր տնունց հիդ խոսաց ինք լտ տլ չդէսավ։ Մհէր վըր տնունց հիդ դարձավ էգավ ուր դուն, կնաց ըր բաբ Սահագը քօվ, գանչըց զըր մամ լտ տն գիխ, տսըց ըր բաբուն. «Ընձը փուղ փարտ գիդաս էրթամ տնդիխ վանք շինըմ»։

Մհէր կնաց Մտրտթքու սար, ըր դեսած տվտզանը ու ճաղգըղուց գիխ վանք շինըց, թըմըցուց, էգավ դուն։

Քտնիմ դարը ընցավ, Մհէր դարկվավ, դղեմ էղավ Մհէրին, դղեմ լտ էղավ, մեգ լտ էղավ, էղան իրիք դղտ։ Ջաոջը դղու անուն տրտցըն Տավիթ, զմտգել դղու անուն՝ Օհան, մտգտլը անուն Վիգէն։ Վիգէն ծուռ էր։

Տավիթն ու Օհան շինոցըն ըպիրտ, մդան մէջ։ Ջուռ Վիգէն ընք լո վըր գդէսնո ըր էրգու աղպէր միձ պիրտըն շինը, ընք լո գժօղվե զխէբ ու միձ զնարնին, գլոդե պիրտը ոիման, փրար վրա, գէղնի միձ քարորու սար, անուն լո դարէ Վիգէնը պիրտ՝ վըր հոր մըգո լէ ոդ էրգու պիրտիր ագան։

Պատմեց՝ Հակոբ Խաչոյի Մովսիսյանը, ծնված 1850 թվականին, Սասունի Արտխոնք — պատմական Կլիմիր (Շլեմիր) գյուղում, այժմ բնակվում է Աշտարակի շրջանի Սասունիկ գյուղում։

## ԲԱՐՈՒ ԵՎ ՋԱՐԸ ԳՈՒՎ

Բարին ու Ջար իրար հիդ գռվան։ Բարին գոսէր, թո աշխարքը աղէգ պանը բարութինն է, Ջարը գոսէր, թո աշխարքը աղէգ պանը չարութինն է։ Իրար հիդ բարըշան շորթ ու բայման արեցըն, վըր էրթան շարյաթին, վիր խոսք ողուրտ էղավ, հանէ զմոգոլը աչք։

Բարին ու Ջար իրանց էրգրը ինո էլան, կացըն ուրիշ էրգիր, վըր տադ անողնին զիրանք չջանչնան ու արտար տադ անըն։ Կացըն մոլու քօվ, ասոցըն զիրանց շորթ ու բայման։ Մոլէն շարյաթը օրէնքով ոսըց. «Բարին զորար չիդո, լո Ջարը խոսքն է ողուրտ»։ Անցան կացըն շէխը քօվ, ասոցըն զիրանց շորթ ու բայման. շեխ լո ոսըց. «Բարու խոսքը չէ, Ջարը խոսքն է»։ Կացն դէրդըրու քօվ։ Դէրդէրն ասըց. «Բարին բարի յո, Ջարու խոսքն է»։ Մոլէն, շէխ ու դէրդէր հանիլդվըցըն զԲարու աչք։

Բարին խնտրվավ ոսըց ըմ էդը խոսքն է զըմ աչք, վըր հանի էք իդէք ընձը։ Ջաչք դվոցըն իրին, առավ սորըց ուր ջեբ։

Բարին, էրգու աչվուց քոռ, էլավ կնաց մղարէմ կաշըց մդավ մէջ։ Մղարը մեջ կակօշոըց ցախիմ լօդո ընգավ ուր ծէռք, զցախ դվըց տիտ-տինո, ծէռքն ընգավ գուժըմ։ Բարին հոսկացավ, վըր ոդ դիխ մարտ գընոգըը, վոխոցավ, վէրուց զցախ մդավ դագը ու զցախ դվըց ըր վրէն։ Մղարու դիրվանք իրգուն էգան մդան իրանց դուն իրար էդիվ, չորս հոգու ծէն էր, չորս հոգի էն նստան ու խոստցըն։

Բար հարցուց ըր դղին, թո ոսօր ի՞նչ աշխատանք ըս դադորը։ Դղէն ոսըց. «Փլցուցիր ըմ զԲաթմոնո գարմունջ»։ Բար հարցուց մոգոլ դղուց. «Տու ոսօր ի՞նչ աշխոդանք ըս արըը»։ Դղէն ասըց. «Ըս ձռըցիր ըմ զՄէրդինի փաշու աղճիգ»։ Բարը հարցուց մոգոլ դղին, թո տու ոսօր ի՞նչ ըս արը։ Դղէն

տսըց. «Ա̈սօր իրիք օր ըս աշխադանք չըմ արը, անջախ դոռցո զԲարու աչքը հանոցը»: Դղէք հարցըցըն ուրանց բարուն, թո ինչ տիղ է ըէդք, վըր ադ մարտու աչքը սախնո: Բարն ասըց, թո ադ մարտ, վըր զըր աչք գժը ջըով վլո, տըէ ըր դիխ, գժը չամուռը ինտ քսէ վըր աչվուն, աչք գսախնո:

Մագալ դղէն տսըց. «Բարօ, Մէրդինու փաշու աղճիգ, վըր ձոըյ ո, ինչով գսախնո»: Բարն տսըց. «Մըր շօրարուց շուրըմ, լաթը գդուրըմ, վըր գըու, ձուխ իդո իրին գսախնա»: Մոգոլ դղէն հարցուց. «Բաթմանա գարմունջ ինչով բըդ շինըն, վըր չքանդվը»: Բարն տսըց. «Ուսթէն, վըր հող լուսուն իրին հաց պէրօղը պոնո, սախ սախ տըո վըր գարմունջը հըմքին, ու զքարիր շարա վրէն, գամուրջն տլ չփըլը»:

Ցախը լօդու դագ բոլովդօղ մարտ զոդ պօլուր լըըց ու ըըհըց ուր միդք: Մոգո՛լ օր, վըր Բարն ու իրիք դղէք էլան կացըն, Բարին էլավ զգուժ կաշըց (փնտռեց), կդավ, գաչվին վլաց, տըըց ուրանց դիխ, գժան չամուռը ինտ քսըց վըր աչվուն, աչքիր սախցան, գեսավ զմոզորան, ադ մարտորու շօրորուց լաթ ըմ փրցուց, տըըց ուր ջեր, էլավ տուրս, կնաց Բաթմանա գարմունջ, գէսավ զԲաթման ուստեն, վըր քանի զգարմընջը հիմք գորէր, ջուր գոռփօվ գփլըցէր դանէր: Բարին տսըց. «Ինչ գիդաս ընձը, վըր քըզը տսըմ զթըլըմ, գարմունջ շինըս տլ չքանովը»: Բաթման ուստեն տսըց. «Ի՞նչ վըր ուզըս գիդամ»: Բարին ասըց. «Հող լուսուն զքու հաց պէրօղը, վըր պոնըս սախ-սախ տըըս հիման մէջ ու զքարիր շարըս վրէն, տլ չփըլը»: Մոգոլ օր հող պարը լուսուն ուր գնիգ էգավ, իրան հաց պէրըց: Բաթման ուստէն, վըր դէսավ զըր գնիգ, օսլէք տօղաց (մարմինը փշաքաղվեց): Գնիգն տսըց. «Ի՞նչու զմդաձըս»: Ուստան տսըց զըր մդաձելու սոբոըը: Գնիգը չվոխոցավ, ուրխըցավ, վըր ընք զէղնը հիշոդագ հասո դունյան ավո էղնը, էլավ բառգավ հիման մէջ, վէրուց զքար տըըց ըր վրէն, գարմունջ շինվըց, տլ չփլավ: Բաթման շինըց զգարմունջ, գնդո բադվիրք (նկար, արձան) հող գարմունջին պարծըցավ, գայնավ, ուր ձձերուց սպիդագ ջուր գիկո, գաթ-գաթ գթափը ջըը մէջ, անցող տարձող տնուր ձձերուց ջուր գխմըն:

Բարին կնաց Մերդին տն փաշու քօվ, վըր աղճիգ ձոխյ էր, տսըց. «Փաշա ինչ գիդաս ընձը, վըր զքու աղճիգ սախցում»: Մէրդնի փաշէն տսըց. «Ի՞նչ վըր ուզըս գիդամ»: Բարին էլավ կնաց տն օդէն, վըր աղճիգ մդուգ էր, գաբուգ՝ խոըոխօլ

վըր տռան։ Ջաղճիգ, վըր հարծըկըն ընքըլընք գուղէ, զփօթիր գկըզըռաէ, զմաղիր գջօփըռդէ։ Բարին զտռուռ պացըց, զորգըց գքվրիթ, վառըց ցլաթ, դարավ աղճգտ քթը մոդ, ձուխ դվըց։ Աղճիգը լաց ու հոմո դիխը Նստավ, գձգավ. «Սէրն ստծու իգ դարձը, շուրըմ պէրէք հակնըմ»—տըրց Բարը մարտուն։ Շուր պէրոցըն, աղճիգ հակավ գշօրիր, Բարին կնաց փաշու քօվ։ Փաշան տըրց. «Աղճիգ քումն է, ի՞նչ վըր քու պէրան լո օլըրդը ուզըս, գիդամ»։

Բարին տըրց. «Աղճիգ ըմ քուրն է, ախր ըս լո ընդանիք, էրոխո ունըմ, ինչ վըր տու գուզըս, զոնը դուր»։ Մէրդինու փաշէն դաս-քսան ճօրու պիռ մէռուգ արրանք (օսկը, արձաթ, անկին քար) դվըց, տըըց մարտ հոդին, վըր դանըն զԲարին ըր դուն։

Բարի մարտ լո զմեռուգ արրանք՝ զօսկին, զարձաթ, զանկին քարիր պարծուց, էղավ մէգ բաղրգան, էգավ Բաթման։ Բաթման լո զըր հախ դվըց ու Բարին կնաց ըր դուն ըր գնիգ ջժու քօվ ուրխըցան։

Բարին հաղթըց։

Պատմեց՝ Հակոբ Խեչոյի Մովսիսյանը:

## ՏԱԼՎՈՐԻԿԻ ԽՈՍՎԱԾՔԻՑ

Օսմանցին զըր բէշ իրեք խդում գժողվէր, մէգ դոման էր, մէգ լա վէրգի, մոգէլ լո խամչուրի։ Դոման վըր արդորունէր։ Կըց Կուրտըկ տէն զգալիր գչափէն։ Միր՝ զգալիր չըն չափը, ֆլան կէղէն տսքան փարտ, տսքան զուրուշ գդրէն, գժօղվէն։ Ջովթէն գիկէր գնստէր, գհավոքէր, գդանէր։ Դոման ցանքը համար էր։ Էկու դան դոման իրիք հարիր զուրուշ էր։ Էկու դուն մըր կեղը անուննէր։

Վէրգին՝ հողը, ճրը, սորէրու, չայիրնու, բաղչոստանու, մէշոսնու համար էր։ Ջովթէն գիկէր, հաղ ոգէր, գոսէք չկո, գտառնէր գէրթէր։ Վէրգին կէղը վրո էր, հուց չափիլ չկէր։ Ա՞ն կէղիր, վըր Մշու վրա էր ըսկը վէրգի չըր իգո, մինագ խամչուրը գիդէր։

Խամչուրին օչխրը վրէն էր, լո օչխրին համրիւ չկէր։ Ուվ գիշխնէր իկէր զօչխար համրէր, չըն իշխընտ, գէլէն, գիկէն վըր համրէն զօչխար, լո կէղը ռէս գոսէր. «Մըր օչխար ոդո խոդոր է», քոնիմ զուրուշ գգօխէր զավթիու ջէր, գտառնէն, գէրթէն։ Մուշ օչխրը կլուխ խամչուրին Գինգ զուրուշ էր։ Դալ-

վօրկա մէջ հազար օչխրը ինտ, հարիր կրէլ գիդէք, ու օչխրը կլուխ խամչուրին դաս փարա լո չըր իկ։

Ադը բեդուԹնը դուրքն էր, բէգիր լո ատոնձին գուզէն դուրք։ Ազոնիր աշնոնէ աշուն գիկէն խոֆիրԹին գուզէն։ Մուրադը ֆիկալուց էդիվ ու խաֆիրԹին բդլավ (վերացավ), չըն իկ։ Մըք նվիր-մվիր գիդէք աղոսնուն, վըր ջամբէք էրԹոլու ժամոնակ ֆիշէն, չզորդէն։ Տալվորիգ հար հուռյոԹ (1908 Թ.) դուրք չըր ֆդո, անուր էդիվ դուրք էգավ մըր վրո։ ՀուռյոԹից էդիվ դոմանը կէղը վրէն գիկէր, կիղը Թառ գէնէր դնէրը վրո, հորմէգ մարո իր հօղու գօրո գիդէր։ Կէղը ռէս ու մջլիսնիր Թառ գանէն վըր կէղոցուց։

Գալու Բէդօյ միձ աղբէր Սագօն էր կէղը ռէս։ Սագօն վըր Մուշ գէրԹէր գուժ առնելու ժամոնակ գփչէր գժը մէջ, ւօրմեգ գուժ վըր չԹոխէր (չփշրվեր), զոն գուժ գառնէր դան հոմար, վըր աղըրից ճուր պէրէն։

Պատմեց՝ Թաքար Թազոյան, Տալվորիկցի, ծնված է 1854 Թ., ապրում է Թալինի Շղարշիկ գյուղում։ Գրի եմ առել 1946 Թ. օգոստոսին։

## ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԹԻ ԿՅԱՆՔԻՑ

ՏավիԹ Սասունոտ ըր պիրոից օրանց գէրԹէր Հոլոբ պիրո, շինուԹին գշինէր, իրնգուն գիկէր ուր պիրո քնէր։ Սասունոտ պիրոից հոր Հոլոբ քիան օրվա ջամպո է։ ՏավիԹ սոբոԹան գհեձնէր զԲուռգիգ Ջոլալին, կըց զաչքո խփուս, պանաս գհասնէր Ուրֆո։ Ըս կացիր ըմ Ուրֆո ու Հոլոբ, դեսիր ըմ զՏավԹը շինած պիրո Հոլբո քաղքը մեջ ու զԲուռգիգ Ջոլալու՛ մսուր Ուրֆո քաղքէ իրիք ժամ վըր Հոլբո Թին (կողմ)։ Ըր (ԴավԹի) ծիու մսուր պարծր էր, ըմ բաժից էվիլ։ Ըս զըմ ծիուք գպոր-ծըրցնեք նուր գհասնէր ծիու մըրը ցածր բռուգ։ Մսուրը քարը ցածը բռուգ ձագ (ծակ) էր, զըլնջիլ անցնոլու համար։ Ծին վըր գերիր էր զգիր ըր վիզը քսվիր էր մըրը քարին, մսուրը գոգիր էր, գոգիր էր վըր գփիլէր։

Քուռգիգ Ջոլալու գիրը (կերը) քապքապ է էղը (երկաԹի հատեր), ծիան զքապքապ վըր գուդէր բըձնէր, ՏավիԹ գԹռնէր վըր ծիու միճան, կըց զաչքը խփուս, պանաս (մի ակնԹարԹում) գհասնէր Հոլոբ, զըր Հոլբո պիրո գշինէր, իրնգուն տառնէր Սասուն։ Հոլբո պիրո վըր շինը յա ՏավիԹ, հանդա պլրիմ վրա, ուր (բլրի) պօլուր ձուվ (ծով) է շինը, վըր մարո չէլո

*պլրը վրեն, չուըս գուղմ պօլ է։ Ըս խըչ (մոտ) գօլին շադ-ըմ կացը։ Պիրտ, հա՜, հա՜, հա՜, հա՜, շադ պարծր է, տդ պարծ-րութնը գէսից գախուգ է Տավթը գուրգը։ Գուրգը բոչիգ կըց սորու տրումբէն հաստ, էրգեն չէ, գեղնը մետրըմ, ընը. չընը։ Գուրգը մին թօփու չափ գէղնը, հոմլտ գլուր է, կութնիմ զըն-ջըլից գախուգ է։*

*Մարտ զՏավթը կերտզմնը դիխ չկինտ հուր է։ Գտսըն ճու-րըմ է էղը, Տավիթ էգիրտ լողգցվը, էլիրտ ճըրուգ նիդըմ զտր-գիր ըն սպանը զընքի։*

*Պատմեց՝* Թաքար Թազոյանը։

# ԲԱՌԱՐԱՆ
# ՍԱՍՈՒՆԻ ԲԱՐԲԱՌԻ

## ԲԱՌԱՐԱՆ ՍԱՍՈՒՆԻ ԲԱՐԲԱՌԻ

*Ա՛ռ—ձայնարկություն՝ երեխաներին քնացնելու համար։*
*Ա̈բոյի—կարճ, թևավոր և մազոտ վերարկու։*
*Ա̈բովուր—աբայի հագած (մարդ)։*
*Աբով—համար, պատճառով։*
*Աբրո—տարա, մանր կշռաքար՝ կշեռքն ուղղելու համար։*
*Աբրան—առվի սկիզբը, ջրանցքի բերանը։*
*Աբրշում—մետաքս։*
*Աբրշմե—մետաքսյա, մետաքսից շինված։*
*Աբրջան—ապարանջան։*
*Աբուռ—ամոթ, պատկառանք։*
*Ա̈բուր—ապրուստի միջոց, ապրուստի հնարավորություն։*
*Աբուր—սպաս, թանապուր։*
*Ագ—1. Անիվ, լիսեռի մոտ ծակը։ 2. Թոնրի ակը։*
*Ագառ-մագառ—խենթ ու խելառ, անմիտ (մարդ)։*
*Ա̈գալ—ոլորած փուշի, յազմա։*
*Ա̈գեր—կար, գոյություն ուներ։*
*Ագիշ—ակիշ, երկաթե թաթավոր մի գործիք՝ կրակը խառնելու համար։*
*Ագմում—մոմ, որ փեթակի դռան մոտն է լինում։*
*Ագնգոր—աչքը կախ գցել, սպառողական նայվածք։*
*Ագնաղ—թակարդ՝ մուկ բռնելու համար։*
*Ագնջգլո—բարի լուր, ավետիս։*
*Ագշթաթ—ակիշի թաթը, թաթաձև մասը։*
*Ագուռ—թրծած կավ, աղյուս, ակկադերեն* agur *(Գր. Ղափ.)*[1]։
*Ագռավորիկ—նոր՝ առաջին ատամը հանող երեխայի գլխին չամիչ, խաշած ցորենի հատիկ թափելը։*
*Ագոտ—ակոս, ատամ։*
*Ագոտ-բշխիկ—ատամ փորելիք, ատամ մաքրելու շյուղ։*
*Ագոգիլ—արգելվել, կռվել։*
*Ագոժաժ—կաշառք։*
*Ագոգուգ—արգելված, իրար փակած։*
*Ագոմեճ—ատամների միջև։*
*Ագրաղ—նախաճաշ։*
*Ագրգչախ—նախաճաշի ժամանակ։*

---

[1] *Ակադ.* Գր. Ղափանցյան, *Ասուրա-բաբելական բառեր հայերենում, Երևան, 1945։*

Ագցան—աքցան։
Ա̈դ—այդ։
Ադագ—բրդի կամ մազի մնացուկը՝ գզելուց հետո։
Ա̈դտգիլ—1. Անհետանալ, կորսվել։ 2. Պարապ ժամանակ գտնել։
Ա̈դտգուզ—կորած, անհետացած։
Ա̈դար—մարտ (ամիսը), մարտի լույս մեկի կես գիշերին տան ներսի՝ պատերը փայտով ծեծում են ասելով. «Շոպաթը (փետրվար) դուրս, ադարը (մարտ) ներս»՝ չարքերը դուրս վանելու համար։
Ադտուն—այլուրի և յուղի շաղախով պատրաստված ուտելիք, առանց եփելու։
Ադին—ժամանակ, ատեն։
Ա̈դլիլ—լրացնել, կատարել։
Ադրգիլ—տես ադտգիլ։
Ադոք—լեփլեցուն (հասկ)։
Ադրան—թաղիքի կտոր, որ դնում են տրեխի մեջ հագնելուց առաջ։
Ա̈զտր—ամուրի, չամուսնացած։
Ա̈զտրութին—ամուրիություն։
Ա̈զտրչարի—Նոր փեսայի թիկնապահ՝ ամուրի երիտասարդ։
Ազոխ—չհասած ժուռ խաղող։ Քեղի ուտելի մասը։
Ազպ—ջուլհակի սանր՝ հենքի համար։
Ազպող—ազպելու գործը կատարող (մարդ)։
Ազտնվուր—ամուսին, թագ ու պսակի արժանացող։
Աթար—չոր թրիք։
Աթոռաց շրջիլ—1. Նորապսակ փեսայի հանկարծամահ լինելը։ 2. Թագավորի կամ իշխանի գահընկեցությունը։
Աժախ—ծառի չոր ճյուղեր, որով տան կտուրն են ծածկում։
Աժառ— ծառերի ճյուղեր և թփեր, որոնցով տներն են ծածկում՝ գերանների վրա փռելով։
Աժել—արժել, արժենալ։
Ա̈ժդտհար—հրեշ, հսկա, դև, վիշապ։
Ա̈լոլող—դատարկամիտ, բանսարկու (մարդ)։
Ալամ—ամբողջ աշխարհ։
Ալտնի—հայտնի, չթաքնված։
Ա̈լտրուջիգ—չար ոգու անուն, որով վախեցնում են մանուկներին։
Ա̈լտրոգիլ—հավաքել, թալանել։
Ալբ—1. Փայտյա դույլ, կաթ կթելու համար 2. Փայտյա մի չափ, որով ցորեն են չափում։
Ա̈լրըհտլ—իսկույն, անմիջապես։
Ալեվալի—այլանդակ, անշնորհք (մարդ)։
Ալի—կանեփի որձ տունկը, որ հատիկ չի բռնում։
Ալուկ—1. Ճյուղ (ծառի)։ 2. Տան մինուճար ժառանգը։
Ալուջ—ալոջի ծառի պտուղը, բազմակորիզ։
Ալրջր—ալոճի ծառ։
Ա̈լհոդտ—անմիջապես, իսկույն։
Ալուչ (իկ)—երկու տարեկան էգ այծ։

Ալուր—ալյուր։
Ալրխուս—ալյուրի խյուս (ճաշ)։
Ալրղուն—ջրաղացի քարի առաջի այն մասը, ուր աղացվող հատիկի ալյուրն է լցվում։
Ալրմաղ—ալյուրի մաղ՝ փոքր անցքերով։
Ալրոտիլ—ալյուրոտվել։
Ա̈լք—չար ոգի, առասպելական կնոջ կերպարանքով։
Ա̈խլտվտ—առաջին բերքից թխված և որպես մատաղ բաժանվող հաց, նաև տշկտվտ է կոչվում։
Ախլանք—փակ, կողպեք։
Ախլիլ—զարթնել, քնից վեր կենալ։
Ախլուզ—զարթնած։
Աձիգ—ածիկ, ծլած ցորենի ալյուր։
Աձիլ—ձու ածել։
Աձլիլ—ածիլել, թրաշել, սափրել։
Ա̈հ—վախ, դող։
Աղազ—ծառի ճյուղերից գործված դուռ կամ ցանկապատ։
Աղանձ—բոհված ցորեն, խարկած արմտիք։
Աղացք—ջրաղաց, որևէ բան աղալու գործիք։
Աղբրկին—եղբորկին։
Աղբրտիք—եղբայրներ։
Աղեզ—1. Գեղեցիկ, սիրուն։ 2. Շատ լավ։
Աղեղնուկ—ծիածան։
Աղեստան—1. Աղաներ, բեզեր։ 2. Աղիքներ, փորոտիք։
Աղզլուց—անասուններին աղ տալու, աղ լիզելու տեղ։
Աղիզ—աղեզ։
Ա̈ղի—հղի։
Աղլեղ—աղ տալ, աղ տալու ժամանակ, աղ լզելու տեղ։
Աղլուղ—թաշկինակ։
Աղնիլ—աղեղով գզել (բուրդ, բամբակ)։
Աղնձիլ—աղանձել, խարկել ցորեն կամ գարի։
Աղվիս—1. Հարսանիքավորներից առաջ հարսի տուն գնացող մարդը։ 2. Աղվես։
Աղվիսամիռ—սուսմեռուկ։
Աղվիսաքուն—թեթև քուն, կիսաքուն։
Աղվիս խրդուկ—դեղին ծաղիկներով մի բույս, որի սերմերի ցայտից աղվեսը խրտնում է։
Ա̈ղվիթ—վայրի մի պտուղ, կեռասի նման փնջաձև, բազմակորիզ։
Ա̈ղվիթի—աղվիթ պտուղը տվող ծառ։
Աղճգնազ—աղջկա նման, աղջկա պես։
Աղճգութին—կուսություն։
Աղուն—ձմեռվա ալյուրի պաշարը, աղալու համար ջրաղաց տարած ցորեն։
Ա̈ղուրդ—իրավ, ճիշտ։
Աղվնիգ—աղավնի (թռչ.)։
Աղտիլ—աղատ քաշել, ճյուղերով ցանկապատել։
Աղտուզ—աղատ քաշած, ցանկապատած։

Աղտող—աղատ քաշող, ցանկապատող:
Աղցան—սալաթ՝ աղով, պղպեղով, քացախով համեմված բանջարեղեն:
Ա̈ղքան—աղահանք:
Աղքար—քարաղ:
Ա̈մալ—այնպես, այդպես:
Ա̈մոնոթ—հանձնարարություն, հանձնում:
Ամանլվտ
Ամանլվուկ } ջրի, լաթի կտոր, որով ամանները են լվանում:
Աման-չաման—ամանեղեն, տնային իրեր:
Ամանկոդրուգ—կարմիր ծաղիկ ունեցող մի բույս:
Ամբիզ—արևելքից փչող քամի:
Ա̈մեկ—ամեն մեկը, յուրաքանչյուրը:
Ա̈մլո (հոմլո)—այդպես, այսպես:
Ամբկուլ—ամպշոգ, ամպոտ և տաք եղանակ:
Ամբհովոնք—հովանոց, ամպհովանոց, զոնտիկ:
Ամբշուղ—տես ամբկուլ:
Ամութք
Ամոթք } իգական գործարան, հեշտոց:
Ամուլ—լծակից, ամոլ, լուծ քաշող զույգ:
Ամռհերգ—ամառը հերկված:
Ամռնակ—վաղահաս պտուղ (խաղողը):
Ամռնուգ—ամառը հասնող, վաղահաս:
Այլևայլե—զառանցանք, անմիտ խոսակցություն:
Ա̈յբ—ամոթ:
Ա̈յնի—ճիշտ, իսկը:
Ա̈նաբուռ—անամոթ:
Անագռա—անատամ, ատամնազուրկ (մարդ):
Անոհ—անվախ, ահ չունեցող, անահ:
Անանթիղ—անթեղ չունեցող, կրակը չպահող (տուն):
Ա̈նոռագ—լիրբ, անամոթ (մարդ):
Ա̈նտռակ—անդունդ, դժոխք:
Անարտասունք—առանց արցունքի:
Անավլիլ—առանց ավելելու:
Անգոհ—անժամանակ, ուշ կամ շուտ:
Անգան—ուշ, ժամանակն անցած:
Անգանալ—ուշանալ, ժամանակը փախցնել:
Անգարուրդք—կոշիկի կամ տրեխի քանդված մասը:
Անգիզ—չզզված (բուրդ, բամբակ):
Անգղ
Անգ } կանթ (ամանի):
Անգոլիլ—հանգել, մարել, օր. «քու դունն անգոլը»:
Անգջգլո—բարի լուր, աչքալուս:
Անգջգութ—ականջի ետևի մասը:
Անգջվի—1. Ականջներ: 2. Ճախարակի այն մասը, որի միջից սեղմ կեր-

պով անցնում է ճախարակի ճաղը, որն ինքնիրեն յուզվում է ջղից և հեշտացնում պտույտը։ Պատրաստվում է ոչխարի որնքի երկու ջղերից։

Ա̈նդ—երդում։

Անդենի—հանդերձյալ աշխարհ։

Անեղ—աղեղ, աղեղի լար։

Անըշուրդ—կերակրի մեջ լցրած քաղցրեղեն։

Անթոդագ—անութ, թևի տակը։

Անթոռամ—անթառամ (ծաղիկ)։

Անթափ—անուժ, թափ չունեցող։

Անթեղ—կոճղ, որ մոխրի մեջ դնելով կրակն անմար են պահում։

Անթիմ—թեմազուրկ, թեմ չունեցող, ծխազուրկ։

Անթղիլ—անթեղը կրակում պահել։

Անթղոգալ }
Անթղուց } անթեղը պահող, կրակ պահող։

Անթում—անթիվ, անհաշիվ։

Անթուրձ—չթրծված։

Անժաժ—անշարժ։

Անժում—անժամանակ։

Անժուռ—անհամ, անյուղ (կերակուր)։

Անժռիլ—անհամանալ։

Անիղ—աղեղ (գզրարի)։

Անլզամ—անսանձ (լզամ—սանձ)։

Անլից—չլցվող, անկուշտ (մարդ)։

Անկ—անդամալույծ, անկյալ։

Անհալավ—մերկ, անզգեստ։

Անհարիլ—չհարված (մածուն), խնոցի չզարնված։

Անձնտկով—իր անձը գովող (մարդ)։

Անձուխ—ածուխ, կիսավառ փայտ։

Անձնտվուր—հոգևոր, կենդանի, շնչավոր։

Անձրևանոց—հովանոց (զոնտիկ)։

Անճրզուզ—ճարը կտրված։

Անորա—անօրեն։

Անցուցք—վիժում, անժամանակ ծնունդ։

Աշիլ—նայել, դիտել։

Աշխար—խաղողի ընտիր մի տեսակը։

Աշխրքտիս—փորձված, աշխարհ տեսած (մարդ)։

Ա̈շկտվտ—տես տխլտվտ։

Աշմշիլ—մթնաշաղել, մթնաժամել։

Աշմուշ—աղջամուղջը։

Աշնուկ—ուշ աշնանը հասնող պտուղ։

Աշովի—միայն նայելով։

Աշունքիլ—աշուն լինել, աշնան գալը։

Աչաց-հլուն—ուլունք, որ կախում են աչքի վրա, բուժվելու համար։

*Աչո—աղջնակ, փոքր աղջիկ։*
*Աչքոիլ—աչքով տալ, չար աչքի գալ։*
*Ապո—հորեղբայր։*
*Ա̈ջամ—պարսիկ։*
*Աջառ—տե՛ս աժառ։*
*Աջառիլ—տե՛ս աժառիլ։*
*Աջառուղ—ճյուղածածկ, աջառոտ վայր։*
*Աջըտրար—ձեռնածու, փոկուսնիկ։*
*Աջղղագ—անութ, թևի տակը։*
*Աջուջ-մաջուջ—մանրահասակ, թզուկ (մարդ)։*
*Աջուզ*
*Աջոզ* } *միզաման։*
*Աջուգ—մարմնի այն մասը, որ գտնվում է ազդրի և ստորին փորի միջև։*
*Աջտռիլ—1. Ուժեղ ճմռել, շփել։ 2. Կտուրը աջառով ծածկել։*
*Առագամ—արօրի այն մասը, որ մտնում է խոփի մեջ։*
*Առեջ, առիջ—սայլի, դահուկի գերանը՝ ղեկը։*
*Ա̈ռզել—թախթ, վրան քնելու համար, բայց անշարժ։*
*Առընգի—սկյուռ։*
*Ա̈ռինք—առաստաղ։*
*Առկողմ—լեռան կողը, զառիվեր։*
*Առորմի—գերան, որ երկարությամբ դրված է պատի վրա և որի վրա են դրվում մյուս գերանների գլուխները։*
*Առուկերը—թափառական, թալանված։*
*Առջինեգ—անդրանիկ (որդի)։*
*Առջմասուր—մասուրի մեծ և ընտիր տեսակը։*
*Առջթոփ կամ ջրթոփ—արջերը վախեցնելու մի գործիք, որ հոսող ջրի շնորհիվ մեծ աղմուկ է հանում։*
*Ասաս—հիմք (տանը)։*
*Ասի—անառիկ (բերդ), անանցանելի (ճամփա)։*
*Ա̈սլու-ջընս—ծագումը, ցեղը։*
*Ասղտնուց—ասղաման։*
*Ասղնգալ—1. Փշաքաղվել (մարմնի)։ 2. Եռացող ջրի պղպջակներ արձակելը։*
*Ասղնգիլ—ասեղով ծակծկել, ծակծկել։*
*Ասմար—թուխ գեղեցիկ։*
*Աստնվուր—կին ունեցող, ամուսնացող. խուրրի-միտանի* ast. ašti *կին (Գր. Ղափանցյան)։*
*Աստունտ—այստեղ, այնտեղ։*
*Ասպ—ջուլհակի գործվածքի այն թելերը, որոնք բացվելով, փոխնիփոխ գոցվելով, նրանց միջից անց ու դարձ է անում մաքոքը։*
*Ավտ—շեն, օրինակ. ավտ կեղ—շեն գյուղ։*
*Ավտ—պես, կերպ, հոյդավտ—այսպես, այս կերպ։*
*Ա̈վտյի—շենք, շինություն։*
*Ավգտրտ—մեծ բերան, երախ։*
*Ա̈վդ—հպատակ, ստրուկ։*
*Ավըկը—յուղով տապակած հաց։*

Ավրդուն—տնավեր, տնաքանդ։
Արաղչը—գլխարկ՝ սանդնագործած գդակի մի տեսակը։
Ա̈րտղան—երկար և տաշած գերան, որ պատի երկայնքով են դնում, պատին ամրություն տալու նպատակով։
Արբիլ—հարբել։
Արբուզ—հարբած, խմած (մարդ)։
Արդ—մի անգամվա ճաշ։
Արգակ—արեգակ, արևը։
Արգիլ—անձրև գալ, անձրևել։
Արգուզ—անձրևոտ (եղանակ)։
Արդար (իղ)—հալած (յուղ)։
Ա̈րդ—արժանապատվություն, ամոթխածություն։
Արթ—ակի ոտքերի մասը, ոտքերի մորթը։
Արիջ } կանեփի դեռ չոլորած թել—կեղևը. բայը՝ արջիլ։
Արիշ }
Արիվ ուտիլ—ապրել, արևը վայելել. օր. «չուզս դքու արիվ» (մեռնես՝ քո արևը չուտես)։
Արիվը սիվ—մեռնել, արևը խավար (լինի)։
Արիվքերան—արևկող (վայր)։
Արիվ խտալ—արևը տալ՝ մեռնել։
Արիվ բադք—արևմուտք։
Արխակ—փայտյա երկու հենարաններ, որոնց վրա ամրանում է ճաղը (ջուլհակի)։
Արձթքար—նավթալինի նման փայլող հող, արծաթի հող, որ կար Սասունի Գելիեգուզան գյուղի արևմտյան մասում, Անտոք լեռան գագաթի դիմաց, Մերկեր կոչվող թաղում։
Արձթուզ—արծաթազօծ, արծաթջրած։
Արձվեթ—մի մետր բարձր. փարթամ բույս՝ անասնակեր։
Արնբախ—արյունաթաթախ, արնաներկ։
Արնգրլ—արյան լիճ։
Արնխում—արյուն խմող, մարդասպան։
Արնպարտք—արյան գինը։
Արնդար—արյունոտ։
Արնհիզութին—արյունահեղություն։
Արոս—1. կռունկի նման մի թռչուն։ 2. Գյուղ՝ Խնուսի շրջանում։
Արուս—հարս, նորահարս։
Արջիջ—կապար, ռսաս էլ են ասում։
Արջջուզ—կապարով զոդված, ամրացված։
Ա̈վոգադիգ—նավակատիկ։
Ա̈վտյի—շենք, շինություն։
Արտխլիս—արտհնձելը վերջանալիս տրված նվերը։
Ա̈յո՛ւ—զարմանքի ձայնարկություն։
Ա̈ուար—ամառանոց, զովքի վայր։
Ափկունք—քարկտիկ խաղը։
Աքուք—ընդհատակյա ջրատար կավե խողովակ։
Աքուքիլ—գետնի տակից խողովակ անցկացնել։

Բաբ, բաբօ—հայր, հայրիկ:
Բաբուբլոր—մի փարթամ, համեմ բանջարեղեն:
Բադոն—պատանք:

| | |
|---|---|
| Բոզիլ<br>Բոզնիլ | ընկնել, գլորվել: |

Բագրուս—բամբակի քուլա, որ մանում թել են դարձնում:
Բաթ—ուռեցք (մարմնի), խոզուկ:
Բաթլիլ—նիհարել, ավերվել:
Բաթման—1. Ծանրության չափ, 12 նուգի, նուգին=400 գր.:
Բաժ—հասակը, մարմնի երկարությունը:
Բոլո—փորձանք, դժբախտություն:
Բոլովզիլ—պահ մտնել, թաքնվել:
Բոլոկ—սև ու սպիտակ, խատուտիկ:
Բալրիլ—հարվածից մարմնի ուռչելը:
Բախ—խուրձ, մի գրկաչափ (փայտ):
Բախուրձ—թանի տկի կամ խնոցիի զարդաթելը և զարդերը:
Բախտ—ապավեն:
Բախտըր—խաղողի մի տեսակը:
Բակլո—լոբի, հատիկն ու պարկուճը միասին:
Բոհր—ծով:
Բաղբերան—սառնասիրտ (մարդ):

| | |
|---|---|
| Բաղլիլիկ<br>Բաղլուլա | սառցաձող, որ ցվիքից կախ է ընկնում ձմեռը: |

Բաղսիրտ—անտարբեր, սառնասիրտ (մարդ):
Բաճ, բաճուկ—սիսեռի կամ լոբու պատյանը:
Բոյթոր—անասնաբույժ:
Բոնտուշ (քրդ.)—մանիշակ:
Բոնդըկ—ժապավեն (գլխարկի):
Բանդ—1. Արտի եզրերը, ներքևի մասը: 2. Ճախարակի երկու շրջանակներն իրար միացնող թելերի ցանցը:
Բոշ—անասունների ճակատի սպիտակ մազերը:
Բաշ—լավ, վարպետորդի:
Բաշոկ—աղավնու նման վայրի մի թռչուն:
Բոռոդո—իզուր, ավելորդ տեղը:
Բոռար—պառավ:
Բոռգադա—շրջանակաձև ճյուղ, որով կալի վրա աշխատող եզների բերանն են կապում՝ քուլաշը չուտելու համար:
Բռիզ—1. Մեջք, թիկունք: 2. Պաշտպան, հովանավորող:
Բոռոշ—արեկող (տեղ):
Բոռդուդ—պառկած, քնած:
Բոռուզ—քարկոտիկ խաղի առաջին խաղը:
Բառմագ—պառավի պես:
Բաս—պահք, յուղ, միս և այլն չուտելու օր:
Բոս—բավական:

Բասըմբոլ—կարմիր-կանաչ նարոտ, ծաղկազարդի օրը մոմի մի կտորի հետ, որպես չար աչքի դեմ, կախում են մարդու կամ անասունի վրա։

Բաստագ—արգելակ փայտյա, որ դնում են ոչխարի փարախի շուրջը, որպեսզի ոչխարները դուրս չգան փարախից։

Բաստիղ—պաստեղ, ծիրանի, խաղողի թանձրույթի փռվածք, կտավի պես բացված, որ պահում են ձմռան համար։

Բոտամ—փոքր ճարպոտ մաշկ։

Բատվիրք—նկար, ֆոտոնկար։

Բատրկզալ—պատրույգակալ, ձողիկ, որի վրա դրված բամբակն է փաթաթվում։

Բար—պտուղ, բերք (ծառի)։

Բար—1. Դեմք։ 2. Դեպի։

Բորան—խոյ, ղոչ։

Բարաթ—հետք, ծխացորդ։

Բորոքոթ—առատ, առատություն։

Բորբուղիկ—նորահարսի հետ գնացող կին՝ հարսնքուր։

Բարզգի—քամի, որից եղանակը պարզվում է, ամպերը ցրող քամի։

Բորթոշի—մորթե գոգնոց, որի վրա իլիկը քսելով—հրելով պտտացնում են։

Բորմալ—տան հատակը։

Բարնբար—սկեսրայր։

Բարնզադ, Բարնմամ—սկեսուր։

Բարշթո—պարսատիկ։

Բարուար—շավիղ, սարի լանջի ճանապարհ։

Բորոշ—դույլ՝ փայտից կամ պղնձից։

Բարս—մեղվի ձագ տալը։

Բաֆոն—ալյումին (մետաղը)։

Բրուգ—կոկոն, նոր բացվող ճյուղիկ։

Բրգիլ—բացվել, կոկոն տալ։

Բեբախտ—անբախտ։

Բեբարաթ—անհետ (կորած), հետքն իսկ կորած։

Բեյբուն—հոտավետ մի ծաղիկ, գուլ ու բեյբուն։

Բեշ—տուրք։

Բեր—ոչխարի կիթը։

Բերվուր—ոչխարը կթող։

Բզոթ—կրակի խոշոր և վառ կտոր, թեժ կրակ։

Բընդոր—կալի վրա կապված եզներից ծայրի եզը։

Բըռ—խաղ, որ կոչվում է բերդ, բերդ պահել։

Բըսկ—խոպոպ, մազ։

Բթլիլ—նիհարել, լղարել։

Բժար—թարթիչ, հոգն. բժարնին։

Բժիկ, Բժուկ—1. Բառ. որ կրակ իմաստ ունի, ասում են երեխաներին վախեցնելու համար։ 2. Աչքի ցավ։

Բիբի—սիրուն (բան), խաղալիք (երեխայի)։

Բիզնալ—դուրեկան, դուր գալ, հաճելի լինել։

Բինչ—քթի անցք։
Բիշ—անթարթ (նայելը)։
Բլարու—հավաստի, ճիշտ, իրավ։
Բլել—գիժ, խենթ, չղատող։
Բլիլ—զբաղվել, պարապել մի բանով։
Բլիլիգ—գդոոր, կաղնի և հացի ծառերի տերևների վրա գոյացող գնդաձև մի զանգված, որ երեխաները հավաքում և խաղում են նրանցով։
Բլրխտալ—խոժոռ նայել։
Բլըխիլ—աչքերը բարկությունից ուռած, ուռել։
Բլըշիլ—շվարած մնալ, զբաղվելով մոռանալ։
Բլուգ—զբաղված։
Բլուլ—ծալք, ծալվածք։
Բլուգ—նորածիլ սոխի կանաչը։
Բլող—աղբի փոքր կույտ, կկղանք։
Բլոջ—1. Բոլոջ։ 2. Փոքր շաղգամ։
Բլոր—ամորձիգ։
Բլոր-բակ—խաղ երկու մարդով՝ գլուխ-ոտք իրար հակադիր գլորվում են միասին։
Բլութ—խոզակաղին, փայլութ։
Բղրխալ—խոխոջել, ժայթքել։
Բղըզիզ—փոքր սափոր, կուլկուլակ։
Բղլամ—մազաս, բաղլամ, խուրձ։
Բղող—ձու, որ թխսի տակ մնալով սկսել է ձագ դառնալ։
Բնչաղ—պինչը կտրած, քիթը վնասված։
Բշերիկ—դաշտ Տիգրանակերտի մոտ։
Բշկուրի—ձեռնասուն, փոքրիկ աշխատող։
Բոգ—1. Կոկորդ։ 2. Ջրաղացի քարի այն անցքը, որի մեջ ցորենն է թափվում։
Բողըկ—ծորակ (ջրի)։
Բոլոզ—սրածայր, պոլոզ։
Բոլուջիկ—սառանի քամի։
Բոխ—մի տեսակ վայրի բանջար։
Բոձոխի—մի տեսակ ծառ, որի կեղևը կարմիր գույն է տալիս։
Բոձիխ—մի ծառի կեղև, որ կարմիր գույն է տալիս.
Բոճի—շան թուլա, լակոտ։
Բոճրակ—ծխնի (դռան), որի վրա պտտվում է դուռը։
Բոչոլտ—թեզանիք, շապիկի թևի երկար ծայրերը, որով աշխատանքի ժամանակ քշտում են թևերը՝ այդ ծայրերն իրար կապելով և գցելով վզի ետևը։
Բոռթիլ—պատռել։
Բոռթուկ—պատռած։
Բոստալ—ցայտել, ժայթքել։
Բոստանիգ—փոթորիկ, ձյունախառն քամի։
Բջիղ—բլթակ, պճեղ։
Բջգիլ—փորփրել, պրպտել։

Բջղուզ—փորփրած, պրպտած։
Բառռալ—ոչխարի մայելը՝ գառը փնտռելիս։
Բռուզ—շրթունք։
Բըտըռռուզ—բերնե-բերան, շրթնե-շուրթ (լցված)։
Բըջգիլ—փորել (տամը), մի տեղ փոսացնել։
Բըշամ—քյանքուլ, ճակատի կամ գագաթի վրայի խոպոպ, մազ։
Բըտիլ—1. Մանրացնել (փողը)։ 2. Կաշառք։
Բսալ—1. Լույս արձակել։ 2. Աղերսանքով նայել, աղաչող նայվածք՝ մի բան խնդրելու նպատակով։
Բսիկ—1. Աչք։ 2. Կայծ, փոքր լույս։
Բսըկ—վարս, ծամ։
Բտղի—վանքին տալիք հարկը, նվերը, պտղի։
Բտղիշ—մի բույս 0,5 մ. բարձր, կապտագույն ծաղկով, քաղցր հյութ է տալիս։
Բտլիլ—նիհարել։
Բրոն—տվտիկ, աղվամազ։
Բրդուն—խսիր, փսյաթ։
Բրուսկ—փայլատակում, փայլել։
Բրոխ—գորշ (գույն)։
Բրոբ—պղտոր (ջուր)։ Հոտած (ձու)։
Բրջուզ—աշտարակով պատած, պարսպապատ։
Բրքե—ավազան, լիճ։
Բուբու—խաղալիք (երեխայի)։
Բուբոջիկ—ծոծրակի մազ (մարդու)։
Բուիզ—1. Վնասակար միջատ։ 2. Բառ՝ երեխաներին վախեցնելու համար։
Բուլուզ—տես բոլոզ։
Բուլուկ—ծիլ, նորածիլ։
Բուխ—ծոպ, խոպոպ (մազի)։
Բուհուր—գետի անցքը, ծանծաղ տեղը։
Բուզտ—ցուլ։
Բուզգ—ումպ, մի անգամ կուլ տված ջրի քանակը։
Բուզրու—ծակիչ գործիք (երկաթյա)։
Բունիգ—փոքր սելա, սակառ, կողովիկ (ոչ խոր)։
Բումբարտկ—շնորհավոր, բարի վայելում։
Բուտուզ—հողե մեծ աման՝ կերակուր եփելու համար։
Բուր—ընկույզի միջուկ։
Բուրջ—բուրգ, աշտարակ։
Բուքրտ—ճախարակի ճաղ, որի վրայից անցնում է պտտացնող լարը։
Բօգ } կոկորդ։
Բուգ }
Գագա—1. Ջուր՝ մանկական բառով։ 2. Որևէ ուտելիք։
Գադվան—ոլորող գործիք՝ մազ, բուրդ, խոտ ոլորելու համար։
Գադոշ փայտյա դույլ, որի մեջ կաթ են կթում։
Գադդուզ—կատաղած։
Գաղըն—գանգատ, բողոք։

Գաթնաղպեր—կաթնեղբայր. մի մոր ծիծը ծծող տարբեր հոր զավակներ։
Գաթնաղպուր—կաթնաղբյուր, բուժիչ ջուր, լուսաղբյուր։
Գաթնըմցնիլ—առաջին կաթը ծծացնելը (ուլին, հորթին)։
Գաթնքուր—մի մոր ծիծը ծծող, տարբեր հոր աղջիկներ։
Գած, գազ—լեռ, սար։
Գալտղխ--կալատեղ։
Գալմաստ--կալից ու բիշին նվեր տրված հացահատիկ (կալամաս)։
Գալուց—կալ անելու ժամանակ (կալոց)։
Գալուղ—1. Կալված։ 2. Գլխի գագաթի ածիլած մասը։
Գալուգուղ—բերքահավաք (կալուկուտ)։
Գալղուն—կալին մոտիկ շենք, ուր անձրևի ժամանակ քուլաշն ու ցորենն են պատսպարում, կալատուն։
Գոլի—ձոր։
Գախմխի—կաղամախի։
Գախուզ—կախ արած, կախված։
Գախքար—ջրաղացի այն քարը, որը աղացվող հատիկների հոսքն է կանոնավորում։
Գաղտմար—թանաքաման։
Գոմար—փոշեխյուս՝ տրեխներ զարդարելու համար։
Գոմի—նավ։
Գամքար-կամի տակի սուր-սուր քարերը։
Գամփեղ—կանեփի հատիկը։
Գամրուզ—մի խոտ է, լավ անասնակեր (վայրի)։
Գանգրուզ—ուշ բուժվող վերք։
Գանտշիլ—1. Կանաչել (բույսի)։ 2. Որդի, սերունդ ունենալ։
Գանգիջ—կարթ փայտյա, որ պարանի մի ծայրին է ամրացված, բեռ կապելու ժամանակ մյուս ծայրն ամրացնում են այդ գանգիջին։
Գանգըման—կանգնած դիրքով։ Այդպես՝ նստըման, վազըման և այլն։
Գոնդորտ—ջրաղացի նավի վերևի բերանը, որից ջուրը հոսում է նավի մեջ։
Գանիլ—կանգնել։
Գանուզ—կանգնած։
Գոնգրհան—կանկար հանելու գործիք։
Գանգոիլ—հանկարծ կանգնել։
Գանդրիֆ—շրջանակաձև փայտյա մի օղակ, որ լուծը արորի ձողին է միացնում։
Գանթ—1. Ունկ (ամանի), կանթ։ 2. Տրեխի վրա բացված անցքեր, որոնցից անցնում է տրեխի թելը։
Գանչխուզ—մի խոտ, որից կանաչ գույն են ստանում։
Գոուլազ—թելի վրա շարված ընկույզներ։ Շարելու համար ընկույզի կողքը ծակում են և թելն անցկացնում։
Գանջուխ—քեզագի մի բույս, որ ուտվում է։
Գանչան—կանչող, ձայն տվող։
Գանչուկ—կանչված, հրավիրված։
Գաջ, գաժ—դենչակ, թելերի հյուսկ, կաժ։
Գաջրար—թելհուսկ կատարող, դենչակ պատրաստող, կաժրար։

Գառափ—1. Գլուխ: 2. Ծեծված քուլաշը հավաքող փայտյա երկար գործիք, կառափ:

Գառփիլ—1. Կալի քուլաշը հավաքել: 2. Ջղեռոփ խանձվելը կրակից:

Գոռկորտ—եռոտանի, որի վրա կերակուրի ամանները են դնում՝ կասկարա:

Գավան—Նախորդ:

Գորդոլոխ—մանյակ:

Գարկուզ—ամու մնացած:

Գարուզ—կարած:

Գարմիր—խաղողի մի տեսակ:

Գացին—Ջրաղացի վերին քարը ցցին միացնող երկաթ:

Գաք—փայտյա փոքրիկ շրջանակ—տախտակ, եզերքները փոս, տնկերի անցքերը փակելու համար:

Գաքչնագ—կաքավի նման:

Գաքվխուզ—կաքավի խոտ, որից սնվում է կաքավը:

Գոֆաթ—սպառնալիք, ահաբեկում:

Գդուրս—աչքի կտուրս, սպիտակ ճպուռ:

Գդող—գալարում, կծկում (օձի):

Գեժ—գլխապտույտ ունեցող, գլուխը ակամա շարժող:

Գեժոխել
Գիժոխել } գլխապտույտից ընկնել, հավասարակշռությունը կորցնել:

Գելոնիգ—աստղնազարդի մի տեսակը՝ ռոմբաձև զարդ (գդակի վրա):

Գեժոուզ
Գիժոուզ } գլխապտույտ ունեցող, հավասարակշռությունը կորցնող:

Գեձգրթուր—կայծակե թուր:

Գեձոռիգ—կայծոռիկ, լուսատու միջատ:

Գեմիգ
Գիմ } խոտից պատրաստած կապ, պարան կամ բարձիկ կապելու կամ նստելու համար:

Գենչանի—մի ծառ, որի կեղևը կարմրավուն է և մոմի պես վառվում է:

Գեովըղուք—մորթին քոր գալը, քերվելու ցանկություն:

Գեսզոդ—«զոդ» չափի կեսը (կոտ չափի կեսը):

Գերուցք—հացի կամ ճաշի մնացորդ:

Գթուզ—հեշտ կթվող (կով, ոչխար):

Գթիլ—1. Կթել: 2. Գլգիլի հասկերը կթել, կտրել:

Գթուզ—կթված:

Գթուց—կաթ կթելու աման:

Գթխտ—1. Նվեր տրված մի բաժակ գինին: 2. Նոր հարսին տրվող առաջ նվեր:

Գթվան—հեշտ կթվող:

Գժգոնիլ—թելի կծիկի խառնվելը, ծայրը կորցնելը:

Գըժգըժ—ցուլը կովի վրա գրգռելու ձայնարկություն:

Գըմգըմք—սափոր, կուլկուլակ:

Գժդուն—կուժը դնելու հատուկ տեղ։
Գիժտուխ—գլխի պտույտ զգալ, շշմել։
Գիժտուուգ—շշմած, գլխի պտույտ ունեցող։
Գիշիռ—կշեռք, լծակ. gišir (սումերերեն. Գր. Ղափանցյան)։
Գիձուգ—այրված (հաց)։
Գիջ—խայթող օձի։
Գիռ—կեռ երկաթ, որով սառույցների վրայով մագլցում են սարն ի վեր։
Գիսաբջեղ—կես բջեղ հող ունեցող, 1/3 համփայի հող։
Գիսահամփո—կես համփայի հող ունեցող։
Գիսուգ—կիսված, կես արած։
Գիսք—երկու տարեկան այծ։
Գիցուռ—մորեխ։
Գլգիլ—ոսպի մեծությամբ սպիտակ գույնի հատիկներ ունեցող մի արմտիք, որի ցողունը եղեգ է և 1—1,5 մետր բարձրանում է։
Գլգիլ գուրջի—վրացական գլգիլ, եգիպտացորեն։
Գլղիգ—փոքր լեզվակ։ Կլղիկ։
Գլգգիլ—փոքր լեզվակով կուլ տալը։ Կլգկել։
Գլեզ—լորձունք, թուք։
Գլեշ—ծիծ, ստինք։
Գլոզ, գլոնզ, գլոնձ—կղկղանքի, թրիքի գունդ։
Գլորակ—կլոր փայտ, որ ջրաղացի քարի վրա են դնում։
Գլոք—կծիկ։
Գլոքիլ—կծկել, կծիկ դարձնել (թելը)։
Գհոռ—փարախ, բացօթյա փարախ։
Գձան—կծող։
Գձգձոկ—կծող շուն։
Գձուգ—կծած, խածնված։
Գմփոզ—ուժեղ ընկնել՝ մեծ աղմուկով։
Գնդլող—գլխաբաց, առանց գլխարկի։
Գնդիլ—խուզել, մազը կտրել։
Գնզուգ—խուզված, մազը կտրած։
Գնջագ, Գնջի — 1. Ոչխարի դմակի տակից, բրդից կախ ընկած թրիքը։ 2. Ձյունի կամ փայտի մեծ գունդ։
Գնքտրար—կնքահայր։
Գնքտղուն—վայր՝ ուր կնունք են անում։
Գնքտմամ—կնքամայր։
Գնքտմում—կնքամոմ։
Գնքուգ—կնունքը կատարված, կնքված։
Գնքտճաշ—կնունքի ճաշ։
Գշտանուց—1. Կողակից։ 2. Կողքին ամրացված փայտ։
Գշտոցավ—կողացավ։
Գշտոփուր—կուշտ փորով։

Գշտում—կշտացած։
Գորդիլ—անցք բանալ (տրեխի վրա) թելն անցկացնելու համար։
Գորդուգ—անցք բացված (տրեխի վրա)։
Գորիդ—տրեխի եզերքների վրա բացված անցք, որի միջով անցնում է թելը։
Գոդ—1. Չափ հացահատիկի՝ մոտ 20 կգ։ 2. Փայտյա աման՝ կերակրի համար։
Գոզրո—կանաչ պատյանից նոր հանված ընկույզ։
Գոզալ } սարի կամ բլրի վրայից անցնել, անհետանալ։
Գոզիլ }
Գոթ, գութ—ոչխարի դոշը, կրծքի մասը։
Գոթվուր—միասնական աշխատանքի օրը աշխատանքի առաջինը եկող մարդը, որին պատկանում է մորթվող ոչխարի դոշը։
Գողինձ—հացի էրվածք, թոնրին կպած և կիսայրված հաց։ Կողունձ։
Գոնդ—1. Ճախարակի մեծ շրջանաձև անիվը։ 2. Ջրաղացի անիվ, որի վրա թափվում է ջուրը։ 3. Ծառի թարմ ճյուղ՝ անասնակեր։ 4. Անդամալույծ, մարմնի անշարժանալը։
Գոնդիլ—1. Ճախարակի անիվը դնել։ 2. Ջրաղացի անիվը պատրաստել։ 3. Թարմ ճյուղեր կտրել, որպես անասնակեր։ 4. Անդամալույծ դառնալ։
Գոնկըռ—կոնքոսկր, կմախք։
Գոշտ—անկյուն։
Գոռնափըշտ—գերեզմանից դուրս եկնող և շրջող ոգի։
Գովգիթ—1. Կով կթող։ 2. Դույլ, որի մեջ կաթ են կթում։ Կովկիթ։
ովոնդ—պար, շուրջպար։
Գովրկ—ձագար։
Գովձուձ—կանաչ մի մողես, իբր թե օձին թույն տվողը։ Կովծուծ։
Գորտ—համեմատ։
Գորանի—սարի ծանր տեսակը։
Գոր—մրիկ, սնկային մի հիվանդություն ցորենի համար։
Գորի—ակոս, որից ջուրն է հոսում և բանջարանոցներն ու արտերը ջրում։ Կորի, առվակ։
Գործիլ—տես գողիլ, գողալ։
Գործուգ—բերանն ի վայր դրված, շուռ տված աման։ Կործուկ։
Գորուգ—կորսված, անհետացած։ Կորուկ։
Գոփոն } տաշեղ փայտի։ Կոփած, կոփոն։
Գոփուն }
Գոփուգ—տաշված։
Գոփուց } տաշելու պրոցես։
Գոփոց }
Գռտհիլ—նկատել, գլխի ընկնել։
Գռզիլ—կծկվել, քամոտել, ռեւմատիզմով բռնվել։ Կռկել։
Գռզիգ—բույս, որի արմատը քաղցր պալար ունի։
Գռձգլդալ—գկրտալ։
Գռթան—թուխս նստած հավ։
Գռջոն—կոշտ, կռճոն։
Գռտիլ—ամորձատել, կռտել։

Գռատուզ—ամորձատված։
Գրաքան—կայծքար, հրահան։
Գրգուզ—մանր-մունր ցախի կտորներ, վառելիք։ Կրկուտ։
Գրգըմիլ—շուտ-շուտ ուտել բերանը լցնելով։ Կրկմել։
Գրեջ—աման, որի մեջ շան կերակուրն են լցնում։ Գրեճ։
Գրըկ—ցորենից կամ գլգիլե սոնուցքից (ձավար) և յուղից պատրաստված քուֆթա կամ հալվա։
Գրիրտ—կրիա, փայտյա փակ, որ կրիայի ձև ունի։
Գրիրու գոխվ—կրիայի կոխվ. մի խաղ, որ երկու մարդով է խաղացվում, որոնց ոտք ու ձեռքն են կապված։ Երբ մեկն ընկնում է, կրիայի պես չի կարող ելնել, մյուսը սողոսկելով մոտենում և ծեծում է նրան՝ կապված ձեռքի միայն մատներով բռնած փայտիկով։
Գըջագ—փայտյա այն ամանը, որից ցորենը հոսում է ջրաղացի քարի տակ։
Գըջգի գախան—այն քարը, որի ծանրությունը կանոնավորում է ցորենի հատիկների հոսքը՝ աղացվելու համար։
Գվտ—կտրած կաթ, որ համեղ պանիր է, բայց 2—3 օրից ավելի չի դիմանում, փչանում է։
Գցագ—փոքր գերան։
Գուզ—հղկած, փայլերես։
Գուղ—1. Հավի կուտ, կեր։ 2. Անդամալույծ։
Գուգու—փոքր կլոր հաց, որ թխում են երեխաներին ուրախացնելու համար
Գուգվիլ—կլոր, փոքր հաց թխել։
Գութուռ—կարի մի տեսակը, կութուռ։
Գուլազ—խոպոպ, այտերի եզերքով իջնող վարս։
Գուլ ու սոսըն—վարդ և սոսըն (բուրավետ ծաղիկներ)։
Գուզ—կզաքիս, հարգի մորթ ունեցող մի կենդանի։ Կուզ։
Գուղ—սանդղազարդի մի ձև՝ գլխարկի համար նախշ։
Գուլան—մայիս ամիսը։
Գունդ—տե՛ս գոնդ։
Գուշտ—1. կուշտը, մոտը։ 2. Կուշտ կերած։
Գուռանի—հարվածելու նպատակով նետված փայտ։
Գուռի—եզների շարք, որ լծում են կալի վրա քուլաշը ծեծելու համար։ Կոռի
Գուռզ—գնդաձև, պոչավոր սուր երկաթյա զենք։
Գուռգուռտ—ջրվեժ։
Գուռջըկ—թռչունների մարսողական գործարանը։
Գուռջըմաթ—սինձ, կաթոտ և համեղ մի բույս։

Դարագ—ձվածեղ։
Դարտղքիր—ռանդա, փայտ հղկելու գործիք։
Դորաղ—անասունի հիվանդություն, ոտնացավ։
Դորգորտ—արտակարգ չափով մեծ։
Դազմո—հազվադեպ։
Դադե—մայր։
Դադնիլ—սիրտը խառնել, սրտախառնուք։ Տառնել։
Դոլավ—գետի հունը և այն տեղը, որտեղ կարելի է մոտեցնել և ջրել անասուններին։

Դոհլ—անտառ։

Դաղտեղ—տաքդեղ, պղպեղ։

Դոգմո—նշան, ճանաչելու համար, որ կատարում են այրելով՝ շիկացած երկաթը անասունի դեմքին կամ ականջին դնելով։

Դամաղ—1. Քիմք։ 2. Քիմքի հիվանդություն։

Դոմալ—1. Հավերին տուն կանչելու ձայնարկություն։ 2. Հավի տուն, բնակ։

Դամտուխ—խորթ մայր։

Դոյախել—դիմանալ։

Դոուլ—ջրաղացի ամբարը, ուր լցնում են ցորենը։

Դոուլաթ—հարստություն։

Դոնդոլոզ—թեթևսոլիկ, անխելք, ապուշ։

Դանդուռ—փարփար, փրփրեմ, մի բանջարեղեն է։

Դոռոքոռ—մեծ դուռ, դարբաս։

Դոռդանդուզիզ—խաղ՝ լծակ է, որով ելնում և իջնում են խաղացողները։ Ծլ և էջ։

Դոռնոխոռ—թավալգլոր ընկնել։

Դոռըկա—քուրդ կին, քրդուհի։

Դայո—մայր։

Դոյախտ—ջուլհակի ոտատեղերը։

Դոստմալ—թաշկինակ։

Դովրան—ժամանակ, ժամանակաշրջան։

Դավրը լեզու—եզան լեզու (բույս)։

Դավրը մասուր—մի մասուր, որ չի հասունանում։

Դարտ-գուջիգ—մի խաղ դժվար կատարելի։

Դորոնգ (քրդ․)—ուշ, ուշացած։

Դորբ (քրդ․)—հարված։

Դարգոհ - դարբաս։

Դաֆ—ջուլհակի գործիք, որ պահում է սանրը։ Տոֆա։

Դըղել—կաշվի մշակումը։ Դըղուգ—մշակած։

Դգլուգ—մերկ։

Դգլոզնալ—մերկանալ։

Դեզվան—բարձր քարակույտ, որով ձմեռ ժամանակ, երբ ճանապարհները փակվում են, ճամփան գտնում են։

Դել—էգ շուն։

Դեզտի—մի բույս, մոտ մի մետր բարձրությամբ, որի դեղին ծաղիկները հավաքում, չորացնում, աղում մանրացնում են և կանայք իրենց գլուխը լվանալիս, վերջում այդ փոշուց ցանում են իրենց մազերի վրա, որպեսզի երկար և փափուկ մնան։

Դեքորկին—տեգորկին։

Դզզել—թրջվել, ջրոտվել։

Դզզուգ—թրջված, ջրոտված։

Դըրբ—լայն ճանապարհ։

Դըքո—կես մետր բարձր․ սաքու։ Հողից ու քարից շինված անշարժ թախտ։

Դիգ—տիկ, մորթի, որ ծառայում է մածունը հարելու համար, տկից պատրաստած խնոցի։

Դիզ—1. Որդ, որ գոյանում է անասունների մորթի տակ։ 2. Խաղում մի անգամ շահել։
Դիլ—1. Ցեխ, բուսական մնացորդից ճահիճներում գոյացած տիղմը։ 2. Որբ, անտեր (մարդ)։
Դիլագ—աղաչանք, խնդրանք։
Դիվ—տերև, ծառի ճյուղերը տերևներով միասին, որ ծառայում է որպես անասնակեր։
Դլրիք—պտղածածկ ծառի ճյուղ։ Դլրիկ։
Դլուզ—ցեխոտ, ճահճոտ վայր։
Դլոզիլ—ցեխոտվել։
Դխրիլ—իրար վրա հավաքել, դիզել։
Դխրուզ—հավաքված, դիզված։
Դկփեզ—փայտ, որ պրկում է տիկը, որի մեջ լցված է մածուն՝ հարելու համար։
Դկջուր—փոքր տիկ, որով թան և մածուն են տանում դաշտում աշխատողների համար։
Դղդղալ—խտիկ լինել, մարմնի որոշ մասերին հպելուց ակամա ծիծաղել։
Դղիզ—խտիկ, ծիծաղ առաջացնող հպում։
Դնագոլ, Դնանգոլ } տնաշեն կամ տնավեր։
Դոզոշ—գորտի մի տեսակը։
Դոլ, դոխ—1. Ցեղ սերունդ։ 2. Ջրաղացի արկղը, ուր ցորեն են լցնում։ Ակկադերեն dox (Գր. Ղափանցյան)։
Դող—1. Կլոր բարակ հաց։ 2. Մեծ օղ, անվադող։
Դոնիզ—փափուկ թարմ հաց։
Դոսախ, դոսախի—մշտադալար մի ծառ՝ շիմշաթ, շիմշիր, որ ունի լավ մշակվող փայտ, սրինգներ և ընտիր սանրեր շինելու համար։
Դորըրդոր—հերթով։
Դոր—հերթ, ժամանակ։
Դորվե—որտեղի՞ց, որտեղո՞վ։
Դոփան—տափան, որով ծեծում են կորի հողը, որ ջուր չանցկացնի։
Դռդդդալ, Դռդդալ } տատանվել, օրորվել, շարժվել։
Դվիթ—թանաքաման։
Դրամ—ծանր. չափ՝ մոտ 3,5 գրամի։
Դրմուզ (դարու)—Նոր տարվա կես գիշերին թխած մեծ հաց, բախտի և դժբախտության նշաններով, որոնք ում որ ընկնեն բախտավոր կամ դժբախտ կլինեն։
Դուբրի երկու տարեկան որձ այծ։
Դուզուր—երկտակ գործված կտոր։
Դուզ—1. Ղեկ, կայմ (նավի)։ 2. Կամրջագլուխ։
Դում—խուլ, անխելք։
Դունյա—աշխարհ։
Դուրբին—հեռադիտակ։

Դուրիգ—տոպրակ, որ մազից է գործված։
Դֆա- ջուլհակի գործիք, որի մեջ դրված է սանրը։
Ել—վեր, բարձր։ Ասուրերեն el, elu (Գր. Ղափանցյան)։
Եզրահ—գործիք, որով հյուսնը փայտի, տախտակի եզերքներն է տաշում։
Ելուստ—փայտի կամ տախտակի ոստ, որ հեշտ ելնում է նրանից։
Եղինջ, էղիջ—եղինջ՝ ծակող, ցավեցնող բույս։
Եմտնի—չուստ, սոլի մի տեսակը։
Երտ—զարման, հարդ, ծղոնի մանրուք։
Եփուգ, էփուգ—եփած, թխած։

Զագ—համր, չլսող։
Զոխմ—ուժեղ, հարուստ, գեր։
Զագ—գիծ, խազ։
Զագիլ—գծել, գիծ քաշել։
Զագուգ—գիծ քաշած, գծած։
Զամր—ջրաղացի քարի շուրջը հավաքված ալյուրը։
Զամբդուն—զամրի հավաքման վայր, զարտուն։
Զամբուր—մի բանջար, լավ համեմ է կերակրի մեջ գցելու։
Զոնց—հաստ ցողուն (բույսի)։
Զոուալ—փլաս, պատուհաս (չարքերից)։ Խեթերեն Zawall (Գր. Ղափանցյան)։
Զաջ—ղեղնավուն մի հող, որ աճում, թթվում է, որպես դեղ են գործածում վերքի բուժման համար։ Զաջը սեւացնում է մորթը։
Զոտոփաթ—1. ժաժիկով եփված հաց։ 2. կատակ, հանաք։
Զավթիա—ոստիկան։
Զորգուգ—զարնված, դիվահար եղած։
Զատ—մեռնողի հոգու համար տրված ճաշ։
Զար—բարակ, նուրբ շղարշ։
Զարզամի—սառցարան։
Զարզանդ—վախ, ահ, սոսկում։
Զարզոնդուգ—սարսափած, ահաբեկված։
Զորզան—հարու, հարվածող, խփող։
Զբարտ—բազմաթիվ մարդկանց միասին և անվարձ աշխատելը։
Զբարվուր—անվարձ աշխատող։
Զեհ—եզրագիծ (տախտակի)։
Զեվտ—ուղղանկյուն քանոն, որով պատի անկյունների 90°-ի լինելն են ստուգում, չափում։
Զեր—թթու, թթվաշ։
Զգու—մի բույս, որ քաղում, չորացնում, մանրում են և հացի կամ կերակրի հետ ուտում։
Զըլ—եղեգն։
Զընգլղալ—զանգի պես ձայն հանել։
Զընգլղան—զանգի պես ձայն հանող, զանգի ձայն ունեցող։
Զըռթ—արհամարհական, ամոթալի ձայնարկություն։
Զըվըրկ—մի փարթամ բույս, լավ անասնակեր։

Ջըրար — մի շալակով ջրաղաց տարվելիք հացահատիկ կամ ջրաղացից բերվող ալյուր։

Ջիգի (մկ.) — ծիծ, բառ՝ որով երեխան մոր ծիծն է ուզում։

Ջիթ — 1. Ակնապիշ (նայել), ուղիղ և անթարթ նայվածք։ 2. Վրինչ, վրնչյուն (ձիու)։

Ջիխալ
Ջիխգխալ } վրնջելը (ձիու)։

Ջիխին — ձիու վրնջոց, հռհռոց։

Ջիպ — պառավի քամու յոթն օրերը՝ մարտի վերջին երեք և ապրիլի առաջին չորս օրերի տևողությունը։

Ջիվան — որոմ, որ գտնվում է ցորենի մեջ, մոլախոտի մի տեսակը որի սերմը ցորենի հատիկի նման է և փոքր։

Ջիվթ — կուպր, ձյութ։

Ջլընդար — շատ դառն, անտանելի լեղի համ։

Ջխուր — թանով եփած հարիսա։

Ջղքալ — ամուր ընկնել հողի կամ քարի վրա։

Ջմփալ
Ջմփգմփալ } 1. Ամուր ընկնել ջրի մեջ։ 2. Խնոցի կամ տիկ հարելիս լսվող ձայնը։ Ջրի արագ հոսելը։

Ջնտհ — անիծված, չարասիրտ (մարդ)։

Ջնար — հսկա ժայռ՝ լեռան լանջից կախ ընկած։

Ջնեքար — չորագործ, անհոգի (մարդ)։

Ջնգնալ — կաթիլ-կաթիլ հոսելը (ջրի), հազիվ լսելի կարկաչ (ջրի)։

Ջնջիլ — շղթա, կապանք։

Ջնջլուգ — շղթայված, կապված։

Ջոգան — ամառանոց վայր, զովք, յայլաղ։

Ջոթիլ — զոթել, խոփի բերանին պողպատյա կտոր դնել, որ դիմանա քար ու հողին։

Ջոթ — երկաթի երկու կտոր իրար միացնող, զոդ։

Ջոլ — կաշու նեղ և երկար շերտ՝ տրեխ կարելու համար կտրված։

Ջոլիլ — կաշին զոլել, զոլերի վերածել՝ ըստ երկայնքի կտրելով։

Ջոլուգ — զոլի ձևով կտրված, երկայն, բայց նեղ կտրված։

Ջոխ — բանջարեղենի մի տեսակը, որով թթու են դնում։

Ջոխմո — մսի մեծ-մեծ կտորներ։

Ջոնթիլ — ուժեղ հրել, բշտել։

Ջոփո — հաստ գավազան, մահակ։

Ջպուն — նիհար, լղար։

Ջռան — զռացող (էշ)։

Ջռիռ — ջրի հոսելը շատ թեք վայրով։

Ջռառ — անարգական ձայնարկություն (մարդու)։

Ջվագտ — ճամփու պաշար։

Ջվըրկ — փարթամ մի բույս, որ լավ անասնակեր է։

Ջրգուր — մորեխները կատարող թռչուն, փոքր և խատուտիկ, ծտի մեծությամբ, շրջում են երամներով։

Ձուզազ—հողե ամանի, կարասի ծորակ։
Ձուբախ—սարի թեք լանջ։
Ձուբարտ—տես զբարտ։
Ձուայաթ—սերունդ, զավակ։
Ձֆըր—կոպիտ (մազ), սարթ (թրաշ)։

Էզրնցքը—ետևից, թարս, հակառակ։
Էզան աչք—1. Եզան աչք բույսը։ 2. Խաղողի մի տեսակ։
Էզընկալ—երինջ, որ բեղմնավորման համար հասունացել է։
Էզրհան—երկաթյա գործիք, որով տախտակի եզրերն են հարթում։
Էլազ—ելակ, ժիլեթ։
Էլըմով—զգույշ, կամաց։
Էղիգ—դեռ չհասած կանաչ հատիկներով սիսեռ, կիսահաս ցորեն կամ այլ արմտիք։
Էղիլ—1. Ցուղել, յուղ քսել։ 2. Նախ ջրել արտը, ապա նոր հերկել։
Էղիջ—եղինձ. ծակող, մորմոքեցնող մի բույս։
Էղնիլ—լինել, ծնվել։
Էղուզ—1. Եղած, ծնված, աշխարհ եկած։ 2. Վարած (արտ)։
Էզուրձ—սառցակալած ձյուն, որի վրայից կարելի է քայլել առանց խրվելու։
Էզվնիգ—աղավնի, աղավնյակ։
Էղտան—յուղ հալեցնելու պղնձյա աման։
Էմլո } նորից, դարձյալ։
Էմլեմ }
Էմոգդար—վաստակավոր, շատ աշխատած։
Էոջնիգ—անդրանիկ (որդի), առաջինը։
Էոջը թշրին—հոկտեմբեր (ամիսը)։ Էգը թշրին՝ նոյեմբերը։
Էվլո—նորից։
Էրան—մեղմ քամի, որը հարմար է գարմանը ցորենից անջատելու համար։ Ծեծված քուլաշը գարմանով և ցորենով խառն, բահով կամ հեծանոցով կալում վեր են նետում, քամին գարմանը ջոկում է, ցորենը ընկնում, մնում է կալում։
Էրգեն—երկար, ակկադ. erk—երկար (Գր. Ղափանցյան)։
Էրգուղ—երկյուղ, վախ։
Էրդոձագ—երդիքում բացված ծխանցք, բուխերի։
Էրդուձգալ—խոտի կամ փալասի գունդ, որով ծածկում են ծխնելույզը։
Էրդիք—1. Կտուրը (տան տանիքը)։ 2. Ծխնելույզ։
Էրեթիկ—մորթի գրգռում, ջրոտ և տարածված բշտիկներով։
Էրկանք—երկանաքար, աղացք։
Էրկնուզ—ափկունք կամ քարկտիկ խաղի երկրորդ մասը, երբ քարերը երկուական պետք է հավաքվեն։
Էրնջնազ } երնջուկ, մի բույս, որ կանկարի պես ուտում են։
Էրնջնուզ }
Էրուզ, Իրուզ—այրած, այրված։
Էրուք—այրվելու պատճառով առաջացած վերք։

Ըլալ—լցնել։
Ըլի, ըլը—լեփ-լեցուն, լիքը։
Ընգողին—անկողին, տեղաշոր։
Ընգադ—բռնակը կոտրված (սափոր)։ Անկատ։
Ընիլ—լինել, ընիլ չընիլ—լինել, չլինել։
Ընը-չընը—անպայման, լինի-չլինի (պետք է կատարվի)։
Ըմբագ—ջուր խմելու աման, գինի խմելու անոթ։
Ըմբու (մնկ.)—ջուր։
Ըմբուք—այն փայտը, որ երկանքի տակի քարից մտնում է վրայի քարի անցքը, որպեսզի վերևի քարը պտտեցնելիս դուրս չգա, չընկնի։
Ըռբիդ—փայտյա աման ցորեն չափելու (կշռելու) համար, մոտավորապես հինգ կիլոգրամ տարողությամբ։
Ըր—իր, իրենը։
Ըրտընիլ—փոքրիկ անցքեր բանալ՝ առվակի կամ ակոսի շրթին, դրանով հարմարություն է ստեղծվում շատ թեքություն ունեցող արտերը ջրելու համար։ Ըրդնել—ուրդ անել, ուրդերի բաժանել (ջուրը)։
Ըրուբ—ռուփ, գոշաբ։

Թո—թե, եթե։
Թորտխ—օգոստոս (ամիսը)։
Թորախիդ—պնակ
Թաբուտ—դագաղ։
Թոզոլո—հին շորի կտոր։
Թազվուր—նոր փեսա։
Թազն ու պսակ—պսակվելու արարողություն, ամուսնություն։
Թաթան—թաթերի վրա քայլող (երեխա)։
Թաթիլ—երեխայի քայլելը ձեռքերի և ոտքերի վրա։
Թաթիկ-լաթիկ—մի խաղ, բերդ և սահման պաշտպանելու իմաստ ունեցող։
Թաթման }
Թաթպան } ձեռնոց։
Թալ—անոսկոր միս, ոսկրահան արած միս։
Թոլուկ—թակարդ, որոգայթ։
Թալիլ—նետել, գցել։
Թայթլիլ—թուլանալ, երերալ, թալկել։
Թայթլուզ—թուլացող, երերող։
Թոխալ—պայթել, տրաքվել։
Թախին—1. կանացի հագուստ մետաքսյա, ջուբբե (կանացի)։ 2. Պայթյունի ձայն։
Թոխլորոզ }
Թոխլոխորիսկ } ընկնել ու գլորվել, գլուխկոնծի տալ։
Թոխոխ—պայթակ, պայթելու ձայն հանող (խաղալիք), որ պատրաստում են ընկուզենու բարակ, սնամեջ ձողիկից, երկու ծայրից շորե թաց գնդիկներով փակ, մի կողմից բարակ փայտյա ձողիկով հրում են շորե գնդ-

դիկը, ներսից օդի ճնշման պատճառով մյուս ծայրի գնդիկը պայթյունով նետվում է հեռու:

**Թակ**—փայտյա կարճ և հաստ մի գործիք, որով լվացք անելիս ծեծում են թաց շորերը՝ մաքրելու համար:

**Թոհր**—կերպ, ձև:

**Թամա**—ժլատ:

**Թամոշիգ**—հրապուրիչ, շատ սիրուն, հաճելի տեսք:

**Թամբիլ**—կանաչ տերևով կտուրը ծածկել, առանց վրան հող լցնելու: Այդ կատարվում է այն սրբավայրի շենքի համար, որի սուրբը հողի տակ թաղված չէ (Եղիա Մարգարեի եկեղեցին՝ Սասունի Հեղին գյուղում):

**Թամբուլ**—մեծ և սև շլորի մի տեսակը:

**Թամուզ**—հուլիս ամիս, բերքի ամիս, թերևս Թամուզ աստվածի անունով:

**Թային**—նպաստ, ուտելիք, օրվա ապրուստ:

**Թանալ**—թրջել, թացացնել:

**Թանթախ**—փափուկ, անոսկոր (միս):

**Թանթովենի**—մի թութ, որի ճյուղերը սնամեջ են և նրանցից ծխամորճ են պատրաստում:

**Թանհատ**—շոռ, ժաժիկ, կտրված թան:

**Թանիչք**—հալած յուղի չանչը, թանի մնացուկը յուղի մեջ խառն կամ նրանից անջատված:

**Թանջուր**—թանի, մածնի և ջրի խառնուրդ:

**Թոշի**—իլիկ, քարման:

**Թոշկ**—ազդր, զիստ:

**Թաշկիլ**—հոգնել, վաստակել:

**Թաշկուզ**—հոգնած, վաստակած:

**Թոշտնտ**—բորբոքում (վերքի):

**Թոշտնի-թուփ**—մի տերև, որ վերքի վրա են դնում՝ վերքի բորբոքումն անցկացնելու համար:

**Թուխտ**—խնդրանք, աղաչանք (քրդ.):

**Թապլդիլ**—թավալվել:

**Թաջ**—1. Թակ: 2. Մաքրված ցորենի մեծ կույտ (կալում):

**Թառ (անիլ)**—բաժանել ըստ տնտեսության (տուրքը) բաշխել:

**Թոռափ**—թեժ կրակ:

**Թոլիկ**—բաճկոն:

**Թառմտ**—խաղողի մեծ վազ, որ ծառի վրա է հենվում:

**Թովն**—գորգի, փսիաթի հենքը:

**Թորտխորտ**—կիսաեփ (ձու):

**Թարեջ**—գդակ, որ հազիվ գագաթն է ծածկում: Թասակ:

**Թորշ**—անասուն՝ ամեն տեսակի:

**Թացան**—կաթնեղենի բոլոր տեսակները:

**Թացնտուն**—մառան, պահեստ (կաթնամթերքի):

**Թավտ-հոցիկ**—թավայի մեջ եփած գաթա, հաց:

**Թափիլ**—կաղապարել:

**Թոփո**—ափկունք կամ քարկտիկ խաղի 5-րդ մասը, երբ մի քարը վեր նետելով գետնի չորս քարը միանգամից վերցնում են:

**Թափըկ**—գդակի գագաթը:

**Թեզ**—1. Բարկ, կծու: 2. Սապոն եփելու ջուր:

**Թեզըկ**—վառողի փոքր աման, կիսաշրջանակաձև:

**Թեզի**—մի տեսակ ծառ, կաղամախու նման, լայն տերևներով:

**Թեպսի**—ափսե փայտից:

**Թեպրել**—փետրահան անել, փետրազերծել:

**Թեջըր**—վաճառական, ոչխարի առևտուր անող:

**Թեռ, Թիռ**—հացահատիկ լցնելու երկկողմանի պարկ:

**Թերի**—սայլի երկու կողմերի թառերը:

**Թերխաշ**—կիսաեփ, լրիվ չխաշված:

**Թերմաշ**—1. Անտեր, անտիրական: 2. Կիսամաշ:

**Թեվխաղ**—պարի մի տեսակը, երբ գլխավորաբար թևերն են շարժում խաղալիս:

**Թենուց**—ձեռքից մինչև արմունկը ծածկող շոր, թևնոց:

**Թզչափ**—թիզ չափելով գուշակություն անող:

**Թզրի**—համրիչ (տերողորմյա):

**Թթվալաշ**—մի բանջար, ափի մեծությամբ թփեր ունեցող, համը մարխաշ, հում-հում ուտվում է:

**Թիարտ**—մարգերի վերածված հողակտոր, մարգ, մարգաստան:

**Թիթեռնիկ**—ոչխարի հիվանդություն, երբ լյարդում որդեր են գոյանում:

**Թիթրին**
**Թիթրեն** } չորացրած թրիք կամ աղբ՝ վառելու համար:

**Թիզ**—կամնած, բայց հարդը չհանած ցորենի դեզ, թեզ:

**Թլխել**—ցկնել, շան ծնելը, լակոտ բերելը:

**Թլոլ**—կակաջ, թլվառ:

**Թխում**—սահման ձողի, սահմանագիծ (արտերի):

**Թխումքար**—սահմանը որոշող քար:

**Թմբի**—ծառի մի տեսակը:

**Թոլիլ**
**Թոլո** } կենդանիների մորթի տակ գոյացած տիզ, որդ:

**Թոխումր**—վայրի մի պտուղ, կեռասի նման, ողկույզներ ունի և բազմակորիզ է:

**Թոն**—անձրև, խոնավություն, շաղ:

**Թոռն**—ազնվական, իշխան:

**Թոռիլ**—թրջվել:

**Թուր**—փայտե շեղբ, որով արորի առատամն ու ձողը իրար են միացնում, ամրացնում:

**Թորոբալ**—դանդաղ տեղալը (ձյունի կամ անձրևի):

**Թորթ**
**Թուրթ** } եզան լեզվի պես մի թավշյա տերև, որ դնում են վերքերի վրա՝ բուժելու համար:

**Թպզի**—երևակայական չար ոգի, որ մոր արգանդում մտնում և խեղդում է երեխային ծնվելուց առաջ:

Թպպուղ—Թպղի հիվանդություն ունեցող։
Թռըշկել—փախցնել, մեկի ձեռքից խլել։
Թռնոկի—Թեթև պար, վեր-վեր Թռնելով։
Թվընգ—հրացան։
Թըքալ, Թըքկալ — շերեփաձև մի աման, որով կալվորը վերցնում է եզների Թրքերը, որպեսզի ցորենը չկեղտոտվի։
Թվարիկ—հողագործ, ճորտ գյուղացի, որ ուրիշի հողն է մշակում կիսովի և ապրում։
Թվեք—օջախ, ուր և՛ հաց են Թխում և՛ կերակուր եփում։
Թուխտիղ—ծարիր, աչքին քսելու դեղ։
Թուղթ—1. Կախարդանք, կախարդական Թուղթ։ 2. Մանր. չափ՝ 400 գր.։
Թումբան—վարտիկ։
Թուսի—ընտիր կտոր։
Թուջար—տես Թեջըր։
Թուռ—Թառ, Թռոնիկ։
Թուր—1. Արորի շեղբ։ 2. Սուր, զենք։
Թուրձ—Թրծել, Թուրձ դնել կավե ամանները։
Թփըլեգ, Թփըլգեգ — արտևանունք, հոգնակի՝ Թփըլգնին։
Թփիկ—ճախարակի եռեի կողմի շրջանակաձև փոքր կաշվե դեկ, ճաղի պտտույտի շփումը պակասեցնելու համար։
Թելաթ—Թևերը կապկպելու շոր (երեխայի), օրորոցի շոր։

Ժաժ, ժաժք—ցնցում, երկրաշարժ։
Ժաժալ—ցնցվել, շարժվել։
Ժաժան—ցնցվող, շարժվող, ինչպես հաչան (հաչող), վազան (վազող) և այլն։
Ժաժիգ—շոռ, Թանհատ։
Ժոժխել, Ժըժխել — Թափ տալ, շարժել (ծառը) պտուղները Թափելու նպատակով։
Ժախ—զոխի նման մի բանջարեղեն, և՛ ուտում են և՛ Թթու դնում։
Ժախնուց—վայր, ուր շատ ժախ է լինում։
Ժամ, Ժամգուն — եկեղեցի, աղոթատեղի։
Ժան—ոչխարների մահացու մի հիվանդություն, որի ժամանակ նրանց շրթունքները բշտիկներով լցվում են, հազում են և սատկում։
Ժանգոտի—կապույտ և կանաչ գույների խառնուրդ։
Ժժկվիլ—ամուր բռնել, փաթաթվել։
Ժժմունք—1. Մանրեներ, հիճուներ։ 2. Շվոտ, չարք, որ գիշերները քնի մեջ նեղում է մարդկանց։
Ժիժան—իրար խառնված Թելի կծիկ։
Ժիխ—շյուղ, ժեխ։
Ժինգիռ—շատ ոլորելուց կծկված Թել, հանգույց։
Ժղլիլ—զրուցել, խոսակցել։

Ժղլտուն—խոսարան, զրուցարան, օդա։

Ժղուլ—խոսք, զրույց։

Ժրպնդիլ—ամրանալ, պատրաստվել, ժիրուպինդ լինել։

Ժրպնդուգ—ամրացված, ժիր ու պինդ կանգնած։

Ժրուգ—սեղմված, ամուր կապած։

Ժուժիգ—ոզնի

Ժուժգիլ—կծկվել, ոզնու պես հավաքվել իր վրա։

Ժուժգուգ--կծկված, իրար վրա հավաքված։

Ժում—1. Անգամ։ 2. Հաց ուտելու ժամանակը։

Ժուռ—տհաս, խակ, չհասած, ագոխ (խաղող)։

Իբրիխ—պղնձյա սափորիկ։

Իդալ—տալ, վճարել։

Իզմիր—խաղողի մի տեսակ, քիշմիշի։

Իզ—1. Եզ։ 2. Հետք, ոտատեղ։

Իզնուրդ—խաղողի մի տեսակ, սև, եղան պտուկ։

Իլ, իլվիրիլ—վեր, բարձրանալ. սումերերեն il (Գր. Ղափանցյան)։

Իլալ—լաց լինել։

Իկալ—գալ։

Իղ—յուղ։

Իճլիգ—ելակ, ժիլեթ։

Իմոլ—ինչպես, օր. «իմոլ էնըմ, իմոլ չէնըմ», ինչպես անեմ, ինչպես չանեմ։

Իմաց—արթուն։

Իմնալ—1. Զարթնել։ 2. Իմանալ, հասկանալ։

Ինը—ձինը—իսկությունը (բանի), մանրամասնությունը։

Իշղաղուգ—շուշանազգի մի բույս, սերմնարանը պղպեղի հատիկի ձևով և
нրա մեծությամբ։

Իշիլ, աշիլ—նայել, դիտել։

Իշխնալ—համարձակվել։

Իշկափ—լայնատերև մի բույս, գորշ տերևներով։

Իջար—վարձ, վարձագին։

Իս, իես, եսի—ես (անձն. դեր.)։

Իսնտ—ինձանից։

Իջուգ—իջեցրած, ցածրացրած։

Իռք—եռալ, քոր գալ։

Իրիցփոխան—երեցփոխան։

Իրիքղոշա—եռանկյունի։

Իրկ—ձայնարկություն՝ մոռացված բառի տեղ են ասում, մինչև բառի հիշելը։

Իրուգ—այրված, վառված (հաց կամ սիրտ)։

Իքրամ—պատիվ, ընդունելություն։

Լտ—բայց, իսկ։

Լաբուգ—փոքր ակիշ, որով արորի առասամն են մաքրում, երբ վար անելիս
ցեխոտվել, ծանրացել է։

Լաբտրագ—նապաստակ։

Հոգ—շտապ, արագ։
Հաթ—շոր, հագուստ։
Հայ—համր։
Հալգվել—համր ձևանալ, լեզուն բռնվել, համրանալ։
Հալման—լալով, լալու ձևով, «ման» մասնիկը միշտ ձևի պարագա է ցույց տալիս։
Հալվան—լացող, լալկան, միշտ լալու պատրաստ (երեխա)։
Հախ—ճյուղ (ծառի), նորատունկ ծառ։

Հոխալ
Հոխ լոխալ } տեղից շարժվել։

Հոխլոխան—շարժվող, երերացող։
Հակ (լագ)—շան կերակրի աման։
Հական—ութաձև մի շրջագիծ տախտակ, 3—4 սմ. լայն. որի մեջը հյուսված է կաշու կամ կանեփի, ամուր թելերով, հագնում են ոտների տակից և ազատ քայլում թարմ ձյունի վրա՝ առանց խրվելու։
Հոնփրկ—թակարդ (աղվեսի)։
Հաղոզիգ—նիհար, լղար։
Հոնգոր—պղնձյա լայնեզր աման։
Հոնգորի—լարախաղաց։
Հառ—որդի, զավակ։
Հոուրտիլ—վրան-գլուխը կեղտոտել։
Հոուեգլիգ—նիհար, նվաղ, հյուծված։
Հասատ—շեղբ (դանակի, սրի)։
Հաչիգ—գլխի շոր (կանանց), գլուխը փաթաթելու լաթ։
Հաչիգըմ (թոու խտ)—աղջիկ ուզել, հարս ուզել։
Հաջ—տղա, զավակ։
Հավիլ—աղաչել, խնդրել։
Հավլավկ—մի մոլախոտ, որ խեղդում է ցորենին։
Հար—ճախարակ պտտացնող լար, որ ոչխարի աղիքից են պատրաստում (մաքրում, ոլորում), ամուր և գիմացկուն է լինում։
Հարան—հաստ թել՝ թեռի բերանը կարելու համար։
Հորգ—դող, վախ։
Հորգել—դողալ, վախենալ։

Հարխվել
Հորխվել } մխրճվել, խրվել ամբողջ մարմնով։

Հարմոնալ—թմրել, ընդարմանալ (մարմնի մի մասը)։
Հափ, լոփուգ—1. Բուռ, ափ։ 2. Մանկական խաղ մի տափակ և մի կլոր քարերով, առաջինով խփում են, երկրորդ՝ կլոր քարին և հաշվում, թե քանի ոտք հեռու վանվեց։ Քայլերի որոշ թվով նշում են հաղթանակը։
Հոփել—բռան մեջ առնել։
Հքաս—տեսք, տարազ։
Հըրտել—շարժվել։
Հըլըքալ—արագ և անկապ խոսել։

Լըուզ—բուրդ և բամբակ զզող, զզրար։

Լզամ—սանձ

Լզիլ—հալվել (ձյունը և սառույցը)։

Լզուզ—հալված, հեղուկ դարձած։

Լէ—էլ, նաև, սակայն։

Լեղլիգ—բարակ, ուղիղ և ճկուն փայտ, վարոց։

Լեմըշտ—հեղեղ, վարար ջուր։

Լեսան—հեսան, սրող քար։

Լեսնուզ—սրած։

Լեվ—շրթունք։

Լեփ, լեփուզ—տես լափ-լափուզ։

Լըխքիլ—քայքայվել (ջրում), փշրվել։

Լըխփիլ—փշրվել, մանրվել։

Լըխփուզ—փշրած, մանրած։

Լըխքուզ—քըքըրված (կտոր), փտած։

Լըծգան—լծու (եզ), հասած արջառ, լծկան։

Լըծուզ—լծված։

Լըծվար—մաճկալ։

Լըկիլ, լըքիլ—լակել։

Լըկլըկալ—ցրտից կամ վախից դողալ։

Լըհեմ—դող։

Լըհեմիլ—դողել։

Լըհեֆ—վերմակ և ներքնակ։

Լըղամ—աղեղի տափակ կոճը։

Լըղգիլ—ջրի մեջ քայքայվել, լողոզվել։

Լըղգուզ—քայքայված, փտած։

Լըղփիլ—ջարդվել, քայքայվել։

Լըղփուզ—ջարդված, քայքայված։

Լըմիլ—ճմռել, տրորել նոր գործած բրդե կտորը՝ մահուդի տեսք տալու համար։

Լըմուզ—ճմռած, տրորած։

Լըմող—լում անող, ճմռող, տրորող։

Լընգալ—մի ոտքի վրա քայլել։

Լժալ—սահել, սոթ տալ։

Լժիլ—1 հարթեցնել։ 2. Երես առնել։

Լժուկ—հարթած, երես առած։

Լիժ—հարթ, ողորկ։

Լինգ—երկաթյա ձող։

Լիստակ—հստակ, մաքուր։

Լիր—լար, հաստ լար, որ լականի համար են գործածում։

Լլգիլ, Լլգվիլ—ուժեղ բռնել, փաթաթել։

Լնգորըռ—մանկական խաղ։

Լո—մարդ (սումեր. „lu“ այր)[1]։

---

[1] Գր. Ղափանցյան, Ասուրա-բաբելական բառեր հայերենում։

Լոզտ—դեզ, կույտ։
Լոզել—դիզել։
Լոզ, լուզ—էտող, քչող։
Լոլոզել—համոզել, խաբել։
Լոլոփ—ակի բերանը պրկող գլանաձև փայտ։
Լոլիգ—փոքրիկ, կլոր թխված հաց։
Լոզփի—կաղնի (ծառ)։
Լոզքար—գլանաձև քար՝ տանիքը կամ կալը հարթելու համար։
Լոզքիլ—կեղևահան անել։
Լոշ—լավաշ։
Լոշտակ—1. Ծամոն։ 2. Մի բույս, որի արմատի պալարը մարդու գլխի նման է։
Լոպկուկ—պլոկած, փետրաթափ եղած (հավ)։
Լորիգ—բոշա, թափառաշրջիկ։
Լորխ— անձրևից կակղած, թուլացած ձյուն։
Լպստրալ—սահելով փախչել (ձկան)։
Լպստրուզ—սահող, փախչող։
Լպուզ—անբեխ, անմորուս, դեռահաս (մարդ)։
Լսան—լավ լսող, սուր ականջ ունեցող։
Լվխուզ—լվի խոտ, դեղին ծաղիկներով, որի հոտից լվերը սատկում են։
Լվտիզ—լվերի դեմ գործածվող դեղ։
Լտրանտ—լիտր կշռող, ոչ թեթև։
Լցման—լիքը, բերնե-բերան։
Լուբին—տնտնոց, տխուր երգի ձայն։
Լուլտ—խողովակ։
Լուլախ—վարար (անձրև)։
Լուզ—1. Գլանաձև փայտ։ 2. Լոզ։
Լում—տրորել, ճմռել, որից «լմել» բայը։
Լուսկանչ—լուսադեմի աքլորի կանչը։
Լուսմութ—աղամամութ, լուսանալու մոտիկ։
Լուսանդերվանի—փայլուն կեղև և ընտիր փայտ ունեցող մի տեսակ ծառ։
Լուսիգ—փոքրիկ լույս։ Լուսիգ պահել՝ ս. Սարգսի տոնը պահել։
Լուսվանթիգ—լուսանալու մոտ։
Լուստուն—սրբավայր, լուսատուն, ուխտատեղի։
Լուսրար—լույսերը վառող (եկեղեցական)։
Լփլփալ—կակազ խոսել, կակազել։
Լքլքալ—հևիհև շունչ քաշել։
Լֆիգ, լֆուզ—մարմինը շփելու կամ ամանները լվանալու համար գործածվող շորի կտոր։

Խոզտր—անձրևի տեղալը, անձրևելու պրոցեսը։
Խոզտկ—բամբակյա գործվածքի մի տեսակը։
Խոզ, խոզըկի—մետաքսյա գոտի։
Խոզալ—վիթ, վայրի սիրուն մի կենդանի։
Խոզալիգ—ծառերի տերևների վրա կազմվող մի տեսակ գզթոր, բայց գզթորի հատկությունը չունի։

Խազ—գիծ։
Խազքաշ—գիծ քաշող (փայտի վրա) հյուսնի գործիք։
Խազուգ—գիծ քաշած։
Խաժիլ—լավ չթթված (խմոր)։
Խաժիլ հաց—կիսաբաղարջ, լավ չթթված խմորից եփված հաց։
Խոլոյի—սով։
Խալան—գլխագին (աղջկա), հարսնացուին տանելու համար նրա ծնողներին տրված գումարը։
Խալոնալ—դատարկվել։
Խոլոհուգ—վառելիք (ամեն տեսակի)։
Խալոլիգ—դատարկ (ձեռքի)։
Խալի—անմարդաբնակ, դատարկ։
Խալմամ—տատիկ՝ մոր կողմից։
Խալո (քրդ.)—մորեղբայր։
Խալըկ—կեղև, կճեպ։
Խոլուն—ղալյուն, չիբուխ, ծխամորճ։
Խախոջոկ—կակաչ։
Խոխոբալ—կաքավի երգելը։
Խաղ—երգ, տաղ, խաղ։
Խոմլիլ—զարդարվել։
Խամչուրի—ոչխարի գլխահարկ։
Խամուգ—ցանքի առաջին ջուրը, երբ արտի մեջ կորիներ (ջրատար առու) են քաշում։
Խամողիլ—առաջին ջուրը տալ (ցանքսին)։
Խամողուգ—առաջին ջուրը տված (արտ)։
Խոյթան—ժապավեն։
Խայյա—ղաուրմա։
Խանգ—շաքարի կոնաձև կտոր։

Խանին }
Խանեն } կանկարի ցողունը, ուտելի, քաղցրահամ։

Խանթար—1. Կշեռք՝ գունդ և լծակավոր։ 2. Կարավան։
Խանգրիլ—գունատվելը (հագուստի)
Խոնիմ—պատիժ, փորձանք։
Խանձ—այրված, այրվել։
Խանձուգ—կիսաայրված փայտ։
Խանձրհամ—այրված կերակրի համ։
Խանջոր—խանչալ, փոքր թուր։

Խաշիլ }
Խաժի } չթթված խմորից ստացված հաց։

Խաշիգ—կորեկի մի տեսակը՝ ոսպաձև, դեղին գույնով։
Խաչերգաթ—օջախի կամ թոնրի բերանի վրա դնելու խաչաձև երկաթ՝ ամաններին հենարան լինելու համար։
Խաչգրիլ—թևերը խաչաձև ծալել։ Խաչկապել։
Խաչուգ—1. Խաչված։ 2. Ձեռքերը խաչաձև դրած. Նորապսակների ձեռքերն իրար միացնելը։

**Խ**աչփուգ—խաչփոկ՝ նոր փեսայի կրծքին կապած կարմիր-կանաչ վզկապը։
**Խ**ապտ—թուխս նստած հավ։
**Խ**ապո—հիմար, ծաղրելի։
**Խ**աջրնխուգ—մարգագետնի խոտ։
**Խ**աջին—մարգագետին։
**Խ**առ—վազք, ձիարշավ։
**Խ**առան—շան վզի կապը։
**Խ**առնտ } շոռ ու ցավ (անեծք)։
**Խ**առնտխուսել }
**Խ**առնուգ—խառնված։
**Խ**ովգ—բռնակ, կոթ (սրի)։
**Խ**ավիձ—ալյուրի խյուս։
**Խ**ավրծիլ—ընտիր մի բույս, տափակ և մի մետր երկարությամբ, կեղևով ուտում են, ունի մարխոշ խնձորի համ։
**Խ**ավ—աբեթ, մի սունկ, որ ընկուզենու ցողունի վրա է աճում, շուտ բռնկվող լինելու պատճառով կրակհանի (չախմախի) կայծերից վառվում է։
**Խ**ոտիլ—կատարել, լրացնել։
**Խ**արգիլ—բովել, խարկել, ազանձել։
**Խ**արգիլ—խարտել, խարտոցել։
**Խ**արիս—խարիսխ՝ սյան տակի քարը։
**Խ**արձ—պուրակ, փոքր անտառ։
**Խ**արուկ—մազից և կանեփից պատրաստած ոտնաման։
**Խ**արուգ—բովված, խարկած։
**Խ**արվզիլ—մեջքը կրակին տալ։
**Խ**արտքար—մանգաղ և գերանդի սրելու քար։
**Խ**արփուգ—կեռ շեղբով սուր գործիք, որով փայտյա ամանների ներսի մասն են տաշում։
**Խ**արփգիլ—խարփուգով տաշել։
**Խ**ուշիլ—կալի քուլաշը խառնել, շուռ տալ մանրելու համար։
**Խ**ուղան—կաշվե փոքր պայուսակ։
**Խ**աֆիր—բեգ։
**Խ**բուր—զարդազգեստ։
**Խ**զմրզուգ—խիստ ամպամած (երկինք)։
**Խ**զում—1. Անգամ։ 2. Ուժ։
**Խ**եր } անխելք, դատողությունից զուրկ։
**Խ**երուգ }
**Խ**եղտպրից—փոքր նախշուն գավազանիկ, որով պատանիները ծաղկազարդին տնե-տուն են ման գալիս զատկի համար ձու հավաքում։
**Խ**եղուգ—տես խեձուգ։
**Խ**ելթփիլ } ուշագնաց լինել, գլխապտույտ ունենալ։
**Խ**ելըռիլ }
**Խ**ելըմ—բավական ժամանակ, բավական (բան)։
**Խ**ելըռուգ—ուշագնաց եղած։
**Խ**եթուգ—օձից խայթված։



Գետոյան—9

**Խեձ**—արտի այն հողակտորը, որի վրա ջրելու ժամանակ ջուր չի լցվել:
**Խեձհան**—փոքր թի, երկար պոչով՝ 2—3 մ., արտում չջրված տեղերի վրա ջուրն ուղղելու համար:
**Խեձիլ**- պտղի հասունանալ սկսելը:
**Խեձուց**- հասունության նշան ունեցող (պտուղ):
**Խեղաջ**—ծուռ դրված, ծուռ կարված կտոր:
**Խեչ**, **խիչ**- մոտ, մոտիկ:
**Խեչիր**—եռոտանի, որի վերևի մասից պարանով կախում են տիկը կամ խնոցին և հարում:
**Խեջուր**, **խեջուրք**—կեղև՝ ձվի, ընկույզի:
**Խզանի** / **Խզամի** } անասունների բեղմնավորման ցանկություն:
**Խզզել**—պատռել, ճեղքել:
**Խզզուց**—պատռված, ճեղքված:
**Խզեմ**—քթի օդ:
**Խզմիլ**—1. Քթին օդ անցկացնել: 2. Հղիության շրջանում ձիու կամ մատակի հեշտոցը օդով փակելը, որպեսզի հավատակը կամ ցուլը նրանց չմոտենան:
**Խզմուց**—օդ դրած, օդով փակված:
**Խզուց**—քիստ (ցորենի, մոլախոտի):
**Խըզմուց**—ամպով, ծխով ծածկված:
**Խըզմիլ**—ամպել, ծխով լցվել:
**Խըլթ**—սև գլգիլ, ոսպաձև հատիկ ունեցող:
**Խըլըզիլ** / **Խըլըսիլ** } թաքնվել, պահմտնել (վտանգից):
**Խըլլ**—փայտյա կոճղ:
**Խըթում**—խթում, յուղեղենի պահքը լուծելը:
**Խըթիլ**—պահքից հետո առաջին յուղեղեն կերակուր ուտելը:
**Խըվլալ**—շարժվել:
**Խըշր**—զարդ՝ արծաթյա և ոսկյա:
**Խըռխիլ**—(մարմնի մեջ) որևէ իրի խրվելը: 2. Ծիծաղելուց թուլանալ:
**Խըռըխիլ**—ուշագնաց լինել, ծիծաղից թուլանալ:
**Խժալ**—ճչալ, լաց լինել (երեխայի):
**Խժան**—ճչացող, լացող:
**Խժովիժ**—աղմուկ, ձայն:
**Խժբժալ**—աչքերը բժոտել, լավ չտեսնել:
**Խժիկ**—1. Ամառվա ճպուռ: 2. Կրծքի խժժոց:
**Խժխըժկ**—հիվանդություն (ոչխարների):
**Խժվժալ**—աչքերը շաղվել:
**Խժու**—պինդ, միջուկը դժվար հանվող ընկույզ:
**Խիզր**—ծանրության չափ, մոտ 5 կգ.:
**Խիթ ու տլունգ**—խաղ՝ չլիկ-դաստա, որ խաղացվում է մի գավազանիկով և թզաչափ մի փայտիկով՝ երկու հոգով:
**Խիթուց**—խայթոց (օձի): Աքքադերեն xittu մեղք, հանցանք (Գր. Ղափանցյան):

Խեժ—դալ, խիժ, առաջին կաթը (անասունի):
Խեժին—ճչոց, ուժեղ, ականջ ծակող ձայն:
Խել—շյուղ:
Խեզը—կթնել՝ կարի մի տեսակը:
Խեմշել—ափսոսալ:

| | |
|---|---|
| Խիշըկ<br>Խայթան | եռանկյունի փոքր ասեղնագործ զարդ, որ կանայք կարում են իրենց գլխարկի (քոֆի) ճակատի մասում: |

Խիր—դալ, առաջին կաթը, խեժ:
Խիրաթ—1. Եռանդ, բարի նախանձ:
Խլավ—գեր, մսոտ, չաղ:
Խլավցնել—գիրացնել, չաղացնել:
Խլթիգ—տես խըլթ:
Խլիս—վերջը:
Խլխալ—զարդ ու զարդարանք:

| | |
|---|---|
| Խլխլիգ<br>Խլխլուգ | կիսաքանդ, փլվող, քանդվող: |

Խլղաթ—հարսանեկան նվեր, խալաթ:
Խլնդոր—նորածին ոչխարի առաջին կաթը դալ, խեժ:
Խլնջի—դանակ (մեծ):

| | |
|---|---|
| Խլվլան<br>Խլվլիգ | անդադար շարժվող (որդ, ձուկ): |

| | |
|---|---|
| Խլուջիգ<br>Խլուլիգ | փոքր սափոր, առանց կանթի: |

Խխմել—կակղել, փափկանալ:
Խխմուջ—բրդոշ, մածնի մեջ բրդած հաց:
Խխմուց—կակղացած, փափկացած:
Խձիր—1. Կարի մի ձև՝ կտորի մի մասը ներս են ծալում, ապա կարում:
2. Ճյուղերից գործված դուռ կամ ցանկապատ:
Խձրել—1. Կարել: 2. Ճյուղերով գործել:
Խձուձ—կանեփի թելի սանտրուքը:
Խղրան—խուղի կամ յայլաղի ղեկավար կինը, որ կաթնամշակությամբ է զբաղվում:
Խճեր—կճեպ, ձվի կամ ընկույզի կեղևը, կճեպը:
Խճմել—կմտել, խճմել:
Խճմուց—կմթած:
Խճմս—կմտող (մարդ):
Խման—խմող, գինեմոլ, հարբող:
Խմբըլ—ապուշ, տկարամիտ:
Խմլել—զարդարվել, հագնվել:

| | |
|---|---|
| Խմլուց<br>Խմլվորուց | հագնված, զարդարված: |

**Խմորբուզուզ**—խմորի պուտուկ. աման, որի մեջ կորեկի ալյուրն են խյուսում, որի համար պուտուկաձև է, ոչ թե տաշտաձև։
**Խմորթաթիգ**—փոքր շերեփ, երկար պոչով, որով կորեկի խյուսը (խմորը) վերցնում և լցնում են տաք սալաքարի վրա ու թխում։
**Խմորկուշ**—փայտյա տաշտ (խմորի)։
**Խնդըլիգ**—փոքր նախշուն աման հողից կամ փայտից, որի մեջ թանկարժեք փոքր իրեր են պահում։
**Խնկալուջ**—ալուճի ընտիր մի տեսակը։ Խնկալոջ։
**Խնկծաղիգ**—անթառամ ծաղկի նման մի բույս, խունկի ծաղիկ։
**Խնձուր**—խնձոր։ Արամեական хаззura (Գր. Ղափանցյան)։
**Խնջլոզ**—մի բանջարեղեն։
**Խշմիլ**—թմրել, ընդարմանալ։
**Խշուր**—1. Մանրուք, կտորտանք (սապոնի)։ 2. Արծաթյա զարդ։
**Խշրիլ**—մանրանալ, փշրվել։
**Խշտիգ**—սրածայր։
**Խշրուգ**—փշրված, մանրացված։
**Խշփիլ**—չորանալ, թառամել, մեռնել։
**Խշփուգ**—չորացած, թառամած։
**Խոզգար**—խոտը կապելու և ուլ ու գառներին տալու մի գործիք։ Խոտկապ։
**Խոզտ**—շերամի բոժոժ։
**Խոզի**—երանի, երանի թե։
**Խոլըկ**—մահակ, գավազան, ծայրը կեռ ձեռնափայտ։
**Խոլ**—անպոչ, պոչատ։
**Խոլոզ**—բարձր, ցից։
**Խոլինջ**—մեջքի բռնվելը, մեջքի ցավ։
**Խոլոզիլ**—բարձրանալ, ցցվել։
**Խոխ**—գլուխ, գանգ։
**Խոզմիլ**—հերկված, բայց չցանված արտը ջրել։
**Խոնդի**—հարսնառ, հարսին բերելու գնացող մարդ։
**Խոնդուռա**—կոշիկ (հնամաշ)։
**Խոռըկ**—գիստ, ազդր (ոչխարի)։
**Խոռո**—ջահել-ջիվան, երիտասարդ։
**Խոռփատ**—անատամ, ատամները թափված։
**Խոտ**—1. Կոճղ։ 2. Կարճ։
**Խոտըկ**—մի կենդանի, որ իբր թե մեզում է իր պոչի վրա և մեզը շաղ տալիս ոչխարների վրա, որոնք և իբր հիվանդանում են խոտըկ հիվանդությունով։
**Խոտլոզ**—պոչը կտրված, անպոչ դդալ։
**Խորէո**, **Խորխոխ** — 1. Ցուղով շաղախված ալյուր։ 2. Ձվի դեղնուց։
**Խորխ**—1. Բարակ մաշկ։ 2. Օձի շապիկ։
**Խորխահան**—մաշկազերծ, խորխը հանած։
**Խորվուն** 1. Խորոված ոչխար, որին մշեցիներն ասում են բրիան։ 2. Նշանդրեքի կամ հարսանիքի ժամանակ հարսի տուն տարած մսացու ոչխարը։
**Խպնիլ**—ամաչել։

**Խջմել**—կմմտել, որից խջմո՝ կմմտող։

**Խոամ** } եղյամ, ղռավ։
**Խոառու** }

**Խոեֆ** } ծխամորճի կեղտը, որը որպես հականեխիչ էլ օգտագործում են
**Խոեժ** } վերքերի բուժման համար։

**Խոըֆել**—1. Զառամել, խոր ծերության հասնել։ 2. Ծիծաղելուց թուլանալ։

**Խոըֆուգ**—զառամած, խոր ծերության հասած։

**Խոթել**—կիսել, ամբողջից մի կտորը պոկել։

**Խոութ** } մի կտոր, մի մասը, կեսը։
**Խոթիգ** }

**Խոթլագ**—տեն բոզ։

**Խոճիգ**—կոճիկ, կոճկային մաս։

**Խոմուգ**—թմրած, հոգնած, խոմել (թմրել) բայից։

**Խոնգագ**—կնճթազգի մի բույսի չոր ցողունը, չորացած ցողուն (ընդհանրապես)։

**Խոնդուգ**—շնչափող։

**Խոսել**—կոտել, ամորձատել, որից խոսուգ—ներքինացած։ 2. Փսխաթ (եղեգնյա)։

**Խրխըր** } փափուկ, կակուղ։
**Խրխուր** }

**Խրխրել**—փափկացնել (բուրդը, հողը)։

**Խրխնճուգ**—վրնջոց (ձիու), խրխնջոց։

**Խրուգ**—խրած, խորը թաղված։

**Խրտան** } խրտնող, խրտնած։
**Խրտնուգ** }

**Խրտնոտել**—հաճախակի խրտնել։

**Խրփուգ**—չորացած։

**Խցկուց**—խցկոց՝ խցան հին շորերից, որով փակում են այն ամանների անցքերը, ուր կաթ կամ թան են կտրում՝ գզա, պանիր կամ ժաժիկ ստանալու համար. շիճուկը հոսում է այդ անցքից։

**Խուզուգ**—խուզված։

**Խուժիգ**—փոքր աղջիկ։

**Խուլամ**—ծառա։

**Խուլլ**—1. Փոս, անցք։ 2. Տնակ։

**Խուխ**—դեզձ։

**Խուխլուգ**—կոկորդի ցավ, սկարլատին։

**Խուկլո**—շփոթ, ալրե ճաշ։

**Խուղ**—հյուղ, խուց, որ պատրաստում են ամառային արոտավայրերում, որպես բնակարան, բայց ծածկում են միայն կանաչ ճյուղերով։

**Խուղվոր, խղվոր**—խուղում բնակվող, սարվոր։

**Խումաշ**—1. Թանկարժեք կտոր։ 2. Կանացի անուն։

**Խումբա**—դեմքի և ատամի ցավ։

Խուշկը—միասմբակ անասունների թրիքը:
Խուռ—փոս, խոռ:
Խուռտ—գեր, չաղ:
Խուս—շփոթ, խյուս:
Խուտ—ձմռան պաշար:
Խուտիգ—սնդուկ, չամադան:
Խուտնի—թանկարժեք կտոր, կանացի թանկարժեք հագուստ:
Խուրուֆիլ—սարսափահար լինել, սրտաճաք լինել:
Խուչ—1. Գլխով տրված հարված: 2. Քարակույտ:
Խուչակ—հենարան, խշմար:
Խուփ—1. Խոփ (արորի): 2. Կափարիչ (ամանի):
Խփնիլ—կափարիչով ծածկել (ամանը):

Խփնուգ } փակված, ծածկված:
Խփուգ }

Ծակոտիլ—վիժել, ձագը գցել: Ձագատել:
Ծակխիղդ—իր ձագը խեղդող (կատու): Ձագխեղդ:
Ծավրդիլ—մեծ-մեծ խոսել:
Ծարմագ—ալյուրի մաղ, մանր ծակերով մաղ: Ձարմաղ:
Ծգնգուլ—թռչուն, որ ձուկ է որսում, կուլ տալիս: Ձկնկուլ:
Ծեթռիլ—որդնոտել (վերքի): Ծետուկ գնել:
Ծեթրին—վայրի, անուշահամ մի բանջարեղեն: Ծեթրոն:
Ծեվիլ—պատռել, ճեղքել: Ձևել:
Ծըմո—քիչ արևոտ վայր: Ծմակ:
Ծըմեթ—ձյունի փայլից առաջացող աչքացավ: Ձմեթ:
Ծիր—կամար:
Ծգգիգ—փոքրիկ սակառ, սայլ:
Ծմուգ—սպիտակամորթ մի փոքր կրծող (մուկ): Ձմուկ:
Ծնձիր—ձյունի կամար: Ձնծիր:
Ծորթփիլ—արագ հնձել, գետին թափել:
Ծորիլ—խոտ հնձել և գետնի վրա տարածել չորանալու համար:

Ծրգընի }
Ծիրդնի } դյուրավառ մի փայտ: Աքկադերեն sirdu (Գր. Ղափանցյան):
Ծիրդ }

Ծունծնիգ—սպիտակամորթ փոքր աքիս:
Ծուծու—ընկույզի միջուկն ամբողջությամբ վերցրած:

Կոդըկ—փայտյա փոքր բաժակ, որ բռնակ էլ ունի, չերեփ:
Կազ—1. Սև փշոտ մի բույս, ուժեղ անասնակեր է: 2. Երկարության չափ 70 սմ.: Գազ:
Կազտնագ—գազանի պես, կատաղածի նման:
Կազբտ—մանանա, շաքարավազ, որ ամառ ժամանակ տեղալով՝ իջնում է դազերի, ծառերի թփերի ու հողի վրա:
Կազխիժ—գազ բույսից ստացված խիժ: Գազխեժ:
Կոլ—բուզա, ցուլ:
Կոլոբուջիգ—շրջանաձև պտտվել իր շուրջը (խաղ):
Կոլտհոշկ—անառիկ ժայռ:

կալան—պատյան։
կալար—1. Մի պտույտ իր առանցքի շուրջը։ 2. Աղիքի ցավ։
կոլմիզ—վրան մեզող։
կոհ—ժամանակ (կարճ)։ Գահ, գեահ։
կալնել—փակել, գոցել։
կալբրան—պատատցնող, փաթաթող։
կակոշտել—խարխափել, մթան մեջ մի բան փնտրել։
կոկո, կոկե—հորեղբայր։
կաղջին—կավ, կպչուն հող։
կոմ—փոքր անտառ, մացառ, թփուտ։
կամպոտել—ապտակել, բռնցքահարել։
կան—վերք, խոց։ Գան։
կանուղ—վերքոտ, վերք ունեցող։
կանել—գզվել (մի բանից)։ Գանել։
կանիա-բահջի—պայթող աղբյուր, ուր ըստ ավանդության եղել է Քուռկիկ Ջալալին։
կաշել—փնտրել, մոտ գալ (մի բանի)։

կապ | կապուղ — 1. Շատ լայն տերև։ 2. Մակաբույծ մի բույս, որ կարմիր գույն է տալիս։

կոպր—հյուղ, տնակ, խցիկ։
կոռոտ—կտոր, կարճ։
կառնոտել—գառնատել։
կորկ—կարճ աբա, մազե կամ բրդե կարճ վերարկու։

կառնտնուց | կառնուց — փարախ, ուր միայն գառներն ու ուլերն են պահվում։ Գառնոց։

կովան—աղեղ, ծիրկովան՝ նետաղեղ։
կավարս—կորեկի մի տեսակը, որի հատիկները ձեռքի մատի են նման։
կավ—հողե աման ուր գինի կամ յուղ են պահում։
կովի—մեծ և թեք ժայռ։
կովլոկ—փարթամ մի բույս՝ անասնակեր։
կավրո—երկու տարեկան ոչխար։ Կավառութ։
կոմնար—շուտ կտրվող, թարմ ճյուղ կամ բույս։
կոտ—առվույտ։
կարափ—թեփ (գլխի)։
կորկոն—պատանք։
կարկոնել—պատանքել։

կարնհուկ | կարնհոկ — 1. գառնանը տրված պարարտանյութ։ 2. Գիշերը ոչխարներին արտերում պահելը և այդ միջոցով հողը պարարտացնելը։

կարբան—սաթ, քյահրուբար։
կարնդուռ—գարնանամուտ։
կուներ—1. Արու կաքավ։ 2. Դյուրաբեկ, մատաղ (տունկ)։
կռուտալ—հաչել շան նման։
կգալփուխ—երբ երկու մարդ մի գդալով փոխնիփոխ ճաշում են։

Կդակ—գլխարկ, արաղչի։
Կելխիզդ--գայլ խեղդող (շուն)։
Կելգար—գայլը կապելու աղոթք՝ գելկապ։
Կել—գայլ։
Կգիր—գգիր։
Կզրար—գզող, բուրդ և բամբակ գզող՝ գզրար։
Կելըռնաց—տես ոլըռնաց։
Կելվժենի—ծառի տեսակ։

Կեղտըրի }
Կիղտըրի } գյուղի վայրը, տեղը։

Կզըման—կռացած, դեպի վար թեքված։
Կըլ—աչքի ծարիր, սուրմա։
Կըց—ավելի քան, քան, պես։
Կթուն—ընկույզի միջուկը։
Կիդ—գետ։
Կիզ—գզելու պրոցեսը։
Կիլան—գայլեր։
Կիղ—գյուղ։
Կինարբ—հոտավետ մի բույս՝ գինարբ, արբեցնող։
Կինձ—գինձ։
Կիշեր հավուերից—գիշերային թռչուն, գիշերը ման եկող թռչուն։
Կլըմրոզ—գլուխկոնծի (անել), գլորվել։
Կլուլից—քուֆթա (ջրալի եփված)։ Կլուլիկ։
Կզթուր—գզթոր, որով կաշին են ղաքաղում, մշակում։
Կզիջ—քարի մանրուք, փոքրացրած քարեր։
Կնալ—1. Գիտենալ, ծանոթ լինել։ 2. Գտնել։
Կմուզ—լայն թուփ մի բանջարեղեն, որ փռվում է գետնին. հավաքում, եփում և ուտում են։ Գմուկ։
Կնձիզ—կտավատի սերմնարանը՝ կլոր, գնդիկ։
Կնձնի—ամուր փայտ ունեցող մի ծառ։
Կշկռիլ—չորանալ, կծկվել։
Կշկռնի—ձյունի սառցանալը, եղուրջ կազմելը։
Կշկռուզ—չորացած, կծկված։
Կշկուռ—չորացած կաշի կամ մորթի։
Կոզթռնոկ—խաղ՝ երբ մեկը կզում է, մյուսները նրա վրայից թռչում են՝ հաջորդաբար կզելով։

Կոզփափաջիզ }
Կոզփափուջիկ } միզաման, գոզի ամանը։

Կոզոզիլ—մեզով թրջել, մեզոտել, գոզոտել։
Կոժռ—գոմեշի ձագ։
Կոնչո—մեծ գլուխ, գոնչո։
Կողզուզ—գաղտնի, ծածուկ։
Կոնդ—հաշմանդամ։
Կոնդտնալ—հաշմանդամ դառնալ։

Կոնձոձ—կանկարի փշոտ և կլոր մասը՝ սերմնարանը:
Կոտի—սոոր, վատ, կեղտոտ գոթի:
Կորդան—ժամատուն, աղմկոտ զրուցարան, գործերի ճահիճ, ուր գործերը «ժամ են անում»:
Կործվուր—ջուլհակ:
Կորդնուկ—գորտնուկ:
Կպիլ—փոսանալ:
Կորսիլ—գետնով քաշ տալով տանել: Գռսել:
Կաթիլ—1. Իրար հանդիպել: 2. Հորդել, էթափել:
Կառջ—խանձարուր, երեխայի օրորոցի շոր:
Կրգանոց—1. Նշանած: 2. Գրկանոց:
Կրձլիգ—կրծկալ:
Կրուր—հողե աման, փոքրիկ կարաս:
Կուզ—1. Սապատ: 2. Մեզ:
Կուզալ—ոռնալ:
Կուլլ—չոռ, ցավ (հայհոյանք):
Կուլին—պահեստ, մառան:
Կուլավ—Թաղիք, քեչա:
Կուկ—1. Գոգ, ծոց: 2. Ամործիկ:
Կունգոկի—աբա, մազոտ, կարճթև վերարկու:
Կուչրկ—1. Չորս աղյուս, որոնց վրա դնում են սալը, տակը կրակ վառում, տաքացնում և հաց թխում: 2. Նետելու փոքր քար:
Կուպ—փոս տեղ. բայց կպիլ—փոսանալ:
Կուջիգ—փոքրիկ, սիրուն գլուխ (երեխայի):
Կուտորտշկ—շնազգի՝ փոքր և գեր մի կենդանի:

Կուռ<br>Կուռան } 1. Ջրթափ խողովակ: 2. Գուռ:

Կուրգ—գորտ:
Կուրբա—առանց թաթի զուլպա, որը ձմեռ ժամանակ հագնում են սրունքները տաք պահելու համար:

Հար—ոչխարի հիվանդություն, որից նրանց շուրթերը ծածկվում են պզուկներով, շատ անգամ սատկում են այդ հիվանդությունից:
Հորամլո—հետո, ավելի ուշ:
Հարի թաս—կախարդական թաս, որի մեջ լցված ջուրը շաղ տալով հարած հիվանդ ոչխարի վրա «բուժում» են:
Հագ—հետ:
Հագտ—թե չէ:
Հագգտ սորիգ—սորեկ-հատ՝ առաջին անգամ ատամ հանած երեխայի գլխին ցորեն, չամիչ և այլն թափելու սովորություն: Ակռահատիկ:
Հագագ—անդունդ, խորխորատ:
Հագիրան—հունիս (ամիս):
Հագրըթուղ—այն ոչխարը կամ այծը, որին հազար ոչխար ունեցող մարդը թողնում է սարերը, եթե մի տարի հետո այդ անասունը վերադառնա և հոտին միանա՝ բախտավորության և հարստության նշան է, եթե, ոչ՝ դժբախտության:

Հոգրուն—կարծիքով։
Հոլոքի—արշին, Հալերի չափ։
Հոլալ հուղ—այն արջառը, որ հինգ տարին լրացրել է և սկսում են լծել։
Հալավ }
Հալաֆ } —հագուստ, հագնելիք։
Հալավցու—կտորեղեն՝ հագուստ կարելու համար։
Հոլըտխուղ—հոտավետ մի բույս՝ Հալերի խոտ։
Հոլըկ—խորթ զավակ, մոր հետ եկած երեխա։
Հոլիմա—հարիսայի երեսի նոսր մասը։
Հոլկոնիլ—շնչակտուր լինել, արագ-արագ շնչել։
Հոլ-հոլ—ուրախ․ ձայնարկություն, երբ հրաձգողի գնդակն անվրեպ թիրախին է կպչում։
Հալուգ—հալած։
Հոյմուն—իբր թե, որպես թե, կարծես թե։
Հոյուսու—առավոտ։
Հալվուր—ծերունի, ալեոր։
Հակլոնալ—աքաղաղի պես հպարտանալ, գոռոզանալ։
Հաղ—հեղ, անգամ։
Համփո—հողատեր, կալվածատեր, կուլակ, կա նաև կիսահամփա (կես համփա) և պջեղ՝ քառորդ համփա։
Հոյանաց }
Հայանաց } —1. Հայերեն։ 2. Հայի պես։ Հայնակ։
Հոյագին—հայի ձեռքով մորթված (ոչխար)։
Հոյըտ—խուրջին, մանգիկ, տոպրակ։
Հայիլ—նայել, դիտել։
Հոյնալ—նայել, դիտել, անց․կատարյալը՝ հոյցո, հոյցար, հոյցավ։ Հրամայականը՝ հոյցը (նայիր)։
Հոնա, հոնը—ահա, հրես։
Հանանից—պարի մի տեսակ։
Հոնչ—մինչև որ, մինչև երբ։
Հոշ—լուռ։
Հոշար—արթուն, զգաստ։
Հոշիտ—մետաքսյա գույնզգույն կտորեղեն։
Հոշմ }
Հոշմոթքար } զարմանք, զարմացած։
Հաջի (էրթալ)—հաջի, Երուսաղեմ գնացող։
Հոստր—պարիսպ, ցանկապատ։
Հովարի }
Հավարը } օգնության կանչ։
Հավեղիգ —կարմրահատ ցորեն։
Հավթառ—հավերի թառ, ձող, որի վրա թառում են հավերը։
Հավգուղ—1. Հավերի կեր, կուտ։ 2. Հավկտենի ծառի պտուղը՝ փոքր, կլոր և միակորիզ։
Հավգուր—երեկոյան շուտ, արևի մայր մտնելուց հետո չանցնող (մարգ)։

Հավզգենի—ծառի մի տեսակ, պտուղը հավգուզ: Հավկտենի:
Հավթուսի—գաթա, որի խորիսխը շատ ծալքերով է:
Հավորիզ—թաչուն: Հավորիկ:
Հավուզ—փայտյա կլոր սեպ, որ մտցնում են արորի թրի ծայրին՝ արորն ամուր պահելու համար: Հավուկ:
Հավշտ—կարոտ, աղաչանք:
Հավք—1. Թռչուն: 2. Բարակ աղիք:
Հատտ—մինչև:
Հարան—անցան-գնացին:
Հարմոթ—կենարմատ, կնիկ:
Հարգ—մեռելոցի հաց, մեռյալի հոգու փրկության համար արված հաց: Հարկ:
Հարմրն—յուրաքանչյուր:
Հարոր—արոր:
Հարվոնք—հողի քեշի գալը, ցանելու հարմար ժամանակը:
Հարվոնքել—քեշի բերել, վարել, փափկացնել:
Հերբինգ—մեծ մկրատ, որով խուզում են ոչխարը:
Հեժել—շարժել:
Հեժան—շարժվող, տատանվող (գլուխ):
Հեհնգել—անձրևի գաղարելը, կարվելը, երկինքի բացվելը:
Հեձուզ—հեծած, ձի նստած:
Հեղուրջ, էղուրջ—ձյունի երեսի սառցանալը, որի վրայից առանց խրվելու քայլում են:
Հեշին—գորշ, մոխրագույն:
Հեր—ոչխարը ջրի կանչելու կանչ:
Հերս—բարկություն, զայրույթ:
Հերսուզ—բարկացկոտ:
Հերվոնիգ—մի տարեկան (անասուն):
Հիզ—անգամ:
Հիլուզ—հիվանդոտ, վատառողջ:
Հինել—թել քաշել (ջուլհակի):
Հինուզ—1. Հինա դրած: 2. Հենքը դրած, ջուլհակի մանածը գործելու վիճակին հասցրած:
Հիվը—աղաչանք, խնդրանք:
Հլըլել—մաշվել, քրքրվել:
Հլհըլել—եփվելուց քայքայվելը (միս, շորի):
Հլոզել—հրել, գլորել:
Հլուն—1. Ուլունք: 2. Բրոնզի կտոր, որի վրա ամրանում է ջրաղացի սրի տորին ծայրը:
Հմայիլ—կախարդական գրություն, թուղթ, որ հռանկյունի ծալում և շորի մեջ դրած կապում են մարդու կամ անասունի վրա չար աչքից ազատ պահելու համար:
Հմլել—1. Զարդարվել: 2. Ընդունել, հանձն առնել:
Հմլուզ—1. Զարդարված: 2. Ընդունված:
Հմլում—1. Ընդունում: 2. Զարդարում:
Հնավորել—համերաշխ ապրել, հաշտ ապրել:
Հնգրել—ընտրել, ջոկել: Հնգրուզ—ընտրած, ջոկած:

Հնթիլ—թևի տակը դնել, անթևատակը դնել։
Հնիձ—մութ, խավար։
Հնեձիլ—մթնել, խավարել։
Հնհնուք—սրտմաշուք, դժգոհ տնտնալ։
Հշկը—սառնամանիք, ցուրտ։
Հշմիլ—1. Զարմանալ։ 2. Թմրել։
Հշմուզ—1. Զարմացած։ 2. Թմրած
Հողի—այդտեղ։
Հոխա—ծանր. չափ մոտ 1,3 կգ.։
Հոկուզուն—նորածին երեխայի գանգի ոսկորների փափուկ մասը։ Հոգետուն։
Հողմաղ—հողի մաղ, հող մաղելու մաղ։
Հող մանիլ—տան կտուրը հողով ծածկել։
Հող սորորիգ—փխրուն, ավազահող, որի վրա սղղում, սահում, խաղում են երեխաները։
Հոշի, հոշկի—կաղնի (ծառ)։
Հոոստլտ—հեծանոց, եղան։
Հոսին—դեղին, աշնան տերևի գույնը։
Հոսնիլ—դեղնել։
Հոնգուլ—մի թռչուն, որ հավերի ձագերն է փախցնում։
Հովթափ—իրիկնամուտ, հովերի թափվելու ժամանակը, երեկոյան կողմ։
Հովկուլ—հովգոլ՝ ոչ տաք, ոչ էլ պաղ։
Հովկլիլ—բարեխառնել (ջուրը), տաք ջրի վրա պաղը լցնել։
Հորան—փոս, խորտուբորտ տեղ։
Հորդիլ—ձյունը թափել, ճամփա բացել։ Հորդել։
Հորհամ—հորի համ, որ գալիս է թաղված կամ հորած ցորենից։
Հուդտ—այստեղ, այս վայրում։
Հութ—1. Ջրի կաթիլ, մի պուտ ջուր։ 2. Առասպելական գազան, որ մի անգամով կարող է մարդուն կուլ տալ ջրի մի կաթիլի պես։
Հուլմ—գոլորշի
Հունտ—այնտեղ, հոն։
Հուշափ—վիշապ։
Հուսին—ձյունի հուքը սարերից։
Հուսկիլ—հյուսել (վարսերը)։
Հուջամ—բանկա, բաժակ։
Հուսնուզ—ձյունե սահանքի վայր, վտանգավոր տեղ։
Հուրնի՞—որտեղից, դեպի ո՞ւր։
Հռիգ—լավ բրդատու ոչխար։
Հըշկիլ—շաղ տալ, թափել։
Հվուգ—հանգիստ, խելոք ձիալը։
Հվուր—երկու-երեք տարեկան որձ այծ։
Հվտուզ—հոգնած, բեզարած։
Հտքիլ—կեղտոտել (շորերը)։
Հտքուկ—կեղտոտված։
Հրիստ—հարիսա, մսով և ծեծված ցորենով լավ եփված ճաշ։
Հրուք, Հրվունք—մաշված փոքր կտոր շորթան, կամ լվացքից մնացած մաշված սապոնի կտոր։

Ջաթրին } ծեթրոն։
Ջեթրին }

Ջալուգ—ծալված։

Ջաղ—նախշած գաթա, որ տանում են նոր փեսային նրա «երես պագի» ժամանակ։

Ջամթիլ—վարսակալ, ծամթել։

Ջամուն—ծամոն, մաստակ։

Ջամուգ—ծամված, գործածված ծամոն։

Ջանրուկ—հղիության վերջին շրջանում գտնվող, ծնելու ժամանակին մոտեցած։

Ջառղարտրիգ—ծաղկազարդ։

Ջառփ—ձեռքերի ճաք, ճաքճքվածք։

Ջառփուգ- ճաքճքած (ձեռք, ոտք)։

Ջառփողիլ—ճաքճքել (ձեռքի)։

Ջափկիգ—հողից շինած փոքր պուտուկ։

Ջափկունք—մանկական խաղ, քարկտիկ՝ 5 քարով։ Ծափկունք։

Ջեձուգ—ծեծված, հարվածված, մանրացված։

Ջեձքար—գլանաձև քար, որով մի բան մանրում են։ Ծեծքար։

Ջեփգալ—ծեփելու գործիք, մալա։ Ծեփկալ։

Ջեփուկ ծեփված, սվաղված։

Ջիր—ձյունի շերտ, որի տակից ձորի ջուրն է անցնում, իսկ ինքը կամարի պես մնում է։

Ջերաղ--ծայրը կտրված։ Ծերատ։

Ջին—ծին։

Ջիձռնիգ—ծիծեռնակ։

Ջիձղան—ծիծաղող, ուրախ (մարդ)։

Ջլձլալ-կաթկթելը (ջրի, կաթի)։ Ծլծլալ։

Ջխիլ—ծուխ տալ անասուններին. կատարում են հուլիսի 1—3-ը արևը չծագած. չար աչքի դեմ։

Ջձմամ—ծծմայր, ստնտու։

Ջձման—բերան, ծիծը երեխայի բերանը դնելը։

Ջձուգ—ծծված—կթված։

Ջմագ—քիչ արևոտ տեղ։ Ծմակ։

Ջնաման—1. Հեշտոց։ 2. Արգանդ։

Ջնիգ (ուլ)--ուլծնիկ, մի տարեկան, բայց արդեն ծնած ուլ։

Ջնգնոտկոտուր—ծունկը կտրվի (անեծք)։ Ծնկնակոտոր։

Ջնգնոհան--մինչև ծունկը մերկացած։ Ծնկնահան։

Ջնուգ—ծնված։

Ջոցվոր } հղի (կին)։
Ջոցվուր }

Ջոցվորիլ—հղիանալ։

Ջոցվորութին—հղիություն։

Ջոցքաղ—չափ, մի ծոց լիքը քաղել (պտուղ)։

Ջպիղ—ծառի ճյուղերով գործված դուռ։

Զպղել—ծառի ճյուղերով գործել։
Զպղուց—ծպեղով փակված։
Զռանագ—ձողի նման, գծի նման։
Զոեթ—մանր որդ, որ գոյանում է (անասունի) վերքի մեջ։
Զռիլ—1. Գժվել։ 2. Սիրահարվել։ 3. Ըմբոստանալ։ Ծռել։
Զռկտիլ—գժություն անել, խռովահույզ լինել, նազկտալ։
Զռհուղ—չորս տարեկան արջառ, որ նոր են փորձում լծել։
Զռութին—1. Գժություն։ 2. Քաջություն։ Ծռություն։
Զռուց—1. Սիրահար։ 2. Գժված։
Զռպել—կափարիչը կիսով չափ բաց անել։
Զռտաշ—շեղ տաշվող (փայտ), ծռտաշ։
Զռտաշուց—շեղ տաշված։
Զրիր—կիսաբաց (դուռ, կափարիչ)։

Զրբրել
Զրբել } կիսով չափ բաց անել։

Զուռ—1. Հերոս, քաջ։ 2. Գիժ։ 3. Սիրահար։
Զուփ—Թռիչք։
Զուք—կանեփի ցողուն, որ մարխի տեղ գործածում են։
Զփալ—ցատկել։
Զփձփալ—ցատկոտել, ոստոստել։

Ղաթըր—ջորի։

Ղենչագ
Ղինչագ } թելերի կաժ, թելխուրձ (բամբակի)։

Ղորդման
Աղորդման } իրավ, ճիշտ։
Ղորդու

Ճալ—գոգավոր վայր, տափարակ տեղ։
Ճաղցը ամել—ջրաղացի մորուք՝ քարերի առաջ դրված փոքրիկ տախտակ, որից ալյուրը թափվում է ալրատուն։
Ճոմ—ճահճոտ տեղից վերցրած հողակտոր, որով առուների ջրերը կապում են, որ իզուր չհոսի։
Ճոմուց—ճամով փակված (առու)։
Ճարդուց—ջարդված, փշրված։
Ճ՛զտել—ատամների և լեզվի միջոցով թուքը դուրս ցայտեցնել։
Ճիակի—երգ, քրդական մանի։
Ճիլ—1. Նյարդ, ջիղ։ 2. Արմատ։
Ճիլըռնի—քնաբեր մի հիվանդություն, որի բուժման համար կոկորդի երակները են սեղմում, դանդաղեցնում արյան շրջանառությունը։
Ճիլիռ—կոկորդի ցավ, քերվուք, որի բուժման համար յոթը տնից յուղ և ալյուր են հավաքում թանձր խավիծ շինում և կերցնում հիվանդին։
Ճիռ—1. Կաքավի մի տեսակը։ 2. Մեծ ճյուղ (ծառի)։
Ճլթուր—սոխարածով ջրալի կերակուր։

Ճլեզ, ճլող—նիհար, տխեղծ:
Ճլըզել—ճզմվել:
Ճլոթ—ապտակ, ձեռքի հարված:
Ճլոթել—ապտակել, երեսին հարվածել բաց ձեռքով:
Ճլոթուզ—ապտակված, հարվածված, ծեծված:
Ճլոպ—խոտից շինված պարան, կեմ:
Ճղնթուփ—եղան լեզու կոչվող տերևը:
Ճորո—պապիկ, մեծ հայր:
Ճոթողել—թառամել շողից:
Ճոթռուզ—թառամած:

Ճոճո / Ճոճիզ — տատիկ, մեծ մայրիկ: Չոջ:

Ճոճբաբ—պապիկ:
Ճորտպիռ—մի ջորիաբեռ:
Ճով—ճյուղ, շյուղ: Չով (բրդ.):
Ճովանալ—ճյուղ տալ, ընձյուղել:
Ճոթիզ—աքացի (տալ), ճոթզել—աքացել:
Ճվճուր—սոխով, ձվով պատրաստած ջրալի կերակուր:
Ճրած—հենած և գործելու պատրաստ բամբակյա թելերի խուրձ:
Ճրթափ—փայտե գործիք, շերեփաձև, ամրացված առվակի կողքին, երբ ջուրը լցվում է շերեփը և թափվում, շերեփի պոչը խփվում մի թիթեղի, ձայն հանում, որից արջերը խրտնում, փախչում են:
Ճրտունք—1. Արտ ջրելը: 2. Փայտյա, գործիք, երկար պոչով, որով արտն են ջրում:
Ճրտնքվուր—արտ ջրողը, ճրտունք բռնողը:
Ճրտոր—ջրի հերթը: Ջրզոր:
Ճրլեցք—Ջրլեցք՝ այն հողակտորը ուր ջուրը միշտ լցվում է:
Ճրկալ—ջրկապ, արգելակ (շյուղ):
Ճրուզ—ջրված (արտ):
Ճրստալ—փայլել, ցոլք տալ:
Ճրստան—փայլող, ցոլք տվող:
Ճրքամ—ջրի այն մասը, որը արտը հագենալուց հետո հոսում, թափվում է:
Ճուլհըզիզ—սարդ:

Մոզոշեզ—ուշ, մայիսին ծնված ուլ:
Մոզեն—ախորժակ:
Մազուր—երկու աչքից կույր:
Մազլոխ—ջուլհակի գաֆը ինքնիրեն ետ տանող փայտ:
Մաթիլ—փոքր ոջիլ, մլիկ:
Մոժմժոր—հիվանդոտ:
Մալ—ապրանք, տուն:
Մոլուլ—տխուր, թախծոտ:
Մալուխ, մալուխ—չոր ծառի ճյուղ, մարխ:
Մոլուն—դիվահար, սատանա:
Մալխո (բրդ.)—տնատեր, ծխի գլուխը:

Մածնգուլ—ձագար, մածունը կուլ տվող:
Մակրդման—մածուն մակարդելու աման:
Մոհլոմ—սպեղանի, բուժիչ դեղ:
Մոհլուն—չարք, սատանա:
Մոհրում—զուրկ, անբախտ:
Մաղմաղ—հանգելու վրա եղող կրակ, մարելու մոտ եղող կրակ:
Մոճին—մեջը:
Մամրշիլ—կերակրի բորբոսնելը, հնանալը: Նամշել:
Մամրշուգ—բորբոսնած, հնացած:
Մամա-լուսիգ—աչքկապուկ խաղը:
Ման—հում կաթի սեր:
Մանած—թել, մանվածք:
Մանգղոն—կոթը կարճ, շեղըն երկար մանգաղի մի տեսակ:
Մանգղոնել—մանգղոնով քաղել:
Մանգագ—մի բանջարեղեն, որ կերակրի մեջ են գցում:
Մոնգիշ—վայրի սոխ, սոխուկ, սարի սոխ, սարսոխ:
Մանիլ— 1. Նետել, գցել: 2. Մանել (թել):
Մանուգ—1. Նետած, գցած: 2. Մանած, մանված:
Մանգեռ—մանգաղի մի տեսակ, մանկեռ:
Մոնգռիլ—մանկեռով քաղել, հնձել: Մանկռել:
Մանգռուգ—մանկեռով հնձած:
Մանգոթեկիգ—մանգաղաթեկիկ՝ սև, ծիծեռնակի նման մի թռչուն, որ ճախրում է առավոտյան զով օդին և երեկոյան:
Մանչկիգ—1. Բռնակ, որից բռնելով պտտացնում են ճախարակը՝ բամբակը մանելու համար: 2. Փոքրիկ մանուշակ:
Մոշ—հպարտ քայլերով ման գալը:
Մոշալ—հպարտ-հպարտ քայլել:
Մաշիգ—փոքրիկ ունելի:
Մաշուգ—մաշված, փոքրացած:
Մաշուկ—սապոնի փոքր կտոր:
Մոջիդյո—մեջիդիե, քսան զուրուշ (թրք. դրամ):
Մոռտալ—վահան:
Մոռտլուգ—վահանով և թրով զինավարժություն անելը:
Մոսթոսիգ—մախաթ, մեծ ասեղ:
Մասրտ—մասրա, եղեգնյա փոքր ձող, որի վրա թել են փաթաթում:
Մասրտլից—ճախարակ, որի պտույտով նազուկի վրայից հանվում է թելը և փաթաթվում մասրայի վրա:
Մասրիլ—թելը մասրայի վրա փաթաթել:
Մասրուգ—մասրա շինած, թելը մասրայի վերածած:
Մատ—լերան կող, լերան լանջ:
Մատանի (շալվար)—նախշված գործվածքով շալվար:
Մատլոզ—մատի ծայրով վերցրած ուտելիքը (մեղր, մածուն):
Մատլոզիլ—մատով ուտել, մատը դգալի տեղ գործածել:
Մատլոզուգ—մատով լիզած:
Մատնուգ—մատնված:

Մարտնդտ—մեծ շեղբով մանգաղ։
Մորդտպարտ—տասներկու զավակ (ունենալը)։
Մորդոթամք—խաղ, որի ժամանակ երեք մարդ թամբաձև բռնում են իրար, իսկ մյուսները թռնում, մինչև մեկն ընկնի և փոխվեն դերերը։
Մարդագ—գերանների և կցակների վրա դրված փայտ։
Մարիգ } էգ կաքավ։
Մարի }
Մարձթի—ծառ, որ տալիս է մարծութ կոչվող պտուղը։
Մարձութ—մարծթի ծառի պտուղը։
Մարմուս—գարնանացան ցորենի մի տեսակ։
Մարտլոցը—վահանախաղ, սուսերախաղ։
Մոքի—մենք։
Մեզար—1. Մազից պատրաստված փալաս։ 2 Գոգնոց (մազից)։
Մեզալ—նայել, դիտել։
Մեկդեխիլ—հարս ու փեսին առագաստ տանել, միատեղել։
Մեղոք—չհասնող։
Մեվան—հյուր, ղոնախ։
Մերիլ—մակարդել։
Մերջուր—մածնին խառնած ջուրը, որով մերում են կաթը։
Մերուգ—մակարդված։
Մերուն—խնոցի հարելու համար օգտագործված ջուր։
Մզանալ—ծուանալ։
Մզիղ—բարակ շյուղ, փշիկ։ Մզեղ։
Մզրախ—ձեռքի փայտ, որի մեջ նիզակ է դրված, վտանգի ժամանակ օգտագործելու համար։
Մըժ—մշուշ, մուժ։
Մժիգ, մժիղ—մոծակ։
Մժլիլ—զրուցել, խոսակցել։
Մժլուգ—զրույցով տարված։
Մժուլ—զրույց, խոսք։
Միլ—ճաղ, երկաթյա բարակ լար։
Միջհան—երկաթյա գործիք, որով փայտի միջին մասն են տաշում։
Մլիլ—մլել, սեղմել ոտքով, տրորել կտորը՝ մահուդի վերածելու համար։
Մլիգ—մոծակ։
Մըմլիլ—աչքերը շուտ-շուտ թարթել, որից մըմլցնիլ բայը—թարթել։
Մխլուջ—հաց-թանի կամ հաց-մածնի խառնուրդ, բրդոշ։
Մկտ—հիմա, այժմ։
Մկտվան—հիմիկվան, այժմյան։
Մկնալուջ—ալոճի մի տեսակը, ավելի փոքր հատիկներով։ Մկնալոջ։
Մկնագիք—մի բույս է, անասնակեր։
Մկնտզվիթ—աղվիթի մի տեսակը։
Մղգղալ—ցավել, հոգս քաշել։
Մղիգ, մղմղիգ } մոծակի անուններ և տեսակներ։
Մղմղուկ, մղմուղ }
Մղլուբ—փայտյա գործիք, որով կծիկ թելը կաժի կամ դենչակի են վերածում։

Մըք—մենք։
Մզլըխել—մզլուրով թելը զենջակել։
Մզլըուզ—մզլուրված, մզլուրի զարնված։
Մզրըը—երեկո, մութն ընկնելու ժամանակ։
Մնից—անիծից նոր դուրս եկած ոջիլի ձագ։
Մշլուր—սուջուխ։
Մշուր—փոքր մասնիկ։
Մուզլեզ—մողես։
Մոզ—մի մեծ ճանճ, որի կծելուց եզը և գոմեշը խրտնում, փախչում են։
Մոզի—1. Մեկ-երկու տարեկան հորթ։ 2. Խորթ զավակ, որ ամուսնացող կինը հետն է բերել։
Մոզոզել—մոզ միջատի կծելուց խրտնել, փախչել։
Մոլա—1. Մոլլա, մուսուլման կրոնական։ 2. Ծեփիչ (գործիք)։
Մոլրուզ—մոլորած, շվարած։
Մոխար—խաղողի մի տեսակը։
Մոմի—դեղին գույնի լաչակ, գլխին կապելու համար։
Մոմլաթ—մոմած շոր։
Մոմբաղ—մոմի երկար ու բարակ ճրագ, որի մի ծայրից վառում են անհրաժեշտության դեպքում։ Մոմպատ։
Մոմդան—աշտանակ, մոմի պատվանդան։
Մոմուզ (շապիկ)—մոմով դաջած, նախշած շապիկ։
Մոշի—մի ծառ, որ մոշ պտուղն է տալիս։
Մոշ—մի վայրի պտուղ՝ մոշենու պտուղը։
Մորի—մորմենի։
Մորից—մորմենու պտուղը։
Մջրհան—եզրահան, տախտակի եզրերը տաշող գործիք։
Մռուզ, մռզ—ծառի արմատը, հաստ բունը։ Մռզի։
Մռիմ'—մի քիչ։
Մռու—կծու։
Մռչիմ—մրջյուն։
Մռփել—մրափել, խորը քնել։
Մսախ—ջրաղացի այն առաջամասը, ուր թափվում է ալյուրը։
Մսաս—ճիպոտ՝ ծայրը սուր մեխով, որով չթվորը քշում է եզներին։
Մսի չիր—չորացրած միս, արևի տակ չորացրած միս։
Մսին—պղնձյա սափոր, ջրի սափոր։
Մսխալ—ծանր. չափ։
Մսրանի—1. Եգիպտական։ 2. Մսուր ունեցող, երկու մսրանի՝ երկու մսուր ունեցող։
Մրիրա—հողի վրա կիսովի աշխատող։
Մրկիթ—յուղատու մի պտուղ, մրկթենի ծառից։
Մրկթենի—մրկիթ պտուղը տվող ծառ։
Մրճեմ—մրջյուն։
Մրճնջալ—ցրտից մզմզալը (ձեռքի)։
Մրջամք—կտավը պրկված պահող, երկու ծայրերին մեխեր ունեցող փայտ, որ գործվող կտավը պրկում է կողքերից։
Մուզլեզ—մողես։

Մուզ—կծու համ։
Մուլտֆա—երկաթե վրձին։
Մուխրան—արգելք։
Մուխսի—Երուսաղեմ ուխտի գնացած։
Մունրկ—հողակալ։
Մունիջ—մրջյուն։
Մուտագ—գերանի հենարան։
Մուտբախ—խոհանոց։
Մուրիգ—այծ, որ իր ձագին չի ընդունում, չի կերակրում։
Մուրթիգ—կորեկի մի տեսակը։
Մքուք—մազոզ, ջուլհակի այն գործիքը, որը թելը ձգում է կտավի հենքի մի լայնքից մյուսը։

Յա—իրավ, իսկապես։
Յարտնութին—կատակ, զվարճախոսություն։
Յարխուշտա—ռազմախաղ, որի ժամանակ ձեռքի ափերն են իրար խփում։
Յոթնաղբեր—յոթն աղբերի բույլը։
Յոթը—մեռնողի մահից յոթն օր հետո տրվող ճաշը։

Նազուկ—գործիք, որի միջոցով թելը մասրա է դարձվում։
Նալչա—կոշիկի տակը կպցնելիք երկաթ։
Նալչըխ—կիսաշրջանաձև և սուր բերան ունեցող թեթև կացին, որն իբրև զենք էր օգտագործվում և մշտապես կրում էին սասունցիները գազաններից և թշնամիներից պաշտպանվելու համար։
Նամ, նամութին—խոնավ, խոնավություն։
Նամիլ—խոնավանալ։
Նոջար—հյուսն։
Նարոտ—կարմիր-կանաչ թելերի ոլորվածք, որ կնունքի ժամանակ երեխայի վիզն են անցկացնում, նաև լծկան եզների կոտոշներին՝ չար աչքից հեռու պահելու համար։
Նեճիր—որս։
Նեճիրվան—որսորդ։
Նխըշ } զարդ, զարդարանք։
Նըխշ }
Նըկս—կողացավ։
Նժալ—ննջալ, քունը գալ։
Նժան—քնկան, ննջացող։
Նժդոհ—ավազակախումբ։
Նժուգ—քնած։
Նիազ—մուրազ, ցանկություն։
Նիսան—1. Ապրիլ ամիսը։ 2. Մի բույս՝ անասնակեր։
Նխըր—գիծ, նշան, որոշող կետ։
Նխրիլ—գծել, նշան քաշել։
Նխրիգ—փոքր պղնձյա կաթսա, պղինձ (աման)։
Նղմուգ—փայտի վրա գծած, նշած (կետ)։
Նշանքաշ—երկաթյա գործիք, որով գծում, նշում են տաշվելիք տեղերն և ուղղությունը։

Նշանդար—լավ հրաձիգ, թիրախին ուղիղ խփող։
Նշթրագ—վիրահատ դանակ, նշտար։
Նշթրգել—վիրահատել, նշտարով կտրել։
Նշթըրգուգ—վիրահատված, նշտարով կտրված։
Նշնուգ—նշանդրած (աղջիկ), մատնացույց արված։
Նշընվոր—նշան դնելու գնացող (մարդ), նշանդրող։
Նշկտվտ—հանկարծ։
Նորկենի }
Նորշենի } մի ծառ, որի մուգ կարմիր կեղևը մոմի պես փառվում է, անուշահոտ է, պտուղները սև և դառն։
Նստըման—նստած դիրքով, «ըման» կամ «ման» մասնիկը դիրք, գործողության ձև է ցույց տալիս։
Նստուգ—նստած։
Նվան—նվացող, մլավող, լաց եղող։
Նվիգ }
Նվիջ } մի տերևաբույս, կծու համ ունեցող, որ եփում են նոր ուտում։ Ունի ճերմակ ծաղիկներ։
Նվին—անկողին։
Նվիրակ—վանքի ծառայող, ներկայացուցիչ, որ պտղի է հավաքում։
Նուսար—խաղողի ընտիր մի տեսակը։
Նուգի—ծանր. չափ 320 գրամ։
Նունուֆար—դեղին ծաղկով բույս։
Նուսխտ—հմայիլ, կախարդական թուղթ։
Նուր—նոր (լուսին)։

Շոր—շար, շիբ, պաղլեղ։
Շորտոուն—շիբի և յուղի խառնուրդով շինված մի դեղ՝ վերքերին քսելու, բուժելու համար։
Շախ—ճյուղ, նորատունկ (ծառ)։
Շտխամ }
Շտխլամ } ապտակ։
Շտխոխ—վայրի տանձ։
Շտկալ—չուստ, հին կոշկեղեն։ Շակալ։
Շտկալպերան—մեծ բերան, շատախոս։
Շտհինկ—կշեռք։
Շաղափ—ծակիչ, որով փայտ կամ երկաթ են ծակում։
Շաղտփուգ—շաղափով ծակված։
Շաղթտ—հարբուխ, հազ, գրիպ։
Շաղփիլ—շաղափով ծակել։
Շտմաթ (շապիկ)—նուրբ սպիտակ կտոր, որից շապիկ են շինում։
Շտուաթ—խարույկ, մեծ հրավառություն։
Շավաթ—չանչ, տականք։
Շավի—ջրավետ, խոտավետ վայր։
Շտվի—անասունների գիշերը արածացնելը։
Շորթ—պայման։
Շարմաղ—նեղ անցքերով մաղ, բարակ մաղ։
Շարմղիլ—շարմաղով մաղել։

Շարմղուգ—շարմաղով մաղած։
Շարշուր—քող, շղարշ՝ նորահարսի։
Շարուգ—շարած, շարված, մի թելի վրա կամ մի ուղղությամբ։
Շտփտրգտ—շվարած, շշմած։
Շրակ—լուսամուտ, լուսանցք։
Շրուկ—բարակ և ուղիղ վարոց։
Շգլուր—շլոր, վայրի սալոր։
Շեքուգ—ցնորված, անուշադիր։
Շեմիկ—շեմք (դռան), սեմ։
Շեմքկուգ—շեմքը դրած (դուռ)։
Շերիլ—շվարել, շշմել։
Շեքուգ—շվարած, զարմացած։
Շեմըկ—տես շեմիկ։
Շեր—առյուծ։
Շեք—քայլ, բայլ՝ շեքռիլ։
Շիլտ—կարմիր կտավ, շապիկացու։
Շիղջ, շեղջ—մաքրված և կիտված ցորեն։
Շին—տխրություն։
Շինուգ—շինված, պատրաստված։
Շիրնիգ—1. Սիրուն վայր, գրավիչ տեղ։ 2. Տեղանուն։
Շիփ—ջրաղացի նավը, որից ջուրն է թափվում և քարը պտտացնում։
Շիշագ, շշագ—երկու-երեք տարեկան էգ ոչխար։
Շիվ—փոքրիկ զալար ճյուղ։
Շիք—1. Շեք, քայլ։ 2. Երկարության չափ՝ մի քայլ։
Շլել—տարեկան ցորեն։
Շլըխիլ—կպչել, ամուր փակվել։
Շլըխուգ—կպած, ամուր փակած։
Շլըխոկ—կպչուն, մածուցիկ։
Շլոփտ—ձյունախառն անձրև։
Շխտ—1. Մարմնի մի կողմը։ 2. Հողակտոր։
Շխռտալ—որոտ, ուժեղ ձայն։
Շկտութ—ծմակ, անարև և ժայռոտ տեղ։
Շկեռ, ժկեռ—ժայռ, ժայռոտ։
Շմըտիլ—սայթաքել, սահել։
Շմըկ—սոլ, չուստ, շմըկկար՝ սոլկար։
Շմըտոք—լպստրուն, սոթ տվող (տեղ)։
Շնաֆուր—շնորհավոր։
Շնիգ—ցորենի չափ (մոտավորապես 3 փութ ու կես)։
Շնոֆուր—սև չոռը, խոլերա։
Շորտ—տիֆ, շոպա։
Շոլ—ոլոռն՝ սիսեռի մեծությամբ։
Շոլթոխտ—ցորենի սանուցքից և կարտոֆիլից պատրաստված ճաշ։
Շողիլք—գոլորշի։
Շողինք—1. Լծքաշ եզի բերանից վազող լորձունք։ 2. Շողք, ճառագայթ։
Շողհար—արևահար։
Շողնալ—արևից տաքանալ։

Շողգուն—Ջրաղացի նավի ներքևի բերանը, ուր գտնվում է թափանիվը։
Շողգիլ—սուր, շիկացած շշով ծակել (վերքը)։
Շողգուգ—սուր, շիկացած շշով ծակված։
Շոշխիլ—արևի շողից թառամել, թուլանալ։ Շոշխել։
Շոռ—աղի։
Շոռըկ—աղհանք, աղի վայր։
Շոռհաց } աղի հաց. սուրբ Սարգսի պահքի վերջին շաբաթ գիշերը
Շոռ գուգու } աղի հաց են ուտում ազաբ տղաներն ու աղջիկները, որպեսզի գիշերը երազում տեսնեն իրենց ջուր տվողին, ով ջուր տվեց խմելու, նա էլ կլինի իր ապագա նշանածը, ամուսինը։
Շորհուգ—վառվող շորի հոտ։ Շորհոտ։
Շող } տաք։
Շուղ }
Շջուգ—շիճուկ, կտրված կաթի կամ թանի ջուրը։
Շռկապ—միզարգելում, մեզել չկարողանալը։
Շռհուգ—մեզի հոտ։
Շվող—1. Դև, չարք, որ ծառի բարձրություն ունի։ 2. Երկարահասակ, շատ բոյով։
Շվողհան } Դևեր տնից դուրս հանելը. սա կատարվում է փետրվար ամսի
Շվղտհան } վերջին՝ լույս մարտի մեկի կես գիշերին, երբ ընտանիքի անդամները մի-մի ձեռնափայտ վերցրած խփում են տան պատերին և հատակին, վախեցնում դևին, ասելով. «Շվող դուրս (փետրվարը դուրս), տղար (մարտը) ներս»։
Շտիգ, շտուգ—շիջուկ, շոռի կամ ժաժիկի ջրային մասը։
Շրեգ—շրեշ, օղին բույսի արմատը։
Շրեգիլ } շրեշով փակցնել։
Շրեշիլ }
Շրթնատ—շրթունքը կտրված (մարդ)։
Շրիք, շրիքութին—կիսովի աշխատելը հողի վրա։
Շրջմագգիլ—տակն ու վրա անել (կալի քուլաշը)։ Շրջմակտել։
Շրջոնք—հագուստի թարս կողմը, շրջված կողմը։
Շփիլ—թրով զարկել։
Շուլալ—կարի մի տեսակը։
Շուլալիլ—կարել։
Շուլնուգ—կարած։
Շուր—հագուստ։
Շուրըկ—արորի առատամն ու ձողն իրար միացնող փայտ։

Չաբրի—չորս տարեկան որձ այծ։
Չադըր—կոն, վրան։
Չադրիգ—գոգնոց (կանացի)։
Չադրգթիլ—գոգնոցի կապիչը, թելը։
Չախու—դանակ, դմելին։
Չըխչըխիկ—Ջրաղացի ամբարի ցորենի հոսքն իրենց շարժումներով կանոնավորող տախտակիկներ։

Ջաման—չորացրած և աղացրած տաքդեղ։
Ջամչռիլ—չամիչի պես չորանալ։
Ջանթտ—պայուսակ, տոպրակ։
Ջաչ, չաչիգ—աչք, աչուկ (մնկ.)։
Ջարիգ—1. Քառորդ։ 2. Մեջիդիեի քառորդը՝ հինգ ղուրուշ։
Ջարչըֆտ—շրջանակ։
Ջաք—գզրարի փայտե մուրճը, որով խփում է լարին։
Ջտփտլախ—ապտակ։
Ջափան—չափող (մարդը)։
Ջափանագ—թաղիք, քեչա։
Ջափառ—ցանկապատ։
Ջափտռիլ—1. Ցանկապատել։ 2. Պաշարել։
Ջափտռվուր—ցանկապատող, չափառ անող։
Ջըլտ—շորի ծվեն, հին լաթի կտոր։
Ջըկոկ—խաղի մի տեսակ. մեկը ցիցը զարնելով խրում է փափուկ հողում, մյուսն իր ցիցն այնպես է խրում նախորդի մտցրած տեղին մոտ, որ ծռելով հանելիս առաջինի ցիցը ընկնում է, որով երկրորդ խաղացողը խաղը շահում է և կորցնում է՝ եթե չի հաջողվում շրջել առաջինի ցիցը։
Ջըմգըր—սազ, քյամանչա, չունգուր։
Ջիմ—տես ճոմ, ճիմ։
Ջիմա—խաղողի չանչ։
Ջինի, չընի—հախճապակի։
Ջիք—ցից, բայց չքնիլ—ցցել, ցից խփել։
Ջլխտղտ—լիրբ, անամոթ։ Ջլխտի։
Ջլկտղի (քրդ.)—քառասուն ծամ։
Ջլմերուգ—սողնակ, դռան փայտյա փակ՝ ներսի կողմից. դա մի կլոր, երկար գլանաձև փայտ է, որ ամրացված է լինում դռան ետևը, նրա լայնքին և մի պատից մյուս ձգվելով փակում է դուռը։ Ջլմերուկը պատի մեջ հրվելու տեղ ունի։
Ջլտիլ—ծառի ճյուղերը կտրատել։
Ջլտող—ծառի ճյուղերը կտրող։
Ջլտուգ—ճյուղերը կտրած (ծառ)։
Ջխճըպիլ—լվացքի շորերը թակել, մաքրելու համար։
Ջնչին—աղբյուրաշատ մարգագետին։
Ջոլթփիլ—հանդերն ընկնել, թափառել։
Ջոգիգ—շերեփ, չոկեկ։
Ջոկլիգ—փոքր շերեփ, փայտյա մեծ գդալ՝ երկար պոչով։
Ջոչո—իշուկ, ձիուկ, կամ նրանց խրտվիլակը։
Ջորթան—չորացրած շոռ կամ ժաժիկ, որ ձմեռ ժամանակ ջրի մեջ հալում թանի են վերածում՝ չորթանով ճաշ եփելու համար։
Ջորթնով—(ճաշ)—չորթանով պատրաստված ճաշ։
Ջորնալ—1. Ջորանալ։ 2. Առանց կնունքի մեռնել։
Ջորուգ—ծառի վրա չորացած ճյուղ։
Ջոք—ծունկ, ծնկի ոլոքը։
Ջոքման—ծնկների վրա քայլելը։

Ջոքուդ—ծունկի եկած, ծնկների վրա նստած:
Ջալ—ծորել, հոսել (ջրի, այլ հեղուկի):
Ջոգգիլ—կորչել, անհետանալ:
Ջոգգուդ—կորած, անհետացած:
Ջրիզ—1. Ջրվեժ, ջրթափ: 2. Ճլորան՝ կտուրից հոսող ջրի խողովակը:
Ջրանգգիլ—նշտարի կամ վիրահատ գործիքի ծայրով մարմինը ծակծկել, որ արյունը հոսի: Ջրատել:
Ջուրի—մինչև երբ, մինչև:
Ջքիլ, չքցնիլ—ցիցը հողի մեջ խրել:
Ջքուդ—հողի մեջ խրած:

Պագգըթան—բաղուկի թփով և մածունով բանված թթու: Բադկաթան:
Պոլ—սեպ, ցից, փլունկ:
Պալի—բանալի:
Պալխիր—դահուկ, սահնակ: Բալխիր:
Պոն—արջի քարայր, որջ: Գրաբարում՝ բայոց:
Պոնրիզ—ուշ հասնող խաղողի մի տեսակը:
Պաղարջ—անթթխմոր հաց: Բաղարջ:
Պոյտ—հետիոտն, հետևակ:
Պանիլ—աշխատել, գործ տեսնել: Բանել:
Պոպունկ—հոպոպ (թռչ.):
Պոսար—արոտավայր, սարալանջ:
Պորգոնտան—բարեկենդան:
Պարծ—ճախարակի երկու ոտքերը, որոնց վրա հենվում է ճախարակը: Բարձ:
Պործգան—բեռնակիր (անասուն): Բարձկան:
Պարծրարիգ—օրհնված հաց, հաղորդի մաս:
Պարտ—խոտի կամ տերևի երեսուն խուրձ: Բարդ:
Պարտուց—դեզ, դիզվածք (խոտ ու տերևի): Բարդոց:
Պափուջ—չուստ: Բաբուճ:
Պդիլ—տավարը կերակրել (ձմեռը): Բտել:
Պերգի—ծառ, որի կեղևը մոմի պես վառվում է:
Պեգ—մեծ, խոշոր:
Պեգօսկուր—մեծոսկր, հսկա (մարդ):
Պերընգալ—1. Բերնկալ, կափարիչ: 2. Թել կամ դալար ճյուղ, որով կալում լծված եզների բերանը կապում են, որ ցորենը չուտեն:
Պերընփուխ—ուտելիքի կամ կերի տեսակը փոխել: Բերնփոխ:
Պեքոլ (անել)—սայթաքել, ոտքը ծուռ դցել:
Պզպզնիլ—հնանալ, քրքրվելը (հագուստի):
Պըլըգուդ—ճզմված, եփելուց քայքայված:
Պըլընդ—վագր:
Պըլըգիլ—ճզմվել ծանրության տակ:
Պըլոլել—փաթաթել, հավաքել:
Պըթ—մի խաղ տանելը, խաղի մեկ շահում:
Պըսմ—պըսմ (տալ)—գոռոզանալ, հպարտանալ:
Պըսպոր—1. Քաջ, սրտոտ: 2. Մաքուր, փայլուն:
Պթնուց—մատնոց: Բթնոց:

Պժիգ—աչքի ցավ, աչքի ճպռոտում: Բժիկ:
Պիբիռ—մեխ: Պիպեռ:
Պիբռիլ—մեխել, գամել: Պիպռել:
Պիժ—աչքի սպիտակ կեղտ, պժիկ աչքի ցավից առաջացող:
Պիժոկ—լայնատերև մի բույս, համեմ:
Պիլ—ուսոսկր:
Պիչ—ընկեցիկ, ապօրինի զավակ: Բիճ:
Պիտ—երկաթյա փոքր կեռ, որ արորի խոփը ատամին է ամրացնում: Բիտ:
Պիր—ձեռնափայտ, գավազան: Բիր:
Պիրտ—բերդ, աշտարակ: Աքքադերեն-արամայերեն birtu[1].
Պլոլ—1. Մեղվի փեթակ (կողովից): 2. Ցորենի ամբար՝ կողովի ձևով գործած, գլանաձև և ծեփված:
Պղիգ, Պղուկ—կարաս, հողե մեծ աման: Բղիկ:
Պղինչ—կարմիր, միակորիզ և կլոր մի պտուղ է, փշատի նման, բայց փոքրը և կորիզը կլոր: Բղինչք:
Պճրկ—անկյունակետ (ձեռագործի նախշերի):
Պոլուր—1. Բոլոր, ամբողջ: 2. Կլոր-սիրուն:
Պոշխդվիլ—հողի մեջ թավալվելը (թռչունների), հողն իրենց թևերով իրենց վրա ցանելը:
Պոռթիլ—պատռել:
Պով—բով, հողե աման, որում բովում, խարկում են կորեկը կամ գարին:
Պորագ—շատ աղի (կերակուր):
Պրիշագ—ավերակ (տուն), պրիշագիլ—ավերակ դառնալ:
Պրտուջ—պատառ: Բրտուճ:
Պրտոշ—ջրալի կերակուր, որի մեջ հաց է բրդած: Բրդոշ:
Պրտոն—պատառ (հացի):
Պուգ—անասնակեր:
Պուլ—մացառ:
Պուլք—յոթնաղբեր (յոթն աստղերի բույլը):
Պունձագ—հետույք:
Պուջ—գուլպա:

Ջաբղիլ—ասուպի պես անցնել: Ճապղել:
Ջոլոբ—ոչխարի հոտ (վաճառքի համար):
Ջոլաղ—դահիճ:
Ջահդ—եռանդ:
Ջաղ—1. Երկաթյա բարակ լար: 2. Դագաղ:
Ջաղդալ—ծակոց զգալը (մարմնում), ցավել: Ճաղտալ:
Ջամ—ապակի:
Ջան—1. Վեգ: 2. Հոգի, մարմին:
Ջանի—ձիու քուռակ:
Ջանջիգ—ալյուրով և թանով պատրաստած ճաշ:
Ջոնդըրմա—ոստիկան, ժանդարմ:

---

1 Պրոֆ. Գ. Ղափանցյան, Ասսուրա-բաբել. բառեր հայերենում:

Ջաշքիթ—կեսօր, ճաշ։
Ջուխտակ—ճորտ, հողազուրկ գյուղացի։
Ջաջտուն—ալյուրից և յուղից պատրաստված խմորեղեն։
Ջաջե—մայր, սիրելի մայրիկ։
Ջտատֆտ—փայտյա մեծ թի։
Ջար—անգամ։
Ջար լոլո—ծանր մի պար, պարողներն իրար ձեռք բռնում են միայն ճկույթով և խաղում կլոր պար։
Ջեղու—խեժ, որ առաջանում է փշագազ բույսի ցողունի վրա, հավաքում, չորացնում և շրեշ են պատրաստում։
Ջենըկ—ասեղնագործ (գդակի)։
Ջեուրկ—երկվորյակ։
Ջընդար—սատանա բռնող, կախարդ։
Ջիդ—աքլոր (փոքր)։
Ջիզմա—ճտքավոր կոշիկ, երկարավիզ կոշիկ։
Ջիժ—երեխա, քաջ, հսկա։ Ճիժ։
Ջիջրո—միջատ, որ գիշերները պատի մեջ ծղրտում ձայն է հանում։
Ջլբուր—ջրալի և սոխառածով կերակուր։ Չլբուր։
Ջխան—ժխնի (դռան), սեմ։ Ճխան։
Ջղարտ—պապիրոս, սիգարեթ։
Ջնազ—1. Գրազ գալ։ 2. Հավի այն կրծոսկրը, որի վրա գրազ են գալիս։ Ճինազ։
Ջմուռ—ճմռվածք՝ տաք հացի և յուղի (կերակուր)։ Ճմուռ։
Ջնջղու սաբուն—մի բույս, որ սապոնի տեղ են օգտագործում։ Կանաչ բույսը պոկում են և ուղղակի, որպես սապոն, գործածում, ունի կանաչավուն փրփուր։ Այդ բույսը հազիվ մի թզաչափ է լինում և փռվում է գետնի վրա. ունի մանր, սպիտակ ծաղիկներ։
Ջնուդ—դիվահար, այսահար։ Ջնոտ։
Ջոգան—ծայրը կեռ ձեռնափայտ։ Ճոկան։
Ջո̈հր—փայլ (թրի, սրի)։
Ջոմարդ—քաջ և ազնիվ մարդ։
Ջուլ—փալաս, հաստ կտորեղեն։ Չուլ։
Ջոպռիլ—պոկել, ճանկով քաշել։ Ճոպռել։
Ջոջքար—սպիտակ մարմար քար։
Ջռդող—խլուրդի մի տեսակը։
Ջռըբիլ—փորձել։
Ջվա—սնդիկ։
Ջվոյալդուզ—սնդկազօծել, ոսկեջրել։
Ջվաթ—նիստ, ժողով։
Ջվդլոք—խաղի մի տեսակ։
Ջրինդ—ձիարշավ։
Ջրած—մանվածք։
Ջրակդիր—պատվանդան՝ ճրագը դնելու համար։ Ճրագդիր։
Ջրակլուս—յուղ, ձեթ, որ ճրագի մեջ վառում են։ Ճրագլուս։
Ջրակու—ճարպ։ Ճրագու։
Ջրտընտվուր—ջուր անող, արտը ջրող։

Ջրտուն—երկար պոչով փոքր թի, որով արտերն են ջրում. պոչի երկարությունը նպաստում է հեռվից ջրին ուղղություն տալուն: Ջրտունք:
Ջուամիր—ազնիվ մարդ:
Ջուբոկանը—հարվածելու նպատակով նետված գավազան:
Ջուջ—երեխայի առնանդամ:
Ջուլ—փալաս:
Ջուջփէզ—փայտյա խողովակ, որի մեջ են դնում երեխայի ջուջը, որպեսզի մեզելիս մեզը շորերի վրա չթափվի:
Ջուռիգ—գոգաձև վայր:
Ջուռ—ցխատ, ազգր:
Ջուռան—կիսախողովակ:

Ռոբոն—խեղճ, ողորմելի, սորուկ:
Ռագամ—արորի այն հաստ ձողը, որի ծայրին ամրացվում է խոփը: Առատամ:
Ռոգ—այգի (խաղողի):
Ռոխ—պայթյուն, ձայն:
Ռոխալ—պայթել:
Ռոխացնիլ—պայթեցնել:
Ռոխի (սաբուն)—ձեռքի, ընտիր սապոն:
Ռոխոկ—պայթող գործիք:
Ռոհմ—գութ, կարեկցություն:
Ռոշոկը—աքայի (վերարկու) մի տեսակը:
Ռոռուլ—կենդանի:
Ռոպ—ուժեղ անկում (ծանրության):
Ռոպալ—ուժեղ, թափով ընկնել:
Ռոպացնիլ—պայթեցնել, ուժեղ խփել գետնին:
Ռաֆ—հարկ (պահարանի), էտաժ:
Ռոֆոզ—աքացի:
Ռեզ—շարք, շարան, որից ռեզվիլ—շարքի կանգնել:
Ռես—գյուղապետ:
Ռընդո—փայտ հղկելու գործիք:
Ռըք—քեն, խռովություն:
Ռըքիլ—խռովել:
Ռըքուզ—խռոված:
Ռշիգ—խարույկի երեսի մասը:
Ռոտ—փայտյա երկար ձող, որով ծառերից պտուղ են թափ տալիս:
Ռսվո—խայտառակ, անպատիվ:
Ռուբ, ըրուբ—1. Դոշաբ, որ պատրաստում են խաղողից, մանանայից կամ կազբայից: 2. Քառորդ:
Ռուբխուր—տոկոս վերցնող, վաշխառու:
Ռուսանազ<br>Ռուստվար } ռուսերեն:
Ռուք—անկյունաքար:

Սոբաթ—փետրվար (ամիսը):
Սոբոթան—առավոտ:

*Սոգոտ*—մեծ կողով, սակառ։

*Սազբազը*—կիթառի թել։

*Սաթառ*—անտառամաս, որի ծառերը 4—5 տարին մի անգամ կտրում են և տերևները, որպես անասնակեր գործածում։

*Սալավիլ*—ավել, որով միայն սալն են ավլում, սալավել։

*Սալ, սալքար*—մարմարյա սալաքար, որի վրա հաց են թխում։

*Սալիլ*—սալահատակել, սալել։

*Սալուգ*—սալապատված։

*Սոլտուաթ*—սպառնալիք։

*Սոլտբուրդ*—փորձանք, աղետ։

*Սոլափի*—խոշոր քար՝ ձեռքով նետելու համար։

*Սալթո*—կանացի թանկարժեք հագուստ, սալթա։

*Սալքար*—սալաքար։

*Սոլիմ*—առողջ, պինդ։

*Սակրազ*—փայտյա տափակ փոքր շրջանակ, որով ակերի անցքերն են փակում։

*Սաղր*—ծանծաղուտ (ջրի), գետի ոչ խոր տեղը։

*Սագրի*—եզան ազդրի կաշին։

*Սամոթիլ*—սամաթել, թել, որով սամիներն են իրար կապում՝ եզան գլուխը լծից դուրս չգալու համար։ Սամոտի, սամոտա, սամեթել։

*Սամի*—փայտյա կամ երկաթյա ձողեր, որոնցով լուծն են ամրացնում եզների վզին։

*Սամիր*—1. Թեփահան արած կորեկ, որով ճաշ են եփում։ 2. Սամիր կոչվող ճաշը։

*Սանտերք*—բուրդ և մազ զզող գործիք, մի տախտակ է, որի մի ծայրին իրար զուգահեռ շարված են սրածայր բարակ երկաթյա ճաղեր, որոնց վրա խրելով և քաշելով զզում են բուրդն ու մազը։

*Սանտր*—ջուլհակի գործիք, որի ամեն մի ճեղքից մի-մի թել է անցնում գործվելու համար։

*Սանտրօծ*—բազմոտանի մի միջատ։ Սանտրօձ։

*Սապտուգ*—մազերը կտրած (անեծք)։

*Սոռաղ*—խոշոր անցքերով մաղ։ Սառատ։

*Սասում*—բարկություն, հերս։

*Սավտուկ*—մի փարթամ բույս՝ անասնակեր։

*Սովդոլը*—սիրահար։

*Սատանխափ*—երազում կնոջ հետ զուգավորվելը։

*Սատոնը* (լեսան)—գայլախազ (քար)։

*Սատգուգ*—սատկած, մեռած։

*Սորդորի*—դռան վրայի ծածկը։

*Սորիլ*—նետել, գցել հեռուն։ Սարել։

*Սարիգ*—բարակ մորթի, որով ամանների բերանը փակում են և կապում։ Սարեկ։

*Սորուգ*—նետված, գցված։

*Սարտաղ*—սարի ստորոտը, սարի տակը։

*Սարոգիգ*—փոքրիկ սարյակ։

*Սորգոլո*—առաջից գնացող, առաջնորդող։

*Սարսուխ*—վայրի սոխ, սարի սոխ։

Սարվաղ—սարք, իրերի կոմպլեկտ։
Սափ—1. Ծղոտ, մեծ զարման։ 2. Կոթ (կացնի)։
Սաքու—ցածրադիր պատ, որի վրա նստում են։
Սաֆ, սաֆի—մաքուր, ջինջ։
Սաֆարչի—պղնձագործ, կլայեկող։
Սաֆիգ կավից շինված բաժակ, հողե փոքր աման՝ ջուր խմելու համար։
Սգել ջրի տակն իջնել, սուզվել։
Սերրի երեք տարեկան նոխազ։
Սեզ, սիզ—մոլախոտի մի տեսակը։
Սելմին—ջուլհակի գործիք, այն գլանաձև փայտը, որի վրա փաթաթվում է գործված կտավը։
Սեիզ—նոխազ (ընտանի, թե վայրենի)։
Սեկ—սրեմ, մորթից պատրաստված թել։
Սեպել—թողնել, արձակել։
Սեպուզ—թողնված, արձակված։
Սեր—կախարդություն, հմայել (կախարդական թուղթ)։
Սերմոիլ—սերմի գոյանալը, բույսի հասունանալը։
Սերսուփ—մաքուր, սուրբ։
Սերսփիլ—մաքրվել։ Սերսփել։
Սերսփուզ—մաքրված։
Սթար—ապաստան, ապահով լինելու միջոց։
Սթրիլ—հանգիստ մնալ։ Սթրել։
Սիրգ—մեջը լիքը (ընկույզ), առողջ և հասած (պտուղ)։
Սըլ-սըլ—ցեզ։
Սըլ-ցըլ—սահել, սղալ։
Սըլիգ, ցըլիգը—սահել, սղալ։
Սըլնալ—բարկանալ, սըլ—բարկություն։
Սըմ—սմբակ։
Սըֆր—պղինձ (մետաղը)։
Սթար—պաշտպանվելու տեղ։
Սթրիլ—ապաստան գտնել, հանգստանալ։
Սթրուզ—հանգիստ, խելոք։
Սթրվիլ—տեղավորվել, հանգստանալ։
Սիխ—փայտյա մախաթ, սրածայր փոքր փայտիկ։
Սինի—մեծ ափսե, որ պղնձից է շինված։
Սիվ—սև։
Սիվ փըշ—լյարդ, սև թոքը։
Սիրըմ—սոխուկի պես մի բանջարեղեն, որի հոտի և համի համար գցում են կերակրի մեջ։
Սլուլիգ—ճարպիկ, աչքաբաց։
Սխտ—շորե գնդակ, թոնրի անցքը փակելու համար։
Սխտորուզ—վայրի սխտոր։
Սխտորքար—1. Քար՝ որով սխտոր են ծեծում։ 2. Սասունում մի լեռ։
Սկիլ—սուզվել, ջրի հատակը գնալ։ Սկել։
Սկոտ—ցից, փայտյա ձող՝ հողի մեջ խրելու համար։

Սղկել—մանրել, փշրել։
Սղկուգ—մանրված, փշրված։
Սղմել—սեղմել։
Սմբուլ—1. Հատավետ ծաղիկ։ 2. Հղկված, ողորկ։
Սմել—բեխ, ընչացք։
Սնկռտալ—հեկեկալ, ուժեղ լաց լինել։
Սնկլանկաջ—ոստրե նաև խխունջ։
Սնտոտ—հաստ գավազան, մահակ։
Սնքար—խարիսխ, սյունի տակի քարը։
Սոբա—վառարան։
Սոզրկ—կիսավառ փայտ, մի ծայրը դեռ չայրված։
Սոխի-բլուղ—կանաչ սոխ։
Սողնագ—դռան ետևի փակը։
Սողնձագ—անցք, որի մեջ մտնում է սողնակը։
Սոլ—չուստ, սոլ։
Սոլոլ—խաղողի մի տեսակը։
Սոսըն—անուշաբույր մի ծաղիկ։
Սոսրաթ—անտանելի, սարսափելի։
Սորալ, Սորսրալ—ավազի կամ հատիկների համաչափ հոսելը, թափվելը։
Սոր-սոր—հոսելու, թափվելու պրոցես։
Սուս—մի բույս է, որի արմատն ուտում են։
Սորսփալ—վախից դողալ։
Սպաս—թանապուր։
Սպիռկ—1. Ցորենի մի տեսակ, սպիտակ գույնի։ 2. Աղվիթի (վայրի պտուղ) լավ տեսակը։
Սպիտակ մուրքընին—ծերունիներ, ալեհեր մազերով (մարդիկ)։
Սպիտկիգ—մի բանջարեղեն, որի թփերի ծայրը սպիտակ է։
Սպտուր—ոչխարի և այծի աղբը (թրիքը)։ Կտտոր։
Սպտրել—աղբել, թրքել։
Սջուխ—1. Հաստ աղիք։ 2. Սուջուխ։
Սռալ, Սռսռալ—հատիկ-հատիկ թափվել։
Սռիջ—խոշոր ավազ, ավազակույտ։
Սռնել—ցորենը խոշոր-խոշոր աղալ։
Սռնուղ—աղացած ցորեն։
Սռնուցք—ցորենի մանրուք՝ ցորենը 3—4 կտոր արած։
Սրսուր—մաքուր, թել-թել արած։
Ստեղծ—ցցեր, որոնց վրա ջուլհակագործը մանածն է բաց անում, ջրած անում։
Ստիրճ—ամուլ մնացած, չբեղմնավորված, ստերջ։
Սրբանք—արգանդի ընկերքը, որը ծնվածի հետ դուրս է գալիս։
Սրըմ, սրեմ, սրիմ—կաշվից, մորթուց պատրաստված թել։
Սրթկալ—հանկարծ վեր թռչել։
Սրմա—ծարիր, սուրմա։

Սրմուռ—ծարիր քսած (աչք)։
Սրտանուց—կանանց և աղջիկների կրծքի զարդարանք։
Սրտդդալ—լանջի ծայրոսկրը, սրտի գդալը։
Սուլթան (սխտոր)—ընտիր սխտոր։
Սուլուլ—ծայրը սուր։
Սուչ—հանցանք սուչ։
Սուքիլ—շինել, կառուցել։
Սուքուդ—շինած։
Սքռաթ—հոգևարք, հոգի տալու ժամանակը։

Վազան—արագավազ։
Վողոնտ—կորեկի մի տեսակը՝ հասկը մատի ձևով։
Վողոլիլ—գետնի վրա անհոգ պառկել։
Վողմոն—վազելով, վազելու ընթացքի մեջ։
Վոճըմիլ—վախից վեր թռնել։
Վայլե-վայլե—ահ ու սարսափ, վայը եկել է քեզ։
Վայլուսիլ—կուրանալ, աչքի լույսը պակասել։
Վոչոփխիլ—ոստոստել, թռչկոտել։
Վառիգ—վառեկ, փոքր հավ։
Վառուգ—վառված, այրված։
Վարդախտ—կարմրուկ (հիվ.)։
Վարշամակ-սպիտակ կտոր, որի մեջ նշխարք են փաթաթում և դնում մեռնողի բերանի վրա։
Վաք—1. Ջրաղացի նավը։ 2. Կլոր շրջանակաձև տախտակ՝ որով փակում են տկերի անցքերը։
Վերգի—հոգի տուրք։
Վերի (այծ)—վայրի այծ։
Վերվերիգ—1. Թեթևսոլիկ (մարդ)։ 2. Պարի մի տեսակ։
Վզան-վզվզան—փախչող, մի տեղ չմնացող։
Վզնտկոտուր—վիզը կտրվի (անեծք)։
Վըժալ<br>Վըժգալ } ճվալ, լաց լինելը (երեխայի)։
Վըժուց—ճիչ, աղաղակ։
Վըլվըլիգ—փոքրիկ մի թռչուն, որ սիրում է կանեփի հատիկներն ուտել։
Վըլվըլուն—աղմուկ, աղաղակ։
Վըր—1. Որ (հարաբ. դեր.)։ 2. Վրա (կապ)։
Վըրը՞—ինչո՞ւ, ինչու համար։
Վըտվըտալ—մանր-մանր շարժվել, գրգռից մարմնի այս կամ այն մասի շարժվելը։
Վըտվըտան—գրգռից շարժվող, ոստոստող։
Վիթ—վայրի այծ, փոքրիկ և սիրուն։
Վղկալ—նորածնի ձայն հանելը։
Վնգալ<br>Վնգգդալ } շան լակոտի ձայն հանելը, կաղկանձելը։
Վռիգ—ջրալի ճաշ՝ ալյուրից պատրաստված։ Վռիկ։

Վոնիգ—մատղաշ, փոքրիկ։
Վոցնիլ—նետել, հեռու գցել։
Վոցուգ—հեռու նետված։
Վրացնագ—վրացերեն, վրացու պես։
Վքնիլ—կերակուրը չմարսելուց անհանգստանալ։
Վքնուգ—չմարսած, շատ ուտելուց անհանգստություն զգալը։

Տոր—դեպի։
Տորտ—բան։
Տորտկ—խոշոր եղջերավոր անասունների մի հիվանդություն, որից քայլելու անզոր են դառնում, ոտները ցավում է։ Դորաղ։
Տողը—այդ կողմ, այդ տեղը։
Տալ—խիժ, առաջին կաթը։ Դալ։
Տոլ—թաքստոց։
Տոլիլ—թաքնվել, պահմտնել։
Տոլուգ—թաքնված։
Տոլտպ—բեղմնավորում (միասմբակ կենդանիների)։
Տոհ—հնացած, տարիքն առած։ Դահ։
Տոհտնալ—հնանալ, ծերանալ, տարիքն առնել։ Դահանալ։
Տոհլ—ծանր հիվանդ, մերձ ի մահ։
Տոհմ—համ։
Տոհմըկ—թակարդ, ուր ուտելիք են դնում վայրի կենդանիներին այնտեղ բերելու և խփելու կամ բռնելու համար։
Տոհուգ—դահուկ, սահնակ, որով ձմեռ ժամանակ անասնակեր են տեղափոխում։ Հաճախ մարդն ինքն է քաշում ձյունի վրայով։
Տաղծ—դաղձ, համեմ վայրի։
Տամոն—ջլորի ընտիր մի տեսակը, խոշոր։ Դամոն։
Տոյր (քրդ.)—թռչուն։
Տոռ—դեռ։
Տոռըկ—առնանդամ։
Տառինջ—վայրի և մարխոշ մի խնձոր։
Տոռխըս—կիսակտրված, կիսամորձատված։
Տապու—1. Արգելք։ 2. Հողի սեփականությունն ապացուցող փաստաթուղթ։ Տաբու։
Տատան—կտրտված ոտնաման, մաշված խարուկ (կանեփի թելերից շինված ոտնաման)։
Տարթ—չորացրած աղբ (անասունի), վառելու համար։
Տարմոզ—հաստ փայտ, մահակ։
Տափ—աղեղի հենակը, լայն տախտակը։
Տափան—1. Ջրաղացի քարերի պտույտը կանոնավորող հաստ փայտ։ 2. Հերկված արտը տափանելու գործիք, տափան։
Տափըշ—հավերին բռնելու ձայնարկություն։
Տափըշիլ—նստել՝ թաքնվելու նպատակով, պահ մտնելը։
Տափիչք—ցանց, թակարդ (մուկ, վայրի թռչուն բռնելու համար)։
Տելք—զառանցանք, դելք։

Տելքիլ—զառանցել, դելքել:
Տեղթափ—երկնային փոքր, կլոր և գույնզգույն քար, ջրի մեջ գնելով ջուրը բուժիչ են դարձնում: Դեղթափ:
Տեղծնուգ—դեղձանիկ (թռչ.):
Տեղնուգ—դեղնած, գունատ:
Տեղվոլուգ—թունավոր բույս, երբ կենդանին ուտում է թունավորվում և սատկում է:
Տիզ—1. Դարման, բուժիչ նյութ: 2. Արեթ: Դեղ:
Տիզրար—դեղ պատրաստող, դեղագործ:
Տիման—զիմացը, դեմ առ դեմ:
Տինի—մի հիվանդություն՝ թմրեցնող, քնացնող:
Տիր—1. Անգամ: 2. Աղեղի նետը:
Տիրգ—թանձր, նստվածք, չանչ:
Տիրկովան—նետ-աղեղ, փայտից պատրաստված՝ թռչուններ որսալու համար:
Տղկլի—ծառ՝ հացենի, թղկի:
Տմբել—բռունցքով գլխին տալ: Դմբել:
Տոփան—1. Տափակ հաստ փայտ՝ կտուրի հողը ամրացնելու համար, որ անձրևից չկաթի: 2. Լողքար՝ նույն նպատակի համար:
Տոճիգ—հորթի ցատկոտելը, աքացի տալը:
Տոշիգ—թթվից պատրաստված կերակուր (կաղամբից, շաղգամից):
Տվոիկ—փափկամազ, բրոն, որ լինում է այծի մազերի մեջ, աղվամազ: Դփոիկ:
Տվրգիլ—թմրել:
Տոմաջ-եզան լեզու (բույս), մի թուփ է, որ դնում են վերքի վրա՝ բուժելու համար: Դղմաճ:
Տրգիլ—ծնելը (միասմբակ անասունների):
Տրթագ, դրթակ—թակ, որով խփում են դրին փայտ ծակելու համար:
Տրիլ—սրել ջրաղացի քար, դրել, դրով սրել: Դրել:
Տրնգողալ—տրնգողի, գլխկոնծի խաղալ:
Տուղ—դող, մալարիա:
Տուտրգիլ—կուչ գալ, մի տեղ կծկվել:
Տուր—դուր, ծակող գործիք:
Տուշտի—նոխազ:
Տուրան—հարթ, դաշտ, հարթավայր:

Ցաք, ցաքան—տափան՝ հերկի երեսը հավասարեցնելու համար:
Ցաքանիլ—տափանել, ցաքանել:
Ցաքգնջիլ—տափանը լուծին միացնող շղթա:
Ցաքլից—ծառի թարմ և բարակ ճյուղեր, որոնցով լցնում են ցաքը՝ ճյուղերն ամրացնելով նրա երկու թևերում:
Ցըլլ, ցլլիկ—սահել-ընկնել, ծածկել (հողի, ձյունի մեջ):
Ցից—երկաթ, որ միացնում է ջրաղացի վերևի քարը պտտվող գնդին:
Ցխալ—իրարից բաժանվել, հեռանալ:
Ցխուգ—ցրված, ցիրուցան եղած:

Ցկնիլ—շան ծնելը, ձագ բերելը։
Ցկնուգ—ցկնած, ծնած։
Ցըմք, ցըմքուգ—ցամաք, չոր, ցամաքած, չորացած։
Ցոլալ—1. Լույսի պես արագ անցնել։ 2. Օձի վազքը։
Ցողվիլ—ջրով ողողել, լվալ։
Ցողվուք—ողողված, մաքրված։
Ցվգուջ—ցվիքի տակն ընկած գերանի պատից դուրս ընկած մասը։
Ցվիք—քիվ՝ կտուրի այն մասը, որ պատից դուրս է գալիս։
Ցուլան—ջրվեժ, առատ հոսք, շատություն։
Ցուլուլ—ուրուր։

Ո̈ւա́հ—զժգոհություն արտահայտող ձայնարկություն։
Ո̈ւայ—ցավ և զարմանք հայտնող ձայնարկություն։
Ուգ—ամանի ծեփ պատրաստված սև թոքից և չորից։
Ուզան—ուզող, մուրացիկ։
Ուզընգան—աղջիկ ուզելու գնացող։ Ուզընկան։
Ուժիլ—պարարտացնել (հողը)՝ անասուններին ամբողջ գիշերը պահելով այգ արտի մեջ՝ ամռան կամ գարնան օրերին։
Ուլաման—այծի արգանդի այն շղարշը, որն իր մեջ է պահում ուլին։
Ուլծնիգ—ուլ հասակում՝ մի տարեկան հասակում ծնած ուլ։ Մի տարեկան, բայց մայր դարձած այծ։
Ուխալ—կճուճ, հողե փոքր աման։
Ուղճ—ողջ, կենդանի։
Ունար—փշատ։
Ո̈ւող—սարալանջ, զառիվեր։
Ո̈ւնջան, ընջան—լայն բերան աման, տաշտ։
Ունք—հոնք։
Ուռուս—ռուս։
Ուռք—կենաց ծառ, որ բռնում են նորապսակների գլխավերևում, ծառ, որ ամեն ճյուղ ու. բարիք ունի իր վրա, բերքի ծառ։ Ուռքը սերունդ ունենալու սիմվոլն է։
Ուսլաթ—ուսի լաթ, որը, երբ կժով ջուր են բերում, դնում են ուսի վրա, որ շորերը չթրջվեն։
Ուրծ—որձ, արու։
Ուրուր—հավեր փախցնող թռչուն, ուրուր, ցին։
Ուրտ—ջրատար առվակից՝ կողերից բացվող փոքր ջրատար աչքեր, որոնց միջով հոսելով ջուրը ջրում է արտը։ Ուրդ։
Ուրտկապ—ուրտի բերանը փակող քարը կամ հողը։
Ուտան—ուտող։
Ուրց—շրթնածաղկի մի տեսակը, անուշահոտ բանջարեղեն։
Ուփ—արհեստական փոքր լիճ, ջրամբար՝ արտերը ջրելու համար շինված։
Ուտք—երկարության չափ՝ ոտք։

Փաթ—մի պտույտ։
Փաթուգ—փաթաթված։
Փալ—լեռան լանջը, կողը։
Փալախ—խիտ, թավ (մորուս)։

Փոլոսի—մեծ քար՝ նստելու համար։
Փալ (տալ) -կրթնել, հենվել։
Փածիղ—փայծաղ։
Փածղնոտիլ—փայծաղի մեծանալը, մալարիայով հիվանդանալ։
Փակնձագ—անցք, որի մեջ ձեռքը մտցնելով փակում կամ բացում են դուռը։
Փոնգոհիր—ցավերը փարատող, բուժող (նյութեր)։
Փաշտ—1. Նոր փեսա, նորապսակ տղա։ 2. Փաշա, իշխան։
Փաշկուլ—փոքրիկ պարկ (մորթից)։
Փոշտիլ—իրար մեջ կիսել (հողը, անտառը)։
Փաչուչք —խանձարուր։
Փոռ—1. Սկսմինից մինչև դաֆը, ջուլհակի գործած կտավի երկարությունը։ 2. Ջրաղացի թափանիվի թևերը. 3. Որևէ հեղուկի երեսին բանած փրփուրը։
Փոռանի—հոշոտող գազան։
Փառչ—սափոր, կուլկուլա։
Փոռու—հարս ու փեսին տված նվեր։
Փովա—բոլորը։
Փարդ—թայ, կոշիկի կամ տրեխի մի թայը։
Փարդիլ—կաշին գոլել, տրեխի չափի վերածել։
Փարթ—փորոտիք, աղիք-ստամոքսը միասին։
Փարսու—կրծքավանդակի մի մասը՝ կողերը։
Փարփար—զանգուռ (բանջարեղեն), փառփառ։
Փարփրթան—զանգուռով և մածնով բռնած թթու։
Փափ, փափիկ—թաթ (ձեռքի), ճանկ, բռունցք։
Փերին - չոր գոմաղբ։
Փեյամր—բաց երկինք, անձրևից հետո։
Փեյամրիլ—անձրևից հետո արևի բացվելը։
Փիջ -թիոսկր։
Փեջթաթիկ—թաթաձև թիոսկր։
Փեջրար, փիջրար- փեջ նայող (գուշակ)։
Փեքոլ անել - սրբակով գետինը փորել։
Փըշ—թոք-լյարդը։
Փըոքըմի—առողջություն, երկար ապրելը։
Փըռչըմ—1. Ճակատին թողած մազ։ 2. Սեպ, ցից։
Փիղնալ—ստակել, փայտանալ։
Փիլալ—փայլել, բոցկլտալ։
Փիլթան - հոտավետ մի բույս։
Փինչ—սեպ, որից փնչել—սեպ խրել։
Փիռտալ—այծի կամ ոչխարի ձայնը, որ վտանգ է ազդանշում։
Փլխիլ - փշրվել, կոտրվել։
Փլխուզ—փշրված, կոտրված։
Փլունդ—սրածայր փայտ, ցից։
Փնկա - քեղի նման բանջար (վայրի)։
Փնչիլ—սեպ, խրել, ցից խփել։
Փնչկտալ—փռշտալ (անասունի)։
Փշխնդալ—սրսփալ (մարմնի), վախից կամ ցրտից դողալ։

Փշկուլ—միասմբակավոր անասունի աղբ։
Փոթ—շոր, հագուստ։
Փողփուչ—սրնգահար։
Փողան—նեղ սրահ, միջանցք։
Փողրակ—խողովակ, սնամեջ երկարավուն իր։
Փողրոշ—սնամեջ, խողովակաձև։
Փողրկով—1. Խողովակաձև։ 2. Գյուղի անուն, որ գտնվում էր Մուշի դաշտում՝
Փողրկով։
Փոնթիլ—ծալել (շորը կարելիս)։
Փոշտ-փոշտ—նոր տարվա նվեր (մրգեղեն)։
Փորխաբ—փորը խաբել, կուշտ չուտել։
Փոփուլ—ոտնաման (երեխայի), շորից կարած։
Փջգիլ—ատամների միջի մնացուկը հանել, փորել։
Փռծլինք—լորձունք, թուք։
Փռման—փռած, ցրիվ տված ձևով։
Փռնտալ—փռշտալ։
Փգտիլ—քուճուճ անել (հավի), աղբը դես ու դեն տանել։
[illegible]
Փսորուգ—մանրած կտրատած։
Փտոտ
Փրտուգ } փտած (փայտ)։
Փտոլուր—ոլորքի հակառակ պտույտը։
Փրթիլ—ընկնել, դուրս ընկնել։
Փըրթըցնիլ, փրծըցնիլ—անջատել (տեղից), քաղել, պոկել։
Փուգ—1. Եզերազարդ, գդակի ասեղնազարդ։ 2. Փոկ (կաշվե)։
Փուկ—գըլգլի կամ կորեկի ցողունը։
Փուլ—լուսնի երկրորդ կեսը՝ 15—28-ը։
Փուչուկ—հողե փոքր աման, կճուճ։
Փուռնիգ—կլոր հաց, բոկոն։
Փուր—1. Փոր, ստամոքս։ 2. Ընկույզի կանաչ կեղևը։
Փուրխ—հեշտ կճեպվող (ընկույզ)։
Փքլուջ—ուռուցք։
Փֆիգ—փոքր փուքս (դարբնի)։

Քաբար—կնքահայր։
Քոդ—կերակուր։
Քոլոջիգ—երիկամունք։
Քոլոք—լաստ, որով անցնում են գետերի վրայով։
Քոլփադ—անատամ, ատամ չունեցող։
Քաղի (գ'ալ)—ոչխարների, այծերի բեղմնավորման գալը։
Քաղվորիլ
Քաղվորութին } բեղմնավորում այծ-ոչխարների։
Քաղց—սովածություն, բայց քաղցիլ—սովածանալ։
Քաղցուգ—սոված, անոթի։
Քաղցր—սև շիթ (վերք), քոռ չիբան։

**Քամ**—1. Արտի ջրվելուց, հագենալուց հետո իզուր հոսող ջուրը։ 2. Կտրելուց հետո արտի միջով հոսող ջրի վերջին մասը։

**Քամոդեղիգ**—ճոճվելու միջոցով ցավերից ապաքինվելը (ավանդութ.)։

**Քամալ**—1. Արժանիք, արժեք։ 2. Հասունացած (մարդ)։

**Քամամ**—կնքամայր։

**Քամյան**—բույս, որ գիրացնում է անասուններին։

**Քանդիչ**—քանդող։

**Քանուն**—դեկտեմբեր (ամիսը)։

**Քաշան**—1. Քաշ տալիք բեռը։ 2. Դահուկ, սահնակ, քաշող։

**Քապքապ**—1. Մեծ գլխով երկաթյա մեխ։ 2. Երկաթյա հատիկներ, որով սընվում էր Սասունցի Դավթի ձին՝ Քուռկիկ Ջալալին։

**Քառնքկուխ**—ծննդկանի կամ նրա նորածին երեխայի քառասուն օրը չլրացած չարքերից զարնվելը, հիվանդանալը։

**Քավեջ**, **Քովեջ** — Ղով, 3—4 տարեկան երինջ։

**Քովիլ**, **Քուիլ** — տաքացրած շոր, որ դրվում է մարմնի վրա իբրև բուժիչ միջոց։

**Քորր**, քըրր—ցավ, կսկիծ։

**Քարազ**—ժայռոտ վայր, Տալվորիկում քարակ էլ էր կոչվում։

**Քար դրել**—1. Խոսքը գաղտնի պահել։ 2. Գերեզմանի վրա քար դնել։

**Քարբադ**—խարույկի (ոտնաման) եզերքի կարերը։

**Քարբոդիլ**—եզերքի կարերը կարելը։

**Քարբդուզ**—եզրակարված։

**Քոբքիթ**—սանրաձև երկաթ, որով փալաս գործելիս ծեծում են, թելերը նստեցնում։

**Քարխուչ**—քարակույտ։

**Քարմնիլ**—իլիկով բուրդ մանել։

**Քարջին**—վայրի մի տանձ։ Ծառը՝ քարջնի։

**Քորսախ**—գետեզերքի տափարակ տարածություն։

**Քարվազ**—քարավազ, գետի միջից դուրս ընկած քարեր, որոնց վրա կոխելով անցնում են գետի մի եզրից մյուս եզրը։

**Քովոնգ**—տուֆքար, փափուկ քար։

**Քարմաղ**—մաղ, որով քարը ցորենից ջոկում են։

**Քարման**—իլիկ, մանող գործիք։

**Քարմղուզ**—քարմաղից անցկացրած, մաքրած (ցորեն)։

**Քարմնուզ**—1. Քարմանով (իլիկով) մանված։ 2. Երկար ու բազմոտանի մի միջատ։

**Քորատառշ**—օձի մի տեսակը։

**Քաֆ**—ժայռ, որի տակին քարայր կա։

**Քաֆ**—փրփուր (սապոնի)։

**Քըտ**—մեծ մասրա, որոնցով ջուլհակագործը ջրածն է հինում, քըան լցված է բամբակի թելերով։

**Քըրիթ**, քվրիթ—լուցկի։

Քեղվիլ } կեղևը պոկել, կեղևը հանել։
Քեղբիլ }

Քեմ—Թարախ, ժահր։

Քերեզան—այբբենարան։

Քերիջ— հացի բարակ և չորացած մասը։ Քերիճ։

Քերուգ--քերված։

Քերուցք—քերված մասը, կերակրի ամանի տակի քերվածքը։

Քերք, քիրք—ամանի տակը կպած կերակրի մասը։

Քեփլիլ—սայթակել, ընկնել։

Քըղմռ—խողան՝ ցորենի կամ կտրված անտառի։

Քըլըժիլ—շոգից այրվել, խանձվել։

Քըլս—կիր, ասվում է նաև քըլս ու ջըլս։

Քըխ—1. Հազ, հարբուխ։ 2. Կեղտոտ և արգելված բան (մանկ. բառ)։

Քըխս, քըսխ—սոխի փոքր հատիկ՝ սերմացու։

Քըխալ—հազալ։

Քըխուգ—հազոց, հարբուխ։

Քըռ—անականջ, ականջը շատ փոքր (անասուն)։

Քըց, կըց—քան։

Քթգալ } քիթը բռնող, կապող թել կամ դալար ճյուղ, որով կապում են
Քիթկապ }
կալի վրա աշխատող եզան բերանը, որպեսզի քուլաշն ուտել չկարողանա։

Քթվիլ—շորերի վրա ոջիլ փնտրելը։

Քթվող—ոջիլ փնտրող (շորի վրա)։

Քիլ—բութ մատի և ցուցամատի բացվածքը (երկ. չափ)։

Քիլտ—ցորենի չափ, որը հավասար է ութը կոտի, մոտ ութը փթի։

Քիղ—քեղ՝ ընտիր և փարթամ բանջարեղենի մի տեսակը։

Քիսըկ—քսակ, դրամապանակ։

Քիսիլ—քիսայել։

Քինալ—հանդիպել, դեմ առ դեմ գալ։

Քիստ—ցորենի հասկի փշոտ մազը։

Քիրվո—ընկեր, բարեկամ։

Քլքլման—եռացող (ջուր), եռալու ատրճանի տաք։

Քմեռախառի—աղջկա գլխարկ՝ իր զարդերով (քրդ.)։

Քմլիլ—պտուղով ծածկվել (ծառի), զարդարվել։

Քմլուգ—զարդարված, պտուղով ծանրաբեռնված։

Քմլցնիլ—1. Զարդարել, պտղաբեռնել։ 2. Ծռանդի բերել (պարողներին), հաջող նվագել կամ երգել։

Քնհլուն—հեքիաթային ուլունք, որ մարդու ականջի մեջ են դնում նրան խորը քնացնելու նպատակով։

Քշտիլ—սոթտել, հագուստի թևերը վեր քաշել։

Քշուշ—էտող, լող։

Քշտուգ—սոթտած, վեր քաշած։

Քշփառուն—անհարթ, խորտուբորտ։

Քոզ—գոմերում այն տեղը ուր պառներն են մնում:
Քոզուզ—ուլ և գառը ներս արած, գոմ մտցրած:
Քոզրկ—խրամատ, մարտիկի բռնած դիրքը կռվում:
Քոլ—անեղջյուր (անասուն):
Քոլիլ—հարձակվել, մենամարտի վազել:
Քոխար—խաղողի մի տեսակը՝ սև խարջի:
Քող, քուղ—շղարշ, սավան (նոր հարսի):
Քոմ—հավաք, կուտակում:
Քոմիլ—հավաքել, կուտակել:
Քոմուզ—հավաքած, կուտակած:
Քոնթի (գալ)—բեղմնավորման գալ (շների):
Քոշք—պալատ:
Քոչ—ընտանիք:
Քոչոր—վաչկատուն, թափառաշրջիկ:
Քոչորի—1. Թեթև պար, խաղ: 2. Վաչկատունի նման:
Քոռիզ—նոխազ, 3—4 տարեկան արու անասուն:
Քոփի—փես, կանանց գլխարկ:
Քռր—քարքարոտ տեղ:
Քռիզ—կարմրահատ ցորեն:
Քռիլ, քռնիլ—խարուկ գործել, կարել:
Քռեջ—խճապատ, մանր քարոտ տեղ:
Քռթիզ—կռճիկ, կռճկային մաս:
Քռնուկ—չեչոտ (մարդ), չոպուր, ծաղկատար:
Քռուկ—կարած գործած:
Քռչ, քըռչ—հին և մաշված հագուստ, շորեղեն:
Քռչիզ—կաղամբի թթվից եփած կերակուր:
Քռպնուզ—եղունգի կողքից դուրս եկած ավելորդ սուր եղունգ:
Քրդազեն—քրդի ձեռքով մորթված (ոչխար):
Քրդանակ—քրդերեն, քրդի նման:
Քրքշիլ—թթվել, քրքուշ կապել:
Քրքուշ—թթված (թան), որ հավաքում և եփում են՝ ձմեռը գործածելու համար:
Քրքրիլ—բզիկ-բզիկ լինել:
Քրքրուզ—կտոր-կտոր, բզիկ-բզիկ եղած:
Քունջ—անկյուն:
Քուշտ (անիլ)—համարձակվել, անվախ լինել:
Քուռղոնղտ—անզավակ, անժառանգ:
Քուս—բոր, քոս (հիվանդություն):
Քուփի—վայրի այծ:
Քուրսի—աթոռ, գահ:

Օզ, ուզ—ամանի ծեփ, որ պատրաստում են լյաքդի և թելի ծածկածքից:
Օզիլ—ծեփել, ամանի կտորները իրար միացնել:
Օզնի—ոզնի, ասում են նաև ժուժիկ:
Օզուր—ոլորված ճյուղ:

Օլրուգ—ոլորած:
Օթ—յոթը:
Օլըռնագ—փայտե ձող, որով բեռի կամ սայլի պարանը պնդացնում են:
Օլըդիլ—ման գալ, թափառել, փնտրել:
Օլըցնիլ—պտտացնել, ոլորել տալ:
Օլուր—ոլոր, դարձված:
Օխա—ծանրության չափ է մոտ 1,2 կգ:
Օձ—օծանելի, յուղ:
Օձնիլ—օծել, յուղ քսել:
Օձուգ- օծված, յուղած:
Օղտգիկ—օձապտույտ ասեղնազարդ (գդակի վրա):
Օղին—մի վայրի բանջարեղեն, շրեշ:
Օղմիլ—կրթնել, բազմել:
Օղմուգ- կրթնած, բազմած:
Օղջմիռ—ողջ մեռած, կիսամեռ:
Օղջում—ողջույն
Օղվիլ—ողողել, ցողվել, բերանը ջրով լվալ:
Օղփակ—1. Կարի մի տեսակը: 2. Կոճակն իր օղփակով:
Օն—գերանդու մի հարվածից ընկած հունձը:
Օնը—այնտեղը, հոն (Տավ. բարբառ):
Օռջալ—որոճալ:
Օսլտ—մարմնի մաս, կտոր:
Օսկի—ոսկի:
Օսյաթ—կտակ, մեռնողի վերջին հանձնարարությունը:
Օվիգ—հովիտ, ձոր:
Օտնուրակ—ոտնուրագ, մեծ ուրագ, որը երկու ձեռքով են բռնում տաշելիս:
Օտաց—վարտիկ (կանացի): Ոտաց:
Օրտ—որս, խուրձ:
Օրտջիգ—ուլունք, կոճակ, զարդուլունք:

Օրտցկապ<br>Օրտցբինդ } որոցկապ, օրորոցի շոր, որով երեխայի թևերն են կապում:

Օրծտ—բույսի որձան, արական գործարանը: Որձա:
Օրծաղ—կոտած, որձատված, ամորձատված:
Օրծկալ—փսխելու փորձ, գկռտալ: Որձկալ:
Օրմնջաղ—պատի այն մասը, որ ծածկում է գերանի գլուխը:
Օրնջալ—հորանջել:
Օրշնիլ—օրհնել, աղոթել:
Օրուջ—որոջալ, որոջ (անասնոց):
Օրուց խազիլ—դեռ օրորոցում եղած աղջկան նշան դնել, բեշիկքերթմա անել:
Օրջոֆտ—ջուլհակի այն փոքրիկ գործիքը, որը կարճացնում կամ երկարացնում է ասպին միացնող թելերը, պատրաստվում է հավի սրունքի ոսկրից:
Օփ ուփ—արհեստական ջրավազան:
Օփծակ—արհեստական ջրավազանի անցքը, որից հոսում է ջուրը:

Ֆաիզ—տոկոս։
Ֆալ—ծուռ ակոս, որի ժամանակ վարվող հողի մի փոքր մասն անվարել է մնում։
Ֆառչ—մետաղյա թելով խողանակ. բայը՝ ֆառչիլ—մաքրել։
Ֆաս—ֆես, թրքական գլխարկի մի ձև։
Ֆահլ—գարու կամ քարի հատիկներ, որոնցով գուշակները բախտ են նայում։
Ֆահլըկ—բախտ նայել, գուշակություն անել։
Ֆահլըկգար—բախտ նայող, գուշակ։
Ֆարըկ—փայծաղ։
Ֆորտզ—թեև, թեպետև։
Ֆեկի—միրգ, պտուղ։
Ֆըթիլ—պատրույգ։
Ֆըլըտիլ—ազատվել (վտանգից)։
Ֆընդ—բարակ մեղրամոմ, որ շատ՛ հաճախ գրպանում են պահում։ Ֆնտիկ։
Ֆըշխը—անասունի աղբ։
Ֆըշխիլ—անասունի թրքելը։
Ֆիկալ—սուլել։
Ֆիկող—սուլող։
Ֆիկուց—սուլելու ձայն։
Ֆինո—քոֆի, ֆես, կանացի գլխարկ։
Ֆիշտոխ—ջրմուղ՝ խաղալիք, որով իրար վրա ջուր են սրսկում։
Ֆոտնգի—1. Ֆրանսիական կոպեկ, ալաֆռանգի։ 2. Քղանցք։
Ֆոիզ—ակլատուզ, մի սոխ՝ յոթը փետուրներով։
Ֆոֆռալ—քամուց ծածանվել, ձայն հանել։
Ֆոտիլ—թանը կամ ապուրը շտապ-շտապ ուտել, լափել։ Ֆոտել։
Ֆոֆոիզ—1. Խաղալիք, որ թևիկներ ունի և հոսող ջրի—առվակի ուժով պտըտվում է։ 2. Մեծ պահքի սիմվոլը՝ մի սոխ կամ կարտոֆիլ, որի վրա յոթը փետուրներ են խրած, կախում են բուխարիկի կողքից. օջախի ջերմությունից և գնացող ծխից անընդհատ պտտվում է, ոլորվում, էլի պտտվում։ Մեծ պահքի ամեն մի շաբաթը անցնելիս մի փետուրը հանում են, վերջին շաբթին հանում վերջին փետուրը։
Ֆտլիլ—ետ դառնալ, շուռ գալ։
Ֆրխգիլ—հանկարծակի կրակվելը (հրացանի)։



ՍԱՍՈՒՆ–ՏԱՐՈՆԻ
ՔԱՐՏԵԶ
ՄԱՍՇՏԱԲ
ԵՐԵՎԱՆ
1949 Թ.
ԲԻԹԼԻՍ
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
Քաղաքներ
Բնակավայրեր
Գավառային սահմաններ
Շրջանային սահմաններ
Ճանապարհներ
Գետեր
Լճեր
Բարձրություններ
Բերդեր
Բևեռագիր արձանագրություններ
Վանքեր և եկեղեցիներ
Քաղաքատեղեր
Ավերված բնակավայրեր
Կամուրջներ
Աղբյուրներ
Քարայրներ

# ՑՈՒՑԱԿ
# ՍԱՍՈՒՆԻ ՏԱՍԸ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԳՅՈՒՂԵՐԻ[1]

| | Գյուղերի թիվը | | Գյուղերի թիվը |
|---|---|---|---|
| 1. Բուն Սասուն—(Բոզկան) | 16 | 6. Հազզո (Խարլջոզ) | 108 |
| 2. Շատախ | 7 | 7. Մոտկան | 61 |
| 3. Տալվորիկ | 12 | 8. Խիանք | 56 |
| 4. Խութ-Բռնաշեն | 42 | 9. Խուլբ | 67 |
| 5. Փսանք | 42 | 10. Խարզան | 128 |
| | | Ընդամենը | 539 |

## 1. ԲՈՒՆ ՍԱՍՈՒՆ (ԲՈԶԿԱՆ)

| №№ | Սասունի գավառի բուն Սասունի (Բոզկանի՝ Քաղքիկի) գյուղերը | Հայ | | Քուրդ | | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|
| | | տուն | շունչ | տուն | շունչ | |
| 1 | Գելիեգուզան | 250 | 3500 | — | — | Սասունի կենտրոնական գյուղը։ |
| 2 | Շենիկ | 73 | 635 | — | — | |
| 3 | Սեմալ | 70 | 602 | — | — | Սիմա կամ Սիմալ. պատմական Սիմ լեռան անունով կոչվել է այդ գյուղը։ |
| 4 | Ագբիկ | 102 | 835 | — | — | |
| 5 | Հեթինք | 48 | 456 | — | — | Ըստ ոմանց «Յետինք» («Արաքս» 1895, էջ 81, Պետերբուրգ)։ |
| 6 | Քաղքիկ (Բոզկան) | 2 | 12 | 20 | — | Սասունցի Դավթի բերդն այս գյուղումն է։ |
| 7 | Կապասգետ | — | — | 20 | — | |
| 8 | Ծախրկանք | 7 | — | — | — | Սասունցի Դավթի ջրաղացն, իր ձեռքով կառուցած, ըստ ավանդության այս գյուղումն է։ |
| 9 | Խոծոծվանք | 6 | — | 9 | — | Ունի կամարշեն վանք։ |
| 10 | Հարկուոք | 16 | 120 | (խառն հ. ք.) | | Բշարե Խալիլի գյուղը (Սերոբն սպանողի)։ |

[1] Տես, Երևանի Պետական պատմական թանգարանի Ազգագրակ. բաժնի № 123 ձեռագիրը՝ «Վիճակագրություն Մուշ—Սասունի, քաղված Մշո դաշտի դպրոցական վիճակագրությունից», 1914 թ.։

| №№ | Սասունի գավառի բուն Սասունի (Բոզկանի՝ Քաղքիկի) գյուղերը | Հայ | | Քուրդ | | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|
| | | տուն | շունչ | տուն | շունչ | |
| 11 | Արգիկ | 15 | 80 | — | — | |
| 12 | Սարեկան | 6 | — | — | — | Քաղքիկին մոտիկ։ |
| 13 | Գելառաշ | 11 | — | — | — | Սև ձոր է նշանակում։ |
| 14 | Խաղան | 20 | -- | — | — | Ըստ «Արաքսի» 100 տուն, («Արաքս» 1895, էջ 85, Ս. Պետերբուրգ)։ |
| 15 | Թխիկ | 4 | — | — | — | |
| 16 | Անձղանք | 10 | — | — | — | Անձղանքը Աղձնանք— Աղձնիք անունը չէ՞ արդյոք։ |

## 2. ՇԱՏԱԽ

| №№ | Շատախի գյուղերի անունները | Հայ | | Քուրդ | | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|
| | | տուն | շունչ | տուն | շունչ | |
| 1 | Շուշնամերկ | 30 | 245 | — | — | |
| 2 | Գեղաշեն | 31 | 289 | — | — | Անթանիա վանքից արևելք 2—3 կմ. վրա։ |
| 3 | Քոփ | 27 | 196 | — | — | |
| 4 | Ավզերմ | 49 | 460 | — | — | Կոչվում է նաև Գերմավ, երկու բառերն էլ քրդերեն են և նշանակում են «տաք ջուր»,«ջերմուկ»։ |
| 5 | Ձեյնրկ | 25 | 210 | — | — | |
| 6 | Տափրք | 25 | 200 | 18 | 157 | Այս գյուղի կողքին է Զուզա կամ Սուսանա բերդի ավերակը։ |
| 7 | Իրիցանք | 13 | 95 | 4 | 25 | Ունի մեծ ավերակ վանք։ |

Շատախի շրջանումն են հռչակավոր Անթանիա և Թեոդորոս վանքերը։

Սասունի Շատախը բոլորովին կապ չունի Մոկաց նահանգի Շատախի հետ։ Սասունի Շատախի մասին Զենոբ Գլակն իր «Տարոնոյ պատմության» մեջ գրում է՝

> «Իշխանն Արջուց կողմանն, Գէորգ Շատախոս, որ կոչեաց զանուն գաւառին իւրոյ Շատախ, վասն աւելի անուանի իւրոյ»։ Հնուց այդ գավառն ուրեմն «Արջուց» (արջերի երկիր) էին կոչում։

## 3. ՏԱԼՎՈՐԻԿ

| №№ | Սասունի գավառի Տալվորիկի շրջ. գյուղերի անունները | Հայ | | Քուրդ | | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|
| | | տուն | շունչ | տուն | շունչ | |
| 1 | Էգու տուն | 35 | — | — | — | Ուներ ս. Սարգիս կամարակապ եկեղեցի և տարրական դպրոց։ |
| 2 | Արտխոնք — Քարախու | 9 | — | — | — | Ուներ 7 եկեղեցի. Տ. Մարիամ, ս. Սարգիս, Մարտիրոս, Խաչօղլան, ս. Կիրակոս, Գրաշեն, Թադլուկ։ Պատմական Կլիմիր քաղաքի տեղը։ |
| 3 | Տվալինք | 15 | — | — | — | |
| 4 | Փուրխ | 17 | — | — | — | Գյուղն ուներ տարրական դպրոց և կամարակապ վանք ս. Ստեփանոսի։ |
| 5 | Խլնովիտ | 9 | — | — | — | Ս. Սարգիս, ավերակ։ |
| 6 | Հազմանք | 15 | — | — | — | Ս. Կարապետ, որ կտանք թաղումն էր. շեն։ |
| 7 | Հլողինք | 40 | — | — | — | Ս. Մամաս (Սմամաս) ուխտատեղի, ավերակ։ |
| 8 | Մազրա | 20 | — | — | — | |
| 9 | Հարթք | 20 | — | — | — | Խաչո Գասպարի գյուղ։ Դպրոց կար։ |
| 10 | Հոսնուտ | 9 | — | — | — | Կամեյի Համզեի (դարբինի) գյուղը։ |
| 11 | Սպղանք | 25 | — | — | — | Վանք-շեն, կամար՝ Մարսպա (Մարութա)։ Բշարի Խալիլի այրած գյուղը։ |
| 12 | Եղգարգ | 15 | — | — | — | Լուսատուն կույս Մարիամ։ |

## 4. ԽՈՒԹ-ԲՌՆԱՇԵՆ

| №№ | Սասունի գավառի Խութ-Բռնաշեն շրջանի գյուղերի անունները | Հայ | | Քուրդ | | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|
| | | տուն | շունչ | տուն | շունչ | |
| | Խ ո ւ թ | | | | | |
| 1 | Թաղավանք | 162 | 269 | — | — | Ուներ կամարակապ եկեղեցի։ |
| 2 | Շենիստ վարի | 30 | 301 | — | — | Կամար և շեն եկեղեցի։ |
| 3 | Շենիստ վերի | 5 | 24 | — | — | |
| 4 | Շեն | 28 | 280 | — | — | Ձորս եկեղեցի՝ ս. Հակոբ, ս. Մարծմետ, ս. Աստվածածին և Կուլանա ս. Ջիավոր, բոլորն էլ կամարակապ։ |

| №№ | Սասունի գավառի Խութ-Բռնաշեն շրջանի գյուղերի անունները | Հայ | | Քուրդ | | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|
| | | տուն | շունչ | տուն | շունչ | |
| 5 | Ագրակ | 15 | 168 | — | — | Ագարակ էլ էր կոչվում։ |
| 6 | Թաղվու | 25 | — | — | — | Թողու էլ էր կոչվում։ |
| 7 | Գիլոնք | 8 | 68 | — | — | |
| 8 | Թաղվըձոր | 18 | — | — | — | |
| 9 | Սալաբուզ | — | — | 25 | — | |
| 10 | Բաքընթաղ | — | — | 40 | — | |
| 11 | Գործըվար | — | — | 180 | — | |
| 12 | Փիրիվանք | 1 | 8 | — | — | |
| 13 | Կոռ (ք) | — | — | 90 | — | Գոռս, կամար եկեղեցի քանդված, Սյունյաց գլաձորի դպրոցի հիմնադիր Ներսես Մշեցու ծննդավայրը։ |
| 14 | Տափ | — | — | 250 | — | |
| 15 | Փզոնք | — | — | 20 | — | Փջոնք և Փիջանք անունները մեր կարծիքով Փզոնքն է։ |
| 16 | Ռաբաթ | — | — | 30 | — | Կայմակամի նստած տեղը, եկեղեցի չկար։ |
| 17 | Սարենգոլե | 17 | 136 | — | — | |
| 18 | Ճանկերգի | 19 | 192 | — | — | |
| 19 | Ավարք | 6 | 48 | — | — | |
| 20 | Հնգձոր | 3 | 12 | — | — | Հընգձոր։ Եկեղեցի կամարով, քանդված։ |
| 21 | Ցուշուտ (Օշուտ) | 38 | 211 | — | — | Եկեղեցի կար կամարապատ, շեն։ |
| 22 | Ձորովա | 30 | — | — | — | |
| 23 | Բլրեկ | 10 | — | — | — | Ս. Աղբերիկին մոտիկ էր, ուր և աղոթելու կգնային։ |
| 24 | Մգրե-Շիլգ | 60 | — | — | — | Ընկուզիկի եկեղեցին աղոթելու կգնային։ |
| 25 | Ուշթափ | 20 | — | — | — | Հընգձորի հարավ-արևմըտյան կողմը։ |
| | Բ Ռ Ն Ա Շ Ե Ն | | | | | |
| 26 | Օշակ | 25 | — | — | — | |
| 27 | Կծանք | 20 | 101 | — | — | Օշուտի մոտ։ |
| 28 | Դաշտագեմ | 30 | 137 | — | — | |
| 29 | Բլրկան | 35 | 178 | — | — | |
| 30 | Եզիան (Եզիանք) | 60 | — | — | — | |
| 31 | Ճամիան (ք) | 30 | — | — | — | |
| 32 | Ճիրոմգրա | — | — | — | — | |
| 33 | Արենոք | 15 | — | — | — | |
| 34 | Կոստ | 5 | — | — | — | Գոստր 1897 թ. ունեցել է յոթը եկեղեցի («Լումա» 1897, էջ 138—188)։ Կամար եկեղեցի, գյուղից քիչ հեռու և շեն։ |

| №№ | Սասունի գավառի Խութ-Բռնաշեն շրջանի գյուղերի անունները | Հայ | | Քուրդ | | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|
| | | տուն | շունչ | տուն | շունչ | |
| 35 | Ընկուզեք | 25 | 138 | — | — | |
| 36 | Մահրուբան | 60 | — | — | — | |
| 37 | Արունք | 6 | 47 | — | — | |
| 38 | Լորգնձոր | 25 | — | — | — | |
| 39 | Դոշտամիրան | 10 | — | — | — | Նշանակում է իշխանաց դաշտ։ |
| 40 | Կնոտ (Քնոտ) | 7 | — | — | — | Գյուղում հետո քրդերը բնակվեցին 1915թ. առաջ։ |
| 41 | Կրպնիկ-Արծվիկ | — | — | — | — | |
| 42 | Ս. Աղբերիկ | — | — | — | — | Հռչակավոր վանք. ուխտատեղի հայ և քուրդ ժողովուրդների համար։ |

## 5. Փ Ս Ա Ն Ք

| №№ | Սասունի գավառի Փսանք շրջանի գյուղերի անունները | Հայ | | Քուրդ | | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|
| | | տուն | շունչ | տուն | շունչ | |
| 1 | Գոմք | 23 | 160 | — | — | Ուներ ս. Քառասուն Մանուկ եկեղեցի։ |
| 2 | Թափունի | 7 | 60 | — | — | |
| 3 | Ջրթնիկ | 20 | 210 | — | — | Վիշապասպան ս. Գևորգ կամարով շեն եկեղեցի։ |
| 4 | Պլոյենք | 6 | 52 | — | — | Ս. Վարվառա եկեղեցի։ |
| 5 | Փշուտ | 10 | 65 | — | — | |
| 6 | Մրջղեղ | 40 | 409 | — | — | Եկեղեցին ս. Գևորգ լուսատուն, ուխտատեղի։ Ուներ տարրական դպրոց։ |
| 7 | Դալհոր | 32 | 350 | — | — | Ս. Տղամանուկ եկեղեցի։ |
| 8 | Խնձորենք | 26 | 242 | — | — | Լուսատունն էր ս. Աստվածածին, Խնձորիկ էլ էր կոչվում։ |
| 9 | Թաթուկ | 15 | 145 | — | — | Թարուք։ |
| 10 | Փսանք | 10 | 112 | — | — | Հին քաղաքի ավերակներ, որի անունով շրջանն է կոչվում։ |
| 11 | Կորընկես | 8 | 35 | — | — | |
| 12 | Քաջառինք | 12 | 162 | — | — | Շեն, կամարապատ եկեղեցի ուներ։ |
| 13 | Մկթինք | 25 | 277 | — | — | Եկեղեցին ս.Աստվածածին։ |
| 14 | Հավկունք | 5 | — | — | — | |
| 15 | Դոժբատրիկ | 7 | — | — | — | |

| №№ | Սասունի գավառի Փսանք շրջանի գյուղերի անունները | Հայ | | Քուրդ | | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|
| | | տուն | շունչ | տուն | շունչ | |
| 16 | Ցեցնքար | 3 | — | — | — | Գյուղի մոտ կար 50 մ. բարձր. 30 մ. լայն. և 20 մ. հաստ, ցից քար։ |
| 17 | Մարսթա | 20 | — | — | — | Եկեղեցի կար՝ ս. Խաչ, ոչ կամարապատ։ |
| 18 | Գոմոց վանք | վանք | — | — | — | Ս. Պետրոսի վանք կամ Ճկութ վանք։ Վերջին վանահայրը Ստեփան վարդապետն էր, որ մասնակցել է 1915 թ. Սասունի ապստամբությանը։ |
| 19 | Ջմալենք | 20 | մեծ մասը քուրդ | | | Ուխտատեղի։ |
| 20 | Բվի | 10 | — | — | — | Շեղզար անունով սրբավայր ունեն, ուխտատեղի և Մուրադատուր ս. Սարգիս եկեղեցի։ |
| 21 | Թաթանք | 8 | — | — | — | Կոչել են և Թաթունք։ |
| 22 | Սարեկան | 6 | — | — | — | |
| 23 | Քազքիկ | — | — | 20 | — | Սասնա բերդին կցված է։ |
| 24 | Մարպանք | 12 | — | (խառն) | | |
| 25 | Մաղենք | 5 | — | — | — | Օսմկեի տուն էր կոչվում։ |
| 26 | Ճախրկանք | 7 | — | — | — | |
| 27 | Բրդանք | 5 | — | — | — | |
| 28 | Կապասգետ | — | — | 20 | — | |
| 29 | Խան | 11 | — | — | — | Խութի սահմանին մոտիկ։ |
| 30 | Քրդամանք | 9 | — | — | — | Քրդերի ամանները առանձին պահելու համար քրդաման է կոչվել գյուղը։ |
| 31 | Հոսներ | 4 | — | — | — | |
| 32 | Քիսթաղ | 8 | — | — | — | Ս. Քրիստափոր եկեղեցի։ |
| 33 | Դամլենք | — | — | — | 139 | |
| 34 | Բողկան | 2 | 12 | — | 710 | Բուն Սասունը Բողկան էլ է կոչվում։ |
| 35 | Քաշքշենք | 11 | 83 | — | 35 | |
| 36 | Մշկատակ | | — | — | — | |
| 37 | Հուտ | | — | — | — | Բնակվում էին միայն հայեր։ |
| 38 | Ծուեկանք | | — | — | — | |
| 39 | Քարավանք | 3 | — | — | — | |
